

Ulip - Dlentogulee
zhmz nezheceph

1912

891. 99
—
U2 - 45

891.99
S-45

1001
4162

SCR-254007345
ФРНД ВСНВР2

М-16 16/кн9

V/12-3064 28/280

1105, 80, 05

2268
5567

149.

ՉԵՐՉ ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ 2.

898.99-23

S-4545

I

Ա

ՓՈՒՂ

≡

≡ ԱԾԻԱՐՅ

ՎԵՊ

II

ԹԱՄԱՐ

ՉԵՐ

ԹԻՑԻՍ

Տպարան «ԵԿՕՆՕՄԻԱ» Ա. Մահմետի Բակովի անձնագիրը.

1912



20.08.2013

58438

-6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՀԱՅԱ

ՓՈԽ ԱՇԽԱՐՀ



ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐ

I. ԿՈՒՍՈՒՑԻՒՆ

Դըիգորը հոգին ծախել էր...

Ժամանակով ջրամբարձ մեքենաների համար գեղաններ էր ծակում նա. ու այս արհեստը այնքան արդիւնաւէտ էր, որ ընտանիքը պահելուց և «ողորմածիկ» ծնողների թաղման ծախսերը հոգալուց բացի, նա կարողացել էր աղջիկների օժիտի փողը յետ պահել:

Երկուսն էին սրանք, որոնցից մեծը —Փեփելը
մարդու էր գնացել արդէն. մասցել էր կրտսելը —Օսանը:

Մի օր մշակները յենարանի վրայից անզգուցութեամբ մի գերան ցած զցեցին, Գրիգորի ոտքը տակն անելով։ Մարդը հինգ ամիս շարունակ անկողնուն ծառայեց, կնոջ — Հերիքի և աղջիկների խնամքներով

ու փափուկ բարձերով շրջապատւած։ Զափազանց սըրտացաւ այս հոգատարութիւնը երկու հետևանք ունեցաւ. մէկ, որ Օսանի օժիտի համար յետ պահած երեք հարիւր բուրլուց երկուսը սառուցի պէս հալեց, մէկ

ՏԸ, որ Երկիգորը ծովացաւ... Աւ սա, որ առաջ, գործն անձամբ «մղրտելու» համար, առաւտոները ժամը հընդից էր բանի գնում, այժմ՝ բժշկելուց յետոյ, մի տեսակ զգանքով էր յիշում բանատեղը, յոյսը մշակների վորա ոռած. պործի մէջ ռանդապութիւն մոռնելու...

Մի օր բանւորները գչերը, գերանի կենտրոնում յար-
մարեցնելիս, կոտրեցին... Խեղճերը ստիպւած էին մի
տասն անգամ յիշեցնել այդ մասին գերան ծակովնե-
խնդրելով անհրաժեշտ գործիքը վերջապէս գարբնի
մօտ ուղարկել նորոգելու համար, ու մի չափ անգամ
ել դարբինն իր աշակերտին ուղարկեց, թէ գահրող պատ-



բաստ է. բայց անօգուտ. գործիքն այլիս բանատեղ
չվերադառնաւ...

Գրիգորը վերջ ի վերջոյ փակեց արհեստանոցը,
ձախորդութիւնը վերագրելով գործածութեան մէջ
հետզհետէ ծաւալող չուգունէ ջրամբարձ մեքենանե-
րին...

Յետ պահած չնչին խնայողութիւնն ու ստացւող
ապառիկները հնարաւորութիւն տւին ընտանիքին ապ-
րել երկու տարի ևս. ու ապա թշւառութիւնը տարա-
ծեց իր թերեք գերան ծակող Գրիգորի յարկի տակ...

Կարօտութեան այդ օրերին տունը գժոխք դար-
ձաւ, որտեղ Օսանն ու Հերիքը այրում էին զինեանից
վերադարձած տղամարդու յանդիմանանքների ու հայ-
հոյանքների թէժութիւնից: Մայրը մեղադրում էր
ծուլութեան, դուստրը — աղջիկ ճնւելու մէջ:

Շուտով Օսանի համար ստեղծեց մի յուսահա-
տական դրութիւնն...

Հերիքը ամուսնու կոպիտ վարմունքի դէմ ցոյց
տւեց իր ոյժը, անկողին անջատելով. ու աղամարդը
ստիպւած էր նրա վերաբերմամբ փափկութեան ճանա-
պարհը բռնել, սիրալ շահած ունենալու համար: Այնու-
հետև նրա կոպտութեան ամբողջ պաշարը ծանրացաւ.
Օսանի թիկունքի վրայ:

— Քնիր էլի, տօ քնիր է, կրկնում էր Գրիգորը
գիշերները դւտեր զլխավերել կանգնած. կողակցի նա-
զերը վերագրելով նրա արթնութեանը...

— Տօ մի վեր կաց է. այս քածին քնեցրու է,
շարունակում էր որոտալ նա, արթնացնել աշխատելով
արդէն քուն մտած Հերիքին...

Ապա ոտարութիկ, կուրծքը բաց, երկու կանանց
միջև այսպէս անօգուտ կերպով խարխափելուց յետոյք,
ոչ մինին քնեցնել և ոչ միւսին արթնացնել կարուղա-
նալով, նա Օսանի հասցէին այս յանդիմանանքն էր
նետում.

— Հարկաւոր բան որ լինէիր, աշխարհ չէիր
գայ. մօրդ արգանդում ջուր որ կտրւէիր, այժմ ես
իմ տեղերում տաք-տաք պառկած կինէի...

— Տօ քնիր է...

— Տօ վեր կաց է...

ի դուր...

Ցոգնած այս ապարդիւն կուից, արբեցողը նըս-
տում էր Օսանի քթին, վրէժը լուծելով...

Բաղդը մի ըուպէ ասես ժպտալ էր պատրաստում
Օսանի երեսին...

Փեփելին համարեա ուժով էին ամուսնացըել
օժիտի նշանակած գումարին մի հարիւր ըուբլի ևս
աւելացնելով, կախ քթի և ծաղկատար երեսի պատճա-
ռով...

Փեսացուն, քարտաշ Ալեքսին, երեք որբի տէր
էր ու այն զլխաւոր պայմանն էր զրել, որ «նոր մայրը»
սրանց սպասելի հարազատներից չզանազանէ: Երեխա-
ները ստկայն երեք տարւայ ընթացքում հետեցին
հանգուցեալ մօրը, զո՞ն գնալով իրենք ևս թոքախտին,
մատադ հասակում: Փեփելի շունչը տեղն ընկաւ...

Քիթը կախ, երեսը ծաղկատար կնոջ զսպած այդ
ցնծութիւնը Ալեքսու աչքից չըվրիպեց. ու ամուսիննե-
րի միջև սկսեց սի կատարեալ հակառակութիւն...

Ալեքսու ներհակութեան պատճառը սակայն ոչ
թէ այն էր, որ Փեփելը վատ էր ինամել երեք ցառ-
նուկներին, ինչպէս ինքն էր յանդիմանում նրան,
հայրական զթարսութիւն խաղալով, այլ որ իր սըր-
տում թագնւածը համապատասխանում էր օտարի-
«եկովի», այն էլ քիթը կախ, երեսը ծաղկատար
կնոջ—տրամադրութեանը. որովհետեւ դժբաղդութիւնը
իրեն ևս թեթեացըել էր հիւանդ զաւակների բնոնից...

Համաձայնութեան վրայ հիմնւած այս անհամա-
ձայնութիւնը այն հետևանքն ունեցաւ, որ տղամարդը

Կէս գիշերից էլ անց սկսեց տուն վերադառնալ, գլու-

խը թղթախաղին ու զումարին տուած...

Փեփելը ճաշակեց անտէր մենակութեան դառ-

նութիւնը ձմեռւայ երկար գիշերներին, սառն անկող-

նու մէջ.

Մի գիշեր, գլուխը երկար ժամանակ բարձերի

վրայ շուռ ու մուռ անելուց յետոյ, նրա ականջը մի

ձայն ընկաւ.

— Տարման, տարման...

Կինը սարսափեց ու եղկուղից քար կտրւեց:

Որտեղից որտեղ մի գիշ քամի դիպաւ պատու-

հանին ամբողջ թափով, ցած շրիկացնելով ապակու

կարկատած երկու կտորներ աղիւսայատակի վրայ:

Փեփելին թւաց, թէ աւաղակները, բոլոր հարկաննե-

րին խեղդամահ անելուց յետոյ, զալիս են իր օրերին

և վերջ տալու համար.

— Զեր մեռնեմ, տարէք, բոլորը տարէք. ինձ,

միայն ինձ խնայեցէք. կը կնում էր նա, ձեռքերը դէ-

պի իր առաջ տնկւած տղամարդը տարածելով, աչքերի

կոպիրը լայնացրած...

— Փեփել, Փեփել, տօ, ես եմ...

Խօսողը Ալեքսին էր, որ դուռը, երկար ժամանակ

ապարդիւն զարկելուց յետոյ, կը նկանան էր արել ու

սենեակը մտել...

Որովհետեւ քարտաշը այս դէպքից յետոյ այսու-

ամենայնիւ ուշ էր վերադառնում գիշերը, Հերիքը,

մասամբ Փեփելի թախանձանքներին դիջանելով, մա-

սամբ էլ հարկանների թուք ու մուրից ամաչելով,

համաձայնւեց Օսանին աւագ դստեր տունն ուղարկել

իրը մենակութեան ընկեր:

Չնայելով իրենց տան դժոխքին, Օսանը չէր ու-

զում տեղափոխւել քրոջ մօտ, գիտակցելով ընտանի-

քում չսիրւած անդամի հիւը լինելու ծանրութիւնը.

Քարտաշը սակայն հէսց առաջին անդամից փա-

րատեց նրա կասկածները.

— Վահ, վահ, հէրդ օրհնուի, այ Փեփել, որ իմաց
տայիր, թէ այսպիսի թանկագին հիւը ունենք... Վահ,
հէր օրհնած, ես էլ մարդ եմ—մրգից, քիշմիշից... Այժմ
ես մրտեղ բաց խանութ գտնեմ—խորովածից, ձկնից...
Որ իմանայի, էլ ուշանալս որն էր,—յանդիմանեց նա
կնոջը մտերմաբար, համարեա լուսաբացին տուն վե-
րադառնալով և Օսանին քրոջ մօտ նկած տեսնելով:

Եւ յիրաւի Ալեքսին այսուհետև տուն էր գալիս
դեռ մութը չկոխած, մի ձեռքում — խորովածացուն,
միւսում—կաղիններով ու շագանակով լի թաշկինակը.

— Դէհ, բաժանիր, Փեփել, բզում էր նա կնոջ
կողը մտերմաբար, մրգով լիքը թաշկինակը նրա ա-
ռաջը գնելով, — դէհ, բաժանիր, արդար, հաւասար...

Կաղիններն ստանալով, նրանք սկսում էին զոյդ
ու կենաի խաղը: Ալեքսին էր, որ, քոյրերի մէջտեղը
նստած, կենդանութիւն էր տալիս երեկոյին, մէկ Փե-
փելի ձեռքին զարկելով, մէկ Օսանին ստիպելով, զոյդն
ու կենաւ գուշակելիս, իր բուանն ամուր խփել: Որով-
հետև որեիսան շարունակ քաշում էր Ալեքսու ձեռքը
ցաւեցնել քարտաշը, համբերութիւնից դուրս, առնում
էր նրա թեր իր սոկրոտ մատերի մէջ ու նրանով ծե-
ծում Փեփելի ուսերն ու իր երեսը... Երբ Օսանն աշ-
խատում էր թեն ազտաել գժւած փեսայի ձեռքից ու
Փեփելն էլ իր հերթին, ուսերը պաշտպանելով, յետ-յետ
էր քաշում, քարտաշ Ալեքսին, ևս առաւել տաքացած,
բոնում էր քենու թեսակերից ու նրան դէպի Փե-
փելը հրում: Այս ժամանակ սկսում էր զլոր-զլոր մի
կռիւ, մինչև որ Փեփելին յաջողում էր քրոջ ու ա-
մուսնու մէջտեղն ընկնել, իրարից բաժանելու համար...
Որը Փեփելին խեղդամահ չանելու համար, որն էլ Օ-
սանի ամօթից, Ալեքսին այդ ժամանակ, զլուխը խե-
լառութեան տալով, ցած էր թոչում թախտի վրայից
ու, սենեակի մէջտեղն եկած, սկսում դիւական մի պար,
թոչկոտալով, պտոյտ-պտոյտ, բթամատելն իր ստիճք-

ների մէջ կոխած, ափերն օդում, թերի պէս, կնոջ
կուրծքը ձևացնելով.

— Թիթլալի՛, թիթլալի՛...

Ապա, դանակը հանած, մի հարւածով կտրել էր
շոյց տալիս կուսական ստիճաները...

— Խիշի՛, խիշի՛... լօքոն, լօքոն, տուտերը, չա-
ղերը...

— Թշթշալի՛, թշթշալի՛, շարունակում էր նա
պտոյտ-պտոյտ գալ այնուհետև էլ մանդալի շուրջը,
ընթրիքի խորովածն անելիս ..

Մէ գիշեր Փեփելը վեր ցատկեց քնած տեղից,
յանկարծակի եղածի պէս:

Դրա պատճառը մի սուր ճիչ էր.

Ալեքսին կողքին չէր...

Վայրկենաբար հասկանալով բանի էութիւնը, կինն
ախափէս ոռնած, որ քտրտաշը թրմթալով ցած ընկաւ
Օսանի կողքից ու փողոց նետւեց.

— Փեսա Ալեքսի, քու օրը պակսի, ձայն տւեց
նրա ետեից աղատւած օրիորդը մթութեան մէջ ..

Երկու քոյրերը հաւաքեցին իրենց փալասները ու
վերադառն հօրանց տուն, մտերմացած, խայս առա-
կութիւնից պըճնելու պատճառով:

Այսուհետև մօր ու ազիկների համար սկսւեց մի
յիշաւի անտանելի դրութիւն Գրիգորի ձեռքից, որ
նկարագրած դէպքը շահագործելով, առատութեամբ
բաւականութիւն էր տալիս հայնոյելու իր պահանջին.

— Պոռնիկներ, որ փեսայ Ալեքսուն փախցրիք.

Ու երբ Հերիքը մէջ էր խառնւում, նա ևս իր
«պատիւն» էր ստանում.

— Պոռնիկի զւակներ, նետում էր Գրիգորը,
իբր թէ, Փեփելի և Օսանի հասցէին, չհամարձակւե-
լով կնոշն ուղղակի վիրաւորել, սիրտը շահած ունե-
նալու համար:

— Տօ քնեցէք է...

— Տօ վեր կաց է...

Տանեցոց կերածը չոր հացը լինելով, Գրիգորը
ճաշի մօտերքը Հաւաքարի մէյզանն էր գալիս, ծանօթ
խանութպաններից հիւրասիրւելու համար. Նախկին
բարեկամները սակայն, անկոչ հիւրի յաճախակի այցե-
լութիւններից լեթւած, շուտով երես դարձրին նրա-
նից, այլ ես մարդատեղ չընելով նրան. Միայն թէ
ընդհանուր այդ սառնութիւնը Գրիգորի հոգուը չէր.
Նա առաջւայ անվրդովութեամբ շարունակ ման էր ա-
ծում իր փորը ու մէկն ու մի ծակով ներս ընկնում
այս կամ այն խանութը, այժմ արդէն, հրաւէրքի չըս-
պասելով, որովհետև հարեանութիւնը որ օրւայ համար
է. Էլ չասենք, որ այդ «ապերախտների» մէջ հազիւ
թէ գտնւէր մինը, որ վայելած չլինէր կամ Գրիգորի
հարսանքաճաշը կամ նրա Շողորմածիկ» հօր հոգեհացը,
դեռ Օսանի ու Փեփելի կնունքի կեր ու խումը մի
կողմը թողած. ու պարտքը տալով է վերջանում..,

Եկաւ ժամանակը, երբ բազարաւորները սկսեցին,
արը դազգեահի, որն էլ վարագոյր շինած թաշկինակի
ետեր կուչ եկած, ճաշ անել. գլուխները կախ. ագա-
հութեամբ, բերաններն ու լեղունները այրելով շիլա-
փլաւի կամ բօղբաշի թէժութիւնից, ոսկորներ ամբողջ
կուլ տալով — շտապելուց. մի աչքը խանութի մուտ-
քին արած...

Ու երբ Գրիգորի ճանապարհը պահող աշակերտ-
ներից մէկն ու մէկը գուժում էր, թէ «զալիո է», ուս-
տան ձեռքերն ու բերանը արագութեամբ բածկոնակի
փեշերով կամ անդրավարտիկի ետեր սրբելուց յետոյց,
պարկ ու չեղքեսկա «թաւայի» վրայ էր ածում, թագ-
ցնելով բաժինը. հազարով, իբր թէ ոչինչ, որ ձրիա-
կերը չկարծէ, թէ մի կտոր հացը խնայում են...

Ապրել սակայն հարկաւոր էր...
Գերան ծակուզն այն ժամանակ խորամանկու-
թեան դիմեց, այցելութիւնները առաւօտեան ժամե-

ըին կատարելով, հնարովի որևէ մի պատճառ բռնած:
— Կօնօ, հօրդ ողործի, մի ինձ հասկացրու, թէ
սա ինչ խելք է, որ Թոխմախ ։ Եազօրը շուշեցի
Փարսադանի հետ ընկեր է դարձել, աւազակն է որ...
Պատասխանի չսպասելով, ուրախացած որ Կօնօի
մօտ գալն ի դէպ է, նա շարունակում էր.

— Բօյ, բօյ, Կօնօ ջան, երեխայ Ի՞ս. միսն այդ-
պէս չեն դնի թաւայի մէջ, տօ... Բալա ջան, կտորն
ափսոս է, կչորանայ, տօ... խորովելիս... Գլխի կտորը
վերև, տօ ներքեւ... վայ ես ըո զոքանչին ինչ ասեմ,
որ քեզ աղջիկ է տւել...

Խանութպանը, լեթւած, թաւան էլ, միմն էլ թող-
նում էր Գրիգորի տրտմադրութեան տակ...

— Թաւան փուռը տանեմ, Կօնօ ջան...

— Տար, տար, բիճա ջան, ճաշին հրամմեցէր...

— Տեսնեմ, բալա ջան, տեսնեմ, թէ կարողացայ,
խաթրդ չեմ կոտրի...»

Նախկին գերան ծակողը շուտով հոգեհացերի
մշատկան յաճախորդը դարձաւ: Որտեղից-որտեղ, «Հաղ»
նա ջեցեալների հոտն առնելով, նա վաղ առաւօտւանից
յայտնում էր ճաշի պատրաստութեամբ զրադւած
խոհարաբների մէջ, մի կողմից սրանց ծառայութիւն-
ներ մատուցանելով, միւս կողմից որոճալով թոցրած
կտոր ձուկը, ծածուկ, չսպասելով հոգեհացի վերջանա-
լուն, ինչպէս վայել է սպասաւորին... Կերակրւելու
այս ձեր սակայն մի փոքր յետոյ ստորացնող համա-
րելով, նա սկսեց հրաւիրեալների հետ խառնւել,
մտնել հանգուցեալի բնակարանը, սեղան բազմել, նա-
խօրօք զարմացած սպասորների ձեռքն առնելով,
միիթարանք խօսելով, սրտացաւ բարեկամի պէս...

— Փչանաս, Գրիգոր, փչանաս դու, այս էլ քո
կենացը, կատակում էր սեղանակից տէրտէրներից
մէկն ու մէկը, աւելորդ մի բաժակ գինի ես կու
գցելով.

— Մեղայ Աստծու, օրհնեա իւ Տէր. կարգիդ հաս-
տատ լինես. տիրուհուդ գլխից անպակաս «արասցէ»
քեզ Աստւած...

— Այս էլ որդուդ կենացը, տէրտէր ջան, խմում
էր Գրիգորը կըկնակին, աչքով անելով տիրացւին, թէ
այնքան էլ «յիմար» չեմ, որ «Հասկանամ», թէ տէր-
տէրը որդի չունի..»

Մի օր, ծուլանալով հանդուցեալին մինչև գերեզ-
ման ուղեկցել, Գրիգորը Հաւաբարի մէյդանում սպա-
սում էր սպաւորների վերադառնալուն Խօջիվանքից:
Մին էլ նրա աչքովն ընկաւ էր նախկին բանուրնե-
րից մէկը— Սահակը, ըս սայլը խանութներից մինի
առաջ կանգնեցրած, սպասում էր բերած շաքարի
ճանապարհավարձն ստանալուն:

— Ազողում, Սահակ. մւր ես, մարդ, չես երեսում,
ովհեց նրան Գրիգորը.

— Ո՞ւմն է այդ սայլը, տօ խօսիր է, վրայ էր
տալիս նա, հիացած այս հանդիպումից, թափահարելով
Սահակի ուսերը մտերմարար, հայրաբար.

— Ի՞մս է, մնձ ուստա, իմս, կարողացաւ վերջա-
պէս ասել նախկին ծառան, ամաչելով, նոր ինքնու-
րոյնութիւն ստացածի պէս...

— Զօրմնաս, բայցականչից Գրիգորը, սպասաւորի
հեղախոնարհ ոմից հիացած.

— Մարդ եմ ասում է, աւելացրեց նա, մտածելով
իր մասին, մտքում հպարտանալով, որ այժմ անկախ
այս մարդը իր ապտակների ու զագանակի գործն է:

Նախկին ծառան ուստային խաշի հրաւիրեց.

Երբ նրանք պանդոկից գուրս էին գալիո, Գրի-
գորը, կերած-իմածից օքորւելով, մի «պատիւ» և
ուզեց տալ նախկին ծառային, ձեռքը դէպի նա մեկ-
նելով, սրտաշարժւած, արտասուքն աչքերում.

— Դէհ, բալա ջան, աջս համբուրիր, որ այդպէս
լաւ մարդ ես դարձել:

Ու ծառայի շւարման հանդէպ, անյարմաբ գրութիւնից դուրս գալու համար, նա աւելացրեց, ձեռքը համբուրած համարելով.

— Զօրանաս, զօրանաս...

Մին էլ, նախկին ծառայի պարտքի տակ մնալը վիրաւորական համարելով, դերան ծակողը սրան հրաւիրել սկսեց.

— Գնանք, գնանք մեռելատուն. ինչ ամաչելու բան կայ, ողորզածիկը քեռուս որդու աներն է... Օ՛հ, ծհ, մի լաւ, Աստծու գառը մարդ... հնև, հնև, հնև...

Ու ծերունին, թողից գեղնած չերքեսկայի փեշը աչքերին բռնած, լալով, խնչելով, սկսեց գովարանել անծանօթ հանգուցեալին, սրա առատաձեռնութիւնը...

— Մարդ, տէրտէրի մի խօսքով հազար ըուբելի Փեփելին, երկու հազար էլ Օսանին է կտակել. մէկին-մինչեւ փեսայ Ալեքսուն գտնելը կառավարւելու, միւսին մարդու գնալու համար... Օ՛հ, ծհ, որ իմանաս, որ հասկանաս, գնանք, բալա, գնանք...

Գործ ունենալով, թէ բանի էութիւնը հասկացած, սայլապանը մի կերպ գլուխն ազատեց արքեցողի ձեռքից:

Երբ Գրիգորը դարձեալ Հաւլաբարի մէյդանն եկաւ, մեռլաւորներն արդէն անցել գնացել էին...

— Այս կողմը բիճա, ցոյց տւեց նրան հանգուցեալի տան ճանապարհը դադաղագործ Սօլօմանի աշակերտը, տեսնելով Գրիգորի շւարմունքը.

Զեսնափայտից էլ առաջ ընկած, նա հեկին տեղ հասաւ վերջապէս, բազմեց տիրացւի մօտ, սրա կողքը բդելով, խօսելով հանգուցեալի անթիւ հարստութիւնների մասին, նկարագրելով նրա խոշոր փափուշտներաւոր արծաթէ գօտին, պատմելով «ողորմածիկի» առատաձեռնութեան, Փեփելին ու Օսանին կտակած, այժմ արգէն, հինգ հազարի մասին, չնկատելով տէրտէրների զւարճութիւնը, որոնք գիտէին, թէ թաղւողը կին է...

Իմանալով այս, արբեցողն սկսեց լաւ ողորմագին.

— Վահ Փեփել, վահ Օսան...

— Տօ հայւան, տօ ուղիղ ասա, փսփսաց տիրացուն նրա ականջում. — մեռնողը մէկն է, այն էլ անունը Մարթա...

Վերջապէս պարզեց, որ գերան ծակողը լալիս էր իր «զրկւած» հարազատների չար բաղդը...

Սգաւոր կանայք մէջ խանուելով, գործին անսպասելի ընթացք տւին:

Սկսեց հարմնախօսութիւնը:

Օ՛, Փեփելին չէ, բայց Օսանին կարելի է վերցնել այրիացած Ալեքսօնի համար...

Ամուսնացնելու աղջիկ ունեցող մայրերից երկուերեցը փեսացւի ականջը զցեցին, թէ Օսանի առաջնի ատամներից մէկը պակասէ եկան, տեսան. ստի պոչը կարճ էր, որովհետեւ ոչ միայն Օսանի բոլոր ատամները տեղն էին, այլ և աղջիկ էր, որ... թաղի աչքը մատդ թշին խփէիր, տեղը խալ կմնալ... Յետոյ այն ասացին, թէ աղջկայ ոտքի մէկը կարճ է, թէ խորածնկութեամբ է, որ կաղութիւնը պահում է.

— Կանչեցէք, կանչեցէք փեսացւին, աղջկանս չափ գցեմ առաջը, որ տեսնէ, կատաղել էր Գրիգորը...

Որովհետեւ վազեցնելն անյարժար էր, Օսանին փեսացւի քրոջ ելիսօնի հետ բաղանիք ուղարկեցին, մանրամասն քննութեան հոմար. ու ստի պոչը այստեղ ևս առաւել կարճ գուրս եկաւ...

Այս յաջողութիւնից ոգեորւած, Գրիգորը էլ աւելի եռանդով, Օսանին չափ գցելու առիթ էլ որոնում:

Առիթը շուտով ներկայացաւ:

Երբ Խօջիանքի գերեզմանատանը Ալեքօն ուզում էր նշանի մատանին օրիորդի մատն անցկացնել, Գրիգորը նրան խանգարեց.

— Նաղողը նաղանայ, սուտը սատանայ, ասեց գերան ծակողը փեսացւի ձեռքը բռնած.

Ու ապա դիմելով Օսանին.

— Վազիր, վազիր, բանա ջան...

— Ճեսնելով աղջկայ յաճառութիւնը և ուզենաւով սիրաւ տալ նրան, գերան ծակողը դիմեց փեսացւինք
— Միասին, միասին, Ալեքս ջան, առաջ դու, առաջ դու...

Ալեքսն, սակայն պիտի կարմրէր:

Այստեղ էր, որ ամենքը տեսան անվատան փեսացւին, ոտքերը ծուռ, կողքերը աղիւս կրող ձիու պէս ներս պըծեցրած, փորը հուալ, մէջքին կպած.

— Ափսոս «իմ խեղճ» Ալեքսի, ասաց չարութեամբ Փեփելը Օսանի ականջում, հազիւ տրտասութեամբ բռնելով.

— Ագուաւ երեսիդ, Ալեքսն էլ չէր դիմանայ, հաստուցեց Օսանը, աչքերը կարմրած...

— Մուֆթա ձիու ատամները չեն համարում, վերայ բերեց Հերիքը, աղջիկներին խրատելով:

Ամենից լաւ Գրիգորի բանն էր, որ այսուհետեւ պանդոկներում ու հոգաճաշերին գրաբանալով պատմում էր «մաղալու» փեսացւի մասին, նկարագրելով երևակայական, հնարովի մարդարշաւը.

— Մի տեսնէիք է. Օսանս արդէն Խօջիվանքի սեղանատան առաջն էր հասել, որ փեսաս շարժուղի հրեշտակի դեռ թուջէ թեն էլ չէր տեսել.

— Դու այդ ժամանակ նրտեղ էիր, բնձա Գրիգոր, հարցնում էին սեղանակիցները, նրա սոււտը բռնելու համար:

— Ես, նրտեղ պիտի լինէի, — Խօջիվանքի զանգակատան հէնց գլխին...

Հերիքը չտեսաւ աղջկայ «թագն ու պսակը».

Գիշերային կրիւներից մէկի ժամանակ Գրիգորը ոտքի ուժին հարւածով նրան անկողնուց ներփն զլորեց.

— Տօ վեր կաց է...

Կինը, զլուխը աղիւսայատակին դիպցնելով, տեղն ու տեղը բանհողի եղաւ...

100/111

II. ԳՐԲԱՑԻ ՀԱՄԱՐ...

Շնացած երկու երեք մեծ «աչքեր» ունէր նորափեսան, որ բացւում էին մէկ այս, մէկ այն ծնկախուփի մօտ, կոնատակերում, թիկունքի վրայ: «Մեղրամսի» հէնց առաջին գիշերից Օսանը ստիպւած էր նորացնել վէրքնի սպեղանին, զգւանքը կուլ տալով...
Այն գիշերը...

Էլ արցունքի կտոր չմնաց խեղճ երեխայի աչքերից մէկն ու մէկում:

Կողքի, հին լաթի պէս անտարբեր տղամարդուց երեսը շուռ տւած, նա լեղդել էր աշխատում իր հառաչանքները վերմակի բրդէ հաստ շերտերի մէջ, կըծեկելով, վնդվնդալով, ոտքը ցաւեցրած լակոտի պէս...

— Փեսա Ալեքսի, բռ օրը պակսի, որտեղից-որտեղ նրա միտն եկաւ Փեփելի փախչող մարդու ետեից նետած իր բացականչութիւնը:

Ու անյայտութեան դների առաջ Օսանը այս անգամ ևս չճաշակեց կնութեան խորհուրդը կրող թըրթիւների ու կծկումների քաղցրութիւնը...

Նա երկու ամբողջ տարի հնութեամբ, հաւատարմութեասք ծառայեց ցաւեզար Ալեքսին, խաւար անկիւններում ու վերմակների ծալքերում գառն արցունքներ թափելով, անօգնական: Լսելով տես եկած հօրյանդիմանանքները, որդ ական ապերախտութեան համար.

— Իմ աղ ու հացը, մօրդ կաթը քթիցդ դուրս զան, որ մի-երկու թաժայ հաց չես ուղարկում, իմ գլուխս քարովը, Փեփելի համար...

Ու ապա, տեսնելով խանութից վերադարձող փեսային.



— Մարդ, Ալեքս, ես քեզ աղունակ տռի, որ այս օրը գցէս, նիհարացնէս... Խելքդ գլուխդ հաւաքիր, ես իմ երեխայիս տանելու եմ եկել... Թողնեմ. որ Մարթայի օրը գցէս, թէ ածուխի պարկումն եմ գտել երեխայիս...

Օսանը յիրաւի օրն օրի վրայ դեղնում, նիհարում էր, անտարբեր, վերջապէս, դէպի շուրջը կատարւածը:

Մի օր հայրը, գրբաց Մինասին—հոգեձաշելի պատահական իր սեղանակցին—հետն առած, աղջկայ մօտ եկաւ.

Գերան ծակողը նրան պատմել էր Ալեքսի հիւանդութեան ու Օսանի «չըերբութեան» մասին, մըդկալով, թէ

— Մարդ, երկու տարի է պսակը, ու մի թոռն էլ չունեմ, որ ծնկանս դրած խաղացնեմ, ծերութեանս այս օրերում... Մի կնանք, մի բան չլինի, որ մարդ եալի տաճյ...

Նոյն այդ օրը գրբացի հրամանով Գրիգորը Ալեքսի խանութը վագեց, բերելով այնտեղից դեղի ճաճին և ունաբը. Երբ ճարացուները իրար հետ եփել, սառեցրել էին, Գրիգորը թանձր հեղուկից լցրեց մի գենու բաժակ, առաջարկելով դստերը, թէ—

— Խմիլ, բալա ջան,

Որովհետեւ Օսանը յամառութեամբ մերժում էր խմել, հայրն ինքն օրինակ տւեց, ընդունելով գարմանը, լեզուն ծլպացնելով, աղջկայ ախորժակը գրգռելու համար...

Ի զմւը...

Գերան ծակողն այն ինչ խմում էր ու խմում, բազմապատկելով օրինակների թիւը:

— Տըաբւեցիր, մարդ, աշխատում էր խանդարել Մինասը, իր սովորական երկու բաժակ «պօրցիայից» զէնը չգնալով, աշխատելով ծերունու ձեռքից խւել «դեղի» շեշը.

— Գլուխս հապա որ քարովը տամ, Մինաս, տօմարդ. հապա թողնեմ, որ երեխաս մաշւի, արդարանում էր արբեցողը, յանդիմանելով գրբացին, անսրտութեան համար.

Ու ապա դիմելով Օսանին.

— Դէ, բալա ջան, Օսան, նրդի, խմիլ. մի կէս գդալ մի մատ, մի պուտ, հօրդ խաթեր, քեզ մատաղ, լալիս էր ծերունին, դեղնած չերքեսկայի փեշով աչքերը սրբելով, խնչելով, հաղալով...

Գրիգորը միւս օրն էլ յաջողութիւն չունեցաւ. Օսանը շարունակ յամառում էր.

Աղջկանը դեղը խմեցնելու պատրւակով էր, որ այնուհետեւ ամեն օր, պատարագից մինչև հոգեհացի ժամանակը, հայրն Օսանի տունն էր գալիս, գրբացին հետն առած.

— Մէկն էլ դռւ, մէկն էլ դռւ, Օսան ջան. տես մի է, թէ փորս ոնց է իւղակալել. մի պորտիս նայիր է, դռւ ես, որ հալում ես, չմըդ տանեմ...

Որը օտարի ամօթից, որն էլ նախորդ օրւանից մնացած խաղաման սաղացնելու համար, Օսանը գըրբացի ու գերան ծակողի առաջն էր դնում հին մսի կառները, վրաների մըջիւնները հեռացնելուց յետոյ, մի կտոր հացի հետ:

Երկու բարեկամները քիչ-քիչ մինչև ծւածեղը հասան:

Օսանի առողջութիւնն այն ինչ հետզհետէ վատթարանում էր...

— Գիր պիտի անենք, ասաց մի օր գրբացը յուսահատուածի պէս, դև կայ մէջը. ատամ մաքրելով փոր չի կշտանայ.

— Կլշտանայ, դեռ մէկն էլ աւել...

— Մարդ, դև կայ մէջը...

— Դէը սրանով կխեղդեն, պնդում էր արբեցողը, օղու շիշը իր փորին զարկելով.—պորտիս, պորտիս է...

— Գիրը լաւ է, իր վճիռը յայտնեց Ալեքօն.

— Սողոմոնը չի հրամայում, յայտնեց միւս օրը Մինասը, որ այժմս դեռ դուրս քշելու մեքենայական մի այլ միջոց էր առաջարկում.

Գրբացի կարծիքը յալթանակեց:

Ծաղկազարդի ուրբաթ գիշերը Ալեքօի տան բակը մի տարօրինակ պատկեր էր ներկայացնում: Փեսայու աներ, սարսափի կնիքն երեսներին, կանգնել էին, մէկը սենեակի, միւսը բակի դրան առաջ, մի-մի դագանակ ձեռքներին, խփելու պատրաստ: Մութ սենեակում, այն ինչ, չոր աղիւսայատակի վրայ, մի չուլ կապերտի տակ, Մինասը, քրտինք թափելով, Օսանի կողքն ու ծիծը սղմած, հուպ էր տալիս, «դեռ» բերանից դուրս քշելու համար...

— Մեռայ, մայր, Փեփել, լսեց Օսանի ոռնոցը խաւարի մէջ, կապերտի տակից...

— Թէժ է, մտածեցին երկու աղամարդիկ «դեմասին...

Հէնց այդ վայրկեանին Գրիգորն իր դագանակն իջեցրեց մը կատուի գանգի վրայ, Ալեքօն, այն ինչ, օրօրւելով, շնչասպառ, հետապնդում էր ամբողջ բակի երկարութեամբ մի արագավագ կրիայի...

Խեղճ մարդուն Գրիգորն ու Մինասը, մէկը ստեղից, միւսն ուսերից բանած, դժւարութեամբ սենեակը բերին ու պառկեցրին անկողնում:

Օսանն այն ինչ լալիս էր թոնրատանը.

— Խի՞ որ, Օսան ջան, հարցրեց Մինասը, երխտասարդ կնոջ թուշը քաղելով.

— Ի՞նչ իմանամ որ...

Միւս օրը Գրիգորը, որ Ալեքօին տես էր եեեւ պնդում էր թէ գիշերը բակում վազող անասունը կատու էր, այն ինչ փեսան հաւատացնում էր, թէ կենդանին կրիայ էր.

Սրանց վէճը լուծեց Մինասը, որ խօսակցու-

թեանը վրայ հասնելով, հաստատեց երկուսի ասածն էլ.՝կատուն Օսանի աջ կողքի, իսկ կրիան ձախ կողքի չարերն են եղել.

— Անուշ, սիրական, ասաց Գրիգորը, Մինասի ձեռքից օղու դատարկած բաժակն առնելով.

— Մարդ լինես պատւական, սազեցրեց Մինասը, շլթունքները վերարկւի թևով սրբելով.

Միւս տարի, բարեկենդաններին, Օսանը ծնեց Արմէնին գրբաց Մինասից:

Մկրտութեան ճաշկերւոյթի վերջը Գրիգորը, կամինալով Օսանի կողքից վերցնել մանուկին, «Ճնկանը խռացնելու համար», յանկարծ յետ-յետ գնաց ու փըռւեց յատակով մէկ.

— Գրիգոր, Գրիգոր, կանչեց Մինասը, գերան ծակողի ականջները ուլորելով.

— Լակերուց է, խօսեց Ալեքօն լեթւած, ցոյց տալով Մինասին օղու դատարկ շեշը.

— Ութզ կոտրւէր, որ աշխարհ չփայիր, անիծեց Փեփելը նորամանուկին, նախանձից, մեռածի համար սրտացաւ ձևանալով:

— Լեզուդ չորանայ, քոյր, բողոքեց Օսանը, Մինասի աչքը զննելով.

— Իմ Ալեքսուն դու վսխցրիր, վրա բերեց Փեփելը.

— Ալեքսուն վախցնողը հնդուհաւի քո քիթն էր...

— Ազիզ պահած հօրս գեղեցին, թարդ, աշխարհ, ոպետածա հօրս գեղեցին, վայ էր տալիս Փեփելը, հրաւէրքից տուն վերադառնալիս...

III. ԵՐԿՈՒՍԸ ՄԻ ՏԱՆԻՑ

Չնայելով Մինասի խնամքներին, Ալեքոի «Չնացած» երեք «աչքերը» ճռւտեր էին ածել, ողողելով համարեա ողջ մարմինը, ոտնատակերից մինչև գլուխը՝ Մարդը ճռուալով, տնքալով անկողնուն ծառայել սկսեց:

Օսանի զործը թեթևացնելու համար, թէ չըհանդուրժելով զբացի ու սրա երես առ երես մնալը խոհանոցում, դեղ պատրաստելիս, հիւանդը ըերել տւեցիր էլիսօին:

Ընտանիքի խաղաղ կեանքն այնուհետև խանգարւեց հարս ու տալոջ կատար՝ կատար կոփների պատճառով.

— Միսդ չի հալի, որ մարդուդ տակը փոխես, յանդիմանում էր էլիսօն Օսանին, սրա փարթամութիւնն ակնարկելով, որովհետեւ, յիրաւի, «գեր դուրս քշելու» ծաղկազարդի այն ուրբաթ գիշերից, կնոջ մարմի առ ժամ խանգարւած աճեցողութեան թափը, շղթաները կտրած, արագ-արագ հիւսել էր Օսանի ուսերի ու կոների այն կլրութիւնները, որ մարմացնում են կնոջ ինքնապաստան, թովիչ գրաւչութիւնը...

— Ես սկեսուր չունեմ, ես քո հոտած եղբօրը պահողը չեմ. թէ իմ մարդն է, քո էլ եղբայրն է, պատասխանում էր Օսանը.

Ու ապա օգտւելով այն հանգամանքից, որ էլիսօն, երեսը դէպի հիւանդն արած, ուղղում է սրա բարձը, նա երկու ձեռքերով չանչում էր քոյր ու եղբօրը և Արսէնին գիրկն առնելով, դուրս էր գալիս փողոց ու նոտում շեմաքարի վրայ:

Մի անգամ, երբ ծիծը երեխայի բերանում դրած, նա այսպէս որոճում էր իր մաստակը, Փեփելը, որ

աւանը ուտելու բան չունենալով, քրոջ մօտ ճաշ էր գալիս, մօտեցաւ նրան: Արսէնի մկրտութեան օրը տեղի ունեցած կատար-կատար վէճից յետոյ, երիտասարդ այրին, տեսնելով, որ քոյրը հօր մահը սգալիս անդադար սրա թունաւորւելու պատմութիւնն է անում, սիրտը շահել էր, նրա համար սեեր կարել տալով, Այնուհետև էլ Մին ասի և իր յարաբերութիւնների պատմութիւնը քրոջ «պատուած բերանում» պահելու դիտաւորութեամբ էր, որ ընդունում էր նրան իր մօտ, չմոռանալով, ճանապարհ գցելիս, նրա գրպանն ածել մնացած մսի կը-տորները ու հացի չորերը.

— Փեսաս հնց է, Օ'սան ջան.

Պատասխանի փոխարէն սա մի չանչ ուղարկեց դէպի տունը, աւելացնելով.

— Հըշշտակին տեսել է.

— Խեղճ մարդ, սրտաշարժւեց Փեփելը,—գնամ մէկ հարցնեմ, փոխեց նա իր խօսքի կարեկցական շեշտը, բրոջ սրտին չգիպչելու համար, թէ—

— Ալժանի չէ, ըայց էլի... թաւծ-շան հօ արգելւած չէ...

Փեփելի գալն ի դէպ էր:

Մի ամիս կլինէր, ինչ էլիսօի ամուսինը—հաւ ծախող Զաքարը գիւղերն էր զնացել վառիկ ու ձռ. հաւաքելու. ու կինը տասն ամբողջ օր համբաւ չունէր նրանց: Նա խնդրեց Փեփելին երկու ժամով չափ մնալ հիւանդի մօտ և այդպիսով հնարաւորութիւն տալ իւրեն տուն հանդիպել և հարեաններից ամուսնու մասին տեղեկութիւններ իմանալ:

Փեփելը համաձայնեց:

Երեկոյեան, երբ Օսանը թախտի ծայրին նստած Արսէնի հայար փալաս էր կարում, էլիսօն, իր աանից վերադառնալով, ներս մտաւ ու սենեակի մէջ տեղում կանգնած մնաց, չկարսղանալով աչքերը հեռացնել այդ բոպէին բակը շտապող Փեփելից, որ փախչելու ժամա-

նակ աղիւայատակի վրայ թողնում էր սպիտակ փոշու մի հետք... Հաւ ծախող Զաքարի կինը ինքն ևս դուրս նետեց սենեակից, հասաւ Փեփելին ու օձիքից բռնած քերեց ու կանգնեցրեց Օսանի առաջ.

— Հանի՞ր, դատարկի՞ր...

Գոյնը գցած, շրթունքները ցամաքած, Փեփելը հուզ էր տալիս իր գողգոջին ծնկները: Օսանն այն ինչ, չասկանալով այս շփոթի պատճառը, կարը դաշտարեցրած, նայում էր զարմանքով քրոջ երեսին: Էլիսօն մին էլ ամուր քաշեց Փեփելի գլխի սպիտակ վաթաթոցի կապը ու նրան սաստկութեամբ գետին զլորեց, յատակովը մէկ: Յաջորդ ըոպէին, նրա փորին ամուր նստած, նա շուռ տեսց խեղճի գրպանը: Այնտեղ ոչինչ չկար: Հաւ ծախող Զաքարի կինը վեր ցատկեց տեղից կատալած ու ամեն չափ ու սահման կորցնելով, ձեռքի արագ շարժումով, կոպառութեամբ յետ գըցեց իր զոհի շրջազգեստը, դուրս հանելով նրա երկու ծնկների միջից հիւանդի բրդէ, թարախոտ սոնապանը, որ Փեփելը, գողացած ալիւրով լցնելուց յետոյ, մի թոկով կախել էր փորից և որի ծայրերը չէր կարողացել ամուր կարել, շտապելուց... Օսանը յուզմունքից և շփոթմունքից ալ վարդ էր դարձել: Մին էլ նա գոյնը գցեց, վայրկենաբար հասկանալով, թէ իր հարազատի խայտառակ այդ վարմունքը ինչ սարսափելի զէնք է ներկայացնում էլիսօի ձեռքում, գերան ծակովի եօթը պորտը թաղիցն էլ դէնը խայտառակելու համար... Մի բոպէ նա պատրաստ էր բրոջ վրայ ընկնել, տեղն ու տեղը բկախեղդ անել, տրորել նրա բոլոր ոոկորները: Բնազդն էր սակայն, որ կառավարեց նրա թափը: Նա վեր ցատկեց նստած տեղից, կանգնեց թախտի վրայ ու ճանկերը ջղաձզաբար բաց անելով, շեշտակի վրայ պրծաւ, տալոջ երեսը ծւէն-ծւէն պատառտելու համար... Ելիսօն չդիմացաւ նրա ծանրութեանը ու գետին ընկաւ: Երկու կանայք ամբողջ հինգ

ըսպէ, իրար մազը ձեռքներին ոլորած, ատամն ատամում, կատաղութեամբ կուռում էին աղիւայատակի վրայ, միմեանց կուլ տալու պատրաստ: Մէկ էլ նըրանք գլոր-գլոր բակն ընկան գրկախառնւած, ոտքելն օդում թուցրած... Փեփելն այն ինչ, անտարբեր դէպի հարս ու տալոջ կուլը, ականջ էր դնում իր մարմին ցաւերին... Գժւածի պէս նա յանկարծ վեր թռաւ տեղից արագութեամբ ու դէպի Ալեքսօն վազեց... Փեսայի այլայլած դէմքը նրան սարսափեցրեց մի բոպէ, բայց նա շուտով գտաւ իրեն: Մի ձեռքով հիւանդի բերանը փակելով, միւսով նա քըքը բարձի տակը, վերցրեց այնտեղից որոնածը և բակը նետեց.

Ժամանակն էր...

Օսանն արդէն թուլացել էր ու, էլիսօի տակն ընկած, այնտեղից աղատւելու վերջին ճիկերն էր թափում... Փեփելը վրա պիծաւ ու բռնելով հաւ ծախողի կնոջ ուսերը, սրան գետին զլորեց: Ու մինչդեռ զըբաց Մինասը տէրողորմեան ձեռքին բակն էր մտնում, Փեփելը յետ քաշեց իր արդէն թուլացած ախոյեանի շըբ-ջազգեստը և նրա ծնկները մերկացնելով, այնտեղից հանել ձեացրեց հիւանդի արծաթէ ժամացոյցը, որ մի բոպէ առաջ վերցրել էր Ալեքսօի բարձի տակից...

— Գնդ, գնդ, գու կողոպտում ես փեսայիս— ըրոջս մարդուն...

— Սսսու, սսու, մնզգամ, սսաց Մինասը, տէրողորմեան Փեփելի մէջքին զարկելով, խրատաբար...

— Վկաներ, վկաներ կան, գոչում էր, սա, ցոյց տալով բակը եկած հարեւանների վրայ ու ձեռքի ժամացոյցը թափահարելով.

Հաւ ծախողի կինն այն ինչ պատմում էր Փեփելի անօրինակ գողութիւնը.

— Երկու ժամով... ոտքս կոտրւել էր, որ չէի գնացել, լոլբացնում էր նա.— ալիւրը պս ըկիցն տաել

է, ածել սոնապանի մէջ, որ տուն տանէ... և ի՞նչ
մեղաւոր եմ...

— Աչքակմագ, հապա որան ի՞նչ կասես. զ՞ո՞ղ,
զ՞ո՞ղ, մարդուս ժամացոյցը չէր, որ այս բոպէիս քոյրա
հանեց քու ծնկների միջից, նորից վրայ էր ուզուս
պրծնել Օսանը.

— Ալեւըն ածել է, դրել է, կարել է...

— Գո՞ղ, զ՞ո՞ղ, կրկնում էր Փեփելը երկու բոռոնց-
քներն իրար գարկելով. երեսն աղաւաղւած...

— Սոնապանը դրել էր, կարել էր...

— Այէլիսօ զէ, սուտ ասա, որ պոչը այդպէս կարձ
չլինի է... ո՞վ է ալիւրը սոնապանի մէջն ածում, վրա
ըերեց Մինասը, տէրողորմեան շրիկացնելով, հատ աչքը
հաւաքւած կանանց վրայ, —իր «խելօք» խօսքի ազդե-
ցութիւնն իմանալու հետամուտ...

— Սոնապանն առել է, կարել է...

— Ալեքօի, փեսայիս ժամացոյցը...

Մինասի-մէջ այլ ևս համբերելու տեղ չէր մնա-
ցել. ու վրիժառութեամբ էր, որ նա, դէպի տղամար-
դու հեղինակութիւնն արտայայտած անուշաղը ութեան
համար, իր յուսահատ արհամարհանը դէպի կինը
դրեց այս խօսքերի մէջ, երկու ցուցամատերն առաջ
ըերած, շներ կուեցնել ձեացնելով.

— Քը՝սս. քը՝սս, քը՝սս...

Սկսւեց մի կատարեալ իրարանցում, մի ժւոց,
որտեղ կանանց հասցէին ուղղած յանդիմանանքների
թէժ շնչտերը խառնում էին կատար-կատար վէճերի
ճիչ ու ծոցի հետ... Արդէն երկու բանակներ էին, ո-
րոնք, իրար մէջ մտած, պատրաստ էին միմեանց միաը
գգել... Այս ժամանակ Մինասը թերեց վեր քաշած,
չերքեսկայի ծայրերը երկու ձեռքերով վեր բարձրաց-
րած, խառնւեց կանանց մէջ, ոտքերն աքացելու պէս
թափահարելով, շուռ ու մուռ շրջելով, փեշերը տա-
րածած, քշելու պէս.

— Քը՝ քը՝ քը՝ քը՝

Լեզուների սանձերը սակայն շատ էին թուլացել
արդէն ու շարքերը խիստ իրար մէջ եկել բերաները
լայնացրած, տուատութեամբ զուրս վիժելով թաղի կեղ-
տուս սապնաջուրը...

— Փայտ, մի փայտ, զոռաց Օ ինասը, սենեակ
մտնելով,

Եւ ով սարսափ...

Մթութեան մէջ նրա ոտքը մի կոշտ բանի դիպաւ.
ու նա փուեց յատակովը մէկ:

Որը զարմանքից, որը վս խից, չկարողանալով
տեղից շարժել գրբացը նայեց դէպի արգելքը, զլու-
խը բարձրացրած... Նրա աչքերը խաւարի մէջ որոշե-
ցին սպիտակ ու տձե մի զանգւած, որ փուել էր սե-
նեակովը մէկ, դէպի ինքը ձգտելով, կոնանման երկու
սպիտակ ոստեր լուսնի արծաթի տակ տարածած...
Այսուհետեւ թիկունքն էր, որ տեղից բարձրանալու
կծկումների մէջ ուռած, այլևս իշնել չէր ուզում... Ու
առաջին անգամ իր կեանքում Մինասը հաւատաց սա-
տանաների գոյութեանը... Այս ժամանակ, «Եկեսցէն»
մոռացած, անկարող զլուխն ու ականջները հովանա-
ւորել ձեռքերով, նա մարդկանց օգնութեանը դիմեց.

— Սա տանման, սատանման, զոռաց նա ցնցւելով
գալարւելով. ու նորից գլուխն իջեցրեց աղիւսայատա-
կի վրայ, երեսն ի վայր...

Այս ահեղ գոչից բակի հայնոյանքն ու վիճաբա-
նութիւնը գաղարեցին...

Մի շատ սպիտակ կատու գուրս նետւեց սենեակի
պատուհանից...

— Ուրուրու, ժւացին բակն եկած երեխաները, պո-
կելով քարուքանդ մի պատից ալիզի կոշտեր, ու կատ-
ուի ետեից ընկան, կտուրից կտուր...

Երբ սատակեցրած կատուի լէշը բակը բերին, ա-

մինքը հաւատացին, թէ սպանւած կենդանին Մինասի
տեսած սաժանան է...

Գրբացը, սակայն, սենեակից չէր գուրս գալիս.

Թաղի երեխաներն էին, որ ժամից գողացած մի
քանի կիսայրեալ մոռ ճարելով, վառեցին և ուղերեւ-
ցին դէպի սենեակը, շրջապատւած ամեն կողմից եկած
թաղեցոց օղակով:

Սենեակ մտնելիս, նրանք մի ըոպէ անվստահու-
թեան նշաններ սկսեցին ցոյց աալ շէմքում...

— Ղու, ղու, ղու...

— Արսէնն է, սիրո տւեց ընկերներին երեխանե-
րից մինը:

Կենդանութեան այս շունչը նրանց մի փոքր խը-
րախուսեց ու նրանք քայլեցին դէպի անյայտութիւնը,
որովհետև ձեռքերում բռնած վառած մոմերի լոյսը
խանգարում էր տեսնել սենեակի ներսը:

— Մինամաս, բացականչեց ամենահամարձակը
նրանցից, մոմը բարձրացնելով, սրտապատառ, գուժե-
լով սի վտանգ...

Սարսափը, դիւթական գաւաղանի պէս, նորից
անշարժացրեց յուզւող ամբոխը...

Այն ժամանակ ներս մտածների աչքերի առաջ
գրբացը վեր կացաւ անվստահ ու գողալով, հեալով,
կծկելով կամաց—կամաց դէպի դուռը գնաց, խուսա-
փելով նայել յատակի վրայ ընկած «սատանային»...

Այդ Ալեքոի դիակն էր:

Կէս ժամ առաջ, հիւանդը, աչքերը պղտորւած
լինելով, չնկատեց իր բերանը սղմողի ու ժամացոյցը
տանողի երեսը: Մի փոքր շնչի գալով, նրան թւաց,
թէ քիչ առաջ իր վրայ յարձակողը մի աւաղակ էր.
ու որովհետեւ մօտը մարդ չկար, նա հաւաքեց իր վեր-
ջին ոյժերը և անկողնուց ցած իջաւ, աւաղակին հետա-
պնդելու համար: Սենեակի մէջտեղը սակայն նա կոր-
ցրեց իր հաւասարակրութիւնը ու ջնշասպառ գետին

փուեց, հոգին Աստծուն յանձնելով... Այս պայմաննե-
րում էր ահա, որ գրբացի ոտքը գէմ ընկաւ Ալեքօի
դիակին:

Օսանը, Փեփելն ու ելիսօն կուչ էին եկել կրղը
կողքի կպած, սկերեսութիւնից, ամեն մինը մի փոքր
մեղաւոր համարելով իրեն պատահածի համար: Մինասն
այն ինչ, «սատանայի» ձեռքիցն ազատւած, փախչում
էր ու փախչում... Մախաթ սարի տակ նա մի փոքր
նստեց, շունչը հաւաքելով, մտածելով անսանելի այդ
խայտառակութեան մասին, անտեղեակ, թէ թաղն ինչ
առասպել էր ուոցըել իր փախուստի շուրջը.

«Գրբացը, մտնելով հիւանդի սենեակը, սկսել է
գործ դնել «չարը» դուրս քշելու ծայրայեղ միջոցներից
մինը: «Դեր» շատ խորն է եղել կոխած իր ճանկերը
հիւանդի լերդ ու թոքի մէջ, իսկ աղօթքն այնքան զո-
րաւոր, որ նրան այնուամենայիւ դուրս է քշել այն-
պիսի ուժգնութեամբ, որ հիւանդի թոյլ կազմւածքը,
չդիմանալով նրա թափի սաստկութեանը, պատուել է:
Այդ ժամանակ Մինասը նստած է եղել Ալեքօի հէնց
բերանի առաջ. ու գրբացը մէկ էլ այն տեսնի, որ
«նզովեալը», ամբողջ մարմնով զարկելով իր գլխին,
պատուհանից դուրս նետեց»...

— Օ՛հ, օ՛ն, մինչկ այժմս էլ գլուխս ցաւում է այն
«նզովեալի» հարւածից, պատմում էր Մինասը մի երեք
օր յետոյ, Ալեքօի ողորմաթասը խմելիս.

— Ա՛քա, Օ'սան, ինսամի Թրիգորի մահը միտդ է
հօ, խօսեց ելիսօն, որ հարսի հետ հաշտւած, ուտում
էր միկնոյն ափսէից եղբօր հոգեհացը.

— Ո՞նց թէ միտս չի, քա ջան, պատասխանեց
Օսանը ցրւած:

— Ա՛քա, դէ որ միտդ է, բան եմ ասում, ականջու-
ինձ արա.

— Ասա, իմ քհյը.

— Դէ, այս տեղը, մքա, լուսահոգի եղբայրս որ
մեռաւ միւս օրը...

— Որ Բնչ...

Որովհետև Օսանը խելքի չէր ընկնում, նրան
«օդնեց» Փեփելը, որ ջգից տրաքում էր, հարս ու
տալոջ հաշտութիւնը տեսնելով.

— Հողեմ քո «դանդան» գլուխը, վրա պրծաւ նա
քընը չանչելով.—բա այս միւնոյն տեղը չէր, որ հո-
գին աւանդեց իմ ազիդ ու «պետլած» հայրը, քո ար-
ւած դեղիք...

Օսանը սարսափեց այս զուգագիպութիւնից:

Մի փոքր յետոյ, սակայն, բռնելով ելիսօի ու Փե-
փելի նոր կարած սեների փեշերից, նա «օրհնեց» երկու
հանգուցեալներին.

— Ի՞ն, աղջի, բան չունէք,—շունը շանից, երկուսը
մի տանից:

— Առակն անխոտելի է, աւելացրեց նա մի փոքր
յետոյ Մինասից սովորածը:

— Վնաս չունի հարս ջան, խրախուսեց երիտա-
սարդ այրուն հաւ ծախող Զաքարը, նրա ուսին խփե-
լով...

IV. ՀԻՆ ՎՐԵԺԸ

Այլ դեեր դուբս քշելու պատրւակով գրբացը
կամաց կամաց ոտքը յետ խփեց Օսանի տանից: Այն
ժամանակ երիտասարդ այրու համար սկսւեց անքուն
զիշերների մի ամբողջ շարք, երբ նա, Արսէնին քնեց-
նելուց յետոյ, բաղուկները երկարացրած, այս աղիո-
ղորմ հառաջանքն էր լսեցնում խաւարի մէջ:

— Արի, սիրեկան, արի, Մինաս...

— Թոքքան, բացասաբար շարժում էր «Մինաս»

իր զլուխը պատռում փորած մթերանոցի խաւար ապա-
կու միջից...

Գրբացի անսիրտ այս մերժումների շնորհիւ երի-
տասարդ կինը լաց էր լինում թէծ-թէժ, սիրտը պա-
կաս, անօգնական, զգալով փաղաքշանքների, զրկա-
խառնումների կարօտը, որ սիրոյ այս երաշտին շամփո-
ւում էր նրա մարմինը փուշ-փուշ, մինչև սրտի յետին
թելը հասած...

Մի գիշեր նրան թւաց, թէ զբսից զարկում են.
Նա բաց արեց գուռը ու նորից վրա բերեց արագու-
թեամբ, յետ-սենեակը մտնելով, ուրսափահար... Մի
սկ կատու խաղալով-խաղալով ցած էր զցել կախ տւած
սոխերի ձողը, որ անկման ընթացքում դիպել էր ե-
րիտասարդ այրու սենեակի դրանը: Այս յուսախարու-
թիւնը սիրտ կտրատող հառաջանքների աղքիւր դար-
ձաւ երիտասարդ այրու համար, որ ողջ զիշերը երեսն
ի վայր, անկողնովը մէկ ձգւած վիժում էր իր կիրքը
արցունքների հետ...

Առաւոտը, գուրս զալով սենեակից, նա տեսաւ
թափթիւած սոխերի կոյտը:

— Մեղայ Քեզ, ստածեց նա, զիշերւայ տեսածը
երազ համարելով, որ այս առաւոտին «կատարւում
էր»...

Ու երբ աջ ձեռքը զարմացարար դէպի վերին
շրթունքը տարած, աչքերը ման էր ածում, ասես մի
բան որոնելով տարածութեան մէջ, նա յիշեց զիշեր-
ւայ «երազի» սկ կատարին ու երեսը խաչակնքեց.

— Ցիսուս, Քրիստոս...

Նա դէպի շորեղէնի մնդուկը գնաց, որտեղ էլի-
մօն պահել էր Ալեքսօի թաղումից մնացած խունկը:

Երբ կը պակը պատրաստ էր, նա առաւ խնկան հա-
տիկները ու սկսից մին-մին կը պակը նետել, ծէսը կա-
տարելով.

— Այս Գրիգորի հնդուն...

—Այս Ալեքսի հոգուն...

—Այս էր մեղայ Քեզ, Մինասի հոգուն...

Չեռքն ափսոսաց խնկան երրորդ հատիկը բաց
թողնել:

Մինասը ուզում էր ապրել...

Այն ժամանակ, հատիկը տեղը գնելով, կինը սե-
նեակ մտաւ, առու հետը հինգ արթեկս Արսէնին ու
քայլերն ուղղեց դէպի Խօջիվանքի գեռեզմանատուն,
որտեղ այդ ժամերին գալիս էր Մինասը, ժամւորների
հետ զրոյց անելու համար:

—Աղջի Օսան, խի՞ որ, ձայն տւեց մէկը, հէնց
որ կինը ուզում էր հանգոտարանի քանդւած պատով
մտնել այնտեղ:

—Ի՞ն, մայրդ մեռնի, այ տղայ, դու ի՞ս, ասաց
այրին, տեսնելով զբացին, որ կուրծքը բաց, բութերը
արծաթէ գոտումէջ խրած, գալիս էր դէպի նա:

—Խի՞ որ, կրկնեց Մինասն իր հարցը:

—Ես ի՞նչ գիտեմ որ, արտասւեց Օսանը,

—Բօ, բօ. ես հմ չարացը՞լ, թէ՞ ձուդ է ծուել...
Երեխան մնց է:

—Ո՞նց որ տեսնում ես, սրտամեռ...

—Քո հարցնելով լաւ է, աւելացրեց Օսանը, տես-
նելով տղամարդի շփոթմունը:

—Լաւ կացէք, լաւ, ուրախ, տղատական.. Ես էլ
գնում եմ հարեանիդ տուն, տեսնեմ ո՞նց է...

—Էն մթի..

—Միկիտան Սաքուլի:

—Սաքեդի, կրակ լնկաւ Օսանի սիրտը:

—Հիւանդը Սաքուլն է, փարատեց զբացը Օսա-
նի կասկածը ու հիւացաւ, միանալով ժամաւորների
հետ:

Նոյն գիշերը երկար ժամանակ շուռ ու մուռ գա-
լուց յետոյ Օսանը, քնել չկարողանալով, երեսն առա-

տաղի մթին արած, համարում էր այնտեղի գերան-
ները, սև մտքերից աղատւելու համար:

Պատի թեքութեան պատճառով գերաններից եր-
կուսը, խախտելով զուգահեռական ընթացքը, մի կող-
մից սովորականից աւելի էին մօտեցել իրար, կազմե-
լով շուռ ընկած մի դագաղ, որի լայն ծայրում լոբու
կախ արած մի պարկ նրան յիշեցնում էր հանգուցեալ
Ալեքսի գլուխը դագաղում, այն ինչ նրա ահաբեկւած
երեակայութիւնը այդ չոր զիսից իշեցնում էր հան-
գուցեալի խաչ կապած բազուկները, մինչև առաստա-
ղից ամրացրած ձիւն մաքրելու թիերն ու ցախաւելը...
Մի րոպէ Օսանին թւաց, թէ այս երկար «ոտքերը» հե-
տզէնետէ ձգւում են մինչև պատերը, յատակը... Ահա
«Ալեքսն» մօտենում է... կինը, գլուխն երկու ձեռքերով
բռնած, երեսը դարձրեց դէպի հակառակ կողմը, զգա-
լով թրկունքի մօտ դիսկի շունչը... Խաւար պատի
վրայ լուսաւոր մի կէտ երեաց նրան, որ հետզէնետէ
լայնանում, ծաւալուում էր արագարագ բացւող վար-
դի պէս. այդ զբացի խնդաժպիտ դէմքն էր.

—Արի, Մինաս, ա՞՞ի, սիրեկան, մըմնջում էր կի-
նը դէպի պատր ձգտելով.

Դուռը զարկէցին.

—Մեղայ Քեզ, մի ես որ...

—Մինասը.

—Ո՞վ ես, կրկնեց Օսանը, չհաւատալով իր ա-
կանջներին.

—Մինասը, կրկնեց իր կողմից հիւրը.

—Որ ձայնդ Մինասինը չէ.

—Մինասի ուղարկածն եմ...

—Ո՞նց թէ...

—Այնպէս...

—Մեղայ Քեզ, աշխատում էր դիմանալ Օսանը,
զգալով որ հողն իր ոտքերի տակ շարժւում է.

Դուռը նորից զարկեցին.

Այս ժամանակ կինը, մօտենալով քնած Արուէնի ակողնուն ու արդարանալով երեխայի առաջ, սրա ականջումն ասաց.

— Շունը շանից, երկուսը մի տաճից.

— Ի՞ն, հողեմ գլուխը, ով ուղում է լինի, բոլորը մէկ, աւելացրեց նա ու այցելւին ներս թողեց.

— Օսանը սարսափած յետ նահանջեց. նրա առաջ կանդած էր հաւ ծախող Զաքարը - էլիսօի մարդը.

— Խի՞ որ, կատաղեց Օսանը, ձեռքերը մերկ կըրծը վրայ բանած.

— Այնպէս...

— Էլիսօն...

— Սև է, դժոխքի դև է.

Ու Օսանը այդ գիշեր լուծեց էլիսօի հին վրէժը...

V. ԿԱՅՆԱՒՈՐԸ

Միկիտան Սաքուլի գրութիւնը օրն օրի վրայ վատթարանում էր:

Ամբողջ չորս օր ջերմութեան մէջ պապակւելուց յետոյ, նա բոլորովին անզգայացել էր, բերանն ու շրթունքները ցամաքած: Սաբեդը չէր իմանում անելիքը:

Մինասը մի շաբաթ շարունակ զանազան թղթեր էր բերում, վրաները գրոտածների դեղին թանաքը լւանում երեք ճանապարհների հանգոյցում զրած ջրի մէջ ու այսպիսով պատրաստած հեղուկը կաթեցնում հիւանդի բերանի մէջ: Ի զուր...

Սաքուլի զառանցանքները հետզհետէ ոռնոցի էին նմանւում ու ամենքը վճռել էին, թէ նա մահւան հրեշտակին տեսել է արդէն: Զըներից ու գըներից յոյսը կըտ-

քած, Մինսսը դիմեց «գել» դուրս քշելու մեքենայական ծայրայեղ միջոցին:

Ուրբաթը սատանայինն է, բայց սուրբ շաբաթի առաջ գեղերը ընած ու թուլացած են լինում.

Երբ ուրբաթ երեկոյին, մութը կոխած, Մինասը Միկիտան Սաքուլի տունն եկաւ, հիւանդի ողջ ազգն ու տակը հաւաքւել էին նրա անկողնու շուրջը, թուքները ցամաքած, գոյնները գցած. բակն այն ինչ ներկայացնում էր հագինները ծւէն-ծւէն, չստները ճըւահան կանանց ու երեխաների մի պղտոր ծով: Գործատեղերից վերադարձող տղամարդիկ, բաճկոնակների կոճակները յետ արած, քրտնքից փափկած կրծքների կեղտը եղունգներով քերելով, կոնատակներում, որը հաց, որը գործիքներ, հուպ տւած, կանգնել էին կանանց ետելը, բակում, գուրսը, կտուրներին, բերանները բաց, ասես սպասելով ստորհրկրեայ ցնցումներին, կծկումնըին, որ փոշի էր դարձնելու մարդն ու մեղքը...

— Կուբանամ, երեխանս, քրիստոնեան, աշխարհ, երեխաս մեռաւ, մեռաւ, ունում էր մի կին գողզրուն կոնների վրայից մի մանուկ գետին գցելով.

Մի բոպէում երեխայի շուրջը գատարկւեց. ու գլուխը կորցրած խաժամուժը գունատ, փախուստի ու հետաքրքրութեան մէջ տատանւելով, դիտում էր ձեռքն ու ոտքը խաղացնող փոքրիկի երեսը, քարացած, շունչը պահած, սպասելով, թէ ահա «գել» կղարկէ մէկն ու մէկն հս...

Մինասը, զուրս գալով Սաքուլի սենեակից, դանակով մի շրջան քաշեց գետնի վրայ, երեխայի բոլորքը ու շտապով ներս մտաւ...

Արիասիրտ մի պատանի բակը բերեց, հեինե, երկու կեռամփուրներ, որ գնել էր բազարում, որովհետեւ հարևանները մերժել էին տանու շամփուրները տալ դիւական գործի համար: Աւելի սրտոտները պատանու

շուրջը մի օղակ էին ձևացրել, ձեռքները շամփուրների մէկ կեռերին, մէկ պոչերին մօտեցնելով, անվստահ, վախճանալով, ասես շանթարգելից... Արիասիրտ պատանին այն ինչ, ասես ծաղրելով խաժաժուժի սարսափը, բռնում էր ամբողջ ափով երկաթէ կեռերը ու այսպէս «պղծւած» ձեռքերը քսում երեսին, լեզուն, թուքը կուլտալ ձևացնելով...

Գրբացը դուրս եկաւ սենեակից, բաճկոնակի թեւերը մինչեւ արմունկները յետ ծալած, շփոթւելով, որ արիասիրտ պատանին ուշանում է բազարում. սա, որ մինչև այդ վախճանալով չէր ուղում մօտենալ սենեակի դրանը, այժմ սրտապնդւած դիմաւորեց Մինասին, «գործիքները» նրան յանձնելով.

— Այդ էլ, թող, քո «աշխատանաց» վարձը լինի, ասաց գրբացը, չնզունելով պատանու ձեռքից առուտուրից աւելացած քանի մի կօպէկը...

Այնուհետև գրբացը շամփուրների կարթերն իրար մէջ հազցըրեց ու այսպէս պատրաստած երկոտանին գցեց դեռ մի, ապա և միւս ուսովլը.

— Բարի՛, ասաց նա, գոհ. որ շամփուրների պոչերը մինչեւ գետին են հասնում.

Ապա նա կարթերը մօտեցրեց բերանին, կատարելով «չարը» նրանցով դուրս պոկելու շարժումները, ցաւին յատուկ ծամածութիւնները...

Գրբացը վերջապէս իր քայլերն ուղղեց դէպի հիւանդի սենեակը. գործիքների պոչերից բռնած, բարձրացրած, լուսնի արծաթի տակ փայլուն կաց, մամանակն է, ասաց գարկէզարկ կուեցնելով...

Մի կին թուլացած վայր ընկաւ, ալքի պէս մազերը գետնին տարածած. նա վիժում էր...

Միւսներն ամուր բռնեցին իրենց արզանդները, զգալով անհանգստացնող թրթիւններ.

Այդ եկող սերունդն էր, որ գալարւում էր սարսափի ու խաւարի օղակներում...

Աւելնորդները հիւանդի սենեակից մէկ-մէկ բակն եկան, թողնելով այնտեղ գրբացին ու Սաբեդին. Ամբոխը յւելում էր.

Տղամարդիկ որը բաճկոնակի կամ չերքեսկայի փեշով, որը թաշկինակով, որը մէկ արած երկու ձեռքերով ծածկել էին իրենց վլուխն ու ականջը, շունչները փորները գցած, չարի հարւածներից պատսպարւելով... Կանայք այն ինչ կկցել, պպզել էին գետնին հաւասար...

— Հարս, սիրտ պնդացրու, դուռը կողպի՛, հրամայեց գրբացը Սաբեդին.

Հիւանդը մի բեռը ներքնոցների, վերմակների ու բարձերի տակ թաղւած, աչքերը խոշորացրել էր, առաստաղին նայելով, շունչը կտրած...

— Քոռանամ, քոռանամ, լալիս էր Սաբեդը, թախանձանքով գրբացի աշքերի մէջ նայելով.

— Դէհ, հարս, բանի կաց, ժամանակն է, ասաց Մինասը ինքն ևս հիւանդի դըութեամբ անհանգստացած...

— Հարս, առ շամփուրդ ու մտիր թախտի տակ. մտի՛ր, մտի՛ր... Մտնենք, դեն աչքովս է ընկել, խըփենք, խփենք, ծածուկ տեղից, թախտի տակից...

Բակում ամբոխը շփոթւում, ալեկոծւում էր անմիտ ծովի պէս...

Սենեակից լսող մրմունջները հնտղնետէ որոշ էերպարանք էին ստանում...

Հոռոմին—Սաբեդի մօրը թւաց, թէ աղջիկը ըըկախեղդ հղողի խոխոռցներ է արձակում: Խեղճ պատաւի ծնկները ծալում էին. նա յենւեց բակի ունաբենու վրայ:

Ներսի աղմուկն այն ինչ սաստկանում էր, Միծանը բան դիպաւ պահարանի դրանը, յաջորդ բոպէին մինը կընկահան անել էր փորձում սենեակից խոհանոց տանող դուռը...

Տղամարդիկ առաւել խնամքով ծածկեցին գըլիս
ները, «պատսպարւելով».

Մի վայրկեան ներսում ամեն բան լւեց...

Յանկարծ վճռական մի հարւած խորտակեց պա-
տուհանի ապակին փշուր-փշուր.

Այդ Սարեդի շամփուրն էր, որ Մինասի ճակատը
պատուելուց յետոյ, զարկւեց պատուհանին:

Դուռը շառաչինով բացւեց, ու գրբացը դուրս
նետեց, երեսն արիւնլւալ, կողքն ամուր բռնած, այ-
լայլւած, յետ նսհանջող ամբոխի միջով հերին փողոց
վազելով.

— Շատ վմտ է դիպել «կատուն» զօջչաղին», ա-
սաց մինը երեսը խաչ հանելով.

— Շատ զորքան է եղել, հաստատեց միւսը...

— Դժւաշ թէ ապրէ խեղճ Մինասը, խղճահար-
ւեց երրորդը...

— Շունը կաղալով չի սատկի, գովեց գրբացին-
մի ալեոր, դուրս գալով քանդւած պատի տակից, «Ե-
կեսցէն» կիսատ թողած...

Այն ինչ Մինասը վազում էր ու վազում...

Խօջիվանքի գերեզմանատան վերեի դոների առաջ
ոտքը դիպցնելով նենգութեամբ մեկնած մի այլ ոտքի,
գրբացը գետնովը մէկ փուեց, երեսն ի վայր.

Յաջորդ լոպէին ուժգին թափով իջեցրած մի-
սալ քար ջախջախեց նրա կանգը.

— Աղջի, Օսան, խի՞ որ, կարողացաւ ասել գըր-
բացը աչքի մէկով Աւեքօի այրուն նայելով.

— Խի՞ պտի. այնպէս, պատասխանեց Օսանը մի-
փոքը մտածելուց յետոյ և անյայտացաւ խաւարի մէջ:

— Մինասի հոգուն, ասաց նա մի փոքը յետոյ
խնկան երրորդ հատիկը գցելով կրակի մէջ ու սպառ-
նալից աչքերով նայելով հաւ ծախող Զաքարին, որ
այդ լոպէին Արսէնին կողքին նստեցրած խորոված էր
պատրաստում ընթրիթի համար.

— Այս էլ հաւ ծախող Զաքարի հոգուն, նետեց
նա կրակի մէջ խնկան մի չորրորդ հատիկ ու սենեա-
կից դուրս գալով, նստեց շեմաքարի վրայ վշտահար.
Արսէնը մի քանի անգամ դուրս եկաւ, ու յայտ-
նից մօրը Զաքարի կողմից.

— Խորովածն այլուեց.

— Փեսան ասում է, թէ քաղցած եմ,

— Խորովածը սառեց.

— Արի էլի. քունս տանում է.

Օսանը կպել էր քարից ու չէր պոկ գալիս.

Արսէնը մի անգամ էլ դուրս եկաւ.

— Փեսան ասում է, կենամ, թէ գնամ...

Այն ժամանակ ձանձրացած, կինն առաւ երե-
խայի ձեռքը ու քայլերն ուղղեց դէպի էլիսօի տուն:

— Աքա, Օսան, դու Բո, ընդպառջեց նրան հաւ
ծախող Զաքարի կինը, որ զրանը կանգնած սպասում
էր ամուսնու վերադարձին.

— Բարում կենաս, Էլիսօ ջան. Զաքարի Արևի
հաւ ու ձու հաւաքելու է գնացել գիւղերը.

— Զէ, քա, խանութում բաղեր է փետրում.

— Հմամամ... աչքով չտամ, մպրի այդպէս խելօք
տղամարդը.

Հաւ ծախողը մօսենում էր հարբած ձեանալով.
Նա անցաւ երկու կանանց կողքով, օրօրւելով...

— Կատարը տաք է, ասաց Էլիսօն.

— Սապցնելը քեզ վրայ, աքա ջան. Իմս-քեզ պահ
տան էր, ասաց Օսանը, Էլիսօի թուշը քաղելով.

Երիտասարդ այրին նոր էր ոտքն իր սենեակի
շեմքից ներս դըել, երբ մինը մթութեան մէջ կոպու-
թեամբ խլեց նրա ձեռքից Արսէնին ու բակը զցելուց
յետոյ, դուռը կողպեց ներսից... Ու Օսանը, սարսա-
փահարւած, չկարողանալով մի խօսք անգամ արտա-
սանել, անձնատուր եղաւ յանդուգն այցւէի վրազ

փաղաքանքներին ու գրկախառնումներին, խաւարի մէջ.

— Փեսա Ալեքսի, քու օրը պակսի, ձայն տւեց նա փախչողի ետևից, նոր միայն զգալով, որ այցելուն Փեփելի աժուսինն էր...

— Երտանեռ, ի՞նչ ես ոռնում... Վայր ընկած ծառին մի գիւղ կացնաւո՞ր, բարկացաւ նա Արսէնի վրայ մի փոքր յետոյ, կոպտութեամբ սենեակը դցելով նրան...

VI. ՈՂՈՐՄԱԾ ՏԵՐ ԱՆԴՐԵԱՍԸ

Արա ու նրա լւացքն անելով, որի հետ բաղանիք գնալով, լողացնելու համար, որի էլ գլխին հինա դնելով կամ հունցած խմորը փուռը տանելով, Փեփելը մի կերպ իր կեանքը քաշ էր տալիս...

Թաղում փող ասած բանը չկար. ու նրա վաստակածը որթնած պանիրը կամ նախորդ օրւանից մնացած լորու թթւած բաժինն էր, որ հարեանները, դէն ածել ափսոսալով, ուղարկում էին նրա համար ի արիտուր կատարած աշխատանքի, շների ապրուստը կտրելով...

Ո՞րպիսի առատաձեռնութեամբ:

— Մայրս ապապրեց, որ եթէ քիչ է, էլի կարող է ուղարկել ասում էր հարեաններից մէկն ու մէկի երեխան, նրա առաջ դնելով պղնձի ժամանակ կանաչած ձէթափլաւի բերան-բերան լիք կաւէ քրեղանը:

— Ճնորհակալ եմ, որդի, բաւական է. մայրդ էլ խնդայ, հայրդ էլքո մուրազով... Ամենքը հօ իմ քոյր Օսանը չեն...

Ժամանակ առ ժամանակ, երբ, թաղի թթւից ու կծւից թոքն ու աղիքը քերւած, աչքերի առաջ մութ-

մութ ճանձեր էին երեսում, նա դուռը փակում էր ու գնում Օսանի մօտ, ոչխարի մսի չաղերով սիրտը մի փոքր իւղելու համար:

Փեփելը, սակայն, չէր վստահանում Օսանին խնդրել մի վերջնական ապաստ ան տալ իրեն...

Նրա անվստահութիւնը ունէր իր իճճւած, իրար խառնւած պատճառները:

— Այն էր պակաս, որ «իմ հաց ու ջրով մեծացածի» «դրան շունը» դառնամ, հոգուն մեղք էր անում Փեփելը, հարեաններից մէկն ու մէկի լւացքն անելու ժամանակ, ինքն իր հետ խօսելով, մտածելով այն գիշերների մասին, երբ «պետլած» Գրիգորի կրտսեր դուստրը քնում էր իր մօտ:

— Ինձ պահել է... Որ հաշւենք, նա ինձ մէկ գիշեր է պահել միայն, մնացած ժամանակը Ալեքսու հետ է սելի-բելի արել... Մօր փորի մէջ որ ջուր կտրեէր ու չծնուէր... Խելծ Ալեքսու փախցնողը նա չէր...

Երբ վերջ ի վերջոյ գալիս էր այն եղրակացութեան, թէ քոյրն իր առաջ մաքուր է, նա այնուամենայնիւ այս մեղագրանքն էր բարդում նրա վրայ.

— Իմ «պետլած» հօրը նա չղեղեց...

Մի օր նա այն եղրակացութեան եկաւ, թէ «անձարը կերել է բանջարը» ու վճռեց գնալ Օսանի մօտ, «խոնարհւելով»...

Ճանապարհի կէսից սակայն նա վերադարձաւ.

— Իմ լեզւիցն է, բացատրեց նա իր անվստահութիւնը:

Այդ օրւանից մանաւանդ Փեփելը իր լեզւի սանձը, ընդհակառակը, թուլացրեց, դժգոհ, որ Օսանը ինքնարերաբար չէ հասցնում սպասած օգնութիւնը, որովհետեւ այն ժամանակ և՛ փորը կուշտ կլինի և՛ լեզուն աղատ, ու դեռ, տեղն եկած, կարելի է քրոջ երեսովը մէկ նետել թէ—

— Աչքդ կնրեմ, դու չէիր, որ ինձ քաշ տւիր,

բերիր այս քո «հոտած» մարդու քանդածը, իմ ինչու էր պակաս. «պետլած» հօրս տունը զլիսիս չէր. թէ դուրսը, փողոցում էի մնացել...

Ահա թէ ինչու Փեփելն սկսեց Օսանին իր մտքի բերել ծուռ ու մուռ ճանապարհներով, աշխատելով նրա ուշագրութիւնը միշտ իր վատթար դրութեան վրայ պահել գութը շարժելու համար...

— Քար որ լինի իմ տեղը, Օսան ջան, նա ել չի գիմանայ... Այն քամին, որ փչում է նոկու պատերի ճեղից, կարծես սառուցի դանակ լինի... Դեռ լաւ է, որ, Ալեքօիդ—ողորմի քո էլ անցաւորաց հոգուն—հին անդրավարտիկը չեմ ծախել. այն է, որ մէջքիս եմ զցում մի փոքր տաքանալու համար... Քնթօ. Միխակը երեք մանէթ է ուղում պս տի երկութզաչափ ծակը կալնելու համար... Որ, երեք մանէթ չէ, երեք աբասի ունենած, բաց ասեմ—ոչ ամաչեմ, շապկացու կտոր կառնեմ...

Երբ այսպէս գանգստւելուց յետոյ, վերջապէս Օսանից ստանում էր մի հնածաշ չուստ կոմ երկուերնք կտոր միս, նա մոռանում էր առ ժամ քրոջ մօտ տեղափոխւելու միտքը,—կամ քիչը շատ համարելով, կամ Օսանի տւած ողորմութիւնն իօրև մերժումն ընդունելով.

Ասառայ մի գէշեր Փեփելը, նեղն ընկած, ուշ գիշերին եկաւ Օսանի մօտ, փորացաւի մի ինչ որ գեղ խնդրելու համար, որ Ալեքօն գործ էր ոծում հիւանդ ժամանակ: Շատ հին բան լինելով, Դսանը մինչեւ անգամ մոռացել էր այդ դեղի զուութեան մասին, որ և յայտնեց քրոջը առաջ գուուը բանալու, պատուհանից, զժգոհութեամբ, հասկացնելով նրան ուշ այցելութեան անտեղիութիւնը...

Ցաւը պայծառացնում է մարդու միտքը, ասել են ճները. անձարութիւնը խթում է մեր յիշողութիւնը Գուցէ այդ էր պատճառը, որ Փեփելը քրոջ մօտից յետ

գնալիս, երբ փորի գալարումները սաստկացան, յիշեց, որ այդ կտրուկ դեղը հէնց ինքը, Ալեքօին ընդունել տալուց յետոյ, պահել էր պատի մէջ փորած մթերանոցի մի ծակում, եռեկոյեան իր տուն փախցնելու համար... Նա վճռեց նորից քրոջ մօտ գնալ դեղի տեղն ասելու համար...

Միայն թէ, հէնց այն ըովէին, երբ ուղում էր զարկել պատուհանը, նրա ձեռքը, ասես էլեքտրականութիւնից ազգւած, յետ մղւեց... Մի չնչին բան, տղամարդի զլիսարկի մի յիշողութիւն... Ո՞րտեղ էր տեսսել այդ շատ չնչին, բայց միենոյն ժամանակ շատ կարեռ տուրկան... Քիչ առաջ, այն ըովէին երբ Օսանը կիսաբաց պատուհանի միջով յայտնում էր երդիգոնութիւնը Փեփելի ուշ այցելութեան մասին..

Այդ անիծեալ գլխարկը. որի կողքին, Փէփելի մտքում, այժմ բազմել են, մի կողմից, մրգով լիբը թաշկինակը և, միւս կողմից, ծխախոտի մի տուփ, արծաթապատ մի ծխամորչի հետ... Մտածելով՝ մտածելով Փեփելը հասաւ այն տեղ, որ այն ըովէին, երբ Օսանը խօսում էր հետը, կ'զած տղամարդու մի գլուխ խառնում էր նրա բաճկոնակի փեշերի ծալքերում, պատուհանին հաւասար...

Այս յայտնագործութիւնների շնորհիւ Փեփելի փորի ցաւը դադարեց, քրտինքը, միւս կողմից, ողողում էր նրա մարմինը. նա լողում էր երջանկութեան աւագանի մէջ...

Նախանձը մին էլ շամփրեց նրա սիրտը, մտածել տալով քրոջ փարթամութեան մասին, որ քիչ յետոյ մահցու մեղքերից ամենամահացուն էր նրա աչքում, պատճառ բոլոր չարիքների, անհոգութեան, «գէպի քոյը ցոյց տւած անարդարութեան», որի շնորհիւ այրին ինքնարերաբար ափաստան չէր տալիս, մատները լւացքից ծոմուած, իր հարազատին.

— Լինի, չինսի այդպիսի քոյը... Զուր կտրւէր

Նօր արգանդում, որ «պետլած» Գրիգորի հօթը պորտի
անունը չխայտառակէր...

Նա վճռեց զարկել պատուհանի ապակին, վրէժից,
սիրահարների գրկախառնումները խանգարելու համար,
արդարացնելով, քողարկելով իր այդ վարմունքը:

— Խի որ, իմ քոյրս չէ, մեծը ես չիմ... Զիմա-
նմնք, թէ ով է այն, այն... ես չէի, որ նրան աղջիկ
ժամանակ իմ Ալեքսու ձեռքից ազտեցի...

Երեք անգամ, մինը միւսից առաւել սաստկու-
թեամբ, կրկնած զարկերին պատասխան տւող չեղաւ...

Դիմացի կտուրից մի տղամարդ, գիշերւայ շորե-
քով, խը-փու անելով, մէջքն ու փորը քորելով, առաջ
եկաւ ու վերեից ձայն տւեց բարութեամբ,

— Խորն են քնած, քոյր, բակովը գնա...

Փեփելը սարսափեց իր արարմունքից ու վճռեց
տղործնա այդ կիսում թողնել, ամաչելով յայտնագոր-
ծել օտար մարդու ներկայութիւնը իր հարազատի
տանը...

— Զէ, եղբայր, վաղը կդամ, ուզեց փախուստ տալ
Փեփելը...

— Հէ՛ս օրհնած, էլ ինչ մին էլ վաղը նեղութիւն
քաշես, այստեղ ես էլի, տես, լոյսը բացւում է...

Ու չբաւականանալով հարեանի գործերում այսպէս
հեռու խառնւելովը, մարդը ոտքերի ըմբոստ բութերն
օդում, գիշերւայ շորերով փողոց իջաւ ու սկսեց ամուր
զարկել Օսանի բակի դուռը:

— Զէ, չէ, արե՛իդ մեռնեմ, թող քնի քոյրս, տ-
պաւուտայ քունն անուշ է, եղբայր, աղաչում եմ, ես
քո ոտի հողը...

Ուշ էր:

Արսէնը որ շոքի պատճառով քնել էր թոնրատա-
նը, արթնանալով այս անօրինակ աղմուկից ու մօրը
կողքին չտեսնելով սարսափեց.

— Օսանմամն, Օսանման, տօ, ասում եմ է...

Այս վայնասունից կտուրներին ու թոնրատնե-
րում էլ մարդ չմնաց, որ չարթնանար, որը պատերի,
նրն էլ տախտակէ պատւարի վրայով բակը չգար, աչ-
քիրը ճմռելով, քնաթաթախ...

— Դուռը, կոտրեցէք դուռը...

— Գողը, տօ, գողը...

— Խլեցէք դանակը, ձեւի դանակը...

Մի մարդ, յիրաւի, խոնանոցի երդիկի միջով դուրս
գալով, կտուր-կտուր վաղոց և ապա Խօջիվանքի գե-
րեզմանատուն նետեց...

Փեփելը թուքը բերանում ցամաքած, անշարժ
կանգնել էր բակի մէջտեղը, ծնկները ծալ-ծալ, սպա-
սելով Օսանին, որ վրայ էր վազում.

Արսէնն ականատես եղաւ, թէ ինչպէս մայր ու
մօրաքոյր, մի-մի վազը դարձած, գլոր-գլոր կոծոտում
էին իրար միսը, մերկացնելով ամօթը...

Կից տան պատճեանից այրի տէր Անդրէասը,
տեսնելով այս «նզովեալ արմատներին», բակն իջաւ,
«հրաժարիմքն» ասելով, խուսափելով նայել խայտա-
ռակ զոյգին: Նա թոնրատնից առաւ Արսէնի վերմակը
և արդէն ուշաթափւող քոյրերի վրայ երեք անգամ
«թուհ-թուհ» անելով, ծածկեց նրանց մերկութիւնը,
փաթաթեց նրանց և ուսն առնելով սենեակ տարաւ...

VII. ԵՂԲՈՐ ՔՈՅՐԸ

Փեփելի հեա զարկէղարկ լինելուց յետոյ, կարծես-
նրա աչքը հանելով, Օսանը էլ աւելի բացւում, փար-
թամանում էր, ծաւալելով իր հմայքը թաղից էլ դէնը,
գրաւելով հրիտասարդ նորապսակների ուշադրութիւնը,
որոնք առաջին մեղքի քաղցրութիւնը ճաշակած, երկ-
ըորդի հրապարակութիւնը ճիրաններում մի-մի անգամ ակն-
թարթաւո՞ն քննողական հայեացքներ էին նետուժ դէպիւ-

դեղեցիկ այրին, որի վառող աչքերից խուսափում էին նրանք պսակւելուց առաջ, «նւիրական նաւը», պապեանական սովորութեան համեմատ, անվրդով ու անխախտ «առագաստի» նաւամատոյցը բերելու հետամուտ, հարևանների ամօթից.

Զապած այս ուշադրութիւնը, թիթեռի վախկոտ այս ձգտումը դէպի «կրակը» Օսանի տեսողութիւնից չխուսափեց, ու նրա սիրաը լցւեց վկայւած թագուհու բաւականութեամբ:

Ու տիրուհիները հարկ են պահանջում:

Օսանը այս օշէնքից չշեղւեց. նա սկսեց թաղի նորապատկներին բանեցնել:

— Ա' բտեմ ջան, հէսց քո թագն ու պսակն ապրի, այս երեք աբասին առ, տուն զալիս տօլմացու քեր...

— Ա' ւետիք ջան, մէկ արի, այս մի-երկու փայտը ճղի՛ր...

— Սիմօն ջան, աշակերտիդ ուղարկիր, բողչասքաղիք ուանէ...

— Դարչօ ջան, Արսէնին հետդ տար այս փողով մի զլսարկ առ...

Օսանը չգիտէր գուցէ, թէ ինչ տանջանքների ու վէճերի պատճառ էին լինում հաճութեամբ կատարած այս յանձնաբարութիւնները տներում, երբ աղամարդիկ, մոմը հանգցրած ու անկողին մտած, կեղծաւորութեամբ, «ուրիշ բան» մտածելու առիթ չտալու համար, պատճում էին իրենց կողակիցներին «նաչար» որբեայրու անտէրութեան մասին...

— Տէր չես, քեզնից լաւ տէր, խայթում էր Դարչօի կամ Սիմօնի նորատի կողակիցը, այն ինչ «ըռնը», ւած տղամարդը կամ լուսեմ էր, կամ վրայ պըծնում, թէ—

— Ելի շան պէս հաջեցի՞ր.

— Շունը քեզ ծնրդն է.

— Իմ ծնողը...

Ու տղամարդը, կորցնելով ամեն չափ ու սահման, քունցքներով, գարշապարով մի լաւ մերսում էր երիտասարդ կնոջ մէջըն ու փորը...

Այս բոլորը սակայն չէր խանգարում, որպէսզի տղամարդիկ, Օսանին, իր զրանը տեսնելով, «բարի լոյս» կամ «բարի երեկոյ» մաղթէին: Եկաւ ժամանակը, երբ ամբողջ թաղոս իր հարկը տալիս էր Օսանին, որ մագնիսի պէս ծռել էր սկսել երիտասարդներին իրենց կարճ ճանապարհից, «բարի լոյս», «բարի երեկոյ», կարճ ճանապարհից, ամառ-նրանք ևս աշխատում էին հանդիպել Օսանին միայն, հարսներից ծածուկ-օրինակ չտալու համար-նրանք ևս աշխատում էին հանդիպել Օսանին «բարի լոյս» ասելու համար, թէ մենք նրանք ենք, որոնց տղերանցը գու այնքան հաւանում ես... Միայն թէ այս պառաւները, ողջոյնից յետոյ, ամուր սղմում էին բարակ ու ցամաքած շրթունքները, թէ—

— Սխալմունք ամեն մաշդու հետ պատահում է, մենք էլ գլուխներս քարովը տւինք, սխալեցինք. չկարծես թէ քո հատն ենք...

Օսանը ոչ միայն տրամադիր չէր զգալու շըմ-թունքների ծամածուական այս սղմունքների խայթոց-ները, այլև վերապահութեամբ արտայայտած այդ յարգանքները շոյում էին նրա ինքնասիրութիւնը, վկայելով, թէ այստեղ էլ մի «մարդ» կայ, որ շուն չէ...

Մի գիշեր սակայն նա պիտի անիծէր իր ծնունդը. Գիշերը այրի տէր Անգրէսամին ճանապարհ գցելուց յետոյ, նա գնաց թոնրատուն Արսէնի կողքին ընելու համար, երբ փողոցի մի ծայրից մինչև սիւսը կանացի մի ձայն գուժում էր...

— Աղջիկ է, աղջիկ. խեղդում են..., Լուեցին քայլերի ձայներ, չստերի քստիստոց-ներ...

— Խեղդում են, խեղդում...

Փայտէ պատւարի ծակից Օսանը հարցրեց հարեւան Մաքօին պատահածի մասին. Մաքօն չլսող ձևացաւ ու ճանապարհը շարունակեց.

Երիտասարդ այրին զուրս եկաւ բակից ու դիմեց դէպի փողոցի լապտերի սիւնը, որտեղ մի խումբ կանայք, ծծկեր երեխաներին գրկներն առած, խօսում էին պատահածի մասին, երեխայ խեղդելու ձեերն անելով, անուշադիր դէպի հեռում կանգնած տղամարդ կանց անվտահ ուղղումները.

— Դէ քը՛շ, դէ քը՛շ, զալիս է, հաւեր քշելու ձեերն սկսեց անել յանկարծ տղամարդկանցից մինը, ձեռքերը դէպի կանանց խումբը, երեսը դէպի մօտե. ցող Օսանը...

Մի վայրկեանում լապտերի շուրջը դատարկւց. Օսանը զգաց հեռացող կանանց արհամարհանըի ծանրութիւնը...

— Բարի լայս, «քոյր», բարեմաղթեց միւս առաւտ գիշերը կանանցը քշող տղամարդը.

— Աստծու բարին քնզ, Ա'րտեմ ջան, գիշերւայ աղմուկն ի՞նչ էր որ...

— Բահ, միկիտան Մաքուլի կնիկը—Մաքեղը արշիկ էր բերել. Մաքուլն ուղում էր խեղդել...

— Ո՞ւմ, Մաքեղին, թէ աղջկանը.

— Բօ. աղջկանը, Մաքեղն ի՞նչ անի...

— Աղջիկն ի՞նչ անի.

— Ի՞նչ գիտեմ որ.

— Ես գիտեմ...

Օսանը, ծաղրելով Ա'րտեմի միամտութիւնը, հետնաշերով խաղս մտած, աշխատում էր հասկացնել, ապացուցանել: Վերջապէս տղամարդը խելքի ընկաւ, որ գրբաց Մինասի գլուխը Խօջիվանքի գրան մօտ սսէ քարով ջախջախելուց դէսը անցել է ինն ամիս...

— Ո՞ւ ի՞նչ, հարցրեց Ա'րտեմը.

— Ի՞նչ, այ տղայ, զունա փչեմ, որ իմանամա...

Գնա, Մաքօլի հարցրան, թէ աղջիկը գրբաց Մինասի նման չէ...

Թաղի մէջ այդ օրը գիտէին, որ Արսէնն ու միկիտանի աղջիկը քոյր ու եղբայր են, մասամբ Փեփելի լեզւից, որ մօռացած «պետակած» Կրիգորի եօթ պորտի պատիւը, մատնել էր քըոջ գաղտնիքը...

VIII. „ԱԻԵՏԻՔ“

Ոչ Մաքուլը նորածնին խեղդելու ցանկութիւնն ունէր, ոչ էլ որ շարօնառիթը երեխայի ու գրբաց Մինասի հեռաւոր կամ մերձաւոր նմանութիւնն ը լինէր, ինչպէս որ տարածել էր Մաքօն, Օսանի պատմածը Արտեմից լսելուց յետոյ, առանց ճշգելու, տպաւորութիւն գործելու համար... Մինասը Մաքեղին անպատւելուց յետոյ, դեռ շամփուրի հարւածը չստացած, ցիւնիկարար յայտնել էր իր զոհին, թէ սրանից դէնը ինն ամիս տղայ կունինաս...

Միկիտան Մաքուլի ինը «խայտառակութիւնը» ամուսնուց ծածկելով, բաւականացել էր յղութեան առաջին ամիսներում յայտնել նրան, թէ գրբացի գուշակութեամբ աշխարհ գալ պատրաստողը տղայ է լինելու: Ցնծութեան ու բերկրանցի առիթ եղաւ ընտանիքում այդ «աւետիքը»... Զարմանալի չէ ուրեմն, որ Հոռոմը, բայց մանաւանդ Մաքուլը սկսեցին շրջապատել Մաքեղին արտաքը: Կարգի խնամքներով, նրա քմահաճոյքները մէկը տամնով կատարելով: Պէտք էր տեսնել Մաքուլին, թէ ի՞նչ բաւականութեամբ էր վազեցնում Մաքեղի ետեկց չսահերը, երբ սա սրտի խառնոցից գիշերները բակն էր դուրս գալիս ստաբորիկ:

— Մաքեղ, նստիր այս բարձի վրայ, ասում էր նա, բերելով չստերից յետոյ բարձերից ամենափափուկը և դնելով ունաբենու տակ կապած թախտի

բայ. կնոջն ուժով նստել ստիպելով, որ մէջը չցաւի,
մպտուղը չկտրելու համար.

— Զան, զամամն, պատասխանում էր Սաքուլը,
ունաբենու վրայ յենւած, Սաբեդի ամեն մի տնքոցին:
Ապա, թուշը շոյելով, աւելացնում էր քնքշաբար,
սիրտ տալու համար.

— Դեռ հօ «Ժամանակը» չէ, ի՞նչ ես վախենում,
չ... չը, հաշւի մէջ հօ չես սխալել...

Ու տեսնելով կնոջ դլսի բացասական շարժումը,
նորից վերսկսում.

— Լաւ է միտք՝ որ իմ հիւանդութիւնից յիտոյ
էր... չը, յետոյ էր, թէ առաջ չը.

Որովհետև ոչ առաջ էր և ոչ յիտոյ, Սաբեդը ու
չինչ չէր պատասխանում, սենեակ փախչելով.

— Տղայ է չէ, հարցնում էր Սաքուլը, հասնելով
կնոջ ետեից, նրա կողքը մտած...

Երեխան դեռ չծնւած անունը «Աւետիք» գրին.

— «Աւետիքիս» քէֆը, հարցնում էր Սաքուլը դի-
շելները տուն եկած, Սաբեդին աշքով անելով.

— Ա՛ռ այս «կրենդելը», կէսն «Աւետիքին» տուր,
հը՛ը՛...

— «Նրա» աչքն էլ կարեմ, պատասխանում էր
Սաբեդը, որձկոցից հազիւ շունչ քաշելով...

— Վայ, «ըուլուշնիկն» է հրամայել. կէսը
«Աւետիքին» պէտք է տաս, շարունակում էր կա-
տակել տղամարդը:

— Մայր, դիմում էր նա առջկայ համար թթու
վարունգ բերած Հոռոմին, — այս քաթանը թաղի աղ-
ջիկներից մէկին տուր, մի շապիկ անէ «Աւետիքի»
համար...

— Զիտօ (ծիտ), հրամայում էր նա իր պանդոկի
փոքրիկ աշակերտին, այս աբասին խարազ եօվանին
տուր, «Աւետիքի» չստերը բեր.

— Տղերք, այս էլ «Աւետիք» աղայի կենացը, դա-

տարկում էր նա գինու վերջին բաժակը, պանդոկի
սեղանակիցներին դիմելով.

Ցղութեան վերջին ամիսներին Սաքուլը յանկարծ
մտածող ու դիւրագրգիռ դարձաւ.

— Սաբենենդ, որ տղայ չլինի.

— «Նրա» աչքն էլ կարեմ, նազ էր անում կինը.

— Հէր օրհնած, բան եմ ասում, չխայտառակւ-
ւենք... հը... թէ աղջիկ է, աղջկայ պատրաստու-
թիւն տեսնենք, «խոստովանեցնում էր» Սաբեդին Սա-
քուլը.

— Վոյ... տղուկ ե՞ս, տնաքանդ. ես ի՞նչ գի-
տեմ որ.

— Զէ, բան եմ ասում. թաղում մի մատ մեղր
կդառնանք, մեր պատրաստութիւնը տղայի է. ի՞նչ
կասեն...

— Հը, ո՞նց է Աւեեե... ը՛ը՛ը՛... այս ինչի քէ-
ֆը, հարցը վերջին անգամ Սաքուլը Սաբեդին, երբ
երեխայի ծնւելու առաւօտը գնում էր տատմօրը կան-
չելու,

Տեսնելով մէջը ի բայ պառկած կնոջ աղաւաղւած
դէմքը, նա այս յուսահատական բացականչութիւնը
նետեց.

— Խայտառակւեցինք...

— Տղայ է, տղայ, յուսադրեց նրան Հոռոմը,
մտքում ծաղրելով այս անհամբեր փեսային.

— Կիսեղդեմ հը՛ը՛ը՛...

— Խի՞ որ, նեղացաւ Հոռոմը, փեսայի սպառնա-
լիքն իրեն վերագրելով, այս ինչ Սաքուլի խօսքը վե-
րաբերում էր ծնւելիք, Տէր մի արասցէ, «աղջկան»...

Զանձրացած փեսայի ներկայութիւնից, որ տատ-
մօրը բերելուց յետոյ ամեն քայլակոխում խառնւում
էր ոտքերի մէջ, Հոռոմը կանչեց Գասպարին, իր աւագ
որդուն, ինդըրելով Սաքուլին տանից հեռացնել...

— Ասեցէր ջուրն ընկնեմ էլի, ես գիտէի է, որ

աղջիկ է, չէ, Գամալար ջան, ասա, մի՞ թագցնի...

— Հրամմեցէք, Սօլօման, հրամմեցէք, Սերգո, հրամմեցէք Միխակ, հրաւիրում էր նա տես ու ճանա չին, աներձագի հետ պանդոկ վերադառնալիս, որովհետեւ վնասը վնաս է, ու աղջիկ ունենալու «վնասին» դիմանալուց յետոյ, հիւրասիրութեան մի երկու շային էլ թող հետը գնայ, մի անգամ, որ Աստևած երեսը դարձրել է...

— Զուրն ընկնելու եմ, խայտառակւեցի՞ւք, բիչ էր մնում ասէր Սաքուլը Զիտօին, խանութ մտնելիս...

Օզու շտօփը ու կէս գիւմին գինին դատարկած, սեղանակի ներն այժմ իրենց հերթին պատրաստում էին հիւրասիրել Մաքուլին, երբ ոչխարի ազգոսկը հանած վէգի հետ խաղալիս միկիտանը սարսափած բացականչեց.

— Թորիան...

Գոյնը գցած, նա դիմեց պանդոկի ծառային.

— Զիտօ, գնա, տես, տանը...

Սպասաւորը հէնց նոր էր վերադարձել տանից ու ծածուկ յայտնել Գասպարին, թէ ծնւածն աղջիկ է.

— Զի ուզի, մենք ինքներս կերթանք, ասաց Գասպարը, սպասաւորին աչքով անելով.

— Այս էլ Աւելեն... ը՝ ը՝ լ՛... կենացը, ուզում էր ասել Սաքուլը, բայց աներձագը ձեռքից առնելով բաժակը, խրատեց.

— Զափիցը դէնը լազաթ չունի, գնանք...

Տուն վերադառնալիս աներձագն սկսեց թւել աղջկայ առաւելութիւնները տղայի համեմատութեամբ, որովհետեւ տղայից ի՞նչ է գուրս գտլիս,—աղաւնի թըսցը նող կամ զըպանահատ...

Աներձագի յուսագլութիւնները սակայն աւելնորդ էին, որովհետեւ Սաքուլն արգէն նախապատրաստել էր այդ «գժբաղդութեան» համար ու այժմ ծրագիր ներ էր կազմում «աղջկանը» բիւշով, ոպիտակ բատիս-

տից կարած, շրջազգեստը հագցրած մի մի անգամ տնկաբանական այգին տանելու մասին.

— Դէս, տղամարդ եղիք, յարդորեց նրան Գասպարը, երբ նրանք ոտքները տան բակը դրին.

Այս խրախուսանքն էլ աւելնորդ էր, որովհետեւ այժմ Սաքուլը ռկատարւած իրողութիւնը, ինչ որ էլ լինէր, վերադառնում էր «չիրականացած յոյսերին».

Բանն առանց սողմուկի կվերջանար, եթէ այդ ըուպէին հոռոմն առաջ չգար ու մեղաւորի պէս փեսային «միսիթարանք» չխօսէր.

— Աղջիկին... մրտեղ է, տւէք, պիտի խեղդեմ, գոչեց սա, թուքը ցամաքած հոռոմին վրայ պրծնելով.

— Տէք, խեղդեմ, կրկնեց Սաքուլը աւելի ևս գոռալով, «կակղած» չերեալու հսմար, իր ճանապարհի վրայ բերելով մի կողմը քաշւած հոռոմին, իր ու երեխայի մէջ արգելք ստեղծելով, թափահարելով գոքանչի ուսը, թէ տեսէր, այս քաւթառն է, որ չէ թողնում, թէ չէ ևս «լակոտին» վաղուց խեղդած կլինէի.

— Լաւ, լաւ, իմացանք, չեմ ուզում, ջէրս դիր, քո հօրն ովորմի, մը տղան սրա հատը կլինի, վրայ էր ածում պառաւը նոր խելքի հկած, փեսային երեխայի խանճարուրի մօտ բերելով.

— Մալագեց, ուրախացաւ Սաքուլը, երեխայի երեսին նայելով.

— Մարգարիտ է, մարգարիտ, խօսեց աներձագը.

— Անունը դնենք Մարգարիտ, վրա բերեց Սաքուլը, Սաբեդի ոտքերի մշտ նստելով.

— Ասա Մարգօ, ուզդեց Սաբեդը ամուսնու սխալը...

IX. Օ Ձ Ը

Մարգօի ծնւելուց հազիւ տասն օր էր անցել, երբ Սաքուլի ու Սարեղի միջև մի փոքրիկ գժառութիւն պատճեց, որի պատճառը Մարգօի համար կնքահայր ընտրելու հարցն էր.

Միկիտանը գերծ չէր մնացել ընդհանուր վարակումից, նա ևս թաղի միւս նորապսակ երիտասարդոների պէս ծռում էր ճանապարհը, Օսանին «բարի լոյս» մաղթելու համար: Այրին, սակայն, նրա վրայ առանձին ուշադրութիւն չէր դարձնում. ու Սաքուլը երբէք միս կամ շաքար գնելու յանձնաբարութիւն չստացաւ նրանից, չհասկանալով գեղեցիկ այրու դէպի ինքն արտայայտած անտարբերութիւնը ուրիշների համեմատութիւնը: Մի անգամ նոյն իսկ Օսանը այնպէս կարձ կտրեց, որ Սաքուլն այլիս նրա դուռվը չէր անցնում: Մեղքը միկիտանին էր:

Սարեղի յղութեան վերջին ամիսներին, մի օր Օսանին «բարի լոյս» մաղթելուց յետոյ, նա կանգ առաւ այրու առաջ ու համեստաբար, կարմրելով հարցրեց, թէ ինչու «բոյրիկը» փունջի օղին իր պանդոկից չէ գնել տալիս: Այրին կարձ կտրեց.

— Որտեղ փողի հարց կայ, քո կամ ուրիշի պանդոկը ի՞նչ խօսք ունեն...

Միկիտանը այս անցքը չկարողացաւ թագցնել Սարեղից, աւելացնելով, թէ ինքը ուղիղ սրտով էր արել առաջարկութիւնը.

— Ում սիրան ուղիղ է, նա ճանապարհը չէ ծըռում...

— Հը՛ը՛ը...

— Հէնց այդտեղ էլ մնա...

Միկիտանի լեզուն կարճ էր. նա լոեց...

Այնուհետև պանդոկը գնալիս նա իր ճանապարհն այլես չէր ծռում «բարի լոյսի» համար: Միտքը սակայն Օսանի մօտ էր: Ահա այստեղ էր, որ սկսւեց «գունչը խաղողին հասցնել չկարողացողի» պատմութիւնը: Գիշեր չէր լինում, որ Սաքուլը մի բան չպատմէր Սարեղին Օսանի մասին, երբ բարձերից ամենափափուկը կնոջ տակ գնելուց յետոյ, նստեցնում էր նրան ունաբենու տակը յարմարեցրած թախտի վրայ, «պտուղը» չկտրւելու համար...

— Թաղի խայտառակիչն է, ասաց նա մի օր, երբ Սարեղը որձկոցները դադարեցրած անկողին էր մտել — Մաքօի մարդուն. Արտեսին ձեռքից բաց չէ թողնում, ժամերով կանգնեցնում է փողոցում, թէ ինչ է, մէջքացաւի եախու շինել է սովորեցնում.

— Չինի՞ թէ քո մէջքն էլ է ցաւում, հաբցրեց Սարեղը այնպիսի հեգնանքով, որ միկիտանն այնուհետև Օսանի անունն այլիս չտւեց

Միայն այժմ, երբ հարց եղաւ նորածնի համար կնքահայր գտնելու մասին, Սաքուլը համարեա անգիտակցաբար մէջ բերեց Արսէնի անունը ու լեզուն կծեց.

Ուշ էր.

— Երեխային թուրք կպահեմ ու «նրա» ձեռքը չեմ տայ...

Կուապատճառը վերացրեց չոռումը:

Սաքուլի տան ուղղակի դիմացը, նեղ փողոցի կողմից, բազմամբոխ մի տուն կար, եռայարէ: Մբատէրը, կապալառու Փարսեղը, ժամանակով իր կարմրաթուշ լայն երեսը ածելել էր տալիս Հոռոմի հանգուցեալ ամուսնուն: Երկու տղամարդկանց միջև այսպիսով հաստատել էր մի տեսակ մտերմութիւն. ու պէտք էր տեսնել, թէ որպիսի ուշադրութեամբ կապալառուն դէպի նեղ փողոցը նայող պատշգամբում, բազ-

կաթոռի վրայ բազմած, սապնոտ երեսը ձեռքի կլոր հայելու մէջ դիտելով, լսում էր վարսավիրից Հաւլաբարի բոլոր անկիւններում հաւաքած սուտն ու ղորդը:

Այս մտերժութիւնը շոյում էր Հոռոմի ինքնասիրութիւնը, ու մի օր նրան թւաց, թէ Փարսեղի կողմից յատկացրած շնորհը ամուսնուն գրգում է հարևանների նախանձը... Սրանց աչքը աւելի խորը հանելով էր ուստի, որ Հոռոմը շաբաթ առաւտաները, դեռ Սարեղին պատկերը մինչև, ջերմեռանդ ուխտաւորի պէս գալիս, տնկում էր միկիտան Սաքուլի տան կտուրի վըրայ, ծխնելոյզի նտեից Փարսեղի երեսը մաքրելու գործողութիւնը տեսնելու համար...

Քանի շատ էր դիտում Հոռոմը իր ամուսնու շարժողութէնները, այնքան առաւել նշանակութիւն էին ստանում նրա աչքում երկու տղամարդիկ, որովհետեւ եթէ ածելու անվտանգ զրօսանքը կապալառի լայն հրես: վր մէկ վկայում էր վարսարվիրի շնորհը, միւս կողմից Փարսեղն էլ պիտի որ կրողը լինէր այն գերբնական ոյժի, որ վանում է գործիքի սուր բերանի վտանգը...

Գուցէ, ենթագրական թէ իրական, այդ ոյժն էր պատճառը, որ Հոռոմին մի-մի անգամ կուռը երկարացնել էր ստիպում, ասես Փարսեղի մեծ-մեծ ականջները քաշելու համար...

Բնազրով էր նոյնպէս, որ Հոռոմը մատերով ուրելու գործողութիւնն էր կատարում ծխնելոյզի եւ տեից, երբ ամուսնը, ածելելը վերջացրած, զրացում էր կապալառի ձախ այտի խալամազը կարգի բերելով...

Կին այնուհետեւ իր սէրը դէպի կապալառուն դրեց վարսավիրի մէջ, ուրբաթ գիշերները խելացնոր համբոյքներով ծածկելով նրա ձեռքերը, շաբաթ առաւտաները Փարսեղին հասցնելու համար, երեսն ածելելիս...

— Ե'լ յայտնի չէ, թէ ումն էր ողբում Հոռոմը մահացած վարսավիրի դիակի ու ուաջ.

— Սրտամեռ, էլ աղա Փարսեղի երեսն ով է թըրաշելու այսուհետեւ, հեծկլտում էր նա, ամուր ծեծելով ամուսնու զագաղի խուփիր...

Այրու համար մեծ միկթարանք էր ուստի այն, որ Փարսեղն իր կարմրաթուշ, լայն երեսը այնուհետեւ մէկ այս, մէկ այն վարսավիրի ձեռքը գցելուց յետոյ, վերջապէս թողեց տանն ածելւելու սովորութիւնը: Գըլխաւորը սակայն Փարսեղի «բարի լոյս իմ քոյրն» էր, որ նա ուղղում էր Հոռոմի հասցէին սրա հետ պատահած ժամանակ... Երախտապարտ այս ուշադրութիւնը սիրած աղայի կողմից խրախուսանքի պէս էր, որ սկըզբներում կարմրութիւն էր բերում Հոռոմի երեսին, մինչև ականջները...

Այս բացառիկ գրութիւնից օգտւելով էր, որ Հոռոմը խնդրեց Փարսեղին միկիտանի աղջկանը գիրկն առնելու...

Խօռք առած, նա Սաքուլին պարծենալով յայտնեց, թէ կապալառուն, յարդելով հանդուցեալ վարսավիրի յիշատակը, «խնդրում է» նորածնի կնքահայրը լինել:

Եթէ միկիտանի կռների տակ մի-մի ձմերուկ գընէին, նրա ուսերն այնքան չին բարձրանայ, որքան այս ուշադրութիւնից. միայն թէ բոլորովին Սաքեղի տակը չմնալու համար, կնունքի ջուրը նա Արսէնի ձեռքով ժամ ուզարկեց, քսան կօպէկ ընծայելով նրան.

Սարենգը իր կողմից պարտքի տակ չմնաց ու հէնց կնունքածաշի ժամանակ իր վրէժը լուծեց թէ Սաքուլից և թէ Օսանից, լսելով միկիտանի առատածեռնութեան մասին.

— Մօր համար կարմրադեղ կառնէ, խայթեց նա միկիտանին:

— Օ՛ձ, Օսանն առանց կարմրադեղի է սիրուն. գու ես որ ռսեին սապօնն ինչ անիշնիսին խրատն ինչ, ուզում էր ասել Սաքուլը, բայց Փարսեղից քաշւեց...

Խ. Ա Ր Ի . Ա Ր Ի ...

Մարգօի մկրտութիւնը սեպտեմբերին էր. ու Արսէնին երկար ժամանակ չյաջողւեց նորից տեսնել երեխային, որի մասին միակ յիշովութիւնը տէրտէրի հոգատար քնքշութիւնն էր եկեղեցում, թէ աւագանի մէջ բնկամելիս, թէ մեռնով նրա անդամներն օծելիս Սրտի սղմումներով էր ուստի, որ Արսէնը ձմեռւայ երկար գիշերներին յիշում էր միկիտանի աղջկայ համարեա մերկ, յետ ընկած, ուսերից ցած ընկնելու պատրաստ գլուխը, երբ քահանան նրա ոտքերից ու ձեռքերից բռնած հանում էր նրան աւագանից... Ի՞նչ կպատահէր, եթէ Փարսեղը չնդունէր իր բազուկների մէջ պոկելու պատրաստ մերկ ու կլոր այդ գլուխը... Կնկնէր անկասկած եկեղեցու յատակի սալերի վրայ, ջարդ ու փշուր խորտակւելով...

Երկար մտածելուց յետոյ, Արսէնը վերջ է վերջոյ գոլիս էր այն եղրակացութեան, թէ նոյն այդ բանը կարող է պատահել ամեն ժամանակ, օրինակ, տանը լողացնելուց յետոյ.. Ինչու նա Մարգօի մօտը չէ, սրա գլուխն իր ձեռքերում ամուր, ամուր պահելու համար... Այս սկ ու երկար գիշերները... Ոտքերը փորին հուպ կպցրած, Արսէնը մէկ էլ գողում էր այն սարսափի առաջ, որ ազդում էր նրան Մարգօի թռնիրն ընկնելու կարելիութիւնը: Անցեալ ամառ թաղի մէջ երկու երեխայ էին կրակն ընկել, այրելու.. Փառք Քնզ, Տէր, որ գլշերը հաց չեն թխում... Հազիւ այս միսիթարանքին հասած, նա սկսում էր մտածել երեխայի, մօր ծոցից, ցած ընկնելու կամ նրա տակովը լինելու մասին, ինչպէս որ իր հետ ևս պատահում էր շատ անկամ... Լուսացած նա վազէվազ դէպի միկիս

տան Մարգուի տունն էր գնում. ու մի կատարեալ ցնծութիւն էր նրա համար փայտէ պատւարի միջով տեսնել Մարգօի փալամները թոկի վրայ փռած... Նա աւելի վաղ զալ սկսից այնտեղ, ու մինչդեռ Օսանը հիասքանչ ինքնամոռացութեան մէջ խորասուզւած օրորում էր իր քունը կանացի մարմնի աճեցողութեան թրթիոնիրով, Արսէնը հետախուզում էր Մարգուի տան բակը տախտակէ պատւարի միջով: Նրա աչքերի առաջ կատարւում էին Մարգօին լողացնելու պատրաստութիւնները... Նախ գոլիս էր Հոռոմը կտուրից կտուր, հարկանի բակով, համարեա ամեն օր, Մարեղին օգնելու համար: Դուռը բսնալով, նա սենեակ էր մանումու գուրս բերում ջրով լիքը կտթան, զնում բակի մէջ շինած հնոցի վրայ, կրակն անում ու նորից սենեակ մանում: Սպա գուրս էր գալիս Մարեղը, հնոցի տակից տաշեղ տանում, կպչանի համար: Մի փոքր յետոյ պատուհանի միջով անցկացրած երկաթէ ծխախողովակից գուրս էր գալիս վառարանի ծուխը: Տղան ձեռքերն իրար էր շփում. ուշեմն Մարգօի տեղը տաք է... Սկսում էր անձկալի սպասողութիւնը... Խեղճ Արսէն, որ չէ կարող բակը մտնել, փուրս դարձած, հնոցի կը լրակը վչել, փայտ աւելացնել կաթսայի տակ... Ո՛ւհ, այս Հոռոմն էլ որ պառաւել է. կրակի փայտն ի՞նչ է, այն էլ դարսել չգիտէ, որ ջուրը շուտ հոայ... Ահա և գոլորշին, որ բարձրանում է կաթսայի վրայից... Դարձեալ չեն դուրս գալիս... Ահա վերջապէս և Հոռոմը, որ բակն է բերում լւացքի տաշտը, մէջը եռացը ջուր ածում, ողողում, կեղտաջուրը ուղղակի դէպի տախտակէ պատւարը շպրտում, որպէս զի բակում ցեխ կամ սառոյց չգոյանայ... Զուրը թափում է Արսէնի երեխին պատւարի ծակերի մըջով... Նա իր շորի թեռք սրբում է երեսը... Հոռոմը վերջապէս տաշտի հետ անյայտանում է դոների մէջ... Ի՞նչ չոր է այդ տաշտը... Գոնէ Մարգօի տակ շոր փոէին... Ու այնուհետեւ, մին-

չեւ վերջին վայշկանը, մինչև սասկնաջրի դուրս բերելն ու թափելը, մինչև Մարգօի լւացքի փռելը, մինչև Հոռոմի իրեն տուն վերադառնալը հարեանի բակով, Արսէնը սպասում էր այն ջերմհանդ ուխտաւորի պէս, որ ծէսի ամենաանշան շարժումները բաց չթողնելու համար, լարում է ուշադրութիւնը մոլիւանդ մանրակտութեամբ...

Մի երեկոյ Արսէնը ծակերի միջով նկատեց Սարեդին, որ սենեակի պատուհանի ետեղ կանգնած, մատը դարկում էր ապակուն, աշխատելով զբաղեցնել գիրկն առած երեխային: Մարգօի փոքրիկ դէմքը հազեւ էր նշանաւում գլխի փաթաթոցի խճճած ծալքերի մէջ: Արսէնի աչքից չվրիպից անտարբերութեան այն կնիքը, որ կրում էր այդ դէմքը: Ի զուր Սարեդը, երեխայի ձեռքը բարձրացնելով, աշխատում էր նրան կանչելու նշանն անել տալ:

— Արի, արի...

Մարգօն անտարբեր էր դէպի շուրջը կատարածը, բաւականանալով գլուխը շփել մօր կզակին, քոր գալուց:

— Արի, արի, շարունակ ձեռքի նշաններ էր անում Սարեդը, ժպտալով երեխայի երեսին, յորդորելով հետեւ իրեն.

Բայց ի զուր.

Արսէնի սիրաը ցաւում էր փոքրիկի յուսահատ անտարբերութեան պատճառով:

— Միթէ կեանքը գիղեցիկ չէ.

— Միթէ Արսէնը չկայ այլ ևս...

— Արի, արի, ձեռքով ու գլխով էր անում մանուկը պատնէշի ետեից.

— Արի, Մարգօ, արի...

Գլխի ընկնելով, որ փոքրիկն իրեն չէ տեսնում, նա ուզեց բանալ բակի դուռը և ներս մտնել, բայց

Հոռոմը, կտուրից կտուր անցնելով, արագութեամբ սենեակ մտաւ:

Արսէնը նկատեց, թէ ինչպէս պառաւը մօտեցաւ երեխային, ձեռքը նրա ճակատին դրեց ու անհանգատութեամբ նայեց Սարեդի թախծոտ և յուսահատ երեսին: Այս համբախօսութիւնը Արսէնի սիրու կտոր արեց.

Վերջապէս Հոռոմը առաւ Մարգօի գլխի փաթաթոցը ու դստեր հետ փոքր ինչ վէճի բռնւելուց յետոյն փողոցն եկաւ և, օգտականով Արսէնի ներկայութիւնից, ինգրեց Մարգօի փաթաթանը տալ Օսանին, երեխայի «աչքը» աղօթելու համար: Սպիտակ փաթաթանի ջերմութիւնն էր պատճառը, որ Արսէնը թոչում էր դէպի իրենց առն այնպիսի արագութեամբ: Երբ նաև հերին տուն հասաւ, Օսանն այնտեղ չէր: Երեխան յիշեց, որ մայրն այդ օրը պիտի եկեղեցի գնար «պիտած» Գրիգորի և Ալեքսօի համար պատարագ պատիւրելու: Օսանին նա պատահեց եկեղեցու բակում այրետէր Անդրէասի հետ խօսակցելիս: Ու դժւար է ասել, թէ ինչու Օսանը Արսէնի հետ տուն վերադառնալիս կոպտութեամբ մերժեց Մարգօի «աչքն» աղօթել: Նրա համմը, որ Արսէնը վլայ եղաւ իր և այրի տէր Անդրէասի հաղիպումին, թէ այն պատճառով, որ Սարեդը ակամայից դարձել էր գլուխ Մինա: Ի գգւանքների առարկան: Դժւար է նոյնպէս ասել թէ ինչու Արսէնը այժմ ծոյլ քայլերով էր վերադառնում դէպի միկիտանի տուն: Մարգօի գլխի փաթաթանի սառնութիւնից, թէ զգալով եռեխային մի օգնութիւն հասցնելու իր անզօրութիւնը.

Ուզիդն այն է, որ վաթաթանը Սարեդին յանձնելով, նա ստեց.

— Մզօթած է.

Բայց այդ ակնորոդ էր. Մարգօն նախորդ

օրը կերած ձէթափլաւը յետ թափելուց յետոյ, թե-
թեսպել էր արդէն հիւաղութիւնից.

— Դու, զու, զու...

Մին էլ Սաքեզը բացականչեց ուրախացած.

— Կանչում է, կանչում է...

Եւ յիրաւի, երեխան ձեռքով էր անում Արսէնին.

Սա ամաչեց «սևերհսութիւնից».

— Տղայ Բս, թէ աղջիկ, հարցրեց Սաքուն Ար-
սէնին կատակելով.

— Տղայ, պատասխանեց մանուկը լրջութեամբ.

Ն էկ էլ նա շփոթւեց, այդ հարցը մի ակնարկ
համարելով իր անզօրութեան մասին.

Որպէս զի իր արտասուքները չտեսնեն, Արսէնը
դուրս փախաւ սենեակից, չհամարձակւելով ընդունել
Սաքունի ձեռքից սառուշաքարը.

— Արի, արի, ձեռքով էր անում նրա ետեից
Մարգօն...

XI. ՓԵՓԵԼԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ

Թոնսատունն ու բակը մաքրելուց յետոյ, Օսանը
մթնաղէմին սպասում էր իր տան առաջ ոտքի դադա-
րելուն, հաւաքած աղբը հարեանի պատի տակն ածելու
համար: Մէկ էլ նրա առաջը տնկւեց աղքատ Սալբին
իր տղամարդու-կոյր թամրազի ձեռքը բռնած.

— Խի որ, աչքս հէսց քեզ էր մնում...

— Բօ, իսի որ, զարմացաւ Սալբին Օսանի ան-
հիւրընկալ ոճից.

Ապա հեալով, լալով նա ծամծմել սկսեց Փեփելի
անունը, փայտը ցած զըսած, զլուխը ծհծելով, ա-
զերսելով թամրազին վկայել կոյր աչքերով չտեսած
մի բան...

— Դու ասա, թամրազ, այ թամրազ, ցնցում էր
Սալբին մուռացկի ուսը...

Օրօրելով, սա վերջի վերջոյ գետին ընկաւ հար-
բածութիւնից:

Այն ժամանակ մուրացիկ կինը, յոյսն իր տղա-
մարդուց բոլորովին կուցրած, չանչեց նրա զլուխը,
անիծելով.

— Բեմրամզ...

— Այն Աստւածը, այն ժամը վկայ, առաջ տա-
րաւ նա իր խօսքը, շարունակ Օսանին դիմելով, պատ-
մելով մի ինչ որ կողոպտման մասին.

Երիտասարդ այրին վերջի վերջոյ հասկացաւ,
որ կողոպտողը թամրազն է եղել...

Աղքատ կողոպտելու այս պատմութիւնը սկզբում
փոքր ինչ զւարճացրեց Օսանին: Սալբուն սիրտ տալ
ձեռացնելով նա սկսեց հարց ու փորձի ենթարկել նրան
չտեսնեած այդ դէպքի մասին, ժամանցի համար.

Հոգեճաշի կառավարիչը, խոհարարներին գւար-
ճացնելով, այդ օրը «գինեվէճի» էր բոնւել թամրազի
հետ: Օգտելով մուրացկի կուրութիւնից, «առատա-
ձեռն» կառավ սրիչը նենքութեամբ դատարկել էր տը-
ւել նրան տաս-տասներկու թաս գինի, կովի զմայը
մունքից բերանը բաց Սալբու աչքերի առաջ, առանց
մի կաթիլ իր բերանն առնելու...

Երբ կոյրն այլես կանգնել չէր կարող, կառա-
վարիչը, ի վարձատրութիւն «ծառայութեան», նրա
պարկն էր կոխել քանի մի կտոր խաշլամա, չմոռա-
նալով ճանապարհ զցելիս էլ մի լաւ աքացի Սալբուն
ուտեցնել քամակից.

Երբ նրանք գինուց ու պարկերի ծանրութիւնից
օրօրելով «պետլած» Գլիգորի տան առաջ էին եկել,
թամրազը, հաւասարակշռութիւնը կորցրեց ու փուց
գետնով մէկ: Մուրացկի աչքերը փակւեցին ու նա
տեղն ու տեղը բնեց: միլուքն օդում, կըջանիկ... Ժա-

մանակ չկորցնելու համար, Սալբին պարկը քնածի գլխի տակ դնելուց յետոյ, զնաց էջմիածնեցոց թաղը՝ որտեղ նրան մի-երկու փալաս էին խոստացել կարկատանի համար.

Թարմ սոխի առատութեան շնորհիւ ու թաղի հոտած պանիրը վերջացած լինելով, Փեփելին այդ ժամանակները սովորական լորու և որթնած ձաւարի փոխանակ սոխ ու պուա էին տալիս լացքին օգնելու կամ ուխտ գնացողների ինքնաեռներն ու պղնձեղէնը մաքրելու համար:

Եօթն ամբողջ օր կուտ հացի բորբունածով ու սոխով քաղցը խարելուց յետոյ, կինն այնուէս հիւծեց, որ մին ու ծիծը փախչում էին նրա ծռմռւածկմաղքի վրայից, ցաւեցնելով...

Հէնց այդ օրը վաղ առաւօտանից խեղճի գլուխը պտոյտ էր գալիս նա սակայն չուղեց լացքը յետաձգել: Հարեան կառւրից քանի մի ծայր ցախ թըռցնելով, նա ջրի համար կրակ արեց ու սենեակ մտաւ, հանեց վրայի ծւէն-ծւէն հազուստը, հագաւ ուղղակի մերկ մարմնի վրայ «պետ լած» Դրիգորից մացած, գործի բաճկոնը ու ամօթը պատերից ծածկելով, առաջը կապեց վերմակի ծակ-ծակ մի կտոր...

Չեռքը դէպի կուժը մեկնելուն պէս, սակայն, նրան թւաց, թէ գետինն իը ոտքերի տակ շարժւում է. ու նա ստիպւած էր նստել աղիւսայատակի վրայ...

Ծնկները փորին հուզ կպցրած, գլուխը, փախչելուց պահելու համար, կեռ-մեռ մատերում բռնած, նա, վնագնում էր կէս ժամ յետոյ լակոտի պէս, վախենալով երազական անդունդների խորայատակ մթութիւնից:

Մահւան սարսափի առաջ Փէ փելը մին էլ ցընցւեց, վերջին ոյժերը լարելով էր ուստի, որ նա ոտքի ելաւ: Բակն եկած, նա տեսաւ, որ ջրի կրակն արդին հանգել է, թողնելով ճիւղաւոր մոխիրների հետքել...

Հարեանի տղան մի լիլոտ անձեւնոցիկի մէջ բերեց երեկւանից մնացած, երկու ֆունտը երեք կօպէկանող մի բուռը ծիրան:

— Մօրդ ասա, մարդդ ու որդիդ ապրեն, ճանապարհ գցեց նա երեխային, ծիրանը առաջովը կապած վերմակի ծակ-ծակ կտորի մէջ ածելով.

Քիչ յետոյ, նա սենեակ մտաւ, առաւ կուտ հացի մի կտոր, նստեց բակումն ընկած մի սալ բարի վրայ, բորբունած հացը փթած ծիրանով համեմել փորձելով.

Հէնց այդ ժամանակն էր, որ հարբուծ թամրազը թրմբալով, փուեց «պետած» Գրիգորի տան առաջ... Փեփելը մօտեցաւ պատւարին. Սալբին անօգուտ կերպով աշխատում էր արթնացնել իր սղամարդուն: Մուրացիկ կինը, այն ժամանակ, հաւաքեց թամրազի պարկից գետնի վրա: շաղ ընկած լօշն ու խաշլաման, շըրջազգեստով սրբեց նրանց վրայի թողը, յետ-թամրազազգեստով սրբեց նրան փողոցի մէջ, զի պարկն ածեց ու թողնելով սրբան փողոցի մէջ, զնաց էջմիածնեցոց թաղը կարկատանի փալամերն ստանալու յոյսով.

Մսի, խնկան պէս դեղին, չաղերը այնպէս էին գրգռել Փեփելի ախորժակը, որ նրա բերանի ջուրը գնում էր...

— Երանի ձեզ, մտածեց Փեփելը թամրազի ու Սալբու մասին.

Այդ որպէին, թաղի երեխաները, ոտը կոտրած մի շան ետեից ընկած լինելով, փողոցը խաղաղել էր.

Փեփելը զգուշութեամբ բաց արեց բակի դուռը և առաջովը կապած վերմակի ծակ-ծակ կտորը հուզ վըրա քաշած, փողոցն եկաւ, մօտեցաւ թամրազին, ու նրա գլխատակը դրած պարկի բերանից հանեց լօշի մէջ փաթաթած ձկան մի երկու պոչ ու հեռացաւ.

Ագահութեամբ, շտապելով, գողս ու ծը վարն ածեւ

ըուց յետոյ, նա վճռեց հէնց վախտանից ձեռքն առնել աղքատութեան ցուպը... Սակայն այդ միտքը նա շուտով՝ թողեց, որը «պէտլած» Գրիգորի «անունը» չխայտառակիլու, որն էլ Օսանին «ցնծութեան» առիթ չտալու համար...

— Ողորմութիւն, աղջնկ պարոն, դէղի ջան...

Այս Թամրազն էր, որ շարունակում էր մուրալ երազում...

Փեփելը մօտեցաւ տախտակէ պատարին. մուրացկանի գլուխը պարկի վրայից ցած էր ընկել. կինը նորից արագութեամբ դուրս եկաւ փողոց ու պարկը գիրկն առնելով անյայտացաւ բակում.

Աւարը թախտի վրայ դատարկած, նրա սիրտը խառնել սկսեց, որը կշուռթիւնից, որն էլ զգելով Թամրսզի պարկի պարունակութիւնից: Աղքատ թաղի մուրացիկների ողջ կարողութիւնն էր այդ.—խնդրու երեխաների չվերջացրած կուտ հացի բորբոսնած, մըկների էրարից խլխած կտորներ, գինոտած լոշի ու մսի պատառներ, Թամրազի ծխամորչը, հին վերմակից դուրս գջւած, թոկի պոչով կապած բամբակէ մի գուլպայ, աղբանցում գտած ծւէն-ծւէն չատի մի տակ, ըսի կեղտաշերտից կպել էր սոխ, խնկան պէս դեղին, ճարպի մի կտոր...

Մին ու լոշը ջոկելուց և մնացածը յետ Թամրազի պարկն ածելուց յետոյ, Փեփելը մօտեցաւ տախտակէ պատւարին, պարկը, գողութիւնը ծածկելով, նորից փողոց գցելու համար:

Սալբին արդէն վերադարձել էր էջմիածնեցոց թաղից: Երջապատւած թաղի երեխաներով, նա ողբում էր իր կորուստը: Զարանձիներից մինը, խըղձահարւած, յայտնեց նրան, թէ պարկը Փեփելն է գողացել: Այն ժամանակ Սալբու և երեխաների հայեցքները մեխւեցին տախտակէ պատւարի վրայ, աշխատելով ծակերի միջլց թափանցել աղքատ թալնողի, այդ

ըոսէից, նզովեալ բակը, երկիւղ կրելով մի քանի քայլ անել.

Համարեա խելագարւելովէր, որ մուրացիկ կինը, ոչ մի կողմից օգնութիւն չգտնելով, հերարձակ, գլուխն երկու ձեռքերում ողմած, կռացած իր տղառարդու վըրայ, հնչեցրեց նրա ականջում հրդեհի լափող բոցերով շրջապատածի պէս.

— Թամրազ...

Թամրազն այն ինչ անշարժ, անտարբեր, մէջքի վրայ փռւած, շրթունքները լղելու ձևերն էր անում, երազական հոգեճաշը վայելելով.

— Զարկւած է, խելքին զոռ տւեց մէկը.

Այս մի խօսքը բաւական էր, որպէս զի փողոցը դատարկելէր.

Մրտոտի մէկը, «Եկեսցէն» ասելով, պատուհանների ետևից նայող սրտապատառ հասարակութեան առաջ դուրս եկաւ դիմացի դոնից, «արիաբար», ոտքերը սաստկութեամբ գետին զարկելով, երկիւղը սանձելու համար: «Ընկրորի» մօտ եկած, նա հանեց իր գրանից սկ կոթով մի դանակ, աչքերն երկինք բարձրացրեց ու երեսը խաչակնքեց: Շարունակ մուրացկի դէմքին նայել խուսափելով, նա իր մեծ դանակի ծայրով նրա բոլորքը գծեց դիւթական շրջանը...

Թամրազը շարժւեց, վիզը քորելով.

Բնած միջատը Սալբուն յանձնելուց յետոյ, նա աշխատեց ոտքի կինել, բայց ճնկները չհնազանդեցին ու նա ստիպւած էր նստել, գլուխու յետ գցած, մէրուքն օգում, կոյր աչքերը վերև, երկնքից հարցմունքս անողի պէս...

Անօգուտ կերպով ձեռքերը շատ այս ու այն կողմն անելուց յոգնած, մի փոքր յետոյ նա ճանկուտում էր հողը, կորուստն ասես երկրի արգանդից գուլս պոկելու համար...

Մինչդեռ հարկանները սիրտ առած հետզհետէ

փողոց էին դուրս գալիս, Փեփելը պատնէշի միւս կողմը կոխու էր տալիս մահւան դէմ...

Ազահութեամբ փորն ածած ծիրանն ու ձկան պոչերը գնացել, սրտին քար էին գարձել. խայտառակւելու ամօթն այն ինչ, միւս կողմից, խեղճի միսը քաղում էր ծէն-ծէն. ու կինը, պատւարի ծակերից տեսնելով փողոցում կատարւածը, ոչնչացաւ բոլորովին: Ամօթը ծածկելու համար առաջովը կապած ծակ-ծակ վերմակի կտորը ցած ընկաւ նրա փորից... նա չոգեց, հազիւ կարողանալով յենւել պատնէշի վրայ, բոպէ առ բոպէ սպասելով, թէ ահա ամբողջ թաղը Օսանի գլխաւորութեամբ ներ կիսուժէ, իր մերկութիւնը տեսնելու համար: «Պետածն Գրիգորի դուսարը իր գլուխը զրեց Թամրազի պարկի վրայ, փսխելով, ապականելով աղքատ թաղի մուրացկի ողջ կարողութիւնը...

Սալբու ողբից խղճահարւած, հարեանները խրթ-խթելով նրան ռպղտլած Գրիգորի բակը քշեցին, աւարը յետ խլելու համար:

Փեփելը նկատեց Սալբուն, որ փայտը բարձրացրած մօտենում էր իր գլուխը ջախջախելու համար, հեռարձակ, կուրծքը բաց... Զասկանալով աղքատի միշտ հլու, միշտ ցինիկ դէմքի այժմ սարսահ ազգող, ամեն բան ոչնչացնելու պատրաստ ըմբուռ շեշտը, նա աչքերը լայն բաց էր արել զարմանքը, շշմած, անտարբեր, չգիտակցելով բոպէի ծանրութիւնը...

Փայտը մին էլ ընկաւ մուրացիկ կնոջ ձեռքից նրա ոտքերը ծալւեցին. նա չոքեց Փեփելի կողքին ողբալով.

Ու դժւար է ասել, թէ ինչն էր ողբում Սալբին. մեռնող Փեփելի գլուխը, թէ իր ապականւած, ոչնչացած կարողութիւնը...

— Մեղայ Քեղ, Տէր, բացականչեց Օսանը, լսելով Սալբու ծամծմելով պատմածը Թամրազի կողոպւտելու մասին.

— Սրտամեսի աղջիկ, լեզու գոր քեղ պահէիր, ի՞նչ դլինէր որ, աւելացրից նա, քրոջ մասին մտածելով.

Օսանի պատճառով «պետած», Գրիգորի դուսար Փեփելի թաղմանը հարեաններից ոչ ոք չեկաւ.

Երբ այրի տէր Անդրէասը, աղօթքը դադարեցնելով, մեռածի երեսին մի բուռն հող ածող էր որոնում, նրա աչքով ընկաւ Սալբին, որ Թամրազի հողով լիքը բուռը մօտեցնում էր տէրտէրի խաչին...

XII. ՈԽԵՐԻՄՆԵՐ

Փեփելի հոգեհացի վայելողները Սալբին ու Թամրազն էին միայն, որոնց համար Օսանը «պետած» Գրիգորի թոնրասան մի անկիւնում բերանքսիվայր գրած մի հին սնգուկի վրայ սեղան էր պատրաստել: Պէտք էշ տեսնել, թէ որպիսի ջերմեռանդութեամբ էին ծառայում մայր ու որդի մուրացկաններին, մինն ածելով, միւսը վաղէվազ հասցնելով տաք կերակրեղէնը «հրաւիրւածներին»: Աըսէնը զարմացել էր, տեսնելով, թէ որպիսի արագութեամբ էին դատարկում փլաւի ու խաշլամայի պնակները. ինչ միծ փոր պիտի ունենան ուրեմն մուրացկանները... Նրա հարցասիրութեանը մայրը այն խուսափողական պատասխանը աըւեց, թէ մուրացիկների ոսկորներն անգամ սոված են լինում... Բայց Աըսէնը շուտով համոզւեց, որ մուրացիկները, բացի իրենց սեփական փորերը, մի-մի կըպցնովի փոր էլ ունեն, մի մի տոպրակ, որոնց մէջ և անյատանում էր բերած պաշարը...

Երբ Թամրազը քնել էր, Սալբին խնդրեց Աըսէնին սեղանակցել իրեն: Աըսէնը կատարեց մուրացկի խնդիրը ու նստեց մերկ գետնի վրայ, միծ զւարճութիւն պատճառելով բորիկ ու կիսամերկ երեխանների հետ կտուրները թափւած հասարակութեանը, որոնք

«իշխանական» հոգեհացը տեսնելուց յետոյ, այժմ ներկայ էին «արքայական» հարսանքաճաշին:

— Արսէն ջան, Արսէն. մի բարձի ծերանաք. անդրանիկը տղայ լինի, ձայն տւեց վերեկց մի դեղնած պառաւ:

Ու մինչդեռ Արսէնը ոչինչ չհասկանալով, զարմացած նայում էր կտորների հասարակութեանը, Սալբին չանչեց պառաւին...

Երբ Սալբին արթնացնում էր Թամրազին, գնալ պատրաստելով, Օսանը, բռնեց նրա ձեռքը ու ասաց:

— Այստեղ կացէք. թոնրատունը ձեզ բնակարան...

Մթնադէմին Օսանը Արսէնի հետ ուղևորւց դէպի իր տուն, աշխատելով ուշադրութիւն չդարձնել հովի համար փողոցներն ելած կանանց զարմացական հայեցքներին, որոնք ապուշ կտրած ճանապարհ էին տալիս «համարձակ» այրուն:

Սարեդը կանգնած էր բակի դրանը, Սարգօին գրկում, Կարմիր վէգերը գրպանում խ սոնելով, Արսէնը կամաց-կամաց անցնում էր փողոցի միւս կողմով, նայելով Մարգօին, որ կռծում էր իր ձեռքի բլիթը: Օսանին թւաց, թէ միկիտանի կինը ծիծաղում է իր վրայ: Այդ պատճառով հարեանի տան մօտ հասած, նա արագութեամբ շուռ եկաւ ու երկու ձեռքով չանչեց Սարեդին: Միկիտանի կինը ցած դրեց երեխային ու մի քար առնելով սկսեց հետապնդել փախչող Օսանին: Համանել չկարողանալով, Սարեդը քարը նետեց Օսանի ետեից, բայց յաջողութիւն չունեցաւ: Ոտքը քարին դիպցնելով, նա վայր ընկաւ: «Սրտացաւ» հարեանների հետ տաւն վերադառնալիս, նա տեսաւ Արսէնին, որ Սարգօի կուռը բռնած դէպի ինքն էր գալիս: Այն ժամանակ միկիտան Սարգուի կինը պատուեց ցածութեան սահմանը. նա կոպտութեամբ առաւ Արսէնի գլխարկը ու սկսեց նրանով հարւածներ հասցնել երեխայի գլխին, որ Մարգօի ձեռքը դեռ սարաց չէր թողել...

XIII. ԼՇԱՆՆ ՈՒ ԿԾԱՆԸ

Սարուլը, երեկոյեան տուն վերադառնալով, այնտեղ գտաւ Հոռոմին, որ պատահածի պատճառով աղջկայ տուն էր վագել, նրան միսիթարելու համար: Միկիտանը դժկոնութեամբ լսեց երկու կանանց ընդհարման պատմութիւնը, յանդիմանալով Սարեդին, որ չէր կարողացել խուսափել «անունն արատաւորւած» այրու հետ գործ ունենալուց: Սարեդը, լեզուն փորը կցած, սպասում էր Հոռոմի հեռանալուն, որպէսզի կանացի հոսառութեամբ իր զիտեցածը մէկ-մէկ ամուսնու երեսովը տայ, խայտառակելով, ապացուցանելով, որ բոլոր չարիքի պատճառը ինքը Սարուլն է: Սա, իր կողմից հասկանալով Սարեդի միտքը տղամարդու հոտառութեամբ ու մեղաղրական ճառը կանխելով, հրամայեց:

— Զինեմ, չիմանմամ. այս վերջինը լինի...

Սարգօի մկրտութեան, օրը Արսէնի ստացած քսան կոպէկանոցը, եկեղեցի տարած ջրի համար, նրանով Օսանի համար գնած երեկայական կարմը-րադեղը, Օսանի, Արտեմին սովորեցրած, «հախուն», Սարուլի ճանապարհ ծոհլը «բարի լոյսի» համար, սրագանգատն այն մասին, որ այրին փունջի օղին իրենից չէ առնել տալիս, վերջապէս միկիտանի առաջարկած ու Արսէնի չնդունած սառուշաքարը,—այս բոլորը ծանրացել էին Սարեդի կրծքին, մի ելք որոնելով: Կինը անկողին մտնելուն պէս ուստի հասած սալորի պէս տրաքւեց, արտասուքի հեղեղ հոսեցնելով:

Միկիտանը պառկած տեղից նայում էր դէպի առաստաղի խաւարը, մտածելով իր կոպիտ վարմունքի մասին: Որտեղից որտեղ նրա մէջքն այդ բոպէին ցա-

ւեց, մտածել տալով նրան Օսանի «եախւի» մասին։
Այն ժամանակ զջման ճանապարհով շատ հեռու չգնաւ-
լու համար էր, որ նա սկսեց ամրապնդւել Օսանի
մարմնի թռվիչ փարթամութեան երազական ձեազեւ-
րով... Մին էլ նա իր կողքին լսեց Սարեդի «խանդա-
րով» հեծկլուցը... Միկիտան Սաքուլը վեր թռաւ տե-
ղից, անախորժ այս ձայների աղբերը կտրելու, Սա-
րեդին բկախեղի անելու համար։ Սա Մարգչին վահան
շինեց... Սաքուլը բակը դուրս եկաւ և նստեց ունա-
բեն ու տակ յարմարեցրած թախտի վրայ, յիշելով այն
զիշերները, երբ ինըը, Սարեդի տակ բարձերից անե-
նափափուկը դնելիս, մտածում էր միւս առաւօտ Օսա-
նին «բարի լոյս» մաղթելու մասին։

Նա բարձրացաւ իր տան կտուրը, անցաւ հա-
րեանների բակը, կտուրների վրայ քնածներից խու-
սափելով, փողոց դուրս եկաւ ու քայլերն ուղղեց դէ-
պի Օսանի բնակարանը...

Այստեղ, պատուհանի առաջ կանգնած էր Մաքօի
ամուսինը—Արտեմը, նա, որին Օսանը «եախու» շինել
էր սովորեցնում։

— Շոք է, չէ, հարեան Սաքուլ...

— Էլ մի ասի, այս տարւայ պէս շոք դեռ չէ ե-
ղեւ։

— Շոք է, հա շոք, կարծէք ձեր կտուրներին
չէր կաւող հովանալ, բարկացաւ վերեից այրի տէր
Անդրէասը, որ նոյնպէս հովանալու էր ուղում դուրս
գալ։

Միւս առաւօտ, երբ միկիտանը գործի էր գնում,
իշմիածնեցոց թաղում, նեղիկ մի փողոցից, նրա ա-
ռաջն եկաւ Օսանը,

— Խի՞ որ, հարցը Սաքուլը զարմացած.

— Իմացիր...

— Խելքս չի հասնում...

— Քո ասած թէժ օղին...

— Եախւի համար...

— Եախուն մնա, փունջի համար.

— Աչքիս վրայ.

Ու ապա մերժելով օղու համար առաջարկած փո-
ղը, միկիտանը, Օսանին մի առ ժամանակ մօտը պա-
հելու դիտաւորութեամբ, հարցը եց.

— Փունջը հնց ես շինում, քոյր.

— Սրտամեռ, տղամարդունը խմելն է. շինելն
ինչ նրա բանն է, վրա բերեց այրին, բարեկամաբար
խփելով միկիտանի թեին.

— Բօ, որ չլինի, մըտեղից խմի, պատասխանեց
Սաքուլը մի բան ասելու համար.

— Կլինի, չմրդ տանեմ, կլինի. դու այս գիշեր
օղին բեր, հնց կարող է, որ չլինի...

— Կծան հօ շունէք...

— Սրտամեռ, մի տեղ որ ինձ ալէս լծան կայ,
կծանն էլ մըն է...

XIV.—ԶԱԴՈՒԵ, ԳԱՆՁԵ, ԴԵՂԱԾԵ...

Փոքրիկ Զիտօն սաաջինն էր, որ նկատեց Միկի-
տան Սաքուլի տարօրինակ աշխոյժը և զէպի պանդո-
կի հասարակութիւնը ցոյց տւած առանձին բարեհաճ
վերաբերմունքը։ Նա այդ օրը պատրաստ էր խանու-
թի բոլոր օղին ու զինին բաժանել Հաւլաբարի մէյ-
դանը լցնող հասարակութեանը։ Հեռւից նկատելով մի
ծանօթ պաշտօնեայի, որ խմած օղու համար մի ութ
բուբլի էր պարտ, հասաւ նրա ետևից, պանդոկը բե-
րեց ու մի լաւ հիւրասիրելուց յիտոյ, տարիներով ցաւ
դարձած մուրհակը յանձնեց նրան.

Երեկոյեան դէմ սակայն երկիւղի պէս մի բան
անհանգստացնել սկսեց Սաքուլն։ Զգւած պանդոկի

այցելրւներից, նա փողոց ելաւ ու նստեց դրան մօստ
յարմարեցրած նստառանի վրայ, մոլորւած, անվստահ,
չիմանալով անելիքը...

Ողջ թաղն այժմ պատկերանում էր նրա երեաւ-
կայութեան մէջ, ողողւած լուսնի արծաթով, որի պայս
ծառութեան տակ որոշում էին պատերի տակ խոնը-
ւող կանանց խղճուկ գլխները, սպիտակ քաթանէ փաթառ-
թաններում... Ուսի, ճոթուած, մաստաքի փրփուրից
կապերը սպիտակած բերանները, բարակ, լոշ շրթունք-
ները, արևածաղկի թեփով լիքն ատամները, գէպի գե-
տինը ձգտող այդ ուսերը, փուրն ու աղիքները վիժած
այդ փորերը, ծւէն-ծւէն, թողաշաղախ չստերի միջից
երեացող մերկ, միսը տակից մաշւած ոտքերը... Ճե-
խից թխած այս խամաճիկները, բոլորը, բոլորը զբաղ-
ւել են իրենով...

— Վախկնա, մտածեց Սաքուլն իր մասին.

Կէս գիշերին միայն նա դատարկւած պանդոկը
մտաւ...

Զիտօն արդէն պատրաստել էր Օսանի համար
տանելու օդին...

Այս բանը մի փոք սիրտ տւեց Սաքուլին.

— Չուրն իր ճանապարհը գիտէ, աշխատում էր
յուսադրել նա ինքն իրեն, նայելով օղու շշին, որ
ներկոյացնում էր թառս եղած մի բու.

Հանելով գրանի թաշկինակը, Սաքուլն սկսեց
մաքրել ապակէ թոչունի աչքերը, ոտամէջերի ու փե-
տուրների խոռոչներում մնացած թողը, Փայլուն շշե-
տեսքը մի փոքր նրա աշխոյժը յետ բերեց, Դարան-
ներից մէկի վրայ միկիտանի աչքովն ընկաւ մի շիշ,
որի կանաչ հեղուկը շողշողում էր լումպարի լոյսի տակ։
Սաքուլի ճրամանով Զիտօն իջեցրեց այդ շիշն էլ ու,
լելու գոգնոցով մաքրելուց յետոյ, դրեց ապակէ բւի
մօտ, կողքին բոված նշի պարկը, նրկու փունտ շաքա-
րը, քառորդ ֆունտ Պօպօվի թէյլ ու Արսէնի համար

մի ֆէս, որ նա գնել էր Սաքուլի յղութեան վերջին
ամիսներին, սպասող «Աւետիքի» համար...

Իրար ետեից երեք բաժակ օդի խմելուց ու բե-
րանը զազգեահի վրայի ափսէում մնացած վերջին եր-
կու կտոր լեարդով համովացնելուց յետոյ, միկիտան
Սաքուլը դուրս եկաւ պանդոկից նւէրների կապ ցը-
ձեռքին գլխաւոր փողոցից խուսափելով, նա բարձ-
րացաւ գէպի Խօջիվանքի գերեզմանատուն, Ռուի թա-
ղով։ Հանգստարանի դրան առաջն եկած, նա թեքւից
գէպի ձախ, միշտ փուհ-փուհ փոնչալով, գլուխը կախ,
աչքերի տակով աջ ու ձախ գիտելով... Ոլոր-մոլոր նա
հասաւ Օսանինց նրբափողոցի ծայրը, օրօրւեց...

— Տղամարդիս տես է, սկսեց յանդիմանել Սա-
քուլն ինքն իրեն, սիրտ առնելու համար...
Կատարւեց...

Երբ նա փոնչալով անցնում էր, Օսանի տան
պատարին քսելրվ, մինը չեղսւ, որ նրան բաց գըռ-
նովը երիտասարդ այրու բակը գցէր, ու նա փախաւ
պատւարի ետել սպասող Օսանի աչքերի առաջ, զգա-
լով իր ձեռքի կապոցի ծանրութիւնը, որից ազատւե-
լու հնարն էր որոնում այժմս...

Վաղ առաւօտեան, Սաքուլի լւացքին օգնութեան
գալիս, Հոռոմը ունաբենու ճիւղից կախ զցած մի կա-
պոց տեսաւ, որի միջից կարմիր մի ֆէս նայում էր
խնդուրախ...

— Զագու է, վախեցաւ պառաւը.

— Գանձ է, մտածեց Սաքուլը.

— Դեղած է, ասաց Սաքուլը, հսսնելով նրանց
ետելց ու կապոցը ցած իջեցնելով...

XV. ԱՆՏԵՐ ՄՆԱՑԱԾ ՇԱՊԻԿ

Անցաւ երեք տարի:

Երկու կանանց սրտերը յուղող կրքերն ըստերկութին խաղաղել էին, ժամանակի մոխրների տակ խորը պահելով վրէժի կայծեր: Կատարեալ մոռացման մասին ուստի խօսք չէր կարող լինել, որովհետև կեանք մէկ այս, մէկ այն քամին միշմի անգամ վզզալով շօշափում էր երկու ընտանիքները այսպէս կամ այնպէս կապող աննշմարելի, անդիտակցելի թելերը:

Նախ այն, որ Արսէնը չէր կարող միկիտանի տան առաջը վէզեր խաղալիս մէկ-մէկ նրա տան բակը չնայել տախտակէ պատարի ծակերի միջով, Մարգօի ձայների վրա: Մի անգամ նոյն իսկ այնպէս պատահեց, որ խաղալու ժամանակ, Արսէնի ընկերները, զետնին շարած կաղինները պահ տալով նրան, հարեան կտուրը բարձրացան և այստեղից երկար ժամանակ հիանում էին Շլուշկու աղաւնիների օդային պտոյտներով: Հէնց այն ժամանակ, երբ Արսէնը կկղած ուղղում էր կաղինների շարքը, նա տեսաւ փամփլիկ ու փոքրիկ մի ձեռք, որ յետեից խառնում էր իր մատերի մէջ, աշխատելով վերցնել կաղիններից մինը: Արսէնը բռնեց «Գողի» ձեռքը, բայց նա շուտով կարմրեց.. «Գողի» Մարգօն էր, որ օգտւելով Մարեղի զբաղւածութիւնից կամաց-կամաց փողոց էր դուրս եկել ու աննկատելի կերպով մօտեցել էր կաղիններին...

— Մարգօն, բացականչեց Արսէնը, աչքերը բերկրանքով լիբը ու համբուրեց միկիտանի աղջկայ թուշը...

Ու մի սրտաշարժ տեսարան էր այն, որ տղան փայտէ պատւարի ծակերի միջով դիտում էր Մարգօին,

որ ձեռքերում մի-մի կաղին բռնած գէպի Մարեղն էր վազում:

— Կակա, կակա...

Մարեղը, զլուխը լւացքից բարձրացրած, ժպտում էր երեխայի երեսին, ետևից ընկնելու, նրան բռնելու շարժմունքներն անելով:

Մարգօն տեղից չէր չւրժւում, իր անվեհերութիւնը ցոյց տալով...

Ապա տեսնելով մօր ժամանակաւոր անուշաղը թիւնը, երեխան յեա ցցեց զլուխը կչէչալով, խնդրելով, որ մայրը շարունակէ իր խաղը.

— Մարգօն Մելնի, հմ, հարցըց Մարեղը գուրգուրնը ըստով...

— Ցէ, ցէ, ցէ...

Արսէնն այլևս չկարողացաւ դիմանալ, նա անվատահ մտաւ բակը, զրեց Մարգօի ոտքերի մօտ բանի մի կաղին ևս ու արագութեամբ հեռացաւ...

Մի հինգ ըոպէ յետոյ, սակայն, Մարեղը գուրս բերեց բոլոր կաղինները ու վերադարձեց նրան.

— Վերցրնւ, որդի, ինչ հարկաւոր են «բռ» կաղինները, կէս յորդորանքով կէս արհամարհանքով ասց նա Արսէնին...

— Տօ, Օսան, մի աղջիկ բեր էլի, հետը խաղամ, աղերսում էր զըւաց Մինասի զաւակը այն գիշերը մօր վզովը փաթաթւած, այրւելով Մարեղի հասցրած վիրաւորանքից...

Խայտասակ փախուստից յետոյ Մարսուն իր կողմից չէր դադարում մտածել զեղեցիկ այլու մտախն, կատարելով Օսանի յանձնաբարսութիւնները, որ նա ստանում էր Արսէնի միջոցով, —աւելի քան բարեխղճութեամբ...

Դէպքը յանկարծ երկու կանանց իրար գէմ բերեց.

Գարնան յորդ անձրենների պատճառով Օսանի տունը երկու ամբողջ շարաթ կաթեց, և ընտանիքը

ստիպւած էր գիշերներն անց կացնել ծալքում կամ պատերի մէջ փորած մթերանոցներում։ Մալքի ալիդէ պատը, մասամբ բարակութիւնից և մասամբ հնութիւնից ջրի ճնշմանը չդիմանալով, մի գիշեր քանդւեց, ցեխի տակ թողնելով, բարեբաղդաբար, Օսանի անկողինը միայն, որովհետեւ այրին կարողացել էր ազատւել դժբաղդութիւնից։ Մայր ու որդի թոնրատուն տեղափոխեցին, ծածրի տակից, անձրսի ջուրը բռնելու համար, մի ընդարձակ կապերտ յարմարեցնելով։

Վերջապէս երկինքը պարզւեց, ու Քնթօ-Միխակը մի կերպ կարկատեց քանդւած պատը...

Դժբաղդութիւնը, սակայն, բայլ առ բայլ հետեւում էր այրուն։

Մի օր, կէս գիշերին խլացնող մի ճայթիւն արթնացրեց թաղեցոց։ Մայր գերանի մի ծայրը փտել էր հաստ հողաշերախի խոնաւութեան տակ։ Որովհետեւ առաստաղի այդ կողմիցն էր, որ կաթնոցների ժամանակ ջուրն աւելի առաստութեամբ էր սենեակ թափուում, Օսանը, առանց երկար մտածելու, այս տարւայ հէնց անձրեների սկզբից, երկու սայլ հող էր ածել տւել կտուրի այդ ծայրում, չնայելով այսի տէր Անդրէասի զգուշացումներին։ Թարմ հողը, առաստութեամբ ծծելով անձրեի ջուրը, արճճի պէս ծանրանում էր հետըզնետէ մայր գերանի այդ կողմի վրայ. ու պիտի դարձեալ շնորհակալ լինել այրի տէս Անդրէասից, որ հարեանների զբաղւածութիւնից օգուտ քաղելով, այդ երեկոյ Օսանի մօտ էր եկել ու թախտը հակառակ կողմը կապիլ տւել.

— Ազնի, զէն, խայտառակութիւն չպատահի, թէ չէ շապիկներս ով է լւանալու, որ տունը փուլ գայ ու քեզ տակովս անէ...

Մայր գերանը փտած ծայրից կոտըւելով, միւսով յենւած էր մնացել հակառակ պատի վրայ, որի մօտ քնած էր Օսանը.

Մեռնեմ Աստծուս, մտածեց արթնացած այրին, մի ձեռքով երեսի թողը հեռացնելով և միւսով լեզուն փորն ընկած Արսէսին զէպի ինքը քաշելով։

— Տէր, մեղմայ թեզ. ումն էի մի կտոր հաց տւել, որ այժմս առաջս բերիր, շաբունակում էր նա լալ թոնրատանը, Արսէսին ուշքի բերելուց յետոյ.

Այրին մէկ էլ յիշեց Սալբուն ու Թամրազին, ու ընց Փեփելի հոգեհացից յետոյ թողել էր «պետած» Գրիգորի թոնրատանը։

Այն ժամանակ Ալ ոչնին առաջն արած, նա գնաց գերան ծակողի տունը, այնտեղ փոխադրելու մտքով. Ու ոտքը կոտըւէր, որ չգնար...

Անձրեւ այստեղ ևս կատարել էր իր աւերիչ գործը։

Թոնրատունը մի լիճ էր ներկայացնում երկու խղճուկ կղզիներով. դրանք աղքատ թաղի մուրացիկների պարկերն էին։ Մի հնամաշ չուստ լողում էր ջրի երեսին, հէնց թոնրի ուղղակի տեղը. մուրացիկ զոյզի թոնրի մէջ ջրախեղդ լինելու միտքը սարսափեցեց այրուն.

— Քոռանամ, քոռանամ...

Բայց նրան սպասում էր ևս առաւել զարհութելի տեսարան։ Երբ նա ուղում էր «պետած» Գրիգորի սենեակը մտնել և այնտեղից վերցնել դրան նիզը, ջրի համար զէպի փողոց մի անցք բանալու մտքով, նըա աչքերին ներկայացաւ մի վիճ, որի յատակի տըղմում ընկած էր Սալբին, Թամրազի գլուխն երեսին.

Երեք մանէթ չունենալով, որ իրարից հեռացած երկու պատերի թղաչափ ծակը կալնել տայ, Փեփելն այդ անքը թողել էր բաղդի բերմունքին։ Մեծանալով, մեծանալով, ճեղքը մի դուռն էր դարձել թաղի «մօր ծիծ կտրողների» համար, որոնք ամառւայ շոգերին և ձմեռւայ ցրտերին գալիս էին «պետած» Գրիգորի բընակարանը զումար խաղալու, իրենց պստիկներին հետներն առած...

Զուրն այս անգամ այդ դռնից սենեակն էր թափ-
ւել, ողողել, պատռել աղիւսայատակը, դէպի ներքնա-
տուն իր համար ճանապարհ բանալով:

Երեք օր շարունակ անձրեի ջուրն ամբարւում
էր, դեռ «պետած» Գրիգորի օրով բարձի թողի արած,
մրուցւած այդ ներքնատան մէջ, երբ մէկ էլ ծակ գըտ-
նելով դուրս էր նետւել դէպի թոնրատուն, որտեղ
Սալբին, իր պարկի վրայ նստած, հաշիւ էր տալիս
կոյր Թամրապին աչքին երևացող երեակայական աստ-
ղերի համբարքի մասին.

Սարսափը պատեց մուրացիկ կնոջ սիրտը, նա-
բաց արեց թոնիրը ջրին ճանապարհ տալով: Այս գոր-
ծողութիւնը կատարած, նա համարեա ուժով սկսեց
քաշ տալ Թամրապին դէպի սենեակը, այնտեղ պատըս-
պարւելու համար: Բայց սենեակի դուռը փակ էր Փե-
փելի թազման օրից սկսած, երբ Օսանը մուրացիկ
գոյգին թոնրատանն ապրելու իրաւունքը տալով. հար-
կաւոր էր համարել վրան մի փոքրիկ կողպէք դնել:

Զուրը հետզետէ ծածկում էր բակը, այն ժամա-
նակ Սալբին, յետ յետ գնալով, իր ամբողջ ծանրու-
թեամբ ընկաւ դրան վրայ...

Սենեակը բաց արեց իր զագրելի բերանը, ըն-
դունելով Սալբուն իր խաւար որկորում.

— Թամրապ, լուեց նրա վերջին, սարսեցնող,
յուսահատական ճիչը յատակի մթախիտ պատուածքի
միջից.

Երբ կոյրը դրան շրջանակից ամուր բռնած ու-
ղում էր ներս մտնել իր սիրելուն օգնութիւն հասցնե-
լու համար, նա ևս կորցրեց հաւաս որակշութիւնը, ու
խաւարը ծածկեց գրկախառնած դիակների քունը...

Օսանը խելազարւածի պէս վազում էր փողոցով,
զժւարութեամբ քաշ տալով իր ետեց Արսէնին, որ
տերեի պէս դողում էր, գոյնը գցած.

Անձրեը նորից սկսեց թափւել առատութեամբ.

Օսանը վազում էր.

Նա սակայն շուտով գաղարեցրեց իր խելազար
վազքը, տպաւորութիւնները կարգի բերելու համար.

Ու նրա միտքը անօդում կերպով խարխափում
էր երկու աւերակների մէջ...

Ո՞ւր գնալ...

Կայծակի լոյսը մի վայրկեան մերկացրեց նրա
աչքերի առաջ եռայարկ մի սկ զանգւած.

Այդ կապալառու Փարսեղի տունն էր — Սև-Տունը,
որի այժմ անմարդաբնակ սենեակները պատուհանների
խաւար աչքերի միջից անէծք ու մահւան սարսափ էին
սփռում շուրջը... Օսանին թւաց, թէ փողոցը նայող
պատշգամիչի աղաւներնից դէպի ինքն է նայում պող-
պատէ, անշարժ, պղտոր աչքերով, դժոխային կծկում-
ներից աղաւաղւած դէմքը...

Թաղի սօլէյլանդը, որ քաղցի ու մերկութեան բազ-
մամարդ այս որջում, առեանգութիւնը կատարած, ծըլս-
նելոյզի մէջ էր թագցրել փոքրիկ զոհի մատաղ կը-
տորները...

Ու տունն ամայացաւ այն օրից...

Ու ամեն անցորդ պարտք համարեց մի մի քար
նետել դէպի պատուհանների, աներես ապակիներն,
այն ուեհետեւ...

Երկինը կտոր-կտոր լինելու պէս որոտաց կրկն-
ւող բաղիւտմերով: Կարծես կորովի բազուկներ, բար-
կութեան ու ցասման խելացնոր կծկումներից քոնւած,
ճոթուառում էին պատառ-պատառ հաստապինդ մի կտաւ,
այս կողմի ողբի ու մերկութեան առաջ...

Հետեեց աչու լոռութիւնը, այս յոյսն էր, որ բազ-
կատարած երկի զածութեամբ սպասում էր թողութեան
ձայնին...

Հւում փայլատակեց երկինքը ու ֆուֆօրային

XVI. ՏԱՐԱՎԱՅՆՈՒԹԻՒՆ

Սև-Տունը հետզհետէ կենդանութիւն էր ստանում։ Շնորհին բնակիչների» օրինակին հետեցին վեցաթիւ բեռնակիր մշակներ, որոնք համեստաբար տեղաւորւեցին խոնաւ նկուղներից մինում, Օսանի համար Քոից ջուր կրելու պայմանով։ Հերթը հասաւ վարձու բնակարան ունենալու հնարաւորութիւնից դրկւած զլպրոցական չորս պատանիներին։ Այսուհետեւ սրանց ագգականներն ու բարեկամ—ծանօթներն էին, որոնք հայ ըենակիցներին տես գալով գիւղից, մէկ այս, մէկ այն աւերւած սենեակը մաքրելով, գնչերները քնում էին այնտեղ մերկ յատակի վրայ, խնայելով չարչիների ժամփաներից աղատած կօպէկները։ Դպրոցականների խորհրդով մի ամառ այնտեղ հաստատեց գերեզմանափորների աւագը—Մամբրէն, որ պանդխտութեան սև օրերը մի փոքր պայծառացնելու համար հայրենիքից բերել էր տւել իր կնոջը—Նարգիզին։ Ժամանակ առժամանակ մէկ այս, մէկ այն դրան առաջ սէսեցին երեալ պլալան կրակի վրայ աղմկւող կաթսաներ, տարածելով իրենց ախորժելի շունչը բակովը մէկ։ Թափայ հացի հոտն այն ինչ Սև-Տան ծակերից երբեմն-երբեմն գրգռում էր սոված թաղի «մտքափոխ» կանանց ախորժակը...»

Մի փոքր յետոյ թաղի սրտոտները սովորեցին դիտել փողոցի հակառակ կողմից, պատուհանների սիջով, քիթները «Եղիշէի» մէջ կոխած դպրոցականների մտախոն դէմքերը կամ զւարճանալ «խօբէվէի» ձայնով, որ պատանիները երգում էին գլխները ջղածզութարշալիքով, չափի համար...»

Մի անգամ դպրոցականները հեւկոյացրին Օսանի

Արսէնի, Մամբրէի, Նարգիզի և բեռնակիր մշակների համար և երկու քաղցածները», որ չմոռացւեց երբէք։ Աւ ողէտք էր տեսնել, թէ այնուհետև ինչ զւարճութիւն էր պատճառում երկու կանանց, երբ Օսանը հասնելով մտածմունքների մէջ խորասուզւած Նարգիզի ետևից, ձեռքը սրա ուսին դնելով, բացականչում էր, պիեսայում գործող անձին հետեւելով։

— Պարոն, փողը...

— Փողը, հարցնում էր Նարգիզը, չկարողանալով ծիծաղից խօսքը վերջացնել...

— Պարոն, փողը, ասում էին թաղի երեխաները, իրար հտեւից հասնելով, Արսէնից սովորածը.

— Պարոն, փողը, կատակեց մի օր Սաքուլը, Արսէնին պատս հելով, սիրաը շահելու համար։

— Պարոն, փողը, յետ չմնաց Մարգօն ևս, Սաքուլին գւարճացնելով.

— Պարոն փողը, կանգնեցրեց մի շաբաթ կիշեր Զիտօն օղու և գինու փողը վճարել մոռացած այցելւին պանդոկում.

— Փողը...

Զւարճութիւնից չխեղդւելու համար պանդոկի յաճախորդները բերանների պատառները հանեցին, այնքան տեղի էր այս զուգադիպութիւնը։

Սև-Տան բերանից տարածւող կենդանարար այս շունչն էր պատճառը, որ ոչ ոք այլ ևս երկիւղ չէր կրում երբեմն սգաւոր պատերի տակովն անցնել. ու գպրոցականները շուտով կարողացան, տեսրակների ծախքը հոգալու համար, միքանի աշակերտներ ունենալ, ամիսը երեսնական կօպէկով։

Օսանի ջղային խանգարումը, որի պատճառն ապրած սարսափներն էին, հետզհետէ անյայտացաւ։ Զտիւնելով թաղի պառաւների ծամածուող շրթունքները «բարի լոյս» ասելիս, նա հնարաւորութիւն ու-

նէր մի փոքր հանգստանալ հոգեպէս, մխիթարուհլով
միհնոյն ժամանակ նբանով, որ Սև-Տան բնակիչն երը
դէպի գեղեցիկ «տանտիրուհին» վերաբերում էին
պատկանելի ակնածութեամբ: Բեռնակիր մշակն երը
կս մովին հանեցին այրու տան փլատակների տակից
նրա ողջ գոյքը, ու այնուհետև երկու ամբողջ ձմեռ
կոտրատում էին վառելիքի համար նոյն տան հաղա-
ծածքի տակից դուրս բեցած գերանները: Դպրոցա-
կանները Արսէնին մի փոքր գլեշ-կարդալ սովորեց, ինչ
Պակասն այնուհետև լրացրեց մի ոռւս զրագիր, որ
ծառայում էր զօրանոցում: Արսէնը մի օր Շլուշկու
հետ ոսի թաղում աղաւնիներ էր հրապուրում: Անզգու-
շութեամբ նետած մի քար դիպաւ զրագրի պատուհա-
նին, ոս դուրս վազեց սենեակից ու բռնեց Արսէնին,
սպառնալով չարաչար պատժել նրան միւս անզամ դէ-
պի իր բնակաբանը քարեր նետելու դէպքում: Պաս ա-
նին այնուհետև պարտաւորութիւն համարեց ամեն ան-
գամ ոսի հետ պատահելիս ողջունել նրան: Նրանց մէջ
շուտով բարեկս մութիւն հաստատեց: Այս Արսէնը ա-
մեն օր, ճաշն ուտելուց յիտոյ, զնում էր Խօջիվա՞քի
վերեի դրան մօտ իր «Պալուշկի Կումին» պատւ հե-
լու ու նրան հանգստաբանի երկարութեամբ մինչեւ իր
բնակարանը ուղեկցելու համալ . . . Ու լուս մի օր նրան
հրաւիրեց ձուկ բանելու գնալ: Արսէնը ուրախութեամբ
համաձայնեց: Բարեկամացտծ, գրագիրը յանձն առաւ
շարունակել դպրոցականների գործը, իր թղթերն ար-
տագրել տալով... Եկաւ ժամանակը, երբ «Պալուշկի-
կումը» ինքն սկսեց գալ Արսէնի մօտ. լայնարձակ ու-
սերը արծաթապատ գալւններով զարդարւած ուե-
րագրուակում ուղիղ բռնած, ժպիաը լայն ու սպիտակ
բեղերի տակ խաղացնելով, ալեղարդ գլխի քրտինքը
ութածալ, ձիւնասպիտակ թաշկինակով սրբելով, շոյե-
լով Օսանի ինքնասիրութիւնը և շարժելով հարեաննե-
րի նախանձը: Խնդուրախ այս ծերունու արագաշխոյժ

ժայլերի առաջ չբացան Սև-Տան «դեկերից» ամենայետին-
ները...

Դժբաղդութիւնը հետեւում էր աշակերին: Մի գի-
շեր գետի հոսանքը նրա աչշերի առաջ քշեց սիրելի
«Պալուշկի Կումին» խեղղելով ալիքների մէջ պատա-
նու մի օր փայլուն կոճակներով համազգեստ ունենա-
լու յոյսը: Արսէնը էլ բանի չկպաւ...

Սև-Տունը բարեգարգելու գործում անմասն
չմնաց և Մամբրէն, որ հանգստաբանի ծաղկոցներից
այրու հումար շուրջ մի երկու տունկ քերեց: Պէտք
էր տեսնել, թէ որպիսի բաւականութեամբ մայր ու
որդի ծաղկամանները բաղմեցրին միկիտան Սաքուլի
տանը նայող պատուհանի առաջ, մէկը Սաքեղի աչշը
հանելով, միւսը Մարգօի սիրտը մտնելով...

XVII. ՍԻՐՈՅ ԴԱՐՆՈՒԹԻՒՆԸ

Մի նոր զժբաղդութիւն սպասում էր նսանին:

Մայր ու որդու տարրեր վերաբերմունքը գէպի
միկիտան Սաքուլի ընտանիքը պիտի բացայայտւէր
նրանց մէջ Արսէնը վազուց արգէն նկատել էր, որ
ամեն անզամ, երբ ինքը զալիս էր գէպի միկիտանի
տունը նայող պատուհանի առաջ կանգնելու, Օսանն Էս
իր կողմից որեէ մի պատճառ էր գտնում ունրա կողքը
մտնում, Սաքուլի տան բակը դիտելու համար, հետա-
մուտ որդու շարժմունքներին, որին արդէն «դիմացի-
ներից» էր համարում, — ուրախանալով սրա շփոթմունք-
ները տեսնելով: Պատանին ինքն ևս իրեն մի փոքր
«դաւաճան» զդալով մօր վերաբերմաբ, ստիպւած էր
լուել, չնայելով. որ «թշնամի» մօր դէպի «իրայինները»

դցած հետախուզող հայեացքները վիրաւորում էին
նրան.

Մի օր սակայն, համբերութիւնից գուրս, նա պա-
տրւհանի մօտից հեռացող մօրը նկատեց իսայթելով.

— Համարեցի՞ր Սաքուլենց ծառի ունաբները...

Կինը ապտակեց պատահնուն, սիրտը հովացնելով...

Համբերել այլևս անհնար էր. պէտք էր ուրիշ
տեղ գտնել Մարգոին նայելու համար:

Նա մտածեց նեղ փողոցի պատշգամբի մասին,
որտեղ ժամանակով չոռոմի ամուսինը ածելում էր կա-
պալառու Փարսեղի կարմբաթուշ լայն երեսը. Պատա-
նու ուրախութեանը չափ չկար, երբ հարսան սենեակը
զալ վ, տեսաւ, որ բանալին դրան վրայ է: Ժանզը
սակայն այնպէս էր սղմել բանալին ծակի մէջ, որ
Արսէնը ճաշակեց դատարկ տան դուռը ծեծողի դառ-
նութիւնը. Նրա աչքերը լցւեցին յուսահատութեան ար-
ցունքներով: Մին էլ նա արիացաւ, յիշելով Մամբրէի
քլունգը, որ սա առաւօտեան ստանալով ուշարբնից, դեռ
գործի չէր տարել. Արսէնը մի ըռալէում բերեց զար-
բելի գործերը, ծայրն անց կացրեց բանալու օղակի մէջ
ու ամբողջ մարմնով ընկաւ փայտէ կոթի վրայ.

Մի սուր, խլացնող ճայթիւն արձագանք տեսց
դառարկ սենեակում. միաժամանակ Արսէնը գետին
ընկաւ...

Այդ բանալու օղակն էր, որ սկսկեց իր ձողից...

Համբերութիւնից գուրս, պատանին վեր ցատկեց
տեղից և ուժգին թափով իջեցրեց քլունգը այս ան-
սիրտ դրան վրայ... Դուռը ծակւեց. ու երբ Արսէնն
ուզում էր իջեցնել վճռական հարւածը արդէն խախտ-
ւելու պատրաստ արգելքի վրայ, քլունգը մնաց Օսանի
ձեռքին, որ աղմուկի վրա եկել էր այնտեղ ու յետե-
ւից բռնել քլունգը: Այն ժամանակ պատանին մի ձեռ-
քով սաստկութեամբ հեռացնելով ապտակել պատրաստ-
ւող մօրը, միւսով խլեց քլունգը ու գուրս վազեց:

Մի ակնաթարթում նա իրենց պատուհանի առաջն էր:
Մաղկամաններն արագութեամբ մի կողմը քաշելով, նա
բարձրացաւ պատուհանի վրայ, չափեց աչքերով պատշ-
գամբի և սենեակի հեռաւորութիւնը ու ցատկեց թեք...
Նրա ձեռքը սողաց պատշգամբի հաստ սիւնի մակերե-
ւոյթի վրայով, ու նա փողոցն ընկաւ...

— Օխայը, ասաց Սաքեդը դիմացից չարութեամբ,
Հասկանալով գրութեան ծանրութիւնը...

Օրն աշճակ լինելով, դպրոցականները տանն էին,
ու սրանք էին, որ Արսէնին, որն ուսերից, որը ոտքե-
րից բռնած բարձրացրին Սև—Տան երկրորդ յարկը.
Նարգիզն այն ինչ սթափեցնել էր աշխատում կոկծից
ուշաթափւած Օսանին.

Բարեբաղդաբար պատանին ընկել էր երեսնի-
վայը ու այսպիսով, ձեռքերը գէպի գետին մեկնած,
կարողացել էր կուրծքն ու գլուխը պաշտպանել կա-
տարեալ ջախջախումից. ու չհաշւած ընդհանուր
ցնցումը, ձեռքերն էին միայն ջարդւել ու մէկ էլ
կզակի կաշին քերւել.

XVIII. ՎԵՐԶԱՊԵՇՈ...

Հարեանին հասած գդբաղդութեան մասին միկի-
տանն իմացաւ գագաղագործ Սօլօմանից.

— Աչք ունեցիր, հարեան. քո լաւութիւնը չեմ
մոռանայ... Մարդ ենք, հեռի ձեղնից, աժան կշինեմ
«զութին» խեղճ մարդիկ են ինձ նման...

— Ա՛ռ բեհը, զառով շինի, երկար...

Տեսնելով, որ գագաղագործ տասնանոցն իր ձեռ-
քից չի առնում, նա աւելացրեց.

— Գիշո, հաշիւը յետոյ կտեսնենք, չեմ շուռ
պում, առ բեհը զուը լայն արա, ֆւսս չունի...

— Դեռ չի մեռել, մարդ...

Հարեանի տղային պատիւ տալու առիթը ձեռքից
բայց չթողնելու համար ու մասամբ էլ կատուի պէս
մէջը գետին չղիպցնելով էր, որ Սաքուլը հրամացց.

— Զիտօ, կէս զիւժին կարմրից, ուստա Յօլօն
մանին... Արսէնի կենացը...

Մի երկու ժամ բարձր ու քաշ անելուց յետոյ, Սա-
քուլը վճռեց հիւանդին աես գնալ, Մտածելով, մտածելով
նա երեկոյեան այն մտքին եկաւ, որ պէտք է վերա-
ջապէս հաշտէցնել Սաքեդին և Օսանին, որովհետեւ մինա
չե երբ... Այդ էր պատճառը, որ կնոջը Արսէնին «տեսա-
տանելու միտքը մի առ ժամ զազեցրից նրան...» Շու-
տով նա հասկացաւ, որ այդ անկարելի է, որովհետեւ
հօ չի կարելի դատարկաձեռն «տես» գնալ հիւանդին,
ու հարց է, թէ Օսանի մասին ևս հարկաւոր չը ար-
դեօք մտածել այդ մտքով .. Ու՞ն, այն ժամանակ Սա-
քեդի մոռթներն ի՞նչպէս տանել... Մէկ էլ, յայտնի
չէ, թէ ինչ վերաբերմունք ցոյց կաայ Օսանը դէպի
Սաքեդի «զիջողական» քայլը... Զէ, աւելի լաւ է մի-
նակ գնալ...

Երբ Զիտօն նւիրաբերութեան պատրաստութիւնը
տեսել էր, Սաքուլի վճռողականութիւնն արդէն տեղի
էր տեղ անվտանութեան. ու պատճառը միշտ մինոյն
Սաքեդն էր...

Սաքուլը խեղճացաւ...

— Ի հարկէ Սաքեդն իրաւունք ունի. տղամարդը
հաւ չէ, որ կորչի ու կինը դարդ չանի... Բայց և մ
միտքս հօ «այն» չէ..

Զիտօն, տեսնելով նրա անվճռական շարժմունք-
ները, ուրախանում էր, նախագուշակելով, որ այս
հարիւրերորդ պատրաստութիւնից յետոյ էլ միկիտանը
չի համսրձակւելու իր սիրածի տունը գնաւ, թողնե-

լով պարգևները անդուռէի մէջ, որպէսողի սպասաւորը
քաղցրաւենիքն ու կարմրաթուշ խնձրները մարրա-
զարդելուց յետոյ, խմիչքները յետ գարանների վրայ
շարէ...

Զիտօն այս անգամ սիսալում էր:

Իրիկն աղէմին միկիտանը նրան տուն ուղարկէց,
պատուիրելով Մաքոփին գլնետուն բերել, սպիտակ շա-
տիստի զգստը հագած: Սաքեդին այս պատուիրը
չզարմացրէց, որովհետեւ Մաքոփին այդպէս զարդար-
ւած գինետուն տան կը սովորական բան էր, մանա-
ւանդ հրավառութիւնների ժամանակ, երբ միկիտանը
պանդրէկի այցելուններին ու հարեւան խանութպաններին
աղջկայ գիւղեցկութեամբ ու շնորհքով հրացնելուց յե-
տոյ, շրջեցնում էր նրան երեանեան հրապարակի,
Քուրցովայա փողոցի և Գոլովինսկի պրօսպեկտի ու մ-
բողջ երկարութեամբ, կանգնեցնելով նրան շքեղ ցուցա-
դարանների առաջ, ուրախ, երեխայի զմայլմունքը
տեսնելով.

Պէտք էր տեսնել Մաքոփի գարմանքը, երբ հայրն
այս անգամ փոխանակ քայլերը դէպի Հաւլաբարի
զառիվայրն ուղղելու, այնտեղից Բաղասիսանայով երե-
ւանեան հրապարակը գնալու համար, տան ճանապարհը
բռնեց.

Աև. Տան առաջն եկած, Սաքուլը կանգ առաւ-
գպրոցականներից մինը երգում էր.

«Բարէ, քմնի հրաշափս ու

«Հիւսէ երկինք հանդէս պայծառ..»

— Մալադեց, ճնչեցրեց Սաքուլը, որ Մաքոփի
հետ փողոցի մէջտեղն էր եկել, երգչին պատուհանի
միջով լաւ տեսնելու համար, աշխատելով Շարեկա-
մութիւն» հաստատել Սև-Տան ընակիչներից մէկն ու
մէկի հետ, սիրտն ամրացնելու համար...

Միայն թէ, երբ գպրոցականը, հետաքրքրւած այս
ինքնակոչ զատաւորի տարօրինակ գնահատութեամբ,

Դլուխը հանել էր պատուհանից, քիչ էր մնում, որ Սա-
քուլը մրգի կապոցը ձեռքից բաց թողնէր, շվոթմուն-
քից...

Միկիտանն սկսեց «արդարանալ», աշխատելով
«զրաբար» խօսել:

— Ասենք, բայց... իմ միտքու այս երեխային...
բայց գիր սովորեցնել... Ասենք բայց... ը՝ ը՝ ը՝... բայց...
այս գիշեր երեխան ուզում է տեսնել... բայց Արսէ-
նին... բայց մարդ ենք, բայց ով է իմանում... ը՝ ը՝ ը՝
բայց կը մտածինք...

Մինչդեռ միկիտանը, հարիւրելորդ անգամ «բայց»
ասելով, ուրախանում էր, որ Մարգօն բաւականաչափ
քողարկում է իր այցելութեան իսկական միտքը, դպրո-
ցականը վերջ ի վերջոյ հասկանալով, որ նա որո-
նում է Արսէնին, առաջնորդում էր նրան մութ սան-
դուխքներով.

— Արսէնի կենացը խմեցինք, Սօլօմանի հետ,
ասաց միկիտանը յուզմունքից շնչասպառւած, մեծ-մեծ
քայլերով այրու սենեակը մտնելով և սրան յանձնելով
նուիրաբերութիւնների կապոցը, համարեա վրան գցե-
լով,

— Այս էլ քեզ, Արսէն, ը՝ ը՝ ը՝ բայց որդի...
Հէր օրնած, ընկնելիս մի ձայն տայիր էլի, մարդ
ենք, հարեան ենք, աւելացըց նա հիւանդի վերմակի
վրայ երկու հաա նարինջ դնելով.

— Բայց, պատւական, վաղը բայց..., հարկաւոր
համարեց ձայն տալ միկիտանը հեռացող դպրոցականի
ետեից, ըուբլիանոցը—Մարգօն ուսման վարձը, դէպի
գոնսերը բոնած, շվոթմունքից օրօրւելովի...

— Խի որ, զարմացաւ Օսանը հիւրի անվստա-
նութիւնը տեսնելով.

— Այսա, երեխամն, արդարացտւ Սաքուլը, Մար-
գօնի վրայ մատնանիշ անելով. հարցն այլ կերպ հաս-
կացած.

— Այս էլ քո Արսէնը, աւելացըց նա, երեխա-
յին պատանու անկողնու վրայ նստեցնելով...

Զեռքերը ջարդուտւած լինելով, Արսէնը չէր կա-
րողանում աչքերը շփել համոզւելու համար, թէ տե-
սածը երազ չէ: Մարգօն շարժեց, բատիստէ շրջա-
զգեստի փեշերի հովը Արսէնի երեսին դիպցնելով: Այլ-
ևս կասկած չկար, որ իր կողքին նստածը միկիտանի
աղջիկն էր: Մրտաշարժւած այս այցելութիւնից պա-
տանին արտասւեց, չհասկանալով բաղդի այս յիրաւի-
գիծ պտոյտը...

— Տուր այդ նարինջներից Արսէնին, Մարգօն
յուրդուց Սաքուլը նստած տեղից.

Երեխան յարմարւելով պատանու անկողնու վրայ,
վերցըց նարինջներից մինը, մաքրեց ու շերտ-շերտ
կտրատելով, շարեց ուղղակի հիւանդի վերմակի վրայ,
զարմացած, համարեա վիրաւորւած, որ պատանին
ձեռք չէ տալիս պտուղին, ու դարձեալ միկիտանն էր,
որ երեխային հասկացըց, թէ Արսէնը չի կարող ձեռք-
երը շարժել: Այն ժամանակ Մարգօն վերցնելով նա-
ընջի շերտերը, սկսեց հիւթը քամել հիւանդի բերա-
նում, սղմելով շրթունքները, ոյժ անելուց... Շուտով
Արսէնը կարողացաւ բերանն աւելի լայն բաց անել
համարեա խեղդւելով ոչնչացնել նարնջի կտորները,
գւարճութիւն պատճառելով Մարգօնին...

Թաւշի պէս փափուկ մի ձեռք քսւեց Արսէնի
շրթունքներին.

Այդ Մարգօն էր, որ սրբում էր հիւանդի բերանը.
Միաժամանակ մի այլ ձեռք փաղաքշարար 202ա-
վեց Սաքուլի աջ արմունկը.

— Փունջդ սառեց, սրտամեռ...

Այդ Օսանն էր, որ ընդհատեց Սաքուլի զարմանքը
երեխաների այժմ իրար մօտեցըրած դէմքերի նժանու-
թեան առաջ...

— Արսէնդ քանի՛ տարեկան է, հարցըց Սա-
քուլը, լուսութիւնն ընդհատելով.

— Խի՞ որ, անհանգստացաւ Օսանը, յիշելով
գրբաց Մինասին.
— Այնպէս...
— Տասնամլից. որ ի՞նչ...
— Մարգօն տասնումն է...
— Որ ի՞նչ, կատաղեց Օսանը.
— Նման հարս ու փեսայ կլինեն, պատասխանեց
միկատանը, այրու «սիրտը շահելով», աչքերը դէպի
երեխաներն արած, որոնք զբաղւած էին խաղաթղթե-
րով.
— Էլ չասես...
— Խի՞ որ, հարցրեց իր կողմից Մաքուլը, Օսանի
խօսակցութեան ձեին հետեւելով.
Աւ ապա տեսնելով այրու տաբօրինակ շփոթմուն-
քը, միկատանը սիրտ արնց աւելացնելու.
— Ի՞վ ի՞նչ զիտէ...
— Ի՞նչը, սրտամեռ...
— Որ ես քեզ սիրել եմ...
— Սիրել ես ո՞ր...
— Վահ, կորեմ...
— Ի՞ն, սրտամեռ, ջուրը չես տեսել վարտիկ ես
հանում, վրա թիրեց այրին, ծիծաղելով Մաքուլի միա-
տութեան վրայ, ապահով վերջապէս «գաղտնիքի»
կողմից...
Երբ կէս գիշերն անց Մաքուլը քիթը կախ հե-
ռանում էր Մարգօի հետ, Օսանը յ' շելով «Երկու քաղ-
ցածների» ներկայացումը, հասաւ նրա ետեից ու ձեռ-
քը նրա ուսի վրայ դնելով կատակեց.
— Պարհն, փողը...
— Փողը, յաշմարեցը Մաքուլը անգիտակցա-
բար.
Ապա ինքն ես գւարճանալով իր ցը: ածութեամբ,
ձեռքը կոխեց զրպանը, այնտեղից հանեց ոսկենոցը ու
դրեց Օսանի քուրը, ամուր սղմելով նրան իր կըծքին...

Օսանը սայթաքեց, ու մինչդեռ նրանք գրկախառնւած,
գլոր-գլոր գնում էին Սև-Տան խաւար սանդուղքներն
ի վայր, Մարգօն ահաբեկւած այս ձիչն արձակեց.
— Արսէն...
— Սրտամեռ, մի խալւաթ օր արի, ասաց Օսա-
նը միկիտանի իժողուտուծ շորը թափ տալուց յետոյ.
Ամուսնու և Մարգօի ուշանալու պատճառով ան-
հանգստացած, Մաքեդը նեղ փողոցի ծայրն էր եկել:
Միկիտանի ծանօթ դպրոցականը նոյնպէս, նոր գոս
ունինալու յոյսով ողեորւած, փողոց էր եկել և զբո
նում էր Սև-Տան առաջ: Մի քանի անգամ Մաքեդի
կուքավան անցնելուց յետոյ, նա կարենու համարեց ծա-
նօթանալ չնոր աշակերտութեու մօր հետ, յայտնելով
ի միջի այլոց, որ կարիք չկայ անհանգստանալու Մա-
քուլի և Մարգօի մասին, որովհետեւ, Արսէնի հիւան-
դութեան պատճառով, նրանք Օսանի մօտ են... Այս
միայն բաւական էր, որպէսզի Մաքեդը չհասկանար
դպրոցականի քարոզները ուսման, բայց մանաւանդ
կնոջ ուսման անհրաժեշտութեան մասին: Պատանին
ստիպւած էր հետանալ «անթափանցելի տղիտութեան»
այս ներկայացուցչւուց, սպաւելով կրկնապատկւած
ջերմեռանդութեամբ վաղւան, երբ հնարաւորութիւն
պիտի ունենար իր լուսաւորչական առաքելութիւնը
սկսել Մարգօի վերաբերմամբ, գրելով, տպելով իր յա-
ռաջաղէմ մտքերը շմանկական հոգու ձիւնասպիտակ
տախտակի վրայ»...
Գիշերւայ ժամը երկուսն էր, որ Մաքեդը, փողո-
ցում, միկիտանի առաջը զալով, խեց նրա ձեռքից
Մարգօին.

Աւ մինչդեռ տղամարդը, սեերես, յուղմունքից
փուհ-փուհ փանչալով, հետեւմ էր տուն վերագարձող
մօրն ու աղջկանը, Օսանը վերեկց ցած զցեց թաշկի-
նակի ծայրում կապած մի գրամ.

— Մաքուլ ջան, Մաքուլ, այս յիսուն կօպէկի

շաղը ոչխարի մի ազգը գնիր, տօլմայի համար...

— Նամուսդ կտրւի՛, մտածեց Սարեղը, չտես ձեզ
շանալով, ու բակը մտաւ.

Օսանի ցած գցած փողն առնելուց և իր տան առ
ուաջ մի փոքր տատանւելուց յետոյ, միկիտանը գնաց-
իր պանդոկը, յոգնած ու ջարդւած.

Զիտօն միւս օրը նրա անկողինը տեղափոխեց-
այնտեղ...

XIX. „ԱԼԵՔՈՆ“

Արսէնը մի ամբողջ շաբաթ ծառայեց անկողնուն-
ու այդ հօթն օրւայ ընթացքում միակ պայծառ յիշո-
ղութիւնը Մարգօի այցելութիւնն էր: Սաքուլի նըւի-
րաբերած նարնջի հատը մնացել էր անձեռնմխելի ու
չնայելով մօր թախանձանքներին, պատանին մերժում
էր ջերմից չորացած իր լեղուն թարմացնել նրանով,
ասես սպասելով Մարգօի երկրորդ այցելութեանը, նա-
րինջը միասին վայելելու համար... Երկար ժամանակ
անօգուտ կերպով աչք ածելուց յետոյ, նա վերջապէս
խնդրեց Օսանին կանչել միկիտանի աղջկանը: Ի դուր:
Այրին ոչ միայն տրամադիր չէր Սարեղին հաշտու-
թեան ձեռք մեկնել, այլև սրա աչքը հանելու համար
պատուհանի վրայ շաբօների կողքին շարել էր Սաքուլի-
նէիրաբերած երեք շիշ գոյնզգոյն խմիչքները... Մի օր
սակայն Մարգօն անսպասելի կերպով մտաւ հիւանդի
սենեակը...

Ասես Արսէնին մարդու տեղ չփնելով, նա մօտե-
ցաւ Օսանին ու յայտնեց, թէ մի «պատւական շորե-
րով» մարդ կանչում է նրան: «Պատւական շորերով»
մարդու այցելութիւնը այնքան անսպասելի էր, որ Օ-

սանը շտապ դուրս եկաւ սենեակից, երեխաներին
մենակ թողնելով.

— Մարգօ, ձայն տեսց Արսէնը, տեսնելով երե-
խայի շփոթմունքը Օսանի վրազ դուրս գնալու հան-
դէպ, կարողանալով այժմ արդէն մեկնել նարինջը.

— Դու կեր, Արսէն, ես չեմ ուզում, վրա բերեց
միկիտանի աղջիկը, քաշւելով, ձեռքերը ետես դարսած.

— Կտրիր, կտրիր, Մարգօ, կէսը քեզ, կէսն ինձ.

Պատանին հազիւ վերջացրել էր իր ասելիքը,
երբ Օսանը, փախչելով «պատւական շորերով» տղա-
մորդուց, սենեակն ընկաւ: Հնչասպառ: Հետևողն այրի-
տէր Անդրէասի նախկին խոհարարն էր—օձնեցի եզնի-
կը, որ տասներկու տարի առաջ, շնորհիւ Փեփելի բարձ-
րացրած աղմուկի, դուրս փախաւ Օսանի տան եղդիկից
ի զարմանս «ողորմածիկ» տէր Անդրէասի, որ այդ ժա-
մանակ նայում էր պատուհանից երկու բոյրերի զարկէ-
գար՝ կուին: Խոհարարը կտուրից կտուր իրեն Խօջի-
վանքի գերեզմանատունն էր զցել, այլ ևս չվերադառ-
նալով քահանայի մօտ, սրա գաւազանի երկիւղից:

Բագւում իր արհեստը տաճներկու տարի կատա-
րելագործելուց և գլխի մազերը կորցնելուց յետոյ, նա
այժմ վերադարձել էր բժշկւելու համար: Այլ ծանօթ-
նէր չունենալով, նա ուղղակի Օսանի տան ճանա-
պարհը բռնեց: Այստեղ նրան սպասում էր հիասթա-
փութիւնը, որովհետեւ Օսանի հին տան տեղը աւերակ-
նէր էին մնացել միայն... Եղնիկը սրտաշարժւեց,
նկարելով իր երեակայութեան մէջ Օսանի և Արսէնի
մահւան պատկերը աւերակների տակ: Բնազդմամբ նա
իր աչքերը դարձրեց դէպի տէր Անդրէասի պատու-
հանը, որ փակ էր: Զքացել էր առաջւայ վտանգը, և բք
ամին ըռպէ պէտք էր զգոյշ լինել «ողորմածիկ» սր-
տես աչքերից...

Ու եղնիկը յիշեց այն թուրքին, որ երազում մա-

ծուն տեսնելով գդալ չէր ունեցել և որ միւս գիշեր,
գդալը ձեռքին բնելով, մածուն չէր ստացել...

Յուսահատութեան այդ բոպէին Հոռոմը, անցնե-
լով փողոցով, տեսաւ Եղնիկին։ Պատիւ համարելով
«պատւական շորերով» մարդուն մի ծառայութիւն մա-
տուցանել, պառաւը մօտեցաւ նրան.

— Եղնիկ ջմն, Օսանին ես ուզմամ... «Միր»
Փարսեղի տան է կենում, Եղնիկ ջան.

— Որ այդ երեխան առւնը ցոյց տայ, ի՞նչ կլի-
նի, մայր...

Ուզէր, չուզէր Հոռոմը պիտի համաձայնէր, որ
Մարդոն առաջնորդէ Եղնիկին.

Տէր Անդրէասի նախկին խոհարարին Օսանը մի-
անգամից չկարողացաւ ճանաչել, այնքան փոխւել ու
ձևափոխւել էր նա։ Ինչ որ Օսանի ուշագրութիւնը
գրաւեց ամենից առաջ, այդ Եղնիկի եւրոպական ձե-
ւի սև գլխարկն էր, որ նա փոխարինել էր իր ֆուրաժ
կային։ միւս կողմից խոհարարը երեսն ածելել էր
տեւ ու սովորական ցանցաւ միրուքը այլ ես չէր
տգեղացնում նրա դէմքը։ Ահա այս պարագաների,
ինչպէս և մոլորագոյն անդրավարտիքին խիստ սազող
սև վիզիտակայի շնորհիւ, Օսանը չճանաչեց Եղնիկին ու
մինչեւ անգամ յետ քաշւեց նրանից, չհամարձակելով
նայել այս խիստ «պատւական շորերով» տղամարդուն,
որ թւում էր թէ իր մօտ չպիտի եկած լինէր.

Այն ժամանակ Եղնիկն ասաց պարօւը.

— Խի՞ որ...

— Խի քեզ ու ճիճու, սրտամեռ, վաղ ասէիր էլի...

Գեղեցիկ այրու ծնկները ծալում էին ուրախու-
թիւնից, երբ նա Եղնիկին առաջնորդելով, բարձրա-
նում էր սանդուխքները։ Այսպիսով այրին չնկատեց
հիւրի գանդաղկոտութիւնը, որ յենելով սանդուխքնե-
րի պատւարի վրայ, օրորելով, սայթաքելով մի կերպ
քաշ էր ընկնում նրա ետեկց... Վերև հասսած, Օսանը

պիտի սպասէր հիւրին։ Նա յետ նայեց ու սարսա-
փեց։ Եղնիկը կանգնած էր ճանապարհի կէսի վրայ ու
մետաքսէ թաշկինսկով սրբում էր իր ճաղատ գլխի
քրտինքը... Կինը յիշեց «պետլած» Գրիգորին, որ Խո-
ջիվանքի գերեզմանատանը, Ալեքոից նշանը ստանա-
լուց առաջ, մի տեսակ մարդարշաւ էր ուզում կատա-
րել տալ Օսանին ու Ալեքոին, թէ—

— Նաղդը նաղդանայ, սուտը սատանայ... Միա-
սին, միասին, Ալեքօ ջան...

Ու այրուն թւաց, թէ սանդուխքներով բարձրա-
ցողը Ալեքօն է...

Մի ըուպէ «շնացած աչքերը» պատկերացան նրա
տեսողութեան առաջ, իրենց ճուտերով, որոնք վերջա-
պէս ողողել էին Ալեքօի ողջ մարմինը...

— Գնա, գնա, կրրիր...

— Խի՞ որ, աղջի, Օսան, խի՞ որ...

Բայց կինն անյայտացել էր։ Նս մտաւ մօտակայ-
խարխու սենեակը, առաւ այնտեղից առաջին պատա-
հած աղիւսի կտորը ու կանգնեց իր դրան առաջ...

Եղնիկը, վերջին ոյժերը հաւաքած, վազում էր
դէպի կինը.

— Միասին, միասին, Ալեքօ ջան, յիշեց այրին...

Մէկ էլ նա ուղղեց իր կուրծքը, նշան արեց ու
աղիւսի կտորը նետեց դէպի Եղնիկը.

Աղիւսը, քերելով սրա ականջը, զարկեց դիմացի
պատուհանին, ցնցելով ողջ պատզամբը.

— Կորիր, կորիր, կրկնում էր Օսանը, յամառ-
սիրահարից աղստելու համար, սենեակն ընկնելով.

— Խի՞ որ աղջի, Օսան, պսամւենք, շարունակ
յամառում էր օձնեցին, ինքն ևս սենեակ մտած.

— Ճաղատ գլխիդ թագն էր պական...

Ու մինչդեռ Արսէնը, հիւրանդութիւնը մոռացած,
աչքերն արիւնով լիքը, վրա էր վազում, Եղնիկին
գլախեղդ անելու համար, Օսանը երկու ձեռքերով ա-

մուր վամփեց Մարգօի զլխին ու կոպտութեամբ դուրս
նետեց նրան սենեակից.

— Էս թարփը տար մօրդ համար, աւելսցրեց,
նա, հասցնելով երեխայի հտեից եղնիկին...

XX. ԾԽԼՈՒԻ ՔԱՐԵՐԸ

Օսանի անսիրտ վարմունքը դէպի Մարգօն ս
ուաել ևս լայնացրեց հակառակութեան այն վիճը, որ
պատանու հիւանդութիւնից առաջ գոյութիւն ունիր
մօր և որդու մէջ։ Միւս կողմից Արսէն իրեն մեղա-
ւոր էր համարում Մարգօի առաջ Օսանի անսիրտ վար-
մունքի համար թէ դէպի ինքը Մարգօն և թէ դէպի
Մարեղը, որի համար այրին շնուրու էր ուղարկել քո-
ստւած եղնիկին... Այս անգամ էլ միասին նարինչ
ուտելու համար չէր, որ Արսէնն ուզում էր պատահել
Մարգօին. Նրա սրտի չանգուածները հովացնելու նը-
պատակով էին այժմ պատանու հետամտութիւնները...
Դեռ լաւ էր, որ նա ոչինչ տեղեկութիւն չունէր այս
ապտակների մասին, որ միկիտանի աղջիկը ստացել էր
Մարեղից եղնիկի հետ Օսանի տունը գնալու համար...

Մամբրէի քլունգով ծակած, համարեա ջախջա-
խւած դուռը, որ դէպի Մարգուի բակը նայող պատըշ-
գամբն էր տանում, մնացել էր փակ, ժանդուած, օ-
ղակը կոտրած բանալին մէջը... Արսէնը չփորձեց ան-
գամ նորից բանալ այդ դուռը, ամաչելով արդէն հեռ
ւից զմայլող սիրահարի դրութիւնից, Մարգօն ծնկնե-
րի վրայ նստեցրած ունենալուց յետոյ...

Պէտք էր Մարգօին տեսնել մօտիկից ...

Հեշտ չէր այդ.

Ոչ այնքան Մարեղի նետածքարերից վախենալով,
որքան նրա սիրտը շահելու համար, վաղուց էր ինչ

Արսէնը չէր անցնում միկիտան Մաքուլի տան մօ-
տով... Մի անգամ, սակայն, բաղդն ասես ժպտալ
փորձեց նրա երեսին, բայց այդ էլ անյաջող վախճան
ունեցաւ, դառնացնելով պատանու սիրտը.

Այդ նախանցեալ տարի էր.

Հոռոմը, Զիտօին երկար սպասելուց յոգնած, դէս-
դէն նայելով մի երեխայ էր որոնում լւացքի կապոցը
հետները բաղնիք տանելու համար Այդ ժամանակ Ար-
սէնը Շլուշկու թագրած աղաւնիների խաղով զբաղւած,
ձեռքերը գրանում, դիտում էր սիրուն թոշունների
օդային պտոյտները...

— Արսէն ջան, որդի, մէկ այս փոխնորդները...

Պատանին չսպասեց, որ պառաւը խօսքը վերջա-
ցնէ, միայն թէ հազիւ նա միկիտան Մաքուլի բակն էր
մտել Հոռոմի խնդիրը կատարելու համար, երբ Մա-
քուլը սենեակի դռնից արհամարհանքով նետեց նրա
երեսին.

— Գնա, գնա, մներես. էլի եկամը...

Ու դժւարն այն էր, որ հէնց նոյն ըռպէին Մար-
գօի կէս խղճացող, կէս հայցողական հայեացքը խսո-
նեց իրենի հետ...

Այդ դառնութիւնը մի կերպ նրա սրտից լւացել
էր Մարգօի ուտեցրած նարնջի ջուրը...

Այժմս էլ Օսանն էր, որ իր անսիրտ վարմունքի
շնորհիւ նրան յուսահատութեան մէջ էր զցել.

Ո՞րտեղ գտնել Մարգօին...

Մի Հոռոմի տունն էր, որտեղ Մարեղը շատ ան-
գամ ուղարկում էր Մարգօին, տատին այս կամ այն
յանձնարարութիւնն անելու համար, մին էլ միկիտան
Մաքուլի տան կողքի աղբանցը, որտեղ առաւօտները
Մարգօն գալիս էր տան աղբը թափելու համար, կան-
ֆետի թիթեղեայ արկդի մի խուփի մէջ հսւաքած...
Երեք օր Հոռոմի տան մօտակայքում անց կացնելուց
յետոյ, Արսէնը մի ամբողջ շաբաթ էլ Մարգօի ճանա-

պարհը պահեց աղքանոցի աւերակ մի պատի տակ
թագնւած...
ի զուր...

Սարեղն այսպէս սաստկութեամբ էր արգլ լել
աղջկանը տանից դուրս գալ, որ աղքատի հացն ան-
գամ ինքն էր զուրս բերում...

Արսէնի դարդին մի վերջ եղաւ:

Հաց թխող Սառանի հետ խմորով լիքը տաշտը
վեր քաշած լինելով, Սարեղը մէջքը ցաւ էր տւել ու
միւս առաւօտ, տեղերից չկարողանալով վեր կենալ ու
սիրտն էլ վատ լինելով, Մարգօին ուղարկել էր Հոռո-
մի մօտ, որ պառաւը գայ, պանդոկի լելաշորերը լւա-
նայ: Թաղի երեխաները լցւել էին այստեղ ու քարեր
էին նետում պղտոր ջրերի մէջ, ապականելով շրջակայ-
տների տախտակէ պատւարները: Մարգօն ափէափ մօ-
տեցաւ երկու լճակները միացնող մի նեղուցի և ու-
ղում էր զգուշութեամբ անցնել փողոցի հակառակ
կողմը. մի չարաճճի, ձեացնելով, թէ ինքն ևս անց-
նում է միւս ափը, երեխային հրեց ու ցեխը ցցեց:
Մինչդեռ Մարգօն, մինչև սրունքները ջրի մէջ, դժւա-
րութեամբ մի ելք էր որոնում, Արսէնը բռունցքի մի-
հա ըւածով չարաճճուն գետին գլորեց: Այնուհետև, մօ-
տենալով միկիտանի աղջկանը, նրան գիրին առաւ ու
քերեց մի ապահով տեղ, հանեց իր գրպանի գանակը-
ու սկսեց մաքրել նրա չստերի ցեխը.

— Ե՞րբ ես մեր տուն գալու, Մարօ, հարցրեց
Արսէնը, գործը դադարեցրած, միկիտանի աղջկայ աշ-
քերի մէջ նայելով.

— Վոյ, Արսէն ջան, զարմացաւ միւսը, ու ապա,
տեմնելով պատանու վրշտը, աւելացրեց.

— Հեռի բեղանից, բայց շունը գայ ձեր տուն.

— Խի՞ որ, աղջի, չհասկանալ ձեացրեց Արսէնը.

— Այն քո մայրը... վոյ, վոյ, վոյ, օձիքը թափ-
տւեց միկիտանի աղջիկը, պատանու աչքը զննելով.—

մինչև օրս էլ նրա փամփոցից գլխիս վերել երկու կէս
է ուզում լինել...

— Իմս չես ասում, Մարգօ ջան, որ Փեփէլի
թաղումի օրը, ձեռքդ բռնած ժամանակ, Սարեղը չորս
ան գամ իրար վրայ փամփեց...

— Էն Ա'ստածը, միտս չէ...

— Ես, որ քո Սարեղին շատ եմ սիրում, էլ ին-
չնւ է հիմա ետևիցս քարեր ցցում.

— Այդ էլ քո Օսանիցն է, Արսէն ջան.

— Որ գամ ձեռքը պաչէմ, արտասւեց պատանին.

— Խի՞ որ...

էլ Ալ սէնը չկարողացաւ հասկանալ, թէ ինչն էր
Մարգօի զարմանքի պատճառը, իր արցունքնէրը, թէ
Սարեղի ձեռքը համբուրելու ցանկութիւնը.

— Խի՞ որ, Արսէն ջան, ցեխը սա է ընկել, սսովը
դու ես անմւմ, խօսեց մին էլ պատանու ետեից Հոռո-
մը, որ թոռանը պատահած դժբաղդութիւնը լսելով,
ոտարօրիկ ընդառաջ էր եկել.

— Մայր, ասելս այն է, որ Սարեղն ինձ քար-
կոծ է անում.

— Մեղն այս «անզգամինն» է, պատասխանեց
Հոռոմը, բաց ձեռքը թոռան աչքը կոխելով.

— Խի՞ որ, բարկացաւ տատի երիս տւած թոսը...

— Ես էլ որ քեզ պէս բորիկ ոտերս խալխի առաջ
ուղղումածիկիս» բերաննէի կոխել, Շխլուի քարերն իրար
վրայ չէին մնայ...

Այժմ միայն Արսէնն ու Մարգօն կարմբելով
նկատեցին, որ միկիտանի աղջկայ շրջապեսալ, մինչև
ծնկները յետ զնալով, բաց էր թողել նրա մերկ սրունք-
ները...

XXI. ՄՈՒԶԻԿԱ-ԿԵԿԵԼԻ ՈՒՍՈՒՄ-ՆԱՐԱՆՈՒՄ.

Ո՞րն Արսէնի աչքից հեռացնելու, ո՞րն էլ ձեռագործ ու լեզգինկա սովորեցնելու համար Սարեղը Մարդօին յանձնեց Մուզիկա—Կէկէլի ուսումնարանը...

Քանի որ Զիտօն էր երեխային ուսումնարան տառում, Արսէնը հեռաց էր միայն հետեւմ Կէկէլի խրատով բերանը հուպ, շտապ-շտապ դասի գնացող աշակերտունուն: Երբեմն միայն, ձանձրացած իր չէզոք դերեց, պատանին, Մարդօին յետ նայել ստիպելու համար, չափ էր ընկնում ետեից, ոտքերն ամուր գետնին խփելով, ձիու պէս, վախեցնելով... Եկաւ ժամանակը, երբ Մուզիկա-Կէկէլը արգելեց Զիտօնին իր ուսումնարանը գալ լելու գոգնոցը կապած: Սարեղը ստիպւած էր խնդրել Սի—Տանը բնակւող դպրոցականներից մինին ուսումնաան գնալիս Մարդօին ևս տեղ հասցնել: Սրսէնին դարոցականի այս յաջողութիւնը վշտացը եց: Վերջինն այն ինչ, զժգոն Արսէնի չարութիւններից, յորդ-ըում էր Մարդօին ուշ՝ դրութիւնը չդարձնել ։ Իրավագէվու զ չափ ընկնելու վրայ.

Աշակերտունին սակայն իրեն՝ շատ վատ էր զգում, մի կողմից Մուզիկա—Կէկէլի և միւս կողմից դպրոցաւանի ճնշումների մէջ: Այդ էր պատճառը, որ նա ստիպ-ստիպ կանգ էր առնում ճանապարհին, մէկ ձեռքեց դիտմամբ ցած զցած կապոցը վերցնելու, մէկ սոնապահի կապիչն ուղղելու համար: Դպրոցականն այն ժամանակ փորձեց ազգել Արսէնի վրայ: Վիճելով վիճելով, քիչ մնաց, նրանք մի երեկոյ զարկէզարկ ինէին:

Մէկը բերեց հաշտութեան ոստը.

Այդ Մաքօի աղջիկն էր—Շողերը, որի մայրը, հիանած Մարգօի սովորած ըէվէրանսներից, իր դստերն ևս տեսց Մուզիկա—Կէկէլի դպրոցը

Այն ժամանակ պատանիներից իւրաքանչիւրը անմոռնչ համաձայնութեամբ ընտրեց իր երազների առարկան...

Դպրոցականն ամեն օր Պակեռվսկայա զօրանոցի մօտ Արսէնին էր յանձնում իր «աւանդը», ու զոյգերը դիմում էին դէպի Մուզիկա—Կէկէլի դպրոցը, ծիցիանովսկի զառիվայրի գլխով-ճանապարհը երկարացնելու համար, ու մինչեւ, աշակերտունիներին տեղ հասցրած, դպրոցականը շարունակում էր իր ուղին, Արսէնը տախտակէ պատարի ծակ ու ծուկի միջով հետախուզում էր Մուզիկա—Կէկէլի ուսումնարանը, նայելով երկար թախտի վրայ ծալապատիկ բազմած աշակերտունիների շարքերին, որոնց միջով Կէկէլը, չստերը հանած, փեշերը մինչև սրունքները վեր քաշած, ըմբռստ բութը ծակ գուլպաների մէջ ջղաձգաբար պահելով, յետ ու առաջ էր գնում, կարմիր ճիպոտն ուսին դրած, հաւասարակշութիւնը շկորցնել աշխատելով, թախտի օրօրւող տախտակների վրայ...

Արսէնի օրինակին հետեւցին բազարը ճաշ տանող խանութի աշակերտուններ, խոնւելով պատնէշի առաջ դպրոցում պստահածը լրտեսելու համար, չնայելով Կէկէլի մօր անէծքներին ու հայնոյանքնելին: Մի վրան կար տանը, որի տակ կիրակի օրերը Մուզիկա-Կէկէլի եղբայրը կաղին ու խուրմա էր ծախում Սալղատսկի բազրում. այդ վըսնի ծւէն-ծւէն քաթանն էր, որ Կէկէլի մայրը մեխել տւեց ներսից տախտակէ պատարովը մէկ, ծակերը կալնելու համար: Արսէնն իր դիտարանը տեղափոխեց հարեւն կտուրներից մինը, որտեղ լարւած ուշաղութեամբ, նա սպասում էր Մարդօի բակը դուրս գալուն, խնչելու համար: Ողջ մի շաբաթ ապարդիւն կիրապով դիտելուց յառաջ, պատանին արդէն յուսահա-

տւելու վրայ էր, երբ Մարգօն մի օր գույս եկաւ վերաշապէս «դասարանից», Միկիտանի աղջկայ ուշադրութիւնն իր վրայ դարձնելու դիտաւորութեամբ, Արսէնը ինքն ևս խնչելու ձայներ արձակել սկսեց, թագնւել լով: Մակայն Մարգօն տեսել էր նրա գլխարկի ծայրը, ու այնուհետև ինքն էր, որ օրը երեք անգամ բակը դուրս գալով, որոնում էր Արսէնին շրջակայ կտուրների վրայ...»

Միկիտանի աղջկանը վիճակւած չէր երկար ժամանակ մնալ Մուլիկա—Կէկէլի մօտ... Մոլորաբար պարի դասերը տեղի էին ունենում շաբաթ երեկոները՝ ուսումնաբանի բակում: Կէկէլը մի օր նկատեց Մարգօի ժաղիտը պարելիս ու ձեռքի մուզիկան կողքի աշակերտուհուն յանձնելով, առանց պատճառն իմանալու, խստութեամբ արգելեց երեխայի պարը, նրան արտաքինոցի ծակ հորի մօտ կանփնեցնելով... Վիրաւորւած այս վարմունքից, միկիտանի աղջիկն սկսեց դառն արցունքները թափել. ընկերուհիներն այնինչ նայում էին դէպի հարեան կտուրը, ասես այնտեղից պաշտպանութիւն յուսալով... Այս բանը չվրիպեց կէկէլի աչքերից. նա տեսաւ փախչող Արսէնի մէջքը, Մինչդեռ Շողելը բայտնում էր կէկէլին պատանու ով լինելը, վարժուհու խուրմա ծախող եղբայրը անօգուտ կերպով հետապնդում էր նրան էջմիածնեցոց փողոցի ամբողջ երկարութեամբ...

Այդ օրւանից ոչ Մարեղը, ոչ էլ Մաքօն իրենց երեխաներին այլևս Մուլիկա-Կէկէլի ուսումնաբան չուղարկեցին...

XXII—ԹՇՆԱՄԻՆԵՐ

Մարգօի հետ Օսանին արած այցելութիւնից յետոյ, Սաքուլը միքանի անդամ պատրաստւել էր նրա մօտ գալ, բայց անյաջող.. Ամաչելով, ամաչելով, ժամանակի ընթացքում միկիտանի անվստահութիւնը յետ սովորեցեց նրան Օսանի մասին մտածելուց... Որտեղից-որտեղ ճօթավաճառի մօտ շապկացու կտրել տալիս, Սաքուլի աշբովն ընկաւ խանութի աշակերտը—ծականը, որ ապրանքի մի սիւնի ետել կանգնած խեղդւելով կուլ տալ էր աշխատում կիսածամ, շաքրած ընկոյզը, ճեռքը բերանի առաջ, փուհափուհ մէջը փչելով... Սաքուլին գւարճացըրեց պատանու խորամանկութիւնը ու սկսեց ինքն ևս նրա պէս գողութիւնը քողարկողի ձեւեր անել, աչքն առաստաղին, գետինը ծեծելով, ոտքերը մրսողի պէս ..

Այնուհետև էլ, Ցականի հետ պատահելիս, նոյն շարժմունքներն էր անում միկիտանը թէ փողոցում և թէ Հաւլաբարի մէյգանում, այն տեղը հասցնելով, որ մի օր ճօթավաճառի աշակերտը քարն առած, դէպի նա վազեց... Միկիտանը նոյնպէս վրա քաշւեց, խփել ձեւացնելով, բռնեց Ցականի ճեռքը, զինաթափ արեց, փաղաքշեց, խրատեց, որ այլ ևս քարի հետ գործ չունենայ... Տարաւ մօտակայ խանութը, նրա գլխարկովը մէկ բոված նուշ ու կանֆետ կշռել տեսց ու ձեռքն էլ շոր-մոր կարելու համար, երեք լուրիփանոցը դնելուց հետոյ, ճանապարհ զցեց, խրատելով թէ.

— Ցակո ջան, Ցիկո, (ուլ) էլ քաշ չվերցնես, մէջն արիւն կայ...

Դագաղագործ Աօլօմանը, վարսավիր Մերգօն, հսավաճառ Միխակը և Սաքուլը մի օր Ուլի-Բուլադ-

կնացին քէֆ անելու ու վերջինիս հաշւով հետները տարան և ծիկօին, որ այնուհետև քէֆից-քէֆ Սաքուլի պստիկը դարձաւ, ահղափոխակալով բոլորովին սրա պանդոկը...

Եկաւ ժամանակը, երբ միկիտանը, Մարգօին թողած, իր զրօսանքները հրավառութիւնների ժամանակ կատարում էր ծիկօի հետ, դագաղագործ Սօլօմանի ուղեցութեամբ, որ պատանուն իր փեսան էր ուզում շինել, սպիտակութեանը համար...

Ու անմոսւնչ համաձայնութեամբ ընդունւած մի կարգ էր այն, որ երկու տղամարդիկ Հաւլաբարի զառիվայրն իջած, կամուրջի մօտ, ծանրացնում էին ուղքները, ծիկօին առաջ գցելով...

— Լաւ պստիկ է մեծանում, հարեան Սաքուլ, շողոքորթում էր միկիտանին դագաղագործը, կրկնելով ամեն անգամ Բազասխանայի սանդուխքների մօտ միշտ միենյոյ գովասանքը ծիկօի մասին,

— Անտիկա, հաստստում էր Սաքուլը, նշանը — կար մետաքսէ բաղդադին մի ուսից միւսը գցելով.

Ապա շարունակող շփոթունքը ծածկելու համար, համում էր ծիկօի ետևից, կանգնեցնում նրան, ուղղում նրա Փուրաժկան, նշանկար բաղդադիով սրբում նրա չստերի թողը...

Պստիկը, ի տրիտուր այս խնամքների, իր ցեխոտ ուղերը քսմում էր միկիտանի կօշիկներին, շորերին, հետապնդելով նրան Մողնու թաղի ամբողջ երկարութեամբ, մինչև հրապարակը, երբ դագաղագործը, փրբը ծիծաղից հուպ րոնած, վերջ ի վերջոյ հետեւ երից հասնելով, մաքրում էր Միկիտանի շորն ու կօշիկը իր թաշկինակով...

Յոգնած, մինը ծիծաղից, միւսը կուելուց, նրանք եւկուսով գնում էին, անյայտացած ծիկօին որոնելով, Պրօսպեկտի երկու կողմերը բռնած, այն ինչ պստիկը, թագուստից դուրս գալով, ծածուկ հետևում էր մոլոր-

ւած հաւերի պէս այս այն կողմը նայող տղամարդկանց, գւարաճնալով...

Պանդոկի գործն առանց այն էլ շատ էր. այժմ էլ ծիկօն էր, որ իր պահանջերով մի կատարեալ բեռն էր դարձել Զիտօի գլխին... Ծանրագոյնը, սակայն, զինետան նոր բնակչի ոչ ձեռքին ջուլ ածելը և ոչ նրա չստերը իւղելն ու գուլպաներն ամեն առաւտ թափ տալն էր... Զիտօի սիրտը կրծում էր թագրած այն ատելութիւնը, որ նա տածում էր դէպի միկիտանի երես տւած պստիկը, սրա տեղի-անտեղի, լոկ պանդոկի հասարակութիւնը զւարձացնելու համար, իրեն հասցրած աքացիների պատճառով...

Մի երեկոյ, երբ գինեգաւը աջ ձեռքում, բողկու կանաչու ափսէն միւսում, ծառան գնում էր դէպի պանդոկի սեղաններից մինը, նրա ոտքը մի կոշտ բանի դիպաւ... Զիտօն սայթաքեց, բայց չընկաւ.. Օրօր ւելով, ուսն աջ, ձախ անելով, նա շուտով գտաւ իր, հաւասարակշութիւնը.

— Մալադեց, ասաց միկիտանը.

Ու էլ յայտնի չէ, թէ ումն էր վերաբերում այս գովասանքը. ծիկօին, որ Զիտօին ոտք էր գցել թէ Զիտօին, որ այնպէս ճարպիկութեամբ ազատել էր գետին լնկնելուց.

Այն էլ յայտնի չէ, թէ ինչն էր այնպէս ալ վարդ շինել փուն-փուն ուռած Զիտօին, պանդոկի հասարակութեան մաշալահ գովասանքները, թէ զսպած վրէժի բերան-բերան շփոթող կիրքը...

Ուղիղն այն է, որ երբ սպասաւորը, վերցնելով կերած խորովածի ոսկորներով լի ափսէն, գնում էր դէպի դազգեահը, ծիկօն հասաւ նրա ետեից ու նորից ոտք գցեց... Միկիտանի ծառան դարձեալ չընկաւ, բայց այս անգամ, համբերութիւնից դուրս, նա, ափսէն ցած զնելուց յետոյ, հանեց չստի ճտքի միջից պլազան բէրութը, կանգնեց պանդոկի մէջտեղը, զոյնը

դցած, ստորին շուրջն ատամներում, հաշւելով հարածը.

Նրա աջը սակայն թուլացաւ, ծիկոն թագնւել էր Սաքուլի ետևում...

Սիրտն ուռցրած յաղթողի հպարտութեամբ, սրբամարելով Սաքուլին ու պստկին միաժամանակ, սպասաւորն ուղղեց իր լեռոտ զոփնոցը ու շարունակեց սովորական ծառայութիւնը, հաճութեամբ ընդունելով ասայն կողմից առաջարկող կենացները, կոնծելով ինքն ևս Այս ինչ պանդոկին կից սենեակում Սաքուլը ճիպուներ էր կոտրատում ծիկօի ուսիրի վըրայ, «անպարկեցառթեանը» համար, խրատելով...

XXIII ՄԻՆՉԵՒ ՇԵՄՔԸ

Սուրբը նախ Զիտօի և ապա իր եղբայր Գառապարի միջոցով մի քանի անգամ յայտնել էր Սաքուլին «կապը կտրող» աղջկայ վարմունքների մասին, որ Արսէնի հետ պատահելու համար, այժմ արդէն արհամարհելով ամեն արգելք ու սպառնալիք, տեղի-անտեղի վաղում էր Մաքօի աղջկայ. Շողերի մօտ, ձեռագործի այս կամ այն պարագան վերցնելու պատրւակով: Բայց միկիտանը շատ էր զրադւած իր պստիկով, որպէսզի ժամանակ ունենար մտածելու սեփական տան զործերի մասին.. Մի անգամ սակայն անհրձագի շատ թէժ թուք ու մուրի ազդեցութեան տակ, նա բռնեց տան ճանապարհը, դժոն, որ իրեն խառնւել են ստիպում արդէն օտարացած մի աշխարհի գործերի մէջ: Ասես աղաւնի թոցնող Շլուշկու զցած քարը լինէր նա, որ փակ պատուհանի ապակին ծակելով, ուրիշի ըմբապուրի մէջ պիտի ընկնէր... Ծանրագոյնը սակայն չսիրած կնոջ հետ երես առ երես գալն էր. ամօթն ուղացողի...

Դանդաղ ու մտախոհ նա առաջ էր գնում գլւխուոր փող ցոլ, անսիրտ...

Սև-Տան առաջն եկած, մին էլ նա բարւոք համարեց նախ «խրատել» Արսէնին ու գնաց Օսանի բնակարանը...

Իրենց եկեղեցու երեցփոխի յանձնարարութեամբ ք. հանաներից մինի հասցէով մի անանուն նամակ էր սպիտակացնում Արսէնը, երբ միկիտանը նրա կուռը բռնեց: Տեսնելով պատանու շւարմունքը և իր շփոթմունքը ճածկելու համար, հիւրը գովեց նրան.

— Մալաղեց...

Առանց մի խօսք ասելու, գրիչը ցած դրած, Արսէնն աշխատում էր կարդող նրա աչքերում այցելու թեանը նպատակը.

Այս ժամանակ միկիտանը յանկարծապէս բռնեց նրա թեւ և տանելով նրան պատուհանի առաջ, սկսեց սպառնանքով թափահարել ցուցամատը դէպի իր տունը:

Մին էլ նա սենեակից գուրս եկաւ, բռունցքները բարձր ացրած, աչքերից կրակ թափելով...

Ու մինչդեռ Արսէնը լուսամուտի առաջ կանգնած սպասում էր այս վայրենի «կատաղութեան» եղերակից վախճանին, միկիտանը հերին իր պանդոկն էր շտապում...

Մի օր Զիտօն, պանդոկից բերելով սովորական ճաշը, Սաքեղին յայտնեց, թէ Սաքուլը երեկոյեան թէրին մի հիւր է բերելու, ինդրելով ինքնանոը մի փոքր շուտ պատրաստել, ունաբռնու տակ...

Տարիներ շարունակ տան երեսը չտեսնող ամուսնուց այս բանն այնքան անսպասելի էր, որ Սաքեղը չէր ուղում հաւատալ իր ականջներին. բայց միկիտանի ուղարկած խմիչքի շիշը սպասաւորի ձեռքին էր...

Սաքեղի հարց ու փորձին Զիտօն այն պատասխանը տաեց միայն, թէ, իր գիտեցածով, հիւրը այն «պատրական», բարձր հասակով ու մեծ փորով մարդը

պիտի լինի, որ մի փոքր առաջ, կանգնեցնելով կառքը պանդոկի դրան մօտ, առանց իսկ իջնելու, մի տառ բովէ խօսակցել էր Սաքուլի հետ.

—Ասում ես թուշը կարմիր էր, հը՞, Զիտօ, հարցրեց Հոռոմը խօսակցութեանը վրա հասնելով...

—Երանի՞ քեզ, այ կնիկ, որ այդ հասակում թըշիցն ես խօսում, վրա պրծաւ Սաքեղը պառաւինչ սրոնեղւած.

—Ի՞ն որ. ես ասի, «մեր» Փարսեղն է...

—Փարսեղի դարդը կտրւել է, որ շէն Բաքւից «մեր» աղքատ քաղաքը գայ, կարճ կտրեց Սաքեղը.

—Զինի՞ թէ Սաքուլն «երեխին» նշանում էւ աղջի, խելքի արի, —երեկւանից աչքս խաղում է...

Ու ապա, տեսնելով դստեր զարմացական հայեցքը, պառաւն աւելացրեց.

—Պստիկ է... Ողորմածիկ հայրդ ինձ ժամից խտտած է իրենց տուն բերել...

—Բերանիդ շոքար, մայր, գոնէ այն «մօր ծիծ կտրողից» կազատւէինք, ասաց Սաքեղը, իր վերջին խօսքը վերաբերելով Արաքնին...

—Էհէէէհա, մէկ մեռնելս չգիտեմ... Ես չէի ասում, թէ մեր Փարսեղն է, ուրախ-ուրախ ներս վազեց երեկոյեան դէմ Հոռոմը Սաքեղի մօտ, սրա առաջը դնելով երկու անօթ մուրաբան, որ նա բերում էր իր տանից, դստեր երեսը հիւրի առաջ պարզ անելու համար.—աչքովս տեսայ, աչքովս...

Հինգվեց տարւայ անյաջողութիւններից յետոյ սեփական կալւածքի ամայանալը վերջին հարւածն էր, որ գժբաղդացրեց Փարսեղին: Անպատւութիւն համարելով որմթագրութեան արհեստին վերադառնալ, կապալառուն վերջին արծաթեղէնը զրաւ դնելուց յետոյ, պանդխտութեան դիմեց, տունն արդէն քարաքանդ եղած.

Բաքում գործերն այնքան յաջող էին, որ նա,

Թիֆլիս վերադառնալու մասին չէր էլ մտածում, երբ կինը-թաթելը հիւանդացաւ, Բժշկից բժիշկ, երկու տարւայ ընթացքում նրա դրութիւնն այն աստիճան վատացաւ, որ Փարսեղը նրան Թիֆլիս բերել էր ստիպւած.

Թաթելին վերայում վարձած բնակարանը տանելուց յետոյ, կապալառուն կառքով գնում էր Նաւթլուղ զինւորական մի բժշկի հտեկից: Հաւլաբարի մէյզանն անցնելիս, նա նկատեց Սաքուլին, որ նստած էր գինետան առաջ, ու կառքը կանգնեցնել տւեց.

Ահա այդ ժամանակն էր, որ Փարսեղն իմացաւ Սե-Տան վերակենդանանալու մասին ու միկիտանին խնդրեց ընկերակցել իրեն այնտեղ երեկոյեան...

Կնքահօրը թէյի հրաւիրելու միտքը Սաքուլի գլուխում յղացաւ յետոյ, երբ Զիտօին տուն էր ուղարկում.

Մուրաբան ու գրպանի բաժակները դստերը յանձնելուց յետոյ, Հոռոմը գնաց փողոցի անկիւնը համոզւելու համար, թէ Սաքուլի հետ եկողը Փարսեղն է յիշաւի, որովհետեւ քիչ առաջ իր տեսած մարդը, եթէ, մի կողմից, Փարսեղն էր, միւս կողմից կարծես թէ նա չըլինէր, քանի որ, իր յիշելով, կապալառուն փուրաժկածածկելու սովորութիւնն ունէր, այն ինչ Փարսեղին նըման այս մարդը զլսին ինչ որ մի կարծը բան էր դրել, ուղիղ այնպէս, ինչպէս օձնեցի Եղնիկը...

Հիւրը շոքից գլխարկը վերցրեց: Հոռոմն ուրախութիւնից ուղում էր առաջ վազել, որովհետեւ Սաքուլի հետ եկողը այժմ ամեն կողմից Փարսեղն էր...

Պառաւը, սակայն, իր մտքինը չկարողացաւ կատարել, որովհետեւ տղամարդիկ ներս մտան Սե-Տան բակը, նրա բերանը բաց թողնելով.

Ու մինչդեռ Հոռոմը ոպասում էր նրանց դուրս գալուն այնտեղից, Սաքուլը Օսանի սինեակից ցոյց էր տալիս Փարսեղին իր տունը.

— Այն էլ սանամայրդ է, այն էլ Մարգօն է...

Սարեղն այն ինչ ունարենու ետեր, թագի շրջազգեստը հազած, ահագին ջանք էր գործ դնում դէպի Սև-Տունը իր չանչը զսպելու համար.

— Այս էլ մեր փեսան է, լրացրեց իր միտքը Սաքուլը, առաջ քաշելով Արսէնին.

Ու մինչդեռ Փարսեղը Օսանի բուռն էր դնում ուկենոցը, առունը «լաւ» պահելու համար, Մաքուլը, պլասրկը վերցրած, թախանձում էր նրան շնորհ բէրել իր մօտ մի բաժակ թէյ վայելելու. բայց կնքահարը մերժեց, շտապելով հիւանդի մօտ:

Երբ Փարսեղը պատահական մի կառք հեծած գընում էր դէպի Արսենալը, նու չլսեց, թէ ինչպէս մի կին փողոցի անկիւնից հարցնում էր.

— Ո՞նց ես, Փարսեղ, Թաթելը ո՞նց է, լաւ է...

Այդ Հոռոմն էր...

— Գնանք թէյի, «փեսա» ջան, ծախսը մի փշացնի. ուօմից, բանից, մուրաբայից, մի քիչ, ասաց Սաքուլը, բռնելով Արսէնի կռնից, որ պատրաստում էր տաւն գնալ.

— Հրամմեցէք, ԱՌսէն ջան, երբ որդին ես, խնդրում էր իր կողմից Հոռոմը, որ մօտեցել էր նրանց.

Ցայտնի չէ միայն, թէ ինչն էր պառաւի փորացաւանքը. Սաքուլին այզպիսով տուն հրապուրելը, թէ «երեխայի» նշանելու մասին արած իր գուշակութիւնը կատարած տեսնելը.

Ուղիղն այն է, որ երբ պատանին, երկիւղ կրելով Սաքեղից, չնգունեց հրաւերը և Սաքուլի հետ հեռանում էր, պառաւը մի չանչ ուղարկեց նրա հտեւից.

— Աչքդ կարեմ, շատ ես պատառ պատառ գալիս, կասես պոռնիկ Օսանի լակոտը չլինես, վերջացրեց նա իր խօսքը, զրանը կանգնած Սաքեղի սիրտը շահելով...

XXXIV.— ԿԱՐԻՃ

Թաթելի հիւանդութիւնը հետզհետէ ծանրանում էր:

Մի օր Զիտօն, գինետնից տուն գալով, յայտնեց, թէ կնքաւորի կինը հոգեարք դրութեան մէջ է, որ Փարսեղը, ամբողջ օր, կառք հեծած, հետապնդում է «հրաշագործ» մի բժշկի հիւանդից հիւանդ, չկարողանալով գտնել նրան: Կապալառուին կէսօրից մի փոքր առաջ ասել էին, թէ «հրաշագործ» բժիշկը գտնուում է Հաւլաբարում, մի խիստ ծանը հիւանդ մըգավաճառի մօտ: Փարսեղն ու Սաքուլը ամբողջ մի ժամ մըգավաճառի տան առաջ յետ ու առաջ գնալով սպասելուց յետոյ, վերջապէս յաջողեցրել էին տեսնել բժշկին, որ, չնայելով Փարսեղի թախանձանքներին և առատ խոստումներին, չէր համաձայնւել գնալ Թաթելի մօտ, նախ քան չունեոր մըգավաճառի վերաբերմամբ իր պարտաւորութեան կատարելը:

Սաքեղը վաղուց արդէն մտադիր էր սատանայի ոտքը կոտրելու մի օր Թաթելին տես կնալ, որ չինի, նըա միջոցով Օսանին Սև-Տանից հեռացնելու համար: Չնայելով Հոռոմի էլ այդ մտքով արած թախանձանքներին, Սաքեղն իր մտադրութիւնը չէր կարողացել իրագործել, որը քաշւելով, որովհետեւ մի անգամ էր միայն խօսակցել Թաթելի հետ, այն էլ Մարգօի մկրտութեան օրը, որից յետոյ կապալառուի կինը դէպի միկիտանի ընտանիքը սկսել էր նախկին հպարտութեամբ վերաբերելը—որը մարգավարի շոր չունենալով, որը Սաքուլի խայտառակ վարքից ամաչելով, որը Մարգօի դարդից, որն էլ... Բայց ովկ կարող է թւել ..

Մի բան նրան վերջի ականապէս յուսահաւեցրեց այդքաքսեղի, այլուն արած, առատ նիբարեցրութիւննէր—ոսկենոցը, որ կապսլառուն տւել էր Օսանին ռատանաների այդ պահապահնին», Սև-Տունը «լաւ» պահելու համար... Ի՞նչ ժաքիր ասես, որ չառաջացրեց Փարսեղի այս փոքրիկ ուշադրութիւնը Սաքեդի մէջ. ու միկիտանի կնոջ թեերը կոտրառեցին վերջնականապէս Այժմ...

Գորդեան հանգոյցը կտրւեց անսպասելի կերպով. Մի կառք միւս օրը կանգ առաւ դրան առաջ... եկողը Սաքուն էր...

— Բարեկամութիւնը ո՞ր օրւայ համար է. կնքուորի կինը մեռնում է, մարդ ենք, խօսեց միկիտանը յանկարծապէս ժանելով սենեակը...

Յաջորդ ըոպէին նա արդէն բակումն էր Սաքնդրշւարմունքից շփոթւած...

Մի կէս ժամ յետոյ միկիտանի կինը յայտնւեց այնտեղ զարդարւած, սիրունացած Հոռոմի հետ.

— Մալադեց, ասաց Սաքուլը սպասող կառապանի նստածքը հաւանելով.

Երբ գինետան առաջ Զիտօն, փոխարինելով Սաքուլին, ուզում էր նստել Մարգօի կողքին, Հոռոմն արգելեց նրան, ցոյց տալով կառապանի նստարանը.

— Սպասաւորի տեղն այն է...

Դեռ տեղ չհասած, Հոռոմը հեռւից նկատեց Փարսեղին, որ զլսարաց գուրս էր եկել «հրաշագործ» բժշկին ճանապարհ գցելու համար:

— Խեղձի թշերը կախ են ընկնել դարդից, ասաց պառաւը Սաքեդին, սրտաշարժւած, խօսելով կապալառի մասին.

— Երանի՛ Թաթելին, որ այդպիսի մարդ ունի, նախանձւեց Սաքեդը, իր դարդը ողբալով...

Բայց խօսելու ժամանակը չէր. պէտք էր հասնել

Փարսեղի հտեից, որ բժշկին ճանապարհ զցած, պատրաստում էր ներս մանել.

Կապալառուն միան զամից ճանաչեց Հոռոմին.

— Ոտք բարի լինի, բարով ես եկել, ասեց նա պառաւի ձեռքը սղմելով.

— Ո՞նց ես սաղաց ջան, Թաթելի քէֆը մնց է, լմու է...

Որովհետեւ կապալառուն, չթողնելով մինչև ականջները կարմրած Հոռոմի ձեռքը, քաշ էր տալիս նըան, պառաւը ստիպւած էր խնդրել.

— Սպասիր, սպասիր, «Փարսեղ» ջան, Թաթեղին ու Մարգօին էլ կանչեմ.

Կհքահայըն ինքն ընդառաջեց հիւրերին, թողնելով պառաւին ներսը.

«Հրաշագործ» բժիշկը—Թամազեանը կատարել էր իր գործը: Ասես ցաւը բռնելու հետամուտ, մի ամբողջ ժամ շարունակ, հիւանդի ոտքից մինչև գլուխ—ամբողջ մարմնովը մէկ զրոսեցնելով իր ականջը, այս կողմն, այն կողմը թռչելուց, թռչկոտալուց յետոյ, նա որոշել էր վերջապէս հիւանդութիւնը—կոյր ողիքի բորբոքումն, որ, շնորհիւ բժիշկների սխալի, ընդունել էր ահազին չափեր, խսպառ թուլցնելով, մաշելով հիւանդին...

— Աւելի քան արեան պակասութիւն, յայտնել էր Թամազեանը, զարմացած կօլիգակաների անփութութիւնից, բոլոր հին դեղատոմերը դէն շպրտելուց յետոյ.

Բժշկը յուսագրութիւնների շնորհիւ Թաթելը, մի փոքր թեթեացած, ժպտաց հիւրերի երեսին ու ապա, քիչ յետոյ, նոյն իսկ կարողացաւ Սաքեդի օգնութեամբ յեւել բարձի վրայ.

— Ոտք թեթե էր, մայր, ասեց Փարսեղը զգացած, սղմելով Հոռոմին իր բազուկների մէջ:

Այս բանը բոլորովին սիրտ տւեց սկզբում անվստահ Սաքեդին, որի խօսակցութիւնը թաղի գործերի

մասին հետզետէ հետաքրքրութիւն էր զարթեցնում
թաթելի մէջ.

Մինչդեռ երկու կանայք այսպէս մտերմանում
էին, Հոռոմն իր կողմից պատմեց կնքահօրը Օսանի ու
Արսէնի արարմունքների մասին, նրա սրտից ջուր խը-
մել կարծելով.

— Թաղը խայտառակ'ցին, Փարսեղ ջան...

— Վնաս չհնանի, թող կենա, խեղճ կին է. տունս
լաւ է պահել, վերջացրեց Փարսեղը ու ապա աւելացրեց.

— Պսակն էլ շուտով կանենք...

— «Ողորմածիկս» ինձ ժամից խտած է տուն-
բերել, հարկաւոր համարեց ասել Հոռոմը, շփոթմունըը
ծածկելով, ուրախանալով, որ կնքահօր մտքինը համա-
պասսխանում է իր սրտի խորքերւմ թագնւած ցան-
կութեան հետ:

Ճաշի կարգադրութիւնն այդ օրը Սարեդն էր
անում պահնորդ մի կնոջ օդնութեամբ. ու պիտի ա-
սել, որ Թաթելի հիւանդութիւնից ի վեր Փարսեղը այդ
օրւայ պէս երկար չէր նստել ճաշի սեղանի մօտ...
Վռազ, գնովի կերից ու սէրից յետոյ, Սարեդի հոգա-
ցողութիւններն այդ օրը նրա սիրաը լցնում էին բա-
րութեան երջանկութեամբ, տաքացնելով նրան վաթ-
սումն անց հասակի համար անհրաժեշտ հաւասարա-
չափ բարեխառնութեամբ...

Ու մինչդեռ Հոռոմը, օգտելով հիւանդի ընած
լինելոց, Մարգօի հետ դիտում էր պատշպամբից քա-
ղաքի շէն մասի տեսարանը, Փարսեղը, սեղանի մօտ
նստած, սքանչանում էր Սարեդի լաշաքի ֆուոցից,
կերակրուտ ամանները խոհանոց տանելիս...

— Մի բարձ, սանամայր. այս փոքրիկ թաղթի-
վրայ մի քիչ հանգստանամ.

Ու արևիներին սպասող վարդի պէս էր, որ Սա-
րեդը կարմրելով, բացւելով կատարեց Փարսեղի լալա-
գին թախանձանքը, սրտաշարժւած, բարձերից ամե-

նափափուկը ցած իջեցնելով ծալքից մի վերմակի հետ...
Երբ կապալառուի վերմակը վրան ուղղելուց յե-
տոյ, Սարեդը ինքն ևս պատրաստում էր պատշպամբ
գնալ, նա իր կուռը զգաց աղամարդու մատերի կուծր
ողակի մէջ...

Նրա ճիչը սենեալ բերեց Մարգօին ու Հոռոմին.

Ու մինչդեռ Փարսեղը, արագութեամբ շուռ գա-
լով միւս կողքի վրայ, ընել էր ձևացնում, Սարեդը
արթնացած հիւանդին ցոյց էր տալիս իր կարմրած
ձեռքը, հանգստացնելով նրան.

— Ես ասեմ, կարիճ էր, Թաթել ջան...

— Մեր կողմերը կարիճ չկայ, Սարեդ ջան, ու շ-
խանեց միիթարել «խայթւածին», Թաթելը...


— Կարելի՞ է, Թաթել ջան...

Երեկոյեան ժամը տասին Զիտօն բերեց կառքը,
միկիտան Սաքուլի ընտանիքը տուն տանելու համար,
բայց Մարգօն աննկառելի կերպով ընել էր հիւանդի
կողքին ու Թաթելն էլ թագցրել էր Սարեդի ծածկոցը,
նրան իր մօտ պահելու դժուարութեամբ...

Խեղճ Հոռոմը, սիրտը պակաս, պիտի մենակ
տուն վերագառնար, այս անգամ արդէն Զիտօն կող-
քին նստեցնելով, երկիւղից...

— Զիտօ ջան, մութն է, կնկնես այդ բարձր տե-
ղից, կառքի մէջ արի. մի ամաչիր -իմ որդին ես, ա-
սաց նա կառապանի կողքը ստնել պատրաստող սպա-
սաւորին...

Այս պայմաններում Սարեդն այլիս իր գանգատը
չարեց Փարսեղին Սաքուլի մասին ու Մարգօին թող-
նելով Թաթելի մօտ, ինքը միւս օրն և եթ տուն վե-
րադարձաւ.



XXV. ԴՈՒԴՈՒՆ

Ամեն առաւօտ, տեղերից վեր կենալուն պէս, Արսէնը Սև-Տան կտուրն էր գնում ու հետախուզում էր միկիտան Սաքուլի բակը, Մարգօի վերադարձը իմանալու հետամուտ...

Ի զ՞ուը... Սաքեդը չէր էլ մտածում աղջկանը տուն բերել «ապահով» տեղից, որտեղ նա ապրում էր «առօք փառօք», կառավարելով համարեա ամբողջ տունը մի փոքրիկ ծառայի օգնութեամբ, հիացնելով թաշաղեանին էլ, հիւանդին էլ իր անօրինակ աշխոյժով...

Երկար սպասելուց յոցնած, Արսէնը մի երեկոյ հետինց Զիտօին, Փարսեղի տունն իմսնալու համար Այնուհետեւ օրեր շարունակ պատանին անցկացրեց, կապալառւի դրան մօտերքում թափառելով, յուսալով, որ մէկն ու մի օր որևէ առիթով Մարգօն տանից գուրս կդոյ... Միկիտանի սղջիկը սակայն չէր երևում... Ու Արսէնը Փարսեղի կենում տան հաստ պարսպի առաջ յիշեց. Մուզիկա-Կէկէլի ծակ ծակ պատճեցը, որի միջով մի ժամանակ դիտում էր թախտի վրայ ծալապատիկ բակմած Մարգէի շարժմունքները. .

Երբ սիրահարը մի օր այսպէս սպասում էր Մարգօի երեսլուն, մի հին շոր ծախող գուրս եկաւ պընդապարիսպ տան բակից: Յանկարծապէս Արսէնի գըլեռում ծաղեց հներ զնելու պատրւակով մտնել այնտեղ.

— Հին շոր, հին շոր, ով ունէք, փորձւում էր նա իր նոր սրհեստի մէջ շրջակայքում, պաշտպանւելով շներից, սայլից թոցրած մի ձիպոտով, ոտքերը գետնին բստքստացնելով, թողոտելու համար...

Վերջապէս նա մտաւ Փարսեղի կենում տան բակը: Մարգօն պատշգամբից հաց էր փշտում ներքեի հաւերի համար...

— Հին շոր, հին շոր, կանչեց Արսէնը, կեղծելով ձայնը.

Գլուխը բարձրացրած, Մարգօն հեռւից նայում էր զլիսարկը թարս դրած «հին շոր զնողին»...

— Գնա, գնա, հին շոր ունես, բեր, մենք առնենք, ասաց Մարգօն արհամարհանքով.

— Գնա, գնա, այստեղ թացնելու բան չկայ, աւելացրեց նա յամառութեամբ կանգնած Արսէնի երեսին նայելով.—փորացաւանքդ զիտեմ...

Մի ակնարկ իր արտաքինի վրայ բաւական էր, որպէսպի Արսէնը խեղճանար. նրան յիրաւի կարելի էր ընդունել գողի տեղ... Ու նա ստիպւած էր հեռանալու այնտեղից, այն միիթարանքն ունենալով, որ Մարգօն չճանաչեց իրեն, Փարսեղի փոքրիկ ծառան, այն ինչ, սաստկութեամբ փակեց բակի դուռը նրա ետեից...

Յանկարծ Արսէնին թւաց, թէ կոտրելու մի ձեռք արագ-արագ բայ ձրացնում է Մարգօին ու իրեն անջատող հսսող հսսող սատը...

Նա յիշեց լր մօրը.

Նա յիշեց Սաբեղին...

Երբ նրա կուրծքը, փոթորկող վրէժից ուռած, տրաքւելու չափ բարձրաց էր, իր դէմ մնում էր միայն Օսանը. իր զժբաղդութեան «միակ» պատճառը.

— Ան զզամ...

Նրա արիւնը հարազատի մին էլ շփոթւեց այս «անտրդար» դուտավճռի առաջ.

Մարեղն այն ինչ նրա մէջ լոլիս էր Մարգօի մոխրագոյն աչքերով.

«Արիւնի» և սիրսյ այս ձիրաններում նրա սիրտը փշրւեց. նա լաց եղաւ...

XXVI. ՄԻ „ՄՐՏԱՄԵՌ“ ԵՒՍ

Փարսեղը նոր էր ոտքը Սև Տան բակը դրել, երբ մուտքում նրա առաջ տնկւեց Թամազեանը.

Միթիթարական ոչ մի բան չեմ կարող հաղորդել. պատանուն երկու շաբաթից յետոյ կթաղենք, եթէ անմիջապէս զիւղ չուղարկէր, ասաց բժիշկը յուղւած, կարծելով, թէ կապալառուն այցելութեան է գալիս. Թոքախտով հիւանդացած գալրոցականին.

Սրանցից երեքն արդէն փախել էին զեղեցիկ այրու չափազանց հոգածութիւնից, չորսորդն այն ինչ, չնայելով Արսէնի սպառնալիքներին, շատ հեռու էր խճճւել Օսանի ցանցերում և մնացել էր Սև-Տանը...

Էլի շնորհակալ պիտի լինել Մամրբէից, որ մի չորս օք առաջ, տեսնելով Թամազեանի կառքը հարեւան պայտափի դրանը կանգնած, սպասել էր բժշկի դուրս գալուն ու խնդրել այս մի աղքատին էլ բժշկել շատերի հետ:

— Ուզարկեցէք, անպատճառ գիւղն ուղարկեցէք. գուցէ պատանուն փրկենք, յասագրում էր բժիշկը Փարսեղին, սրա շփոթմունքը վերազրելով իր խօսքերի տղեցութեանը...

Թեթևացած բժշկի հեռանալով, Փարսեղը վերե բարձրացաւ, ասես խուսափելով նոր հանդիպումից, ոյնքան Թամազեանի դէմքը նրան այդ բոպէին յանազիմանական էր թւացել նոյնիսկ իր բարեացակամ արտայայտութեամբ...

Սարեղի փախուստն իրենից մի առ ժամ սթառ փեցրել էր Փարսեղին, ստիպելով նրան մտածել իր տմարդի վարմունքի մասին, թէ Պարեղի և թէ Թաթեղի վերաբերսամբ...

Կեանը այս ձմեռնամուտին, սակայն, ջերմացնող արևի կարօտն այնքան մեծ էր ու Սարեղն էլ այնպէս էր ոտքը յետ խփել կապալառուի տանից, որ սա վճռեց անձամբ գնալ սանամօր տունը, բացատրելու, հասկսցնելու համը ր, որովհետեւ «ինչ կայ», այստեղ մի առանձին բան չկայ, որ դուռը կողպէ ու վերա տեղափոխէ, Թաթեղի համաձայնութեամբ...

Քանի աւելի էր մօտենում Փարսեղը սանամօր բնակարանին, այնքան նա առաւել էր դժւարանում իր այցելութիւնը բացատրող, ընդունելի մի պատճառ գտնել... Գոնէ «խայտառակութիւնը» պատահած չլինէր... Այն ժամանակ կարելի էր մտնել Սարեղի մօտ, յայտնել, որ ինքը յոգնած, օրինակ, որեէ յուղարկաւորութեան հանդէսին ներկայ լինելուց, Խօջիվանքից ելել է սանամօր տունը, ոսկորները մի փոքր հանգը ստացնելու, մի բաժակ ջուր խնելու համար...

Ծանրագոյնը, սակայն, այն երկիրդն էշ, որ ազդում էր Սարեղի կարելի ճիչը, «կարեճ» տեսածի պէս...

— Ամօթ, ամօթ քեզ Փարսեղ, մտածեց նա ու քարացածի պէս կանգնեց գլխաւոր վողոցի մէջ տեղը...

Տեսնել Սարեղին նա ուղում էր այնուամենայնիւ...

Ու նա մտաւ Սև-Տան բակը սանամօր «տրամադրութիւնը» Օսանի սենեակից լրտեսելու համար, մըթմըթալով, թէ—

— Ամօթ, ամօթ, կնքաւոր...

Ահա թէ ինչու, թեթևացած բժշկի հեռանալով, նա բարձրանում էր համարեա վազէվազ Սև-Տան, երկրորդ յարելը...

Նա զարկեց Օսանի գուռը.

Հալւելով, զգալով ողջ աշխարհի աչքերն իր թիկունքի վրայ, նա ուղում էր նորից բաղիսել դուռը...

— Բարի ես եկել, հրամմեցէք, լսեց նա իր հտեւկից Օսանի ձայնը, որ տեսնելով Փարսեղին, բարձրացել էր ինքն ևս թոքախտաւոր դպրոցականի մօտից...

Առանց յետ նայելու, կապալառուն արագութեամբ
Ֆրեց դուռը ու ներս մտաւ.

Օսանը հետեւց նրա օրինակին և բանալով պա-
տուհանը, մօտեցրեց այնտեղ մի աթոռ ու խնդրեց
Փարսեղին նստել.

— Այս էլ սանամօրդ տունը, ասաց այրին միտ-
մտութեամբ. ու ապա տեսնելով հիւրի մինչև ականջ-
ները կարմրելը աւելացրեց.

— Նստիր, Փարսեղ ջան, քո տունն է. ես էլ հի-
ւանդիս շորւայի քափը քաշեմ ու դամ...

Իեռ այրին դուրս չէր գնացել, որ Փարսեղը
վախեցած, առանց նոյն խսկ վեր կենալու յետ քաշեց
իր աթոռը պատուհանի առաջից, գլուխը Սարեղից
թագնելով, որ, կոները մերկացրած, այդ ըոպէին լւա-
նում էր պանդոկի կեղտաշորերը...

Տեսնելով կապալառի անվատահութիւնը, այրին
մօտեցաւ նրան.

— Եխլուի թաղի ամօթը դեռ ոսկորներումդ է,
մեր տղա, ասաց նա հիւրին, բարեկամաբար դարկե-
լով նրա ուսին, սիրտ տարու համար...

— Էն ջրեցը վախեցիր, որ ոնց կթշշայ, ոնց
կիշշայ, աւելացրեց նա, կապալառի հետ խաղս
րոնւած...

Միայն թէ, երբ Փարսեղը, բազուկները տա-
բածելով, ուզում էր գրկել գեղեցիկ այրուն, վերջինս
արագութեամբ դուրս պըծաւ նրա ձեռքից, ժպտալով,
չարացնելով, մինչև դուռն եկած...

— Մըատամեռ, կաց. առաջ հիւանդի շորւան ե-
փեմ, յետոյ բո խորովածն անեմ...

=====

XXVII. ԶԻՏՈՒ ՇԼԹԱՆԵՐՈՒՄ...

Սաքուլն այդ օրը վաղ առաւօտանից տուն էր
ուղարկել պանդոկի լացքը. ու Սարեղի գլուխը խառն-
էր: Հազար մարդու ձեռքերից անցած և պանդոկի սե-
ղանների վրայ թափւած զինու և բաժինների ճրագւէ
մէջ լողացած, չորացրած և ապա նորից գործի դրած
այդ կեղտաշորերի լւանալը Սարեղին միշտ զգւանք էր
ազդել. իսկ այսօր առաւել ևս: Պանդոկը վերանորոգե-
լով և գինեվաճառի հիմնական պարապմունքին կցելով
մսի և կանաչու առուտուրը, Սարեղին ուզում էր Շնոր-
կեանքի» սկիզբը պատշաճաւոր պարագաներով շրջա-
պատել: Անա թէ ինչ-ու, ենթարկելով վերջերս սրւած
իր մաքրասիրութեան պահանջին, նա հաւաքել էր
տւել խանութի հչ միայն երկու ձեռք կեղտաշորերը
միանդամից, այլ և գողգեանի ետելը, ոտքերի տակ
փուլով երկու երեք ցեխաթաթախ ալրապարկերի կար-
կստած մնացորդները:

Երբ Զիտօն այդ բոլորը շալակած տուն բերեց
ու Սարեղի առաջը դրեց, սրա սիրտը սկացաւ:

— Հաւը, որ ջուր է խմում, վերև Աստծուն է
նայում, տօ, անխիզն. դուք մարդ էք, վրա պըծաւ կինը
բողոքելով և իր զգւանքը պատանի Զիտօնի վրայ թա-
փելով.

Նա սակայն շուտով զգաց իր անարդար վերա-
բերմունքը գէպի միշտ հլու, միշտ կարմրող Զիտօն,
որ բերանը բաց, շւարմունքով նայում էր տիրունու-
աչքերում, չկարողանալով պոկել իր հայեացքը կնոջ
այժմ արդէն ժպտացող, խաղս բննւած աչքերէց...

— Ասում եմ է... Մեղաւժը. մեղաւորը դնւ ես,
կատակեց Սարեղը, ինքն ես դժւարութեամբ հեռացնե-

լով աչքերը առնացող պատահու ջերմախինդ արեգակներից...

— Ա՛ռ ինքնաեռը, սրբիր, ասաց նա վերջը ծառային ու սենեակից զուրս փախաւ, սարսափելով ռանկման՝ խորայատակ անդունդի մթից...

Բակն եկած, նրա կռնացաւը Փարսեղի սղմումից վեշանսրութեց այնպիսի սաստկութեամբ, որ նա ստիպւած էր միւս ձեռքով շիել «կարիճի կծածը», նստելով ունաբենու տակ յարմարեցրած թախտի վրայ... Մէկ էլ նա սենեակ մտաւ արագութեամբ, Փարսեղի վրէժը Զիտօից լուծելու համար...

Երբ «ծուլութեան» ու «զանդաղկոտութեան» պատճառով պատժւած սպասաւորը, այտերը և ականջները Սարեղի ապտակներից կարմրած, քացախն ու փոշին խառնելուց յետոյ, հնազանդութեամբ մաքրում էր ինք նա եռը, կինը, լացքի կապոցը պատրւհանին մօտեց ած, մէրկ սրունքները փեշերի տակից երևեցնելով, կկղեց նրա դիմաց, մարդատեղ չդն ելով նրան, «տաքանալու» հսմար, որովհետև հինգ տարի էր, ինչ նրա մէջ անօգուտ կերպով հեծկլում էր կնոջ մերժւած, այրիացած թովչութիւնը, ողորմագին, անտուն, անապաստան...

Կինը արագապտոյտ, խելագար «անկման» ճանապարհի մէայ բռնեց «փրկարար» թուփը, ու Ցիկոն, ատելի Ցիկոն, Սաքուլի պստիկն էր, որ արգելեց Սարեղի յանցաւոր թափը, ուշագնաց անելու չափ ցաւեցնելով նրա ողջ մարմինը, խթէլով վրէժի բոլոր թելերը...

— Դու ինձ պիտի ասես, Զիտօ, պիտի ամեն բան սաս վերջապէս. դու ծածկում ես ինձանից խանութում պատահածը... Կասես, կասես, Զիտօ, այնպէս չէ... Զիտօ, «որդի», աղերսում էր Սարեղը ձեռքը սպասաւորի ուսին դրած, բարեկամաբար...

Վերջինս այն ինչ, յուղմունքից փուքս դարձած, փռնչալով, հեալով, շարունակում էր մաքրել ինքնաեռը, զգուշանալով այժմ արգէն տիրուհու մերկութեանը նա-

յել, պապանձւած, մի ձայն արձակելու անընդունակ... Վերջապէս նա խօսեց, առանց սակախն մի բան աւելացնելու այն ամենի վրայ, ինչ որ յայտնի էր աշխարհին, Սարեղին, բաղարաւորին, որ Սաքուլը ոչ միայն չէր թազցնում, այլ նոյն իսկ ցուցադրում էր, առանց քաշւելու. «պստիկ» պահելու իր վարմունքը համալելով «քաղքի հանաք», ծաղրելով կառապաններին, որոնք վարձներն ստացած, յանդիմանում էին նրան արտասովոր շոայլութեան համար...

Ու միկիտանի համար մեծ պարծանք էր, պատառի Ցիկոնի կողքին նստեցրած, ճանապարհորդութիւններ կատարել կառքով, զւարձատեղուց զւարձատեղի, առաջը նստեցրած արգանշչիկին հպարտութեամբ նայելով, գրգռելով սրա նախանձը, ստիպելով «պստիկն» ուտքերն արգանի վրայ դարսել, ցեխն արգանշչիկի երեսին քսել...

— Իսկ լուսանկամը, հարցրեց Սարեղը, գըժուհու, որ սպասաւորը ոչինչ բան չի աւելացնում...

Գործն ընդարձակելու առիթով Սաքուլը լուսանկարւել էր Ցիկոի հետ, սրա ականջը բռնած, ցուցամատը խրատելու պէս բարձրացրած, «հայրաբար»: Այս բանը Սարեղին արգէն յայտնի էր. նրան այժմս հետաքրքրում էր լուսանկարի ստանալը, որովհետեւ, Զիտօի ասս ծով, այդ լուսանկարը պիտի զարդարէր նոր սւազած պանդոկը...

Սպասաւորը յայտնեց, որ լուսանկարն այժմ արգէն ստացւած է և գտնուում է գինետան դրամարկում...

Միաժամանակ նրա ծոյլ միտքը յիշեց մի նորութիւն, որ Սարեղին գեռ ևս չէր հաղորդել... Այդ մսի բաժանմունքի նոր ցուցանակին էր վերաբերում, որ ներկայացնում էր մսավաճառի մի խանութ...

Ոչխարի իւղու մսերը կախ արած, ճարպը շերտաշերտ կենդանու կողերի ուղղութեամբ խազ-խազ կտրատած... Պատկերի առաջամասում կանգնած էր

կապոյտ բաճկոնով մի տղամարդ՝ «Սաքուլը», որ մի ձեռքով ոչխարի առաջին ոտքը բարձրացրած, միւս ձեռքի մեծ դանակի ծայրով ցոյց էր տալիս ճարպի շերտը կարմիր չօխա հագած մի երեխայի—«Ճիկօխն»... Ցուցանակի մակագրութիւնը.—

Մասհամ ՏօրդօԵլր ,,ՅՕՓԵ-ՅՕՓԵ“

Թարգմանում էր պատկերի միարը.—Սաքուլը բացատրում էր Ճիկօխն մսի լաւութիւնն իմանալու զիտութիւնը.—Եւֆ, Եւֆ...

— Ուրիշ, ուրիշ, անհամբերութեամբ հարցը Սաքեղը, շունչը Զիտօի շնչում.—հապա Ճիկօի նոր շուրեցը...

Երեք շաբաթ տուաջ, կրկին «նոր կեանքի» սկիզբը պատշաճաւոր պարագաներով շրջապատելու պահնջին, բաւականութիւն տալու համար, Սաքուլը միերկու շորացրւ էր գնել Ճիկօի համար և ուղարկել էր Սաքեղին կարելու. Սա մերժել էր և նոյն իսկ, առնելով «պստկի» ձեռքից, բակն էր նետել չոխացու մահուց և սպիտակեղինի «ամերիկան»:

Սաքուլի համար կնոջ այս վարմունքը մի խայտառակութիւն էր Ճիկօի տուաջ, որի վրէժը լուծել նա անընդունակ էր, չուղենալով տուն գալ, Սաքեղի երեսը տեսնելուց խուսափելով.—«ամօթից»...

Ճիտօն յայտնեց, թէ շորը տել են Շէյթան. բազարում արհեստանոց պահող մի թաւրիզեցու երեմանէթով կարելու համար և թէ ինքը Ճիտօն պիտի վազը գնայ, բերէ...

— Կիսեղեմ, Զիտօ, թէ գնացել ես, կատաղեց Սաքեղը. ու ապա փոքր ինչ կանգ առնելուց յետոյ, աւելացրեց ծառայի թուշը բաղելով.

— Զիտօ, լսիր սպանիր Ճիկօխն, թախանձել սկսեց Սաքեղը, տեսնելով գունատւած պատանու շւարմունքը...

Մինչդեռ Զիտօն, զլուխն անծանօթ մտքերով ու տպաւորութիւններով լիքը, վերադառնում էր զինետուն, երկու բութերը կաշէ գոտու մէջ խորը կոխած, յուզմունքը բուռնցքների մէջ խեղդելու համար, Սաքեղը, ժամանակ չկորցնելով, սկսեց լւացքի պատրաստութիւն տեսնել...

Կէս ժամից յետոյ ջուրն արդէն կռում էր.

Երբ նա զզւանքը կռւլ տալով շուռ ու մուռ էր տալիս լելոտ անձեռնոցիկները, գոգնոցներն ու ջնջոցները, նախանձը կծեց նրա սիրտը, ու նա ափսոսաց, որ Մարգօն տանը չէ, զզւանքի գոնէ մի մասը կռւլ տալու, «բեռը» թեթեացնելու համար—զիշակցելով ընդհանուր աղէտի «քաղցրութիւնը» ..

Մի քանի բոսէ յետոյ սակայն նրա մայրական սիրտը բողոքեց բնազդին ենթարկւելու այս թուլութեան դէմ, որի շնորհիւ մարդս տրամադիր է սեփական ուսերի ծանրութիւնը տեղափոխել աւելի անպաշտանի վրայ...

Սաքուլը Սաքեղին, Սաքեղը Մարգօին...

Ու երբ կինը տօթի ու փոշու միջով համրաքայլ, զլուխն օրօրելով գնոցող լծկանի պէս շշմած, դադարեցնում էր առ ժամ ծանր աշխատանքը, աչքը չհոպացնելով տօշտի միջից—էլի այդ շղթան էր, որ նա տեսնում էր կեղտաջրի բափերում...

Սաքուլը Սաքեղին, Սաքեղը Մարգօին...

Սաքեղին թւաց, թէ մէկը խօսում է սենեակից. Այս նրա ականջների խշոցն էր...

— Կիսեղագարեմ, սարսափից նա, չկարողանալով աչքը հեռացնել սենեակի բաց պատուհանից...

Այնտեղ ոչ ոք չկար. Զիտօն այնինչ, բանալով

բակի գուռը, ներս մտաւ, պանդոկից բերած կերակրեալէնը ձեռքին.

Սարեղը վախեցաւ սենեակ հետևել այս մեծացած պատանուն.

Ի զուր սպասելուց յետոյ, ծառան կերակուրը դըմեց թախտի վրայ ու բակն եկաւ, կարմրատակւած, ոչնչացած, անվտանի...

— Ամանները պիտի տանեմ, ասաց նա տիրուհուն վիրաւորւած սրա անուշադրութիւնից, ստիպողական հլութեամբ:

Սարեղը չլսող ձեացաւ ու էլ աւելի եռանդով սկսեց առաջ տանել զգւելի գործը, ամուր-ամուր սըղմելով թաց կեղտաշորերը արդէն խաշւած մատերի մէջ, պաշտպանւելով Զիտօի գողունի հայեացքների այրող ջերմութիւնից, որ զգում էր նա իր մերկացած ուսերի վրայ...

Կինն այնուամենայնիւ, վերջին ոյժերը հաւաքած, կարողացաւ նայել սպասաւորին խստութեամբ, բայց սա առանց երկար մտածելու, ձեռքի յուսահատ շարժումով, հաճեց չստի ճարքից Ցիկօր համար սրած բեհրութը և դէպի իր սիրտն ուղղեց...

Մի ոստիւնով տիրուհին ցատկեց գետնին դրած տաշտի վրայով ու բռնեց նրա ձեռքը.

Այս ժամանակ սկսեց մի կորու բեհրութի համար...

Սարեղի յարձակման սաստկութեանը չդիմանալով, պատանին յետ-յետ գնաց ու փուեց գետնի վրայ, տանելով հետը իր կուռը բռնող տիրուհուն.

— Ի՞նչ ես տանջում ինձ, ասաց սպասաւորը թախանձանքով, սղմելով բեհրութը երկու ձեռքերում...

— Զիտօ, սպանիր Արսէնին, հրամայեց Սարեղը, համարեա փշրելով իր մատերի օղակի մէջ պատանութեւը.

Մէկ էլ, երբ բնազդմամբ, աչքը դէպի Օսանի

քնակարանը դարձրած, նա որոնում էր ատելի արարածին, նրա աչքերի առաջ ներկայացաւ Փարսեղը, ամբողջ մարմնով պատուհանից կախ ընկած, գունատ, սարսափից դէմքն աղաւաղւած...

Այս ժամանակ կինը, մի ձեռքով Զիտօի թեր փշրելով, միւսով չանչեց Փարսեղին, գետնի վրայ պարկած տեղից...

XXVIII. ՆՅԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Վաղուց էր ինչ Սև-Տունը Արսէնի համար գայլ էր դարձել: Դպրոցականների վախուստն այստեղից և այլու չափազանց խնամքները թրքախտաւորի համար չէին կարող վրիպել պատանու աչքերից... Համբերութեան բաժակի մէջ վերջին կաթիլը օճնեցի Եղնիկի այցելութիւններն էին, որ սկսել էր թոյլ տալ Օսանը, փողի պակասութիւն զգալով: Այս առիթով էր մանաւանդ, որ Արսէնը մօր հետ բռնու բացատրութիւն ունենալուց յետոյ թողեց Սև-Տունը, ցերեկները Խօջիվանքի գերեզմանատանը թափառելով աղաւնի թոցնող Շլուշկու հետ, իսկ գիշերները մի կերպ պատսպարւելով «պետլած» Գրիգորի քարուքանդ տան մէջ, ծածկաբար, թաղեցիների ամօթից գիշերները ուշ գալով այնտեղ...

Տունը, թամբազի և Սալբու ջրախեղդ լինելուց յետոյ, թաղի մօր ծիծ կարողները գողացած իրերի պահեստ էին դարձրել, զուռն ու պատուհանը տախտակելուց յետոյ, կատարելով իրենց առուտուրը հնավաճառների հետ իրարից հեռացած ետեի երկու պատերի բացւածքի միջով, որ Փեփելը չէր կարողացել կարկատել տալ Քնթօ-Միխակին, երեք բուրլի չունենալով...

Արդէն բռնուած աւազակների «երկիւղից», թէ ինչպէս—«պետլած» Գրիգորի ժառանգութիւնը, հակա-

ուակ սովորութեան, աղբանոց չէր դարձել. ու նրա թռութեամբ կարող էր, այնտեղ ընկած մի գերանի վրայ, սպասել լրւսաբացին, քունը Խօջիվանքի տապանաքարերից մէկն ու մէկի վրայ հանեռւ համար...

Չնայելով, որ նա Փարսեղի, Աւ. Տանն արած, առաջին այցելութիւնից յետոյ, ծախսը փշացնելով, մերժել էր Սարուի տանը թէյ խմելու հրաւէրը ու սրա համար էլ արժանացել էր Հոռոմի չանչին, վերջինիս սիրտն այնուամենայնիւ պատանու կողմն էր:

Տների ճակատներին առաջին անգամ թւացուցանակներ կցցնելու տարին միաժամանակ պահանջում էր յատուկ մատեաններում արձանագրել բնակիչների անունները: Այս բանը պատանու և պառաւի մերժենալու մի առիթ գարձաւ: Թաղի սակաւաթիւ ոռւսեցէն իմացողներից մէկն էլ Արսէնն էր, որ «Պասլուշկի կումի» մօտ սովորած ոռւսերէնի գիտութեամբ գերազանցում էր բոլորին:

Հոռոմի խնդրքին զիջանելով, Արսէնն անվատանութեամբ արձանագրել էր նրա տան գրքի մէջ ողջ ընտանիքի անդամների անունները: Աստիկանատանը, որտեղ պառաւի աւագ որդին Փասպարը ներկայացրել էր զիրքը: Արսէնի աշխատանքը հիացմունք էր պատճառել, սրա համար էլ մայր ու որդի շնորհով պատանուն մի օր իրենց տուն հրաւիրեցին, որը թէյ խըմելու, որն էլ իրենց խնամու տան մատեանն ևս զբելու: Դեռ մի զիրքը չէր վերջացրել Արսէնը, որ հարևանները իրենց մատեաններն առած մէկ-մէկ լցւեցին Հոռոմի տուն, յոգնեցնելով պատանուն իրենց գիմումներով: Այն ժամանակ Հոռոմը սիրտը հպարտութեամբ ու հիացմունքով լի, Արսէնին հովանաւորելով, նստեց սրա կողքին ու սկսեց կարգ պահպանել, հաւաքելով պատանու աշխատանքի վարձը, իւրաքանչիւրից բանական կօպէկ.

— Այս մի ոտոնվս, ասաց նա ուրախութեամբ և

Արէնի առաջը քաշեց աջ ոտքի մատերի թւավ հաւաքած արասանոցները.

— Այս էլ երկու ոտոնվս, Արսէն ջան, խօսեց նորից պառաւը մի փոքր յետոյ, արասանոցների երկրորդ հնգեակը խառնելով առաջնի հետ.

— Այս էլ երկու ոտոնվս ու մի ձեռոնվս...

— Այս էլ երկու ոտոնվս ու երկու ձեռոնվս. մի մատու խռովի...

Ժամանակն էր, որովհետեւ ճրագն արդէն հանգչել էր պատրաստում...

Երեք ամբողջ օր Արսէնը Հոռոմի թաղթի վրայ խմորի բերանքսիվայր գրած տաշտը սեղանի տեղ ծառայեցնելով, գրեց-գրոտեց թաղի համարեա բոլոր մատեանները, վաստակելով Հոռոմի էլ, իր էլ, Գասպարի էլ երկու ոտոնվ, երկու ձեռով—մի մատը խուփ—աբասիներ...

Արտասովոր այս յաջողութեան շնորհիւ Մաթէռոս վարժապետը, որ Խօջիվ անքի վերևի դրան կից մի սենեակում ուսումնարան էր պահում, խնդրեց Արսէնին, շաբաթը երկու, սահերէնի դասեր տալ: Այստեղ էր, որ պատանին առաջին անգամ ծանօթացաւ Տէր. Ակոպովի «ուչեբնիկի» հետ, որ իր ծոցատերը շինեց, ազատժամանակները վարժելով, ինքն ևս, սահերէնի ու հայերէնի մ.ջ, միաժամանակ... Քիշ-քիչ նա այնքան գրավարժութիւն ձեռք բերեց, որ արդէն կարողան ում էր անգրագէտ մի փաստաբանի թղթերը կազմելով, ամսական երեք-չորս սուրբլի աշխատել... Զինւորական զտար՝ զոնապանը վազուց արդէն սիրալիր մասնակցութեամբ նրան թոյլ էր տալիս շտարի աղբանոցում գրագիրների դէն ձգած հին գրիչները հաւաքել, որի համար նա, ամիսը մէկ, Հաւաքարից Դւօրցովայա փողոցն էր գալիս: Մի օր իր պեղումների ժամանակ աղբակոյտի մէջ հին մատեանի մի կազմ գտաւ Արսէնը: Այդ կազմն էր ահա, որ թղթակալ շինելով, նա

ամբողջ օրը ման էր ածում հետը փողոցէ փողոց, կարենոր պաշտօնեայի հպարտութեամբ զլուխը բարձր խօսելով օրէնքներից իր անգրագէտ պատրօնի անունով... Հաւլաբարի մէյդանում խանութ պահողների ցանկալի հիւրը դորձաւ նա շուտով, «պիտլած» Գրիգորի պէս կերակրւելով նրանց սեղաններից, այն զանազանութեամբ միայն, որ խանութպանները, եթէ պապից երես էին դարձնում մի ժամանակ, թուանն, ընդհակառակը, այժմ խլխում էին իրար ձեռքից...

Ընդհանուր այս յարգանքի մէջ Սաքուլն ևս իր մասն ունեցաւ. միայն թէ յարգանքի արտայատութիւնը նրա մօտ, Արսէնին զլխաբաց ընդառաջ գնաւով սկսւելուց յետոյ, վերջացաւ փախուստով ու թագուստով, ինչպէս վայել է «անարժան» ծառային...

Գիսեսնից զինհետուն նրա ժողովրդականութիւնը ծաւալւեց, արգանջիկներից մինչև գողերն ու գողապետները, աւազակներն ու աւազակապետները, ստեղծելով նրա շուրջը մի հմայք...

Լուելը Գասպարից Արսէնի յաջողութիւնների մասին, ուրախութիւնից Հոռոմը զիշերները չէր կարողանում քնել...

Մի օր Արսէնը, իր պատրօնի տեղ, դատաստանական պրիստաւին բերել էր, անձար մի պառաւի զոյքը գրելու.

— Զգրես, արդի, կանիծեմ, տսել էր պառաւը.

— Վահ, վահ, հէր օրհնած, սատանայի օրհնանքն ինչ է անում, որ անէծըն ինչ անի...

Արսէնի այս «կտրուկ» պատասխանը մանաւանդ հիացրել էր Հոռոմին, որ շարունակ, ամբողջ մի շաբաթ թաղը տակն ու վրայ շրջելով, պատմում էր դէպքը.

— «Մեր» Արսէնն ասել է... Հապա ի՞նչ. սուտ է ասել...

Պառաւի բոլոր ջանքերը սակայն հաշտեցնել Սարեդին ու պատանուն ոչ միայն ապարդիւն անցան,

այլ և մի տեսակ պառակտումն առաջացրին մօր և դուտեր մէջ։ Այդ պատճառով, որը Մարգօին Արսէնի հետ ամուսնացնել ուղենալով, որն էլ միկիտան Սաքուլի կնոջ աչքը հանելով, նա առիթը ձեռքից բաց չէր թողնում պատանու սրտի կրակի վրայ իւղ ածել, չեր ձեռքի փայտը Խօջիվանքի ծառուղիներին զարկերը ձեռքի փայտը Խօջիվանքին զարկերը, ժամից տուն վերադառնալիս, պատահում էր նրան. լով, ժամից տուն վերադառնալիս, պատահում էր նրան. — Զես հարցնում, թէ Մարգօն ուր է, չի երևում, Արսէն ջան...

— Գիտեմ, զիտեմ. տարել էք Փարսեղի տունն էք կոխել. վերջն է գովելի...

— Որ ԲՇ, կուզես քեզ տանեմ Մարգօի մօտ... Գիտեմ, Մարգօս Թաթելի բժշկին ասել է, որ մէջը տեսնի. շատ եմ կուչ եկել, Արսէն ջան... Որ ինձ ժամանակով տեսնէիր... Խեղճ «ողորմածիկս» օրը ելեք անգամ էր տուն գալիս, որ ինձ ծնկան ծայրին խաղացն է... «Մեր» որդին ես, մի ամաչիր... Շունը հաչա, ըարւանը քոչա, վերջացնում էր նա իր խօսքը, առածը Սարեդին վերաբերելով...

Մի երկու քայլ արած, նա վերսպանում էր, թէ—

— Արսէն ջան, չիս ասի, որ Մարգօի բաժնը մահճակալը Թաթեն է տալիս, հայելին—Փարսեղը... Սաքուն էլ Սարեդի բաժնքի արծաթ բաղիան կտայ, մնց կարող է, որ չտայ. «ողորմածիկս» առածն է... «Խեղճն» ինձ խտած է բերել հօլ անցս տանից... Հը, ինչ կասես, որ քեզ մի օր տանեմ Մարգօի մօտ, առում են մեծացել, նորահարս է դարձել... Զասես, թէ պատիկ է... «Ողորմածիկս» ինձ խտած է բերել հօրանցս տանից...

Քանի Հոռոմը շատ էր խօսում Մարգօի մասին, այնքան աւելի էր զբգուռմ Արսէնի յուսահատ վիշտը եր անելանելի դրութեան առաջ... Այն էլ պէտք է տսել որ Մարգօին տիրանալու դժւարութեան առաջ չէր, որ նա իր ձեռքերը կապւած էր զգում... Ու Սարեդը, որ նա իր ձեռքերը կապւած էր զգում...

որից մի ժամանակ այնքան պատկառում ու վախենաւմ էր Արսէնը, այլ ևս նրա համար գոյութիւն չունէր, որպէս արգելք, վճռած ունենալով չքաշւել, նոյն իսկ հակառակ բոլորի ցանկո. թեան ու կամքի, փախցնել միկիտանի աղջկանը ուժով ու պսակւել հետը մէկն ու մի ժամում... Ահա այստեղից էր սկսում Արսէնի վիշտը ունա ճաշակեց դառնութեան բաժակից, նախանձւելով Հոռոմի «ողորմածիկ» ամուսնուն, որ, նորահարսին ժամից գուրս բերելուց յետոյ, գիտէր, թէ որ ծածուկ անկիւնում պիտի հոտ քաշէ դէպի իր շրթունքները ձգտող մայրութեան թրթուն նարինջները... Բացի այդ, չնայելով պառաւի ակնարկներին, նրան հարկաւոր էր իմանալ Մարգօի հայեացը յաւիտեան նրա հետ կապւելու մասին.

Այս պայմաններում միկիտանի աղջկայ հետ տեսնելը, որևէ մի ընդունելի պատճառով, նրա աչքում անհրաժեշտ էր թւում...

Միկիտանի աղջիկն ևս իր կողմից էր, որ Թաթելին վերջին խնամքները ցոյց տալուց ու աղախնին ճանապարհ գցելուց յետոյ, շուռ ու մռւռ պտոյտ էր գալիս իր անկողնու մէջ, չկարողանալով քնել Արսէնի հոգսից... Այս օրից, երբ հաւերի համար հացը փշրելիս «հին շը ծախողին», գոյզ համարելով, գուրս էր արել բակից, նրա մտքից չէր հեռանում թողաշաղախ, գլխարկը ծուռը դրած այդ պատանին, որ ձեռքի ճիշպով պաշտպանւում էր շներից... Զղջման պէս մի բան յանդիմանում էր օրիորդին մի գեռ ևս մարմին չստացած, հաղիւ գիտակցւրդ յանցանքի համար, բեւեռելով նրա ամբողջ ուշադրութիւնը, նմաններից, միայն այդ եղակի դէպի վրայ...

Մի ըր սակայն, երբ Արսէնին տեսնել ուզենալով հսարներ էր որոնում Մարեղից ծածուկ կանչել տալ նրան, Մարգօի միտքը կանգ առաւ այդ «հնավաճառի» վրայ, որ աւաղ, այնուհետև էլ չէր երեսում.

Ու երնխան իր վիշտը դրեց այս խօսքերի մէջ, յանդիմանելով ինքն իրեն.

— Սար սարի չի դիպչի, մարդ մարդու կդիպչի.

Բայց «գողը» մրտեղից էր ճանաչում Արսէնին... Ու որքան նոտ տւելի էր աշխատում հեռացնել իրենից «հնավաճառի», միջնորդութիւնը դիմելու «ապարդիւն» միտքը, այնք մն առաւել յամառութեամբ էր ներկայանում «գողը» նրա սչքերի առաջ. թողաշաղախ, գըշ խարկը ծուռ դրած... Ու՞հ, այդ «գողը», որ, դէպի բակի դուռը գնալիս, աջ ձեռքը տարաւ ծոծրակի մօտ... Արսէնի պէս...

— Կուրանամ, կուրանամ, բացականչեց Մարգօն ու վերմակը յետ գցելով, նստեց անկողնու մէջ. «գողի» ով լինելը հասկացած...

— Արի, արի, ԱՌսէն ջան, աշխատեց շահել սիրեկանի սիրտը Մարգօն, վերմակի տակ հեծկլտալով...

Միւս առաւօտը նա չէր իմանում, որտեղ սպասել գլխաւոր մուտքի մօտ, թէ պատշգամբում, որովհետն մի կողմից գալու էր Թամազեանը, իսկ միւս կողմից, ով բաղդ, «գողը»...

Մէկ էլ բակի դուռը բացւեց, փայտը բարայատակին զարկելով, ներս եկաւ Հոռոմը, ու հէնց որ երեխան ուզում էր տատիկին դիմաւորելու համար բակն իջնել, Արսէնի մասին մի բան իմանալու համար, բժիշկը քաշեց շբամուտքի զանգը.

Օրիորդը շտապեց հիւան գի մօտ, սիրտը բերկ-ը անքով լիքը այս երկու այցելութիւնների պատճառով.

— Մէկ այս մէջքս տես, բժիշկ, ասաց Հոռոմը թամազեանին, երբ սա, գործը վերջացրած, պատրաստում էր հեռանալ.

Այս ժամանակ Թամազեանը հետաքրքրւելով փոքրիկ պառաւի ծանրութեամբ ու մի փոքր էլ կատակեցվ, խտտեց նրան ու զրեց բազմոցի վրայ.

— «Ողորմածիկ» ինձ խտտին է տան բերել, ա-

սաց պառաւը, երբ բժիշկը քննում էր նրա մէջը.

— Քմնի մարդ ես ունեցել, պառաւ, շարունակեց կատակել Թամազեանը.

— Վո՞ո՞ոյ... Մէկ, քո արել... «Ողորմածիկ» օրն երեք անգամ խանութից տուն էր գալիս, ինձ ծնկանը խաղ սցնելու համար... Չասես թէ...»

— Քմնի տարեկան ես...

— Երկու ձեռքովս, երկու ոտքովս, քո երկու ձեռքով ու երկու ոտքով, էլի իմ երկու ձեռքով... Երեք մատս խուփ...»

— Իմ ժամանակ պսակւելու աղջիկները ատամները չեին ցուց տալիս տղամարդկանց, յանդիմանեց նա այնուհետև Մարգօին, որ, ծիծաղից թուլացած, ընկել էր աթուներից մինի վրայ.

Այն ժամանակ Թամազեանը, չկարողանալով զապել իր թափը, համբուրեց թուլացող Մարգօի կարմրած թուշը...

— Օխայը, բացականչեց Հոռոմը...

— Սա իմ օգնականս է, աւելացրեց բժիշկը, խփելով բարեկամաբար Մարգօի ուսին...

— Ափոսս, որ ամուրի չհս, բժիշկ ջան, թէ չէ հարսանիքիդ հոլի խաղայի, որ..., ասաց Հոռոմը հեռացող Թամազեանի ետեից, ախ քաշելով.

Ու միաթարանքի պէս էր, որ նա դիմեց Մարգօին...

— Զես ասի, Աբսէնին խարելով բերել եմ, թէ դու ես կանչել գիտեմ սիրոտ ուզելիս կլինի նրան...

— Սուս, բացականչեց Մարգօն, մէկ ուրախացած, մէկ էլ զարմանքից չհաւատալով այս տարօրինակ զուգագիպութեանը իր ցանկութեան հիտ.

— Կուրանամ, կուրանամ, ասաց նա, տեսնելով Աբսէնին, որ ծառայի առաջնորդութեամբ բարձրանում էր վերև, մաքրւած, այժմ արդէն գլխարկն ուղիղ դըրած...

— Զէիր կարող մի ձայն տմի, դիմաւորեց նա

Աբսէնին, արդարացնել ուզենալով իր կոպիտ վարչ մունքը «զողի» հետ...

— Ճանաչեցի՞ր...

— Այնքան էիր թողոտել, որ յետոյ միայն ճաշնաչեցի...

— Այն նարինջներից չունեմ, Մարգօ...

— Ո՞ր նարինջներից, Ա'րսէն ..

— Այն, որ, ձեռքերս կոտրաւած ժամանակ, ինձ ուտեցնում էիր...

— Ունեմ, ունեմ. մնց թէ չունեմ. որտաշարժւեց օրիորդը խոճանոցից դուրս վաղելով.

Տաս րոպէից յետոյ նա ափսէի մէջ բերեց շերտ շերտ կտրատած մի նարինջ.

— Ծարաւած ժամանակ Թամիելի բերանում այս ենք կաթեցնում, բացարեց Մարգօն, նարնջի վրայ շաքար ցան ելով.

— Զի ուզի, չի. առանց շաքար էլ քաղցր է...

— Զւածեղ կուտեմ, Ա'րսէն...

— Առաջ մի բան ասեմ, յետոյ կուտեմ...

Ապա տեսնելով Մարգօի շւարմունքը, պատանին շտապեցրեց նրան.

— Ասեմ, Մարգօ...

— Դէ ասա, Ա'րսէն ջան...

— Ա'րի, պսմկւնք, Մարգօ...

— Զւածեղն անեմ...

Այս անգամ, պատասխանի փոխարէն, պատանին գրպանից հանեց փիրուղաւոր մի մատանի ու տւեց Մարգօին.

— Առ, ծոցումդ պահիր, Մարգօ ջան...

— Զւածեղն անեմ, յամառում էր Մարգօն, արտասովները խեղղելով.

— Արա, արա, Մարգօ ջան...

— Խաչեղբայըն էլ Թամազեանը լինի, Ա'րսէն.

ջան, ասաց Մարգօն, ձւածեղի ափաէն պատանու առաջ դնելով, աչքերը կարմրեցրած.

— Ես էլ շատ լաց եղայ, բայց ճարս ինչ էր, որ վերջը պիտի ծիծաղէի, յայտնեց մէկ էլ Հոռոմը, յիշելով իր նշանագրութիւնը «ողորմածիկի» հետ...

XXIX. ՔԱՆԴԻԵԼՈՒ ՕՐ...

Նոյն օրը, երեկոյեան ժամը տասն անց, Սև-Ճան մուտքի մէկ այս, մէկ այն խոռոչից օտարօտի, զգուշաւոր ձայներ էին լսւում. կարծես այնտեղ բնակւող ու ոգիների խորհուրդը լինէր դիւական այն քչփշոցը...

— Նաօ... ՓՓՌԵ, ՓՓՌԵ, յայտնեց մինը երկրորդ յարկի բնուկիների քնած լինելու մասին...

Փետուրների կարճատև թրպլտոցի պէս մի բան, սակայն, շուտով հերքեց այդ մխիթարանը...

Բոպէաբար ամբողջ բակը ընկղմւեց սպասող լուսթեան մէջ...

— Թա, թա, թա...

Այդ նշանակում էր.

— Ի զէն...

Միաժամանակ մի սուեր կանգնեց դռների ետեւ, ձեռքը չստի բեճբութի մօտ տարած, միւսն այն ինչ, տարածւելով մինչեւ մուտքի մէջ տեղը, փուեց գիտնի վրայ, մէջքն ուսցրած.

— Հառւ, հառւ...

Այս—զգուշացնելու 22 ունչն էր...

Ցիրաւի, ամեն բան հաւասարւեց պատերի ու զետնի հետ, ու զերեզմանափորների աւագը—Մամբրէն անցաւ խաղաղութեամբ իր սենեակը գնալով. նրան հետեւ հողի մի մշակ քլունդն ուսին, քրտինքը սըրբելով...

Լսւեց դռների շառաչիւնով բացւելը. — ԿՌԵ, ԿՌԵ, ԿՌԵ, ԿՌԵ, կչկչաց մինը ձու ածող հաւի պէս, յայտնելով կնոջ ներկայութիւնը պատշտամբում...

Վերեկից դէպի Օսանի կողմը նետած կղմինտի կտորը մի շաբաշ էր, որով Արսէնն արձակում էր Գօնցիօի աւաղակախումբը. հիասթափւած, չիմանալով, էլ որտեղ գտնել օձնեցի եղնիկին «մօր ծիծ կորողների» ձեռքը տալու համար...

Ու գետինը մտնելու պէս էր, որ մինչև Մամբրէի ու Նարգիզի դուրս գալու սենեակից, վեց ստւերներ անյայտացան...

Վաղուց էր ինչ Արսէնը բանակցութիւններ էր սկսել Գօնցիօի հետ օձնեցի եղնիկին «համբարձելու» համար...

Օսանի բարեհաճ վերաբեժունքը դէպի տէր Անդրէասի նախկին ցաւադարւած խոհարարը շփոթում էր. Արսէնի արիւնը, ազդելով մի տեսակ սուր զզւանք, որ նրա ողջ մարմնովը մէկ փշեր էր շրջեցնում, յիշեցնելով այն օրը, երբ պատանին, մոռացած իր հիւանդութիւնը, ուղում էր բկախեղդ անել ուժով իրենց սենեակը մըտնող եղնիկին, որ եկել էր այրու ձեռքը խնդրելու...

Ու օձնեցու երեսովը մէկ նետած Օսանի այն խօսքերը, թէ «ճաղատ գլխիդ թագն էր պակաս», այժմ խթելով արթնացնում էին Արսէնի մէջ մօր ապրած սարսափները Ալեքսօի կողքին...

Եկաւ ժամանակը, երբ եղնիկի պատկերը այնպիսի յամառութեամբ սկսեց հետամտել պատանուն, որ նահերկիւղից այլևս գիշերները չէր գալիս «պետլած» Գրիգորի քարուքանդ տան մթութեան մէջ առաստան գտնելու համար, նախամհծարելով գիշերել երբեմն Մաթէոս վարժապետի ուսումնարանում, երբեմն էլ Շան թաղի կամ Հաւլաբարի գինետներից, մէկն ու մէկում...

Քանի շատ էր թագնւում Արսէնը, այնքան առաւել յամառութեամբ էր հետեւում նրան Եղնիկը, մէկ թոքախտաւոր պատանուն, մէկ միւս գպրոցականների, Սև-Տանը երբեմնապէս ապաստան գտած, այս կամ այն աղջականին շալակած...

Տագնապի այդ բոպէներից մէկին նա յիշեց իր
մանկութեան օրերի այն դէպքը, երբ ինչը, փոքրիկ
Մարզոին նսիրաբերած կաղինները Սարեեղից արհա-
մարհանքով յետ ստանալուց յիտոյ, գիշերը մօր գըշ-
կում, սրա զգից կախ ընկած խնդրում էր.

— Տօ, Օսան, մի աղջիկ բեր էլի, հետը խաղամմ...»

Այդ գիրկն այժմ հասարակաց ճանապարհ էր գար ձեւ, որ տրորւում էր անցորդների պայտած կրունկներից...

Ուհա, ինչքան են մանկութեան օրերից իր յիշութեատը մէջ մեխւած այդ գէմքերը, որոնք բոլորն էլ, պարզ է այժմ, նոյն անցորդներից էին, սկսած գրբաց Մինասից ու հաւ ծախող Զաքարից մինչև օձնեցի Եզնիկը...

Ու լաւ է, որ շատերը մեռել են, թէ չէ, «Նըանց» ամօթից գետին հարկաւոր կլինէր մտնել։

= Գտանկ, գտանկ...

Ու լինչ մի զարմանալու բան, որ Սաքեղը իր
երեսին նայելուց անգամ զգուռմ է...

Ու հալածական, մացառներում խճճւած կենդանու պէս էր, որ նա, լարելով վերջին ճիգերը, պատրաստել սկսեց հարթել իր ճանապարհը գեղի Մաշտօն...

Առաջին դուր եղնիկը պիտի լինէր...

Ահա թէ ինչու աւազակապետ Գօնցիսօխ խումբը
նկել էր այդ գիշեր Սև-Տան մուտքի խոռոչները, մը-
թախիտ ստւերների սղի հետ իր դիւական քչփշոցը
խառնելու համար...

Թաղուստի տեղից տեսնելով մօր յայտնելը պա-

ալշգամըի վրայ և համոզւելով, որ եզնիկը նրա մօտ չէ, Արսէնը աւազակախմբին արձակման նշանը տւեց, նետելով կղմինդրի կտորը, ու թոկից փախածները մի ոռաէում գետին մտան...

զարկւելու ձայնից վախեցած, այրին ոչ պակաս
արագութեամբ անյայտացաւ իը սենեակի մէջ, Մամբ-
քէն ու Նազէրին այն ինչ, բակն եկած, այս ու այն
կողմն էին ընկել, տարօրինակ շփոթը բացատրելու
հետամուտ...

Վերջապէս նրանք ես իրենց ծակը քաշեցին ու
Արսէնը, իջնելով թագուստի տեղից, պատրաստում էր
հեռանալ, սիրու դառնութեամբ լի... Մէկ էլ այրին,
զգուշութեամբ բանալով դուսը, նորից դուրս եկաւ սե-
նիակից և սկսեց հետախուզել բակը, պատշգամբից
դէպի Սեւծան մուտքը նայելով, սպասելու պէս...

Համարեա սոյն վայրկեանին մի սկ զանգւած փողցի կողմից բռնից ամբողջ մուտքը, ծանրութեամբ առաջ շարժւելով... Արսէնը արորեց աչքերը երազ տհասածի պէս, որովհետեւ եկողը Փարսեղն էր...,

Մօտակայ քարուքանդ պատից պոկելով աղիւսի
մի կտոր, պատանին վազեց դէպի կապալառուն, ձեռ-
քը բարձրացրած. բայց նա իր մտադրութիւնը չկարո-
ուագաւ իյտագործել...

Պացմաւ լւուն կ կազմակերպ գործադրություն ստուգած, առաջարկել կը Փարսեղը, լեզուն փորս ընկած, առաջարկել կը նրա ուտքերի առաջ, թողութիւն խնդրելով.

—lik' sh sh sh ...

Այս ժամանակ Արակենը իր բուռն արհամարհանքը դէպի Մարգօի կնքահայլը դրեց նրա գլխովը հասպած ուժգին աքացու մէջ...

polymerizing *functionality* *is* *the* *key* *to* *success*

գլխին, Արսէնը մէկ էր, ասես քիչ համարելով մահւանպատճը, դէն ձգեց աղիւսը ու սկսեց մերկացնել մօ. ըը, թքոտելու համար...

Իր դիւական միտքն իրագործած, նա սկսեց մի վըկայ որոնել ապիրատ այս ծանականքի համար. ու չարութեան բոլոր սահմանները պատռելով էր, որ նա, միկրտան Սաքուլի բակը նայող պատռհանը բաց անելով, կանչել սկսեց Սաքեդին, պարծենալով, սիրաը բաւականութեամբ լի...

— Սաքենք, որոտաց նրա ձայնը լուռ թեան մէջ...

— Սաքեդ, արի, թամաշաման...

Լոեցնելու համար, Օսանը, վերջին ձիգերը հուաքած, վեր թռաւ պառկած տեղից ու Փարսեղի ուղարկած նոր չստով այնպէս շրպպացրեց որդու երեսին, որ սրա քիթն ու բերանը արիւնլւայ կարմրեց...

Այն ժամանակ Արսէնը առանց երկար մտածելու, մի ձեռքով քթի արիւնը կանգնեցնել աշխատելով, միւսով սեղանի վրայի դեղնապղնձէ մոմակալը ուժգնութեամբ նետեց դէպի Սաքուլի բակը...

Սկսւեց մի կատաղի կոփու մօր և որդու մէջ... Այրու չարատանջ մարմինը իր երկու բազուկներում ամփոփած, Արսէնը պատրաստում էր նրան փողոցը նետել, պատռհանի առաջը բերած...

Նա սակայն իր թափը պիտի մեղմացնէր...

Մօր ու որդու աչքերի առաջ Սաքուլի բակում կատարւում էր մի չտեսնեած բան.

Չիտօն, գիշերւայ շորով, բարձրացած կտուրը տանող շարժական սանդուխքի վրայ, այս ու այն կողմն էր նայում, կանացի երկու մերկ բաղուկներ այն ինչ, պարզւած դէպի սպասաւորի ոտքերը, աշխատում էին նրան բակն իջեցնելու Օսանը դողալով, և նչը փորում դիտում էր դոյցին, որի սիրային

դիշերի առաջին բաժակը կոտրել էր Արսէնի նետած մուակալը, դրանը դիպչելով...

Սիրտ առնելով քար կտրւած որդու թշւառ տեսքից, այրին լուծեց իր վրէժը նրանից և ունաբենու տակ թագնւած Սաքեդից, խօսելով եղնիկի պէս շփոթւած սպասաւորի հետ.

— Զիտօ ջան, Զիտօ, արեդ ապրի. այդ մեր մոմակալը վերև նետիր...

— Սրտամիո մոռութդ բաց արա. շունը շանից — երկուաը մի տանից, ասաց Օսանը չարութեամբ, հեկեկանքից շնչասպառւած Արսէնին, խօսելով իր և Սաքեդի մասին...

Ու ապա պառւհանն ամուր փակելով, արհամարհելով որդու թախանձագին հայեացքը, նա տարածեց իր մերկ կոները օդի մէջ ու, ոտքի բութերի վրայ կանգնած, սկսեց պարել.

— Տիրնինա, աիրնինա...

Էլ յայտնի չէ, թէ վրիժառութեամբ, թէ ցաւելով էր, որ արդարանալով հեռացող որդու առաջ յայտնեց նրան.

— Սրտամիո, որ Սաքօն քոյլով չինէր, հարսանիքիդ մի լաւ եալի կխաղայի...

Ապա, օգտւելով Արսէնի շւարմունքից այս անսպասելի խօսառվանութեան առաջ, կինը շարունակից, այժմ արդէն մորմոքւելով, անկեղծաբար.

— Միտզ չի, Մինասը, գրբացն եմ ասում... Նա հօ քո հայրն է «ողորմածիկը»... Էլ ինչ ես հոգիս բերանս բերում, սրտամիո...

— Ո՞սց թէ, մայր, չկարողացաւ զսպել իրեն Արսէնը.

Կինը սակայն, ասես չլսելով որդու հարցմունքը, առաջ տարաւ իր խօսքը Մինասի մասին.

— Մեռնի՛ նրա զլուխը, ո՞սց որ մեռաւ. նա որ

Սաբեղին չէր սիրել, մեր պակասն էլ մի քիչ տեղը
կլինէր...

— Փեսա Ալեքսի, քու օրը պակսի, անիծեց նա
անկողին մտած, նրան, որ առաջինը շփոթել էր իշ
կուսական արիւնը...

XXX. ՄԱՀԻԱՆ ԳԵՐԱՆԴԻՆ

Էլ յայտնի չէ, թէ ինչու Արսէնը իր քայլերն
ուղղեց դէպի միկտան Սաբուլի տունը.

Դրան մուրճը անվտահութեամբ ձեռքն առնե-
լով, նա հարկաւոր համարեց, զարկելը մինչե, քննել
բակը երկու յետ ոլորւած դուն երի սիջով, ասես Սաբե-
դի քարերի երկիւղից...

Հէնց սկզբից Արսէնի աչքովն ընկաւ փայլուն մի
քան, որ բակի երկարութեամբ թիթեռի պէս յետ ու ա-
ռաջ էր շարժւում, անդրադարձնելով լուսնի շողերը,
հեռաւոր կայծակի պէս: Այդ Զիտօի բեհբութն էր, որ
Սաբեդը աջ ու ձախ վագեցնելով, չէր ուզում զիջանել
հետամտող սպասաւորին...

Վերջինը սակայն հասաւ իր տիրուհու հտկից...
Երբ մի փոքր առաջ Օսանը սաստկութեամբ փա-
կեց իր պատուհանը, Զիտօի առաջին շարժմունքը կը-
տուրը տանող շարժական սանդուխքի վրայից բակն
քնինելն էր: Գալով ունաբենու մօտ, նա տեսաւ այն
տեղ Սաբեդին, որ նստել էր լւացքի բերաբսիվայը դը-
րած տաշտի վրայ, մազերը գզզուած, կզակը զոյտ ձեռ-
քերում, մոխրագոյն աչքերը շըջեցնելով դուրս պրծած
այտոսկրերի վերևում, նեղ ճակատի տակ, անօդնա-
կան, խայտառակւած...

— Սաբեդ, Սաբեդ, թախանձել սկսեց Զիտօն

ալ ըուհու առաջը չոքած, ասես արդարանալով իր վախ-
կոտութեան համար.

Կինը կոպտութեամը հրեց սպասաւորին զգւանքով...
Այն ժամանակ վերջինը էլ ասելու բան չգտնե-
լով, շւարւած կանզնած էր մնացել սիրոյ բաժակի
դառնութեան առաջ. անփորձ, անպատրաստ... Ասես
այն հիւրը լինէր, որին խրախանքի կիսից հեռանալ
էին խնդրել, շորերը հին լինելով... Ու նա, որ մի ժամ
առաջ, արդէն տղամարդ կարծելով իրեն, խոստումներ
էր շնչնում Սաբեդի թովիչ պարանոցովը փարւած,
այժմ ոչնչացած,—վախեցած եղնիկի պէս, ապարդիւն
ջանքեր էր գործ դնում սիրոյ մթախիտ մացառների
մէջ մի ելք գտնելու համար...

Էլ կեանքն ինչ է...

Զիտօն արագութեամբ սենեակը մտաւ: Մի վայր-
կեանից յետոյ, նա Սաբեդի առաջն էր. բեհբութը
ձեռքին...

— Ա՛ռ, առ, սպանիր, Զիտօին, աղերսում էր
սպասաւորը տիրուհուն, լալագին, բեհբութը նրա
ձեռքը կոխելով...

Որովհետեւ կինը շւարմունքից չէր իմանում անե-
լիքը, պատանին վրա վազեց զէնքը նրանից յետ խե-
լու համար...

Սաբեդը հակառակւեց...
Այն ժամանակ սկսեց խելագար վազքը...
Զիտօն վերջապէս բռնեց իր տիրուհուն...

Սկսեց մի կատաղի կորի բեհբութի համար...
Զիտօն աշխատում էր Սաբեդի առաջը կտրել, տի-
րապետել նրան, զէնքը ձեռքից խելու համար:

Բայց ի զնւը... Միկիտան Սաբուլի կինը բեհ-
բութն ամուր սղմած իր ձեռքի մէջ, թիկունքը դէպի
սպասաւորն արած, ծեծում էր ուսերով սրա կզակը,
քրտինքն երեսին, աչքերը կոպերից դուրս, կծոտելով
կատաղած ախոյեանի ձեռքը, հէնց որ սա ուսերի վրա-

յից երկարացնում էր կուռը բեհբութի համար ..

Արսէնի թուքը ցամաքել էր ու քրտինքը անձրկի պէս թափւում նրա երեսից... Յանկարծ նաթողեց դրան մուրճը ու սարսափահար յետ-յետ գնաց... Սըա պատճառն այն էր, որ Զիտօն այդ ռոպէին վերջին ոյժերը հաւաքած, կարողացաւ Սաքզին իր բազուկների մէջ առնել ետեից, բարձրացնելով իր գոտկատեղից էլ վերև...

Ինչ որ Արսէնը չտեսաւ այդ այն էր, որ Զիտօն տիրուհուն, գետին տապալելու փոխանակ, նորից ցածրեց նրան...

— Տնւր, Սարեղ, տնւր բեհբութը, թախանձում էր Զիտօն, սղմելով տիրուհուն իր գրկում, քնքութեամբ, այժմ արդէն, շրթունքներով բորելով նրա ծծրակը, անօգնական, խեղճացած...

— Զեմ տայ, չեմ տայ, հակառակում էր Սարեղը բեհբութը ծնկների մէջ տանելով...

— Պէտք է սպանեմ, պէտք է սպանեմ...

— Ո՞ւմ Զիտօ, անաստած հում...

— Դեռ Արսէնին, յետոյ Օսանին. երկուսին էլ...

Խայտառակութեան այդ երկու վկաներին...

Զիտօն խօսում էր Սարեղի սրտից...

Միայն թէ, երբ կինը երեսը գարձրեց գէտի սպասաւորը բեհբութը յանձնելու համար, սրա վախկոտ, անվատահ գէմքը նրա մէջ կասկած ծնեցրից... Միաժամանակ նրա գլխում ծագեց նամուսը սրբելու մի այլ միտք. ու միկիտան Օաքուլի կինը, երեք քայլ յետ յետ գնալով, կատաղի վագրի պէս յարձակւեց Զիտօի վրայ, բեհբութը շաբժելով...

Սպասաւորը գետին փուեց արիւնաքամ...

Այդ ժամանակ մինը փայտէ պատւարի վրայից փողոցն ընկաւ.

Այդ Արսէնն էր, որ իր գիտարանը թողնելով վազել սկսեց գէտի Սև-Տունը, ենթարկելով Օսանից

ձգողութեանը, ինչպէս մանուկ ժամանակ, երբ աշնան կատաղի քամին ստիպում էր նրան կծկելով կախ ընկնել մօր վղովը.

— Օսան, տօ, Օսան, տան ետել մարդ են խեղուում...

Միայն թէ Սև-Տան գուռն եկած, նա սարսաւիեց մտնել այնտեղ, այնքան ճնշող էր իր մեծութեամբ այժմ արդէն մուտքի ողջ խաւարը բռնող Եղնիկի ցեցուտած ուրւականը... Ոչ տեսածի պէս էր ուստի, որ վերսկսեց իր վաղքը, շտապելով այժմ արդէն մինա վերսկսեց իր վաղքը, շտապելով այժմ արդէն միկիտան Սաքուլի գինետուն... Մին էլ նրա ոտքը դիպաւ մի կոշտ բանի, այդ Փարսեղն էր, որ զլխաւոր փողոցի մէջտեղը շունչը յաւիահնականութեանն էր յանձնում, Արսէնից, մի ժամ առաջ Սև-Տան մուտքում ստացած աքացուց...

Կապալսուի մահւան պատկերի առաջ Արսէնը մտածեց Մարգօի անօգնական գրութեան մասին հիւանդի մօտ.

— Տօ, Օսան, մի աղջիկ բեր էլի, հետը խաղամ, յիշեց նա մի անգամ ևս մանկութեան օրերի նշանաւոր դէպքը.

Միաժամանակ մօր անսիրտ յայտնագրեծութիւնները նրա աչքում ներկայացան իրը և մի դառն հեգնանք գէտի իր մանկական ցանկութիւնը...

Բայց նա հաշտւեց Մարգօի հետ խաղալու մաքի հետ...

Միայն թէ, երբ նա ճանապարհը ծռել էր պատրաստուում գէտի Փարսեղի տուն, Մարգօի հետ հիւանդին խնամելու համար, եղբայրաբար...

— Տօ, Օսան, մի աղջիկ բեր էլի հետը խաղամ... Յանկարծ նրա փեշը ով որ քաշեց ետեից ուժգնութեամբ...

Այդ Մարգօն էր...

Թաթելի գրութիւնն այդ օրը այն աստիճան էր

ծանրացել, որ միկիտան Սաքուլի աղջիկը, Փարսեղին-երկար ժամանակ անօգուտ սպասելուց յետոյ, ստիպւած էր հիւանդին յանձնել Հոռոմի խնամքներին ու կէս գիշերից անց վազել Թամագեանի ետևից, որի տանը երկու-երեք անգամ էր միայն եղել, այն էլ բժշկի հիտ միասին, բժշկական այս կամ այն պարագան ստանալու համար... Մթութեան մէջ խարիսխելով էր ուստի, որ նա անցնում էր Վերայի խաւար փողոցներն ու դատարկ տեղերը... Մի փոքրիկ շուն փողոցներից մինի անկիւնում վրա ընկաւ ու պոկեց նրա շրջազգեստի եղը... Կծանը ոգևորւած Մարգօի փախուստից, սկսեց հետապնդել նրան ու կծեց նրա ոտքը... Երեխան երկիւդից ու սարսափից ձայնը փորը զցած շարունակեց իր վազքը. մէկ էլ նա զլոր-զլոր փոսն ընկաւ, շունն այն ինչ վերեից, պոշն աղեղ շինած, հաջում էր իր յաղթութիւնը...

— Աչքդ կարեմ. փափուկ երես ևս տեսել հա, բարկացաւ յանկարծ Մարգօն և ոտքի ցաւին ուշադրութիւն չդարձնելով, մի քար առած, սկսեց հալածել աներես կենդանուն...

Շնից ազատելը նրան մի փոքր սիրտ տւեց ու նա շարունակեց իր ճանապարհը, մոլոքւելով սակայն...

Երբ Հոռոմի «երես տւած թոռը» Վերայի լարի-րինթոսի մի անկիւնում նստած լալիս էր իր չար-բաղդը, փողոցային մի աղջիկ, որին լայն թիկունքի և բարձր հասակի համար շրջակայքում դրագունի ձի էին անւանում, մօտեցաւ նրան ու երեսին մի քննող հայեցք գցելուց յետոյ, բռնեց նրա կուռը ու բերելով գլխաւոր փողոցը, խրախուսեց.

— Գնա, ուղիղ...

— Լիւրային չմոռանան, աւելացրեց նա հեռացող Մարգօի ետևից...

Դժբաղդութիւնը սակայն հետևում էր միկիտանի.

աղջկանը. Թամազեանը գնացեւ էր մի դժւար հիւանդի մօտ...

Այն ժամանակ Մարգօն, առանց երկար մտածելու, բռնեց Հաւլաբարի ճանապարհը—Երևանեան հրապարակից, այլևս չմոլորելով, յիշելով այն երջանիկ օլերը, երբ Սաքուլի հետ միասին վերադառնում էր հրավառութիւններից... Բազագիւնայի գռնիրը փակ լինելով, նա անցաւ յետևի փողոցով, ճղեց Ալիւրի մէյդանը... Կամուրջն անցած նա վազել սկսեց հեկ-հեկ, սրտապնդւած, ուրախ, յուսալով հօր վրայ. այդ վայրկեանից Թաթելի փրկութիւնը ապահովւած համարելով...

Ցած ընկնող շրջազգեստը մինչև փորն եկած, հերարձակ, կուրծքը բաց, կանգնած էր Մարգօն Արսէնի առաջ, անխօս, գուրս ձգտող աչքերը փայլեցնելով.

— Կուրանամ, կուրունամ, եղաւ նրա միակ պատասխանը Արսէնի շւարմռնքին, որ ինքն ևս անխօս, երեխայի այս յուսահատ պատկերի առաջ ենթարկւեց նրան, զնալով հետը. կամազուրկ, ոչնչացած, անսիրտ, որովհետև նա գիտակցում էր, որ իր շարժմունքը դէպի Սաքուլի գինետունը ստի շարունակութիւնն է. որովհետեւ, վերջապէս, Մարգօն միկիտանի աղջիկը չէ. բայց նա ենթարկւում էր քըոջը հլութիւմը, ոչնչացուծ, բայց անսիրտ...

Երբ նեղլիկ, նըրափողոցն անցնելուց յետոյ նրանք ետեւից գինետան բակն էին եկեւ, Մարգօն շարունակ քաշտալով Արսէնին, նրան տախտակէ պատւարի ստւերը բերեց, գինետան ետևի բաց մուտքի դէմ, որտեղ մի տաս ըռպէ առաջ ինքը դիտում էր ներսը...

Արսէնի աչքերի առաջ բացւեց մի դիւակսն անարան.

Սապնած գլխով ու մօրուսով մի մարդ չորեթաթման էր ածում Ցիկօին, վրան նստեցրած, գինետան ամբողջ երկարութեամբ. դագաղագործ Սօլօմանն այն

ինչ մի ճիպոտով խթխթում էր «կենդանու» կողքերը,
— Հաշու, հաշու, լսւեց մին էլ Գօնցիսի խըռ-
պոտ ձայնը.

— Հա՛ր, հա՛ր, ոռնոց ապիրատների խումբը,
շնանոցի վայնասունն արձակելով...

Այն ժամանակ միկիտան Սաքուլը, կրակն աչքե-
րում, խածել ուզեց վրան նստողին. յաջորդ վայրկեա-
նին, սակայն, հլութեամբ աչքերը գետնին սեխած, նա
վաւերացը ընդհանուրի վկայութիւնը.

— Հա՛ր, հա՛ր, հա՛ր...

Փողոցի կողմից զուռը զարկացին.

Մի ակնարթում Գօնցիսի խումբը չքւեց, զետին
մանելու պէս...

Այդ խւազարկու ոստիկաներն էին, որ գալիս էին
Սաքուլի ետևից, տանը պատահած եղենագործութեան
առիթով...

Միաժամանակ Հռոմը սաստկութեամբ ծեծում
էր Վերայում մահացած Թաթելի տախտակէ մահա-
կալի գլուխը, ողբարով իր «ողորմածիկին».

— Որտամեռ էլ աղա Փարսեղի երեսն ով է
թրաչելու այսուհետե...

Սուսուը Նարգիզի ճիշը ցնցեց Սև Տան արգան-
դը ցաւեցնող գալարումներով...

Մամբրէն, բեռնակիր մշակները, թոքախտաւոր
դպրոցականը տեղներում քարացած չէին համարձակ-
ում բակը գալ...

Միւտ անողն Արսէնն էր, որ թոքաշաղախ Մար-
զօի հետ Բըջի թաղի ձորն ու Օհանջանենց սարն
անցնելուց յետոյ գալիս էր Խօջիվանքի կողմից Սև—
Տան յետելի դռնով, քըոջը Օսանի հետ հաշտեցնելու
համար...

Հազիւ նա հասել էր այրու գրան առաջ, երբ

նրա աչքերը մեխւեցին դէպի այն անկիւնը, որտեղից
մի ժամանակ այրի տէր Անդրէասի ճիշը փախթրել էր
սիրահար կասուների զոյգը...

Այս տեղ օճառում էր Օսանի գիտկը մի թոկից
կախւած ..

— Արսէն, բողոքեց նա յանկարծ մօր կողմից,
մեղքն իր վրայ առնելով.

Ու մինչդեռ նա, քըոջ կուռը փշրելու չափ աղմե-
լով կարեկցութիւն էր հայցում նրանից, Մամբրէն,
լով կարեկցութիւն էր հայցում նրանից, Մամբրէն,
վարգիզը, բեռնակիր մշակները ծնկաչոք, բազկատա-
րած լալիս էին, չհասկանալով հրաշքը.

Արսէնը կանգնած էր նրանց առաջ...

Մազերը սպիտ սկած, ալենը...

— Եղիկ ջան, «ղութին», թէ կամնաս, աժան
կշինեմ. հարեանութեան համար, առաջարկեց զագաղա-
գործ Սօլօմանը օճնեցուն, պատահելով սրսն մէրտա-
նում, հոգեհայի պատրաստութիւնը գնելիս...

— Երկոււը պատրաստիր, Սօլօման ջան.

Ու զագաղագործի շւարմունքի առաջ, օճնեցին
պարզեց իր միտքը.

— Մէկն Օսանի, մէկն էլ թոքախտաւոր դպրու-
ցականի համար....

XXXI. — ՎԵՐՋԱԲԱՆ

— Բանիւ Մելիքսեղէկի քահանայի. «օրհնեալ
Ցէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն», սկսեց ճգնաւրը
Արսէնն իր ժամը, չհամարձակւելով ծէսն անմիջապէս
իր անունից կատարել, քահանայական կարգ չունենա-
լով...

Միաժամանակ սպիտակ շոր հաղած մի կին,
ոտարորիկ, զզզզած մազերը գլխի փաթաթանի սէջ
աղմած, վառատել սկսեց քաղաքում մուրած դեղին

մեղամուերը, կպցնելով սրբարանի շուրջը շարած
ապառաժաքարերի վրայ...

— Այս Սարեղի հոգհւն...

— Այս էլ Օսանի հոգհւն...

— Այս էլ, մեղայ Տէր, զրբաց Մինասի հոգուն...

Միաժամանակ կինը իրար ետևից կրակը նետեց
խնկան հատիկները.

Ու մինչդեռ սպասուհին, առանց ճգն աւորի աչքին
երկալու, նոյն երկիւղածութեամբ դնում էր քարերից
մինի վրայ չոր հացի եղրօր մասը, միկիտան 8իկօն,
որ մօտակայ ուխտատեղուց եկել էր իր կնոջ՝ դագա-
ղագործ Սօլօմանի աղջկայ, հետաքրքրութեանը բաւա-
կանութիւն տալու համար, բգեց սրա կողքը.

— «Նա» է...

— Փոխւել է խեղճը, սարսափեց դագաղագործ
Սօլօմանի դուստրը.

Ու կնոջը սիրտ տալու համար էր, որ 8իկօն խօ-
սեց սպիտակ շոր հագու ծ սպասուհու հետ, երբ սա իր
գործն աւարտած հեռանում էր ճգնաւորի աչքին չե-
րեալ աշխատելով...

— Բարով, Մարգօ, ո՞նց հս աղջի...

Լուծը գցած եղան պէս, վերջինս, խոյս տալով
փուչ աշխարհի ձայներից, անյայտացաւ ապառաժից,
ապառաժ, ոտքերն արիւնլւայ...

— Գժւել է խեղճը, ասաց 8իկօն կողակիցը.

Պատասխանի փոխարէն միկիտան Սաքուլի պըս-
տիկը երեսը խաչ հանեց, չարից վահանաւորւելով...

Թ Ա Մ Ա Ր

Վ Ե Ր Ֆ :

1911 թ. Մարտ. —

1912 թ. Մարտ. —

Թիֆլիս

Այստեղ,ուր Հրեշտակապետաց եկեղեցու կողմից
իջնող փողոցը Շէյթան-Բազարի հետ կազմում է ան-
կիւն, անցեալ դարի վերջերում գտնուում էր մի հնա-
ւուրց շինութիւն, որի ներքեւ յարկը երեք խանութ-
էր, երեք վերնատնով, այն ինչ վերևինը անառականոց
էր, ուր Գէլօն ծախու էր գրել գիւղերից բերած չորս-
հինգ կին...

Սրանցից մինը, Թամարը լնտանիքի աչքն էր համարւում ոչ այնքան գեղեցկութեան ու երիտասարդութեան պատճառով, որքան կարմրադեղը գործածելու և յոնքերը ներկելու գաղտնիքն իմանալով. մէկ էլ լու և յոնքերը ներկելու գաղտնիքն իմանալով. մէկ էլ բազարաւորները գնահատում էին թաթերից խոյս տարածուներ...»

ինքը Գէվօն, օտար որևէ էստետիքական բնագաղց, Թամարին զնահատում եր որպէս արդիւնաւէտ ապլքանք, որի համար շըջակայ անառականոցների տէսքերը հազար բուբլի էին առաջարկում...

Տասը կարելի էր գնել հաղար ըուբլիով, բայց
թամարը քսան արժէր, որովհետև նրա հոչակը վաղուց
արդէն պատռել էր Շէյթան-Բազարի էլ, Բազարիսա-
նայի էլ սահմանները, անցնելով Միջի-Փողոցի այն
կողմը, մինչև թամամշկի քարւաճնարան, որտեղ թա-
մարի խանձւած ձայնն առանձսափէս յարգի էր մանա-
ւանդ կողակիցների միատեսակ պարկեշտութիւնից
զգւած ամուսինների մօտ...

Ա՞հ, այս թամարը, որ «Դրախտային-Վարդ» կամ «Եղեմի-Հովհեն» այդինքնում կազմած լրախանքների ժամանակ բռնում էր թամադայի տեղը, չիխտին թեքած և ձեռքերը գօտիատեղին յարմարեցրած, կառա-

վարելով սեղանը, աղմկողներին էշի պէս զռալ ստի-
պելով կամ իր համար ձի շինելով, երբ գինու բաժա-
կը ձեռքին, սրտից սիրտ—քաղցրութեամբ առաջարկած
համբոյըները չէին օդնում բորբոքւած գլուխները
սառցնելուն...

Ուշ գիշերին միայն, երբ ամենքն արդէն «մտածողութեան գործարաններն» այլևս բարձրացնել չէին կարողանում սեղանի վրայից, թամարը, ինքն ևս հարբած, բաւականաչափ թուք չունենալով բոլորի գլխարկների հաժար, նամուսի այդ էմբլեմաները ցեր ու ցան առւակների ցեխն էր շպրտում ոտքով... Ու ապա, այդետիրոջ քիթն արնեցրած, հեռանում էր վատթար անէծքներ և հայհոյանքներ թափելով կառապանի գըլ-խին...

Կառքի մասին հոգում էր սովորաբար անառականոցի տակ մանրավաճառի խանութ պահող Շաքոն...

Վերադարձին կառքը կանգնեցնում էին անառականոցից փոքր ինչ հեռու, մի խուլ ու նեղիկ փողոցի ծայրին, որտեղից թամարն ու Շաքրօն զգուշութեամբ դէպի տուն էին դիմում ոտքով, ու եթէ հարևան սըրճարանն ու վարսաւիրի խանութը փակ էին լինում, նոյն զգուշութեամբ նրանք բարձրանում էին անառականոցի նեղ մուտքով, որտեղից մի դռնակ, գեռ տուն հասած, տանում էր Շաքրօնի խանութի վերնատունը...

Այստեղ երկուսով, մի չարեք գինին և թարթի դօշի կտորն առաջնիրին, ծրագիրներ էին կազմում նոր անառականոց բանալու մասին, Գէվօից վրէժը լուծելու համար...

Ուղիղն այն էր, որ Շաքըօն, հարստահարելով
թամարի բուռն ձգտումը դէպի ինքը, ուզրում էր իր
կողմից սեփական ընտանիքի հացը քամել այդ «մերժ-
ւածի» արիւնից, որովհետև մանրավաճառի խանութը
մի առանձին ապահովութիւն չէր ներկայացնում...

Գծւել չէր Գէվօն, որ այսպիսի «Ժարգարիտը»
-ձեռքից բաց թողնէր...
Հազար ըուբլի... Ո՞նց չէ...
Այս «փուշը»—Գէվօն փող դիգելու համար չէր
սակայն, որ այդպիսի ջերմեռանդութեամբ հետամուտ
էր իր տան պայծառութեանը»... Ու «Քամու բերածը
քամին կըտանի» առածը հազիւ թէ ուրիշ դէպքում
կարելի լինէր աւելի յաջողութեամբ յարմարեցնել քան
թէ այստեղ, որովհետև եկածը համարեա ամբողջովին
նոյն օրն և եթ անյայտանում էր քաղաքի մութ զը-
ւարձատեղիներում...

Փող այնուամենայնիւ մնում էր...
Բայց Գէվօն վճռել էր մերկ հեռանալ այս «փուչ
աշխարհից», ուստեղով թաղւել առանց դագաղի, մէն-
մի պատանով...

Տարւայ բալանսն, ուստի, երկու հազար ըուբելի օգուտով հաւասարակշռած, նա համրիչի չորրորդ լարի երկու հատիկը յետ էր շըխկեցնում այնպիսի ուժգնութեամբ որ դործիքը թախտի վրայից ցած էր ընկնում... Յաջորդ բուհին, երեսը խաչակնքած, յաղթական քայլերով «ընդհանուր դահլիճն» էր գալիս ու «հարսներին» հանդիսաւոր կերպով յայտնում, թէ վաղւանից մի շաբաթ փակում է «գործարանը»...

— Դաստիւր, «աղջիկներ»...
Անմիջապէս վերաստուգում էին «հալսների» արդ
ու զարդը, պակասը լրացնելով... Պատուածները մի
կերպ «ընդուռմ էին», որովհետև կարել չգիտէին, իսկ
դույսը տալու համար ժամանակը քիչ էր սեպում...
Հայուածականական

Յաջորդ օրը, վաղ առաւտուանից Հրաշտավապուաց
տաց եկեղեցու կողմից իջնող փողոցն էին գալիս առա-
ներկու կառք. ձիերի ճակատներն ու պոչերը կարմիր
ու կապոյտ ժապաւէններով ու բրդէ փնջերով զար-
դարւած, կառապանները կարմիր գոտիները կապած.
Առաջին կառքում բազմում էր արգանչչիկ կոլան,

Գէվօի աւագ քրոջ որդին, գործիքի արտաքին երկու անկիւնից չթէ նշանկար թաշկինակները կախած և ձախուսին մետաքսէ բաղդադին գցած...

Յաջորդ վեց կառքերից իւրաքանչիւրը Գէվօի հագուստի առանձին մասերի համար էին... Ու կօշիկ ներից իւրաքանչիւրին, գլխարկին, արծաթէ գօտուն, ծխամորչին և մախօրկայի քսակին մի-մի կառք էր յատկացնուում...

«Հարսները» նստում էին հետևեալ չորս կառքում, իւրաքանչիւրն առանձին. զլիներին մի-մի շալ, բութ մատերի արմատներին երկուական մատանի. մինը պողպատից, միւսը ոսկուց կամ արծաթից. բաճկոնակապուշտից, միւսը ոսկուց կամ արծաթէ գօտիով, որոնց ոսկելը սղմած մի-մի արծաթէ գօտիով, որոնց ոսկելը փամփուշտներից միջինները, պարծենկոտութեամբ գուրս պըծեցրած, շարժում էին գրպանագլուխները գուրս պըծեցրած, շարժում էին գրպանագլուխների և դիմացի որճարանի հասարակութեան նախանձը...

Օ՛հ, այս հասարակութիւնը, որ այնպիսի ագահութեամբ սպասում էր, որ մի դէպք, մի պատահական հով վեր բարձրացնէ գօտիների տակից շրջական հով վեր բարձրացնէ գօտիների տակից շրջական հով վեր բարձրացնէ գօտիների մէկն ու մի զգեստի վրայ ցած թողած բաճկոնակների մէկն ու մի ծայրը...

Վատագոյնները դրանցից սրճարանի տանիքից փատած գետնախնձորներ էին նստում «աղջիկների» կառքը, գլարճանալով սրանց պաշտպանւելու ձևերով, չանչերով և ցինիկ հայիոյանքներով...

Վերջին կառքում ինքը Գէվօն էր բաղմում. բաճկոնի կոճակները յետ արած, բոկոտն ու գլխաբաց, ձեռքերը խաչտձե մինչև կոնատակերը տարած, զլուխը կախ, խաղացած խոնարհութեամբ...

Օ՛հ, հպարտութիւնը, ամբարտաւանութիւնը միշտ շարժում են մարդկանց նախանձը և երկնքի բարկութիւնը...

Հանդիսաւոր «բարւանը» դեռ չշարժւած, Գէվօն:

Կառապանների ճակատներին մի-մի տաս բութիանոց էբ յարմարեցնում, որոնց ծայրերը գլխարկների տաշէց կախ ընկած ծածկում էին իւրաքանչիւրի ճախ կից կախ ընկած ծածկում...

— Դաստուր, գոչում էր Գէվօն, մէկ էլ առիւծ դարձած, հարևան գինետան առաջը գալով, որտեղից ծառաներն անմիջապէս դուրս էին բերում գինով լիրը չարեցնուի և ուտելիք, հիւրասիրելով հանդիսաւոր հասարակութեանը...

Այս ժամանակ սկսում էր բազարաւորների ընդհանուր փախուստը...

Ի՞նչ «լրութիւն»... Այսպէս բաց-աշկարա, օրը դեմեկով վայելի «մուռտառ աղ ու հացը»... Ուրիշ բան էր այդ լինէր «մի մութ տեղ»... Եթէ, օրինակ, էր, եթէ այդ լինէր «մի մութ տեղ»... Եթէ, օրինակ, Գէվօն, Ուլի-Բուլաղ հասած, ուղարկէր սպասաւորին, ամեն մինի ականջում ծածկուկ փսփալու, թէ նըսանք հրաւիրում են ճաշելու «հարսների» հետ այնտեղ, Ուլի-Բուլաղում կամ Օրթա ծալայում...

Օ՛հ, այս ժամանակ... Այս ժամանակ նըսանք կերպային, ճանապարհը ծոելով. Սէյդաբաղի թաղով, Խառնութիւնի բարափների տակով, ծածկուկ, «պատւական» փուխի բարափների տակով, ծածկուկ, «պատւական» մարդու պէս... Օ՛հ, այդ Գէվօն, այդ անասունը, որ մարդու պէս... Օ՛հ, այդ Գէվօն, այդ անասունը, որ մարդու պէս...

— Դաստուր, գոչում էր նորից Գէվօն, խմած զինուց զլուխն արդէն մի փոքր տաքացած...

Արգանն սկսում էր նւագել... Գէվօնի նշանով «հարսներն» ուղղուում էին, բութ մատները կոխելով գօտիների մէջ և կուրծքները դուրս պըծեցնելով...

«Բարւանը» շարժւում էր դէպի Օրթա-ծալա, Ուլի-Բուլաղ, կրծանիս, Դիղուրէ, կանգ առնելով բութիւնը...

լոր գինետների առաջ և հիւրասիրելով ցանկացողներին...

Եօթն օր, եօթ գիշեր էր շարունակւում այս չւող անառականոցի աղմկալի այցելութիւնները քաղաքի մութ զւարճատեղիների և շրջակայ գիւղերի գինետներին, մինչև որ յոզնած, շորերը թողաշաղախ ըւ պատռտւած, յետին կօպէկից զրկւած, ամենքը «տուն» էին համուռմ կաղղուրելու, նորից «տքնելու», նորից «աշխատելու» համար...

Թամարն այս «աշխատանքում» իր խոշոր մասն ունէր...

Ու Գէվօն նրան գնահատում էր...

Բայց սէրը չէր պատճառը, որ նրանց ննջարանը ահա երեք տարի էր, ինչ ընդհանուր էր, այլ այն, որ Գէվօն, շնորհիւ Թամարի արած փախչելու փորձերին, սկսել էր շահագրգուել նրան, խոստանալով մեռնելիս տուեր նրան կտակել...

Ոչ ոք չըգիտէր, թէ որչափ անկեղծ էր այդ խռուտումը. ուղիղն այն էր, որ Գէվօն միշտ մերժում էր Թամարին անմիջապէս «ընկեր» շինել, պատճառ բերելով իր ծերունի մօրը և երկու չպսակւած քոյլերին, որոնց նա ապրեցնում էր իր «աշխատանքով»...

Այդ պատճառով մի խուլ կուր էր սկսել Գէվօն և Թամարի միջն. ու երկուսից Գէվօն էր, որ միշտ նահանջում էր, զգալով իր կաշւի վրայ «ըմբոսացած» կնոջ «կարիճների» խայթոցները...

Եւ յիրաւի. ինչ տանջանքներ սսիս չէր կրել այս անասունը, Գէվօն Թամարից, երբ ուղենալով իր ստեկուհու լուծից ազաւելու վայելչութիւնը ճաշակել մի. մի անգամ փորձել էր «ամուսնական» անկողնու «սրբութիւնը» խախտել...

Այսպիսի դէպքերում Գէվօն առաւօտները միշտ վեր էր կացել մաղերը սանդուխք. սանդուխք կտրտւած գլուխն ու բեղերը հինայած, բոլորովին անշնորհ-

քացած, «հարսների» ամօթից «դահլիճը» գալու անկարող...

Չեմ ասում, թէ այս հետամտութիւնը պայմանաւորւում էր որ և է նոյն իսկ զգայական ձգտումով դէպի տղամարդը, արուն, երբ կինը, վիրաւորւած մինչև արդանդի ամենախոր թելերը, ֆշացնում է կրքի գետը, ափերը պատռելով...

Հմմբուտացածի, յաւիտենական, սեռից անկախ, կորիւն էր այս, շղթաները կտրելու համար...

Թամարը մի օր հարբած Գէվօնին «հարսների» օգնութեամբ «ընդհանուր դահլիճը» բերեց... Զնայելով թաղթի վրայ շարւած հինգ անկողիններին, որ «հարսներին» էր պատկանում, նա Գէվօնն ուղղակի մերկ յատակի վրայ դնել տեսց ու երկար բեղերի հատը մկրատով տակից կտրելուց յետոյ, նրան արթնացնել սկսեց...

Գէտք էր տեսնել Գէվօնի ապշութիւնը, երբ, արդէն յատակի վրայ նստած, ուղենալով սովորականի պէս բեղերը կարգի բերել նրանցից մէկը ձեռքին մնաց...

— Պապաշտ, պապաշտ, բեղերիդ այս երկու մազը յատակի վրայ ես թողել ափառս է. տար,—կանչում էին Գէվօնի յետեկից «հարսները», երբ սա, լոլորովին սթափւած, ամօթից փախչում էր իր սենեակը:

Իշխել այլևս անհնար էր...

II

Բեղը կտրելու դէպքից յետոյ Գէվօն «ընդհանուր դահլիճը» չէր զալիս ամօթից, որովհետեւ, հատ բեղից գրկւած, նա պիտի երկուսն էլ ածիւել տար, հաւասարակութեան» համար... Հակառակի պէս «խայտապահելինը» տեղի ունեցաւ հէնց մայիս ամսին, երբ Գէվօն, գլխին տղրուկներ կացնելու համար, թրաշել

էր տւել իր պստիկ խնդրի մեծ պահարանը, որ բացի
այդ հարուստ էր խորդուբորութիւններ վ...

Ա՛խ, բեղեր, բեղեր, հաստ ու երկար... շէկ բե-
ղեր, որոնց հետ այնպիսի պարծենկոտութեամբ խա-
ղում էր Գէվօն հայելու առաջը կանգնած, մերթ ոլորե-
լով, մերթ փղոսկրեայ յատուկ սանրով թոչունի թե-
ւերի պէս լայնացրած գէպի բերանը ցած բերելով...

Իսկ այժմ...

Թէպէտ...

Մարդու իր մէջ միշտ կրում է Մօլլա Նասր Էղդի-
նին, ու առակն անխոտելի է...

Մի օր Մօլլան էշ նստած ջրիթ էր խաղում, երբ-
աւանակը, մոխրի կոյտ տեսնելով, պառկեց ու սկսեց
գլոր գլոր, տիրոջը թռաղաղախ անել... «Վայ, խայ-
տառակւցցինք», — լալիս էր Մօլլան, ճանապարհի մի-
կողմը նստած... «Ե՞ն, առաջ էլ մի բան չէինք», — ինքն
իրեն մխիթարում էր նա յետոյ, համոզւելով, որ շուրջը
տեսնող չի եղել...

Գէվօն մի այլ մխիթարանը էլ պիտի ունենար-
այն, որ ածելած զլուխն ու երեսը նրան տալիս էին
պաշտօնին աւելի համապատասխան արտայայտութիւն,
որովհետև գէմքն այդպիսով ստացել էր աւելի դաժան
խստութիւն...

Բայց նա կատաղել էր... նրա կատաղութիւնը
ուրիշ ակն ունէր սակայն. նրա մէջ խօսում էր տղա-
մարդու գերիշխանութեան վիրաւորւած զգացմունքը,
որ «ըմբռոստացած» աշխարհիս այն անիրաւորեալ
դէմ, որի չնորհիւ տղամարդը գետին է տապալում
կնոջ ձեռքով, — պահանջում էր հատուցումն...

Ա՛խ հաստ ու երկար բեղեր, որ այժմ փողոցի
ցեխումն էք լողում...

Դրակը հանգնել չի կարելի, երբ ջրի տեղ վրան
իւղ են ածում... իսկ «հարսները» Գէվօնի փախուստից
սիրտ առած, սկսել էին հետամուտ լինել նրան, թագ-

նւած տեղից չանչեր ուղարկելով դէպի նա... Գէվօն
աչքի տակով համարեա ամեն օր տեսնում էր, թէ
ինչպէս նրանք իրենց մերկ երեսների վրայ ձևացնում
էին բեղերը ոլորելու գործողութիւնը... Տեսնում էր
և չտեսնող էր ձևանում, գիտակցելով հանդերձ, որ
ինքը դրւած է թեք մակարդակի վրայ...

Ահ ինչպէս մտրակաչոր կանէր նրանց, եթէ...
բեղերը տեղը լինէին:

«Մուռտառ քածերը» նրան զրկել էին վերջին—
տանից գուրս զալու, մխիթարութիւնից, այդ պատճա-
ռով իր ցցաւը» փոքր ինչ ամռքելու համար մի տա-
րօրինակ միջոց էր մտածել նա, մենամենակ նարդի
կամ դումար խաղալով...

Նարդին դնում էր թախտի մէջ տեղը ու գրպա-
նից աբասանոցները թափելով նրա երկու ծայրի մօտ,
ինքը տեղաւորում էր նարդու մի կողմը ու զառը նե-
տում իր երևակայական խաղընկերի կողմից, բողոքե-
լով «սրա» սխալ կամ անկանոն խաղի դէմ, խօսելով
հետը, հայհոյելով «նրան»...

Ու միշտ ինքն էր վերջիվերջոյ տանողը...

Երբ այսպիսով աբասանոցները յետ գրպանն էր
ածում, նա պատի մեխից ցած էր իջնում վէգերի
քսակը ու հարկան վարսավիրի կտուրն էր գալիս բո-
կոտն, վարտիկի տոտերը բրդէ սոնապաներում հուզ
տւած, մենամենակ զումար խաղալու, ընտրելով Հաւ-
լաբարի ձեռը... Այնտեղ, ծխնելոյդի յետեր թագնւած,
նա բաց էր անում վէգերի քսակը, հանում վէգերից
կարմիրը ու զցում «իր կողմից», խաղի հերթը որոշե-
լու համար.

— Ա՛լչու, կօճօ...

— Թափի, ուրախանում էր «խաղակիցը» և կար-
միր վէգն «առնելով», զցում էր «ինքը»...

— Ալչու, յուսահատութեամբ բացականչում էր

Գէվօն, չորս վէգերը երեակայական խաղընկերի առաջ դցելով...

Ողջ օրն այսպէս անց կացնելուց յետոյ, երեկոյան, կեղտուտ զլխի և երեսի ճանճերը քշելով, նա գաւառս, ցցւում էր անառականոցի մուտքի զլխին, այցելուներին ընդունելու համար...

Բայց անառականոցի կառավարչի պաշտօնը միայն փող ստանալով չի սահմանափակւում...

Կան «ծոյլեր», որոնց հարկաւոր է ուժով փողոցը նայող պատշգամբը քշել, բազարով անցնողներին ցոյց տալու համար... Կան և «անփոյթներ», որոնք հէնց գիշերւայ զլխի փաթաթոցով են պատշգամբ դուրս դալիս, տան հոչակը նոհմացնելով. որովհետև Գէվօի փիլիսոփայութեամբ առանց չիտառ և լեչաքի կինը մինոյն է թէ ցըցամ չտած կանաչի, որ գնողներ չի հրապուրում,—այսպիսիներին պէտք էր ստիպել, որ գլուխները զարդարեն... Մէկը, մի թոյլը և արդէն պառաւածը, չկարողանալով այլ ևս «աշխատանքին» դիմանալ, սովորութիւն էր արել, գիշերւայ յոգնածութիւնից, առաւօտները տեղերից ժամը տասնումէկից էլ յետոյ վեր կենալ... Արթնացնելու համար հարկաւոր էր զրան ուղղակի ոտքից բռնած թրե տալ թաղթի վրայ... Շատ անգամ անհրաժեշտ էր համարւում մէկն ու մէկին մտրակաչոր անել, այցելուների նւիրած աւելնորդ փողը սեփականացնելու համար...

Գէվօն այսպիսի գէպքերում զիտէր «խոստովանեցնելու» միջոցը... Մտնում էր «ընդհանուր դահլիճը», ու քըքը էր սկսում թախտի վրայ փուած անմաքուը անկողիները, յետ քաշելով աղտոտ, մարդկային ձեռքերի իւղից և այցելուների հետ անկողնում կերած ձմերուկի կամ սեխի հիւթից սեացած վերմակները, շօշափելով բարձերի և ներքնոցների պարունակութիւնը, խիստ հարց ու փորձի ենթարկելով «հարսներին»

պատահմամբ գտած «մեատնի կապլու» կամ հալւայի փշունքի մասին...

— Քո արել վկայ, պամաշա ջան, թող այն Հրեշտակապետաց եկեղեցին աչքերս կուրացնի, եթէ փողով լինեմ առած... Այն ջահել թաթը, որ ինձ խոստացել է դեղձանիկ ընծայել, նա բերեց «կապլին»...

Ոչինչ չդանելով անկողինների մէջ, Գէվօն «հարսներին» ստիպում էր մերկանալ ու անձամբ քրքրում էր նրանց շորերը, շուր տալով իւրաքանչիւր մի գըրպան, թափահարելով կօշիկներն ու հողաթափները... Ոչինչ և ոչինչ...

Բայց նա համոզւած էր, որ այդպիսի գէպքերում բանը առանց ընծանների չի լինում, ուստի հրամայելով չհագնեւել, գնում էր իր սենեակը, այնտեղից բերում «մաթրախը» ու երեսի դաժան արտայայտութեամբ վրա էր պըծնում անկիւններում կուչ եկած «հարսներին», մաթրախը օդում ճօճեցնելով...

Օ՛հ, «հարսների» ճաճոցն ու ոռնոցն էր, որ այսպիսի գէպքերում գլարձացնում էր դիմացի սրճարանի հասարակութեանը...

Գէվօն այս միջոցով էր, որ թամարի անառականոց գալու առաջին տարիներին դուրս էր կորպել նըրանից սոկէ մատանինել, օդեր, կանացի գօտու փիրուլաւոր արծաթէ կոճակներ, իր քոյըբերի արդուզարդը լրացնելով...

Այժըմ... Այժըմ թամարը, այդ անաղուհաց թամարը իր գինը գիտէ. Թող Գէվօն փորձի նրա մազին դիպչել... Մատի մի նշան—և բոլոր «հարսները» իր հետ Շաքրօի մօտ կերթան...

Օ՛հ, այս «ըմբռստացած» անառականոցը, որից ինքը Գէվօն անգամ վախենում է... վախենում է ու ջգրից տրաքւում ..

Որ մարդ այլ ևս չկարողանայ իր տունը մտնել...
— Գտամկ, գտամկ, էլ ինչո՞ւ ես գլխիս...

Քանի շատ էր մտածում Գէվօն, այնքան աւելի խորն էր համոզում, թէ աշխարհիս երեսին արդարութիւնն ու օրենքը դադարել են գոյութիւն ունենալուց. այդ պատճառով էլ նա զումարի ու նարդու իր խաղը էլ աւելի կատաղի թափով էր առաջ տանում...

— Եէշ ու բէշ, քօն հայւան, դիմում էր նա իր երեակայական խաղընկերներին, այնպիսի ուժգնութեամբ մանչալով, որ «հարսներն» այդ ձայնից խըսում էին նրա պատուհանի տակ, ապակիների միջով ներսում պատճաճն իմանալու համար. .

Այս հետաքրքրութիւնը չէր վրիպում Գէվօի աչքից և նրան կատաղեցնում էր. ու վայրկենաբար դէպի «հարսները» զցած հայեցքը ուղղելով զէպի զիմացի պստը, էլ աւելի ուժգնութեամբ պոռում էր, միշտ «խաղընկերին» հայնոյելով...

— Եէշ ու բէշ, զառն ուղիղ բոնի սալախանա, պաժարնի... Զուռնա, քօն շուն...

«Բօոր» հարսնան վարսավիրն էս, որ ներքեւում այդ բոպէին զուցէ և խոմփացնում էր...

Մի օր Գէվօն զումար խաղալիս այնքան տաքացաւ, որ յարձակելով «գիմացը նստած» երեակա, ական խաղընկերի վրայ, սկսեց «հետեւել» նրան, օդի մէջ բոռնցքներ իջեցնելով նրա գլխին... Միշտ հետեւելով սուերին, նա վերջ ի վերջոյ բարձրացաւ հարեւան տան և ապա սեփական անսասկանոցի տանիքը, որտեղից նա պիտի ցած-փողոցն ընկնէր, եթէ արգանշչիկ կօլան, իր աւագ քոռջ որդին, չհամնէր յետեւից և վեշից չըսնէր...

Հիւանդին իր սենեակը բերին, ու Գէվօի մայրը, Սալօմէն, որ «կիթխաւի» մօտից նոր էր վերադարձել կօլայի հետ, նրան յայտնեց, որ հիւանդութիւնը Բօլնսի գէորգից է... Այդ ժամանակ զօղանցեցին Հրեշտակապետաց եկեղեցու զանգերը... Գէվօն մի ըոսէ որոնց բեղերը և չգտնելով, սկսեց նրանց շուրջը

դանհանաբութեան ձեւը կատարել, ցոյց տալով թէ բնդերը քաշում է.

— Տին-տօ, տին-տօ...

Ցաջորդ բոպէին նա բոկոտն և զլխաբաց փողոց իջաւ, մտաւ Հրեշտակապետաց եկեղեցին, մի մեծ կերպուն գնեց ու տուն վերադառնուլով, զլխարկը զլուխն ըստ կերպնը վառած «ընդհանուր դահլիճը» մըտառաւ ու կերպնը վառած «ընդհանուր դահլիճը» մըտառնելով և «հարսների» ձեռքներն առնելով, յայտնեց, թէ Բօլնիս է գնում...

«Աղջկերքը» շիոթել էին և անկիւնները քաշւել... Գէվօն նորից մօտեցաւ, նորից ձեռքներն առաւ ու սկսեց շրջել «ընդհանուր դահլիճում» բոկոտն, կերպոնը ձեռքին, քրքրելով «հարսների» անկողինները, մէկին որոնելով... Մի բոպէ, ասես ուղենալով տոնը կը ակ տալ, անմաքուր, իւղուած վերմակներից մինը մօտեցըց վառած կերպնին...

«Հարսների» միչը նրան սթափեցրեց.

— Պապաշա ջան, պապաշա ջան...

Խոնարհացած, նա շարունակեց սենեակում իր առաջ ու յետ զնալու շարժողութիւնը, միշտ մրթմըւթալով.

— Բօլնիս եմ գնում, Բօլնիս եմ գնում...

Խելագար զբոսանքը դադարեց այն ժամանակ միայն, երբ Սալօմէն յայտնեց նրան Թամարի փախուստի մասին...

Յուսահատ ու վրէժի ծարաւ, Գէվօն ուժգնութեամբ վշեց կերպնի բոցը և հանգցրեց, կերպնը գետին զարկելով...

Եւ նրա ձեռքը, չգտնելով հաստ ու երկար բեղերի փարթամ թերերը, օգում կախւած մնաց...

III

Կառքում կամ վերնատանը նստած իրար հետ խօսակցելիս, Թամարն ու Շաքրօն-երկուսն էլ-ա-

սում էին. «յանուն մեր սէրի», միայն թէ, երբ սյդ
խօսքերը թամարն էր ասում, — այն կրակը վկայ, որ
պայծառացնում էր «մերժաւածի» սև ու թաւ, իրար ե-
կած յոնքերի տակ խաղացող, ձիթապաղից էլ խոշոր
սաթէ գնդերը, — ան լոյսը վկայ, ասում եմ, որ, երբ
թամարն էր ասում այդ խօսքերը, նրան թւում էր որ
թեթևացած թոչում է աշխարհներից լաւագոյնը... Ու
եթէ այդ ժամանակ կինը աւելի սաստկութեամբ էր
փարւում Շաքրօի զգովը, այդ ոչ թէ նրանից էր, որ
նա ԶԳՏՈՒՄ էր Դէղի ԵՐԿԻՐԸ, ալ նրա համար, որ
Շաքրօին էլ թոցնի իր հետ...

— Թամար ջտն, «յանուն մեր սէրի», քեզ մի
սպանիր, ասում էր այսպիսի դէպքերում Շաքրօն, գը-
լուխր թամարի կրծքին և աշքերն ամօթից գետին գը-
ցած, խորապէս զգալով իր վարմունքի սմբողջ ստո-
րութիւնը, միաքն ուրիշ տեղ... Բայց նա վճռել էր կո-
ղոպտել թամարին, պարագիտի պէս արգէն քայքայող
օրգանիզմը իրեն բոյն շինելով...

Երեք տարի էր, ինչ նրանք իրար հետ մօտեցել
էին...

Մի օր, երբ Շաքրօի սշակերտը տուն էր գնացել
ճաշ բերելու «ուստայի» համար, թամարը, շայնոցը
ցած զցելով, խնդրեց, որ մի փաթեթ «Ջօկեյ-Ռլյու»
պատիրոս «վերե» տանեն: Շաքրօն չվստահանալով,
այն էլ օրը ցերեկով, անսուականոցը բարձրանալ, վե-
րի ցցեց ծխախոտի փաթեթը, որ թամարը չկարող ու-
ցաւ բռնել... Մէկ, երկու... չորս անգամ կրկնեց այս-
գործողութիւնը. ու նրանք այսպիսով հնարաւորութիւն-
ունէին աչքն աչքում իրար դիտելու... Վերջապէս թա-
մարը յետ անելով պատշպամքի շարօները բռնող թելը
ցած թողեց այն, ծայրին շարօի մի ծաղիկ կապած...

Շաքրօն շփոթւեց թամարի այդ «վստահ» վար-
մունքից, բայց, թելի ծայրից «Ջօկեյ-Ռլյու»-ի փա-
թեթը կապած, նա, այսուամենայնիւ, չգիտիմ ինչ հե-

տաքրքրութեան բաւականութիւն տալու համար, վե-
րև էր նայում, ձևացնելով, թէ հետեւում է ծխախոտի
վկաթեթին...

Թամարը առիթից օգուտ քաղեց և, թելը խսդաւ
ցնելով, «Ջօկեյ-Ռլյու»-ի փաթեթը Շաքրօի վշին
դիպցրեց... Խրախուսւած պատշպամքում հաւաքւած
«հարսների» և սրճարանի հասարակութեան ու բազա-
րաւորների «մաշալլահներից», թամարը այդ գործողու-
թիւնը կրկնեց մի քանի անգամ, մինչև որ Շաքրօն
անընդհատ հարւածների տակով փախաւ իր խանութը,
թամարի ցած թողած ծաղիկը քթին մօտեցրած, «վլ-
րան չառնելով խայտառակութիւնը», ԱՄՍՉԵԼՈՒՅՑ Ա-
ՄԱՉԵԼՈՎ...

Այդ օրը անառականոցի «առևտուրը» առանձնա-
պէս յաջող էր. ու թամարը միւս առաւտ զգւած վեր
կացաւ...

Կարկտահար ծոսը ինչպէս կըլինի...

Ու «վերածնութեան» բուռն տենչանքով թամարն
իր կեանքում երեք այդ աստիճան չէր տարւել: Այդ
էր պատճառը, որ հարկան վարսավիրի կտերը նստած,
երբ Դէվօն, քաղաքի մութ զւարճատեղիներից վաղ ա-
ռաւտօտեան վերադարձած խռմբացնում էր իր սննեա-
կում, կինը արտասուքի հեղեղ էր հոսեցնում իր աշ-
քերից... Խստակ, պարզ—կի՞ն արտասուքներ, Շաքրօին
միտը բիրեկով...

Ու սիրուն էր այս փուչը, Շաքրօն. երեսն ածե-
լած, բեղը ոլոր, աջ թշին խալ, աջքը զւարթ, մազե-
րը, աջից ձախ, ձականտին բերած...

Վերջապէս բոլոր արտասուքը սպառած, զլուխը
երկու ձեռքերում և ձախ ոտքը ջղաձգութեամբ շար-
ժելով, թամարը ընկել էր մոռացութեան մէջ, չլուխով
անգամ չկեշտակապեաց եկեղեցու զանգերի սպալից
դօղանջիւնը...

Մին էլ փողոցի կողմից ով մի փոքրիկ քար-

դցեց, որ Թամարի մէջքին գիպչելով, հանեց նրան մոռացութիւնից... Քարի եկած կողմը նայելով, նա տեսաւ ժամկոչ-տիրացւին, որ բերանը երգով լիքը, խաչվառը մի ձեռքին, միւսով նշան էր անում Թամարին, որ սա չըւի կտուրից, հանդէսը իր ներկայութեամբ չարատաւորելու համար...

Տիրացւի այս եռանդը յուղարկաւորութեանը հետևող բարեպաշտ հասարակութեան խրախուսանքին արժանացաւ, և զսպանակից աղջւած մարիօնէտների պէս ամենքն սկսեցին, որը զլխարկով, որը փայտով սպառնալ Թամարին. մի հաջի նոյն իսկ սկսեց ձեռքի մեծ քարը նետելու նշաններ անել, «մերժւածին» փախցնելու համար...

Միայն այն ժամանակ, երբ հանդէսի ձայրն արդէն վարսավիրի խանութի առաջն էր, Թամարը ցած նայեց ու տեսաւ երկու երեք կին, որոնք որբերի ձեռքերից բռնած, յուսահատութեան ճիշեր արձակելով, հետեւում էին յուղարկաւորութեանը...

Հաջին, որ վարսավիրի նշանով մօտեցել էր սրա խանութի դուանը, պատմում էր մեռնողի ընտանիքի անելանելի զրութեան մասին.. Տաշտը հացից և կըճուճները պանրից ազմտ, կաթող տուն, ծննդականը պահարանը կոխած, նորածինը աղջիկ...

Վարսավիրը, որի սիրտը մորմոքւում էր հաջու պատմածից, իր կսկիծը մեղմացնելու համար, նրան բազմեցրեց իր խանութի առաջներ նստարանի վրայ ու սկսն յուսադրելով պատմել այն բոլոր հրաշքների մասին, որ ինքը լսել էր Աստծու ողորմածութեան մասին իր այցելուներից, սրանց երեսները երեքական կօպէկով ծանր ու բարակ թրաշելիս... Նախ մանանայից սկսեց... Բայց գա շատ հին բան է. նորը լսենք...

Իլենց թաղեցի մի բազարնիկ մեռել էր. սրա մահւան երրորդ օրն արգէն, կինը, տանը հաց չունենալով և ծծերում կաթ, սովորուկ երեխաների քաղցը

խաբելու համար, ջուրն էր ածել վեց-հօթը սալ քարու արդէն հանգած հնոցի վրայ դրած խառնում էր... Մեղմայ քեզ, Տէր. մին էլ բակի դուռը բացւեց ու մի աղքատ ներս եկաւ.

— Ողորմութիւն...

— Դէ, սպասիր, բիճա ջան, ահա այս ըովէիս կերակուրը կեփիի, կտծեմ, կուտես, խաբեց այրին, դժւարանալով մերժելու...

Բիճան տեսաւ, որ հնոցի վրայ դրածիծ այնքան էլ համեղ կերակուր չի լինելու. ու գնաց, հասկանալով...

Կէս ժամից յետոյ մին էլ դուռը բացւեց. ու բազարնիկի այրին ինչ տեսնի... Մի գօղամա ալիւր, վրան էլ ցախ, հացը թիսելու համար... Մշակը գօղամա ալիւրը դնում է գետին ու սուս ու փուս հեռանում...

Ասում են, որ ալիւրն ու ցախն ուղարկողը աղքատն է եղել... իսկ հիվէ եղել աղքատը. նա էլ, ասում են, Քրիստոսն է եղել. Այսուհետև բազարնիկը այրին ամեն ամիս ստանում էր մի գօղամա ալիւր և երեք կապոց ցախ... Երբ մշակին հարցնում են, թէ հիվէ ուղարկել, ասում է.

— Աստւած...

Թամարը վերեցի լսում էր վարսավիրի ոգկորութեամբ պատմածը. և յանկարծ սրա սրտում խօսեց թշւառին օկնելու զգացմունքը...

Պէտք է օգնել. ինչպէս, մւս միջոցով... Հարցնենք Շաքրօից. ինչ կայ որ...

Երբ միւս առաւօտ Շաքրօի աշակերտը վերև տարաւ «Հօկեյ-Էլցին» պապիրսախ փաթեթը, Թամարը նրա միջոցով խնդրեց, որ «ուստան» վերնատան գրան մօտ գայ...

Շաքրօն եկաւ, Թամարը, օգտւելով այն բանից, որ անառականոցի դրանը մարդ չկար, վերնատանը մտաւ ու դուռը փակեց...

— Տեսնելով Շաքրօի շփոթմունքը, կինը վրա
պլրծաւ.

— Ի՞նչ ես կոտրառում քեզ ու քեղ. դայլ չեմ,
մի վախիր... Ա՛ռ այս զերը և մատանին, կըծախնս,
մի գողամա ալիւր կառնես ու ծածուկ կուղարկես ե-
րելւայ մհուելի տունը, տեղը վարսավիրին հարցըւ...
Դունչ ես նայում. ուզում եմ մեղերս քաւել, չենա
ջան...

Ու թշւառներին օգնելը Թամարի համար սովոր
ըւթիւն դարձաւ այնուհետեւ...

Ոչխարաբար ապշելով այն բանից, թէ ինչ հրաշ-
ք վ անառակ կինն ու բարեգործը կարող են կողք-
կողքի ապրել մի անձնաւորութեան մէջ, Շաքրօն հնա-
զանդութեամբ կատարում էր Թամարի յանձնարարու-
թիւնները, այս կամ այն թշւառի տունը իր հայեցո
թիւնները, այս կամ այն թշւառի տունը իր հայեցո
թիւնները ալիւր ու ցախ ուզարկելով «անյայտ» բա-
րեկործի կողմից: Դէպքը սակայն մի օր Թամարի փո-
ղը գործադրելու մի ուրիշ ճանապարհ ցոյց տւեց նը-
րան...

Շաքրօի առուտուրը վատ էր գնում և նա խա-
նւոթի վարձը մի ամիս չկարողացաւ տալ, պակասում
էր տասն ըսւըլի, հինգը հաղիւ կարողանալով ինքն ի-
րաւ անել... Նրա բաղդից, մի երեկոյ Թամարի հետ
այդիներից վերադառնալիս, նա տասնունինդ ըսւըլի
ստացաւ աղքատների համար, «հունձն» այդ օրը «յա-
ջող» լինելով... Շաքրօն այդպիսով հնարաւորութիւն
ունեցաւ խանութի ամսավճարը լրացնել...

Մի անգամ փողը նպատակից շեղած, մնացած
հինգ ըսւըլին էլ գործ ածեց խանութի դարանները
ներկելու համար. ճանձերը շատ էին կեղտոտել այդ
չնեշկած դարանները...

Միքան էր Շաքրօն. երեսը թրաշմ, բեղերը ու-
ղում...

Այդպիսի շեղումները այնուհետեւ այնքան սովո-

րական գաւձան, որ Շաքրօն Թամարից ստացած փողը
իր բիւջէի անբաժան մասն սկսեց համարել, ու նրա
համար այնու հետեւ մեծ գժւարութիւն էր կողմանկի
այդ արդիւնքից հրաժարելը.

Մի օր Թամարը Շաքրօն, տաս ըսւըլի տւեց,
խնդրելով, որ եկեղեցու բեմի երլու կողմերում բազ-
մած Աստւածածինների առաջինները փուլու համար մի
գոյգ քող առնի: Այս պատահեց մեծ պասի չորրորդ շա-
բաթին, իսկ «հարսները» պիտի ճաշակւէին Ղազարոսի
շաբաթ օրը... Զկատարել Թամարի խնդիրը կընշա-
նակէր բաց անել նրա աչքերը, որովհետեւ այդպիսով
Շաքրօն կըբռնէր թակարդն ընկածի պէս... Այսուա-
մենտյնիւ նա չկարողացաւ հրաժարել ալդ տաս ըսւը-
լուց, իր տան պատի վերանորոգութեան անելիք
ծախսն ունենալով հոգալու և յուսալով թէ «մերժւածը»
կհրաժարւի քողերի «անմիտ» ծախսից. ու նա խարեց
Թամարին, թէ գրպանահատները փողը իր ծոցից հա-
նել են... Այն ժամանակ Թամարը, ուխտած լինելով
այդ նւիւաբերութիւնն անպատճառ կատ սրել, գողացաւ
Գէվօի արծաթէ գոտին, որ Շաքրօն քսան ըուբլիով
ծախսեց...

Թամար, Թամար...

Երկուսը յոշոտում էին նրա մարմինն ու ար-
գանդը. մինը քամուն տալով արխենը, միւսը էր տան
պատը շինելով վրան...

Մինը, ձեռքերով չգտնելով բեղը, բերանով էր ու-
ղում բռնել այն, ձիու պէս օդում դէպի վեր համփ ս-
նելով բեղին...

Միւսը ..

Սա չի խելազարւի...

Ու սիրուն էր այս փուչը. երեսն ածիլած, բեղը
ոլոր, աչքը զւարթ, սև խալը թշին...

Շաքրօն համոզւած էր, որ իր գողութիւնը մի օր
կբացւի, ուստի, թիւրիմացութիւնների առաջն առնե-

լու համար, նա կամաց-կամաց իր գոհին սովորեցրեց՝
«աշխատանքից» իրեն ևս բաժին հանելու Շահագործե-
լով այն հակակրանքը։ որ Թամարը տածում էր դէպի
Գէվօն, մանրավաճառը նոր անառականոց հիմնելու
միտքը տւեց նրան, որտեղ, իր «հեռաւոր» հսկողու-
թեամբ Թամարը «մամաշայի» պաշտօնը պիտի կատա-
րէր։ Ու այդ օրւանից Շաքրօի, զգւանքը զսպելով աս-
ւած, «փաղաքշական» խօսքերի արսենալը մի բառով
էլ հարստացաւ։

— Մամնշա, մամնշկա...

— Բամաշկա ջան, դօշի այս իւղոտ կտորը քեզ
համար եմ պահել...

Բայց «Մամաշկան» «մամաշա» լինելու ոչ ոյժը և
ոչ խորամանկութիւնն ունէր։ Նա աւելի բարւոք էր
համարում կալօնկայում մի նոր զւարճատեղի բանալ։
«Զւարթ-Աչքեր» անունը յատկացնելով նրան...

Այս ծրագիրը աւելի համապատասխանում էր
Շաքրօի մեշանական պատւասիրութեանը, որովհետեւ
աւելի քիչ չափով էր անրարոյական։

Օ՛, կայ մի արշին, երկու, երեք արշին բարոյա-
կանութիւն։ ու պատւասիրութիւնը լինում է ծանր-
ու թեթե, մի, երկու, երեք... հարիւր մախալ, — մեշա-
նական տեսակէտից...

Այդ օրւանից ահա Թամարը իր վերջին կօպէկը-
տալիս էր մանրավաճառին, ինդրելով նոր զւարճատե-
ղին կահաւորելու համար կամաց-կամաց ամանեղէններ
և կարասիք ձեռք բերել։ բայց մանաւանդ չմոռանալ
մեծ, լուսաւոր մի լապտեր գնել, ցոլապակիներով, այն-
քան նա հաւանել էր «Եղեմի Հովիր» այգում տեսած
լապտերը։ լուսառատ, մաքուր լապտերը, որ Գէվօի
անառականոցի լապտերի կողքին մի արեգակ էր...

Ու ոսկիների մի անսպառ աղբիւր սկսեց դէպի
Շաքրօի գրպանը հոսել, միանալով հնարովի թշուռ-
ների համար գնւելիք ալլուրի փողի հետ... Դուք ասա-
ցէք, ի՞նչ կարիք կայ այդպիսի «անմիտ» առատաշեռ-

նութեան, որովհետեւ ողորմութիւնը ծուլացնում է
ստացողին... ի՞նչ որ նոր զւարճատեղու կահաւորու-
թեանն է վերաբերում, այդ տեղ էլ շտապել հարկաւոր
չէ, որովհետեւ այսօրուայ գնածը վաղն արդէն հին է։
ու ժամանակը միշտ նորութիւններ է բերում... Մէկ
էլ մեռնել կայ, ապրել կայ...

Թամարը ինքը հակառակ չէր որ Շաքրօն անմի-
ջապէս չնոգայ նոր զւարճատեղու կահաւորութեան մա-
սին, փողը հաւաքելով...
Եւ Շաքրօն հաւաքում էր...

Հայրը մի երկու սենեակ էր շինել քսան տարի
առաջ ու փող չունենալով, պատերն ու առաստաղը
մւսղել և փայտէ յատակ շարել չէր կարողացել... Մի
տարւայ ընթացքում Շաքրօն, ի զարմանս Սարեդի—իր
կոնջ, ոչ միայն այդ պակասութիւնները լրացրեց, այլ
և շաբաթական երկու անգամւայ միսը երեք շինեց.
հինգշաբթի, շաբաթ և կիրակի...

Իսկ Թամարը ի՞նչ եռանդով էր կպչում «այգի-
ների հասարակութեանը», մի երկու ըուբլի աւել ստա-
նալու համար և ի՞նչ հնարագիտութիւններով...

Սալօմէն, Գէվօի մայրը, տեսնելով իր որդու տա-
րօրինակ շարժմունքները, սկսել էր «աղջիկների» հա-
մար «փեսացուներ» գոնելու իր պաշտօնը առանձին
եռանդով կատարել, դոնէ-դուռն...

Մի օր նրա աւագ դուստրը, արգանշչիկ Կոլայի
մայրը իմաց էր տւել, թէ իրենց հարեան թուրքի մօտ
Շամախուց մի հարուստ հիւր է եկել...

Սալօմէն, Թամարին, տօնական դօշ ու գոտկով
դէկօլտէ զգիստը հագյնելով, հետն առաւ ու գնաց
Սէյրաբաղ, իր գստեր տունը...

Մինչդեռ «հարս ու սկեսուր» թէյ էին խմում
դուրսը, ցածրիկ սենեակի առաջ, շամախեցի թուրքը
զիմացի տան պատուհանից նշաններով սիրախօսու-
թիւններ էր անում Թամարի հետ, ձեացնելով թէ
բերանի ծուխը փչում է սրա երեսին...

Թէյը վերջացրած, Թամարը, կլապիտօնով կարած
մանիշակագոյն քօշը ոտքին, դուրս եկաւ բակի դուռը,
փեղը մի փոքր վեր քաշած և ոտքը քօչի մէջ խաղաց-
նելով.

— Քօշդ փոքր է, մարալ աղջիկ. ծախիր որ,
Ասկեարի գրպանի հաշիւն իմանաս, ասաց վերեից
թուրքը. .

— Զէ, բալամ, զեռ չեմ սնանկոցել... Կուզես,
ընծայեմ թէ չէ, ճամբէդ գտիր...

— Քմնի տարեկան ես, ջէյրան...

— Անցեալ տարւանից դէսը, մէկ...

— Բաղ սիրում ես...

— Որ մէջը ջուր լինի, ջրի մէջը ձուկ, ձկան փո-
րում երկու բաջաղլու...

Մնացածը Սալօմէի գործն էր. ու պայմանաւորւե-
ցին, որ միւս օրը երկուսով, թուրքն ու Թամարը, «Եր-
ջանկութեան-Հովտում» մի լաւ քէֆ անեն...

Երկու բաջաղլուն տան արդիւնքն էր... Ինչ որ
Շաքրօի մասին չը վերաբերում, այդ գործը պիտի ցոյց
տար...

Թամարը Նաքրօին իմացում տւեց, թէ մի «Լօքօ»
է բոնել...

IV

Աթօլը Թամարի, հայրը ի հարկէ չգիտէր, թէ իր ջէյ-
րան Թամարին տանում են քաղաք ոչ թէ ժամանակով
պսակելու, ընտանիքի մայր շինելու համար, այլ Գէ-
վորի սնառականոցը զարդարելու գիտաւորութեամբ:

Միւս կողմից, հարիւր բուրին և Թամարի սիրուն
առնելւ համար Գէվօի մօր գնած զրօշանոց հուլունք-
ներն ու զարդարանքները գիւղացուն համոզեցին, որ
ինքը գործ ունի քաղաքի պատւական մի ընտանիքի
ներկայացուցչունու հետ, որ «ուխտ գալով մօտակայ-
սուրբին, մտել էր գիւղ, անարաս մածուն գնելու հա-
մար»...

Էլ ի՞նչպէս կասկածել, պառաւի առատաձեռ-
նութիւնը տեսնելով... Գիւղումն էլ աղջիկ չմնաց,

որի մազերը այդ օրը չզարդարւէին քաղցրալեզու Սա-
լօմէի նւիրած ժապաւէնսերով... Իսկ մայրէրը... Սրան-
ցից նրին չիրքի շինել սովորեցրեց, նրին էլ զլուխը
հինայիլու գաղտնիքը պարզեց... Դեռ մի տարի յետոյ
գիւղի մանուկները յիշում էին քաղցրալեզու պառաւին,
երբ մարտի քամիները, չգիտեմ որտեղից, գուըս աւլե-
լով Սալէմէի նւիրած կանքէտների գոյնզգոյն փոչաւոր
փաթեթները, թոցնում էին օդի մէջ, գիւղի կտուրներից
էլ բարձր... Օ՛, եթէ գիւղի բոլոր աղջիկներն էլ Թա-
մարի պէս խորթ մօր տէր լինէին, կամ թէ բոլորի հայ-
քերը, զտակները ծախած ու «եկովի» կողակիցների ոտի
տակ մտած, հացի կարօտ թողած լինէին իրենց աղջիկ-
ներին, այն ժամանակ Այս ժամանակ Հրեշտակապե-
տաց եկեղեցու կողմից գէպի Շէյթան. Բազարն իջնող
փողոցի անկիւնում գտնւող անառականոցի ռդրախտա-
յին ծաղիկների» թիւը գուցէ քսանի համնէր...

Աթօլի երկրորդ կինը, իր կողմից, որբերով եկած
լինելով, ատելով մօր Թամարին ու նրան օրելով
քաղցած էր թողնում...

Չեմ ասում, թէ ընտանիքը շատ հարուստ էր,
բայց, երբ սէրը չի բացակայում, կացնի կոթի վըայ
էլ մարդ ու կին կարող են տեղաւորւել գեռ, թէ կու-
զէք, կինը, ծծկերին գիւղին առած...

Եօթ-ութ օրւայ բորբոսնած հացի չորն անգամ
խնայում էր Թամարից, այնքան սաստիկ էօ գոյու-
թեան կոիւը ընտանիքում.. Ո՞հ, քանի անգամ խորթ
մօր ձեռքի ափը ուժգնութեամբ իջել էր Թամարի երե-
սին, աչքերից կայծեր ցայտեցնելով ու բերանից գո-
ղունի կերպով վերցրած հացի պատառը ցած թոցնե-
լով.. Քանի անգամ Թամարը, խստութիւններից վախե-
նալով, ապաստան որոնելու գիտաւորութեամբ, փախել
էր գէպի մօտակայ ուխտատեղին, որտեղ մի ճգնաւոր,
գիշերները գէպի ժամը տանող ուղին հարթելիս, պա-
տահել էր նրան, ապուշ կտրած, աշխատելով բոցավա-
ռել իր «ներքին կրակը» այս «փորձութեան» դէմ, որ

սատանան էր ուղարկում, նրան զայթաղեցնելու համար...

«Հրաժարի՛մք, հրաժարի՛մք»... «Ե՞րշ՝ յ՛տո իմ, սատանանա»... Յաջորդ բոպէին քարեր էին, որ նետում էին թամարի ետևից. մինը միւսից մեծ, մինը միւսից աւելի սաստկութեամբ շպրտած, որովհետև թամարը, յիրաւի, շփոթում էր ճգնաւորի ներքին հաւասարակառութիւնը, հազիւ ռափը գտած նաւին» Նոր փոթորիկներ սպառնալով...

— Տար, տար, Սալօմէ ջան, ասաց վերջապէս Աթօլը Դէվօի մօրը, գլուխը բորբոքւած Սալօմէի խմեցրած օղուց, — պայմանը պայման է. ես ստանում եմ հարիւր բուբլի, դու իմ թամարիս պիտի պահես երեք տարի, ծառայեցնելով քեզ մօտ, քո տանը ու ապա, նուրից հարիւր բուբլի օժիտ տալով, մի նամուսով մարդու պիտի տաս...

Կան ստերներ, մի տիսակ սի կէտեր, որոնք վայրկենաբար դուրս սողալով ամենավառ և ամենապայծառ երեակայութեան վարդագոյն մակարդակի տակից, մերթ ընդ մերթ երերուն կէտերով բծաւորում են մեր յոյսերն ու տենչանքները...

Մեր բորբոքւած ուղեղի աւելի պահպանողական, աւելի դրական բձիճները չեն արդեօք այդ ըմբոստ ու սկ կէտերը, որոնք, անընդունակ թոփչքներ գործելու, մեզ հրաւիրում են յարգել ձգողութեան օրէնքը ու Սանխօ-Պանչօի պէս միշտ գետին նայել...

Թէ խորհրդաւոր այդ ստերները ինքնապաշտպանութեան բնագդի յուշարարներն են, որ գուժում են կալիբ վտանգը...

Հարցեր և հարցեր...

Ուղիղն այն է, որ մարդը, քաղցած մարդը, միշտ տրամադիր երջանիկ լինելու և բուռն կերպով հաւատարով գալիք երջանկութեամբ, աշխատում է քշել այդ ստերները, պայծառացնելով նրանց հոգու խորքերից քամած լոյսով».

Մէկ էլ որ ։ ։ եղածից վատինչ կարող է լինել»...
— Ոչինչ, ոչինչ. մխիթարում էր ինքն իրեն Աթօլը, — չէ որ հէքիաթի խորթ դստերն էլ զայլերի որջն ռւղարկեցին... իմս էլ, Աստծու կամքով, նրա պէս հարստացած կըվերադառնայ... Թէ չէ, մի կտոր հաց նօ կուտի...

V

«Սա մօվս ըլ պատւական է,
«Մէջի ջուրը բաւական է.
«Չայ խորթողի աչքը սիրեմ,
«Ձեռքից բոնեմ քովս բերեմ...

Այսպէս երգում էր մանրավճառ Շաքրոն մայիսի ուշ գիշերներից մինին, դէպի իր տունը քայլելով. չերքեսկան ուսին գցած ու բո զդո զի թաշկինակը արծաթէ, նեղ, «պատւական քաղաքացու», գոտիի մէջ ամրացրած...

«Ա՛խ, թամար ջան, թամար ջան
«Չան, թամար ջան, թամար ջան...

Աւելացնում էր ինքն իրենից Շաքրօն մի փոքր աւելի կամաց ձայնով...

Երբ թուրքի կամուրջը եկաւ, վարարած Քոի խշոցը նրան սարսափեցրեց, ու նա կամուրջի մէջտեղում ցցւած մնաց, ձեռքերն օգում տարածած, մի յենարան որոնելով... Վախկոտ էր Շաքրօն, գրպանահատի պէս ու զգոյշ դէպի այն բոլորը, ինչ որ թէկուղ ամենահեռաւոր վտանգ էր ներկայացնում իր անձի համար: Որովհետև նա հարցած էր, կատաղած տարերքի խշոցը էլ աւելի շշմեցնող որոտներով էր բաղխում նրա լսողութիւնը... Մի բոպէ նրան թւաց, թէ կամուրջն իր ոսքերի տակ տատանում է... Մետեխի ժայռը, Մեչեթը ու շրջակայ քարւանսարաները գետնահան ու քարուքանդ դէպի ինքն էին զալիս, վլատակների ստերները լուսնի արծաթի տակ երկարացրած... նա ստիպւած էր կամուրջը փորսող տալով

անցնել, կամաց-կամաց, զգոյշ, ինչպէս կեանքում...

Ու երբ, ոտքի ելած, մաքում էր շորերի թողը,
նրա մէջ խօսեց Մօլլա-Նասրէդդինը.

— Առաջ էլ մի բան չէինք...

Հաւլաբարի զառիվերը հասած, նա իր նախկին
տրամադրութիւնը զանձ էր արգէն...

«Սամօվարի կրանտը օսկի,

«Սիրեկանս էկաւ խօսքի.

«Ծնգըլ-Ծնգըլ չայ կու բերէ.

«Դօշա, զօշա փունջ կու բերէ...

Ու ապա—մի փոքր աւելի կամաց ձայնով...

«Ախ Թամար ջան, Թամար ջան.

«Զան Թամար ջան Թամար ջան...

Եթէ ուղիղ է, որ չար մարդիկ միայն երգ չու-
նեն, այդ գեռ չի նշանակում, թէ մեր երգածը միշտ
արտայայտում է սրտաներիս պարունակութիւնը...

Ու երբ մեր նեարդերը, «զսպանակները» գինու
գոլորշուց և վատթար ինստինկտներից թուլացրած
թթվացներով շարժում են մեր այս կամ այն օրգանը,
այն ժամանակ մենք դործ ունենք մի հոսանքի հետ,
որի շղթայի մէջ չեն մտնում ոչ սիրար և ոչ ուղեղը...

«Ախ, Թամար ջան, Թամար ջան,
«Զան, Թամար ջան, Թամար ջան...

Երբ համեմատաբար ցած ձայնով երգած այս
երկու աղքատ և անպարունակ տողերի ձայնը հաս-
նում էր Շաքրօի ականջին, զգւանքից և ամօրից նրա
մարմնի բոլոր թելերը մինչեւ յստին արմատը ցնցում
ու ցաւում էին անքալով...

Հաւլաբարի զառիվերը բարձրացած և էջմիած-
նեցոց եկեղեցու փողոցն եկած, նա զգաց մի անտա-
նելի թուլութիւն ու ստիպւած նստեց Դէպօի ծածքի
տակ, սանդրւմքների վրայ, սպասելով պատահական
մի անցորդի, որի օգնութեամբ իր տունը, Բօշաների
թաղն էր ուղում հասնել.

«Ախ, Թամար ջան, Թամար ջան...

Լբլբացնում էր Շաքրօն, աշխատելով դիմանալ...

Մին էլ նա զառանցել սկսեց...

Նա գտնւում է մի երկար գերանի վրայ, որ կա-
մուրջ է, կոնատակերին երկու մեռն առած, որոնցից
մինը աւելի ծանր է...

— Պապաշա ջան, պապաշա ջան, առ, առ, շուտո...
լսում է նա ծանրի կողմից...

Այս Թամարն էր, որ Դէվօին կողոպտելով, բերել
էր, մի տոպրակի մէջ ածած, «Նարսների» ուռած փամ-
փուշտներով, արծաթէ վեց գօտիները, շատ մատա-
նիներ, որոնցից մինը յիշեցնում էր Դէվօի «զատկա-
կան», ալմասէ բաղչայով մատանին, նրա արծաթա-
պատ, ոսկեզօծ շղթաներով զարդարւած ծխամորչը, ո-
րի հնոցը մարդու մի գլուխ էր, փիրուզէ աչքերով,
ու... մախօրկայի քսակը, բաջս զլու ոսկիներով
լիքը...

Յանկարծ թեթև բեռը էլ աւելի թեթևացաւ. միւ-
նը կամաց ու դողողալով գնում էր գերանի վրայօվի...
իր կինն էր, Սաբեդը...

Էլ ժամանակ չկար սպասելու... նա Թամարի
ձեռքից ուժով խլեց լիքը տոպրակը ու նրան ցած,
գետը գլորեց...

Ցաջորդ բոպէին, երբ Սաբեդին ու կողոպուտն
ուսին նա քարափները մագլցելով փախչում էր, նրա
ականջները խշշացին ու նա գլոր գլոր դէպի անդուն-
դը գնաց...

— Տար, տար, հաղիւ մրմիջաց նա Սաբեդի ե-
տեից, որ, չիտեմ ինչ հրաշեով ազատւած, փախ-
չում էր...

Կատարւում են երազները...

Այս երազը չկատարւեց.

Բայց կարող էր կատարւել..

Ու մեր երազները, ցերեկն աղօտ կերպով «ւրա-
գծւող, գեռ ևս ուղեղի մէջ ԶԶԵՒԱԿԵՐՊԻԱԾ ԱՌԱՐԿԱ-
ՆԵՐՆ և ի հղաբըն են, որոնց համարեա-սաղմերը չդե-
մանալով ՄՏԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌԻՒ ՄԵԶ,
սաւառնում են ուղեղի արդէն նւաճւած բճիճներոց

դուրս, պատրաստ գիշերները գրոհ տալու մրափող սեռակիցների խաղաղւած բնակութիւնների վրայ...»

Հիմք չկայ կարծելու, թէ մի օր մեր ապագայ գործողութիւնների այդ «համարեա-սադմեր» դրսից չեն ստանայ չափահասանալու ոյժ երբ արգէն մարմնացած, տոնացած կըներկայանան մեր աչքին ի՞նչ-պէս կատարւած իրողութիւն...

Թամարը, փոքրութիւնից իրենց գիւղի սուրբին ուխտ բերող գժերին տեսած լինելով, Գէվօի բանած ընթացքից հետևեցրեց, որ նրա «եղակի» զումարն ու նարդին լաւ բան չեն գուշակում, ուստի մի օր Շաքրոին վերնատուն կանչել տւեց, երբ Գէվօն տաքացած խաղում էր Հաւլաբարի ձեռվ իր զումարը, մէկ վէգերը գետնից հաւաքելով ու նորից ցած թափելով, մէկ էլ աջ ձեռքի ափը սաստիութեամբ ձախ սրունքին խփելով:

Շաքրօին այս կոչը մի փոքր զարմացրեց, որովհետեւ նա թամարի հետ պայմանաւորւել էր այդ գիշերը պատահել կալօնկայրւմ, «Երջանկութեան-Հովհան» այգու առաջ, որտեղ մանրավաճառը, կառքի մէջ պահւած, պիտի սպասէր, թամարին տուն հասցնելու համար, շամախեցի «Լօքօի» գրպանը դատարկելուց յետոյ...

Ու շատ են սիրում „աղջիկներին“ կողակիցներին պատի ծակում պահող գաւառացի այս „Լօքօները“...

Կէս օր էր, որ Շաքրօն վեցնատուն գնաց. նրա յիտելից անմիջապէս մտաւ թամարը, որ վերեց կանգնած սպասում էր նրա գալուն, ու այլայլած պատմեց սարսափելի բաներ...

«Պապաշան» այսօր, հաղիւ լուսացած, եկել է ունդհանուր դահլիճը, երբ հարսները քնած են եղել ու պատշգամբում ծաղկող շաբօների արկղները շուռ տալով, ծաղիկները թափել է հարսների վրայ. ապա սրանցից մէկի շորը հագած, մի թաշկինակ ձեռքին, սկսել է, լալկան պառաւի ձեռքն անելով, ողբալ նրանց գլուխը, ծնկներին խփելով.. երբ «հարսները», համարեած միաժամանակ սթափւած, վեր են կացել ու

նստուաել անկողիններում, Գէվօն, կանացի շորը ցած գցելով, փախել է իր սենեակը, վերցրել վէգերը ու գնացել կտուրը, դումար խաղալու...

Էլ «շունը տիրոջը չի ճանաչում» տանը... Սալօմէն ու արգանշչիկ Կօլան առաւօտւանից արդէն գոնէ գուռ են ընկել, «կիթխաւների» ետեից. «հարսները», ծակերից հանելով Գէվօից պահած մանր ու մունը իրերը—կարմրագեղի ու սպիտակագեղի վաթեթներն ու քաղցրաւնիքը, գրպաններն ուսցրած, պատրաստ են փախչելու...

Սալօմէն գնացել, խնդրել է հարսնան վարսավիրին որ մի քանի ժամով հսկողութիւն ունենայ անսառականոցի վրայ, մինչև «կիթխաւի» մօտից վերապառնալը, բայց նա մերժելով մերժել է, խանութից վոնդելով նրան... Գէվօն, անտարբեր դէպի այս բոլորը, իր «եղակի» զումարն է խաղում, հայնոյելով իր երկակայական «խաղընկերին»...

Այս բոլորը պատմելով, թամարը տերեի պէս դողում էր, փայլող աչքերը սարսափից թաւ յոնքերի տակից գուրս պըծեցրած, գլխաբաց, մազերը ցիր ու ցան, բոկուն ու կեղտոտ. հիւծւած...

Շաքրօն, ապուշ կտրած լսելով այս բոլորը, աշխատում էր դիմանաւ այն զգւանքին, որ ազգում էր այս անառակ կինը մայրուրեան կարօտից դարկացած, թառամած երկու յոր բնկոյզ դարձած ծծերն երկացնելով... Մի բոպէ Շաքրօն պատրաստ էր գուրս շըպրտել նրան գոնից, բայց նրա մէջ խօսեց պարագիտը, արիւնարբու և անկուշտ...

— Թամօ ջան, յանուն մեր սէրի, դարդ մի անի... Ես քեզ, «Երջանկութիւն-Հովտից» վերագարձրած, գիշերս կըպահեմ այստեղ, իսկ վաղը, վաղը, երբ Գէվօին Բօլնիս կըլինեն տարած, գու դարձեալ տւն կերթաս, որովհետեւ արգանշչիկ Կօլան, բարի «պապաշան» կըլինի...

Եւ յիրաւի անառականոցը ժառանգաբար անցնում էր արգանշչիկ Կօլային, որ երեկւանից արդէն սկսել էր ընդունել այցելուներին, մի քիչ «խամութիւն» անելով...

Թամարը դժգոհութիւնը զսպելով վերև պիտի բարձրանար հնազանդւած...

Երբ նա ընդհանուր դահլիճի առաջը եկաւ, դուռը փակ էր...

Արգանշիկ Կօլան մօր հետ, Խարիսուխի և Աէլ դարաթի «կիթխաւների» զուշակւթեանը չհաւատալով, գնում էին Հաւլարար, Բրջի թաղը, երբ Սալօմէի մըտքում մի կասկած յղացաւ, թէ «հարսները» կարող են կողոպտել անտականոցը և փախչել։ Մօր թախանձանքով Կօլան զնաց անտականոց ու «հարսների» կօշիկները հանել տալուց, զրպանները դատարկելուց և «դահլիճի» դուռը կողպելոց յետոյ, նրանց վարսավիրի կտուրը քշեց. այսպիսով «հարսները», առանց կօշիկների, հնարաւորութիւն չունէին փախչելու...

Թամարը, տեսնելով, որ «գահլիճի» դուռը փակ է, վարսավիրի կտուրը զնաց, որտեղ «հարսները» ծըլսնելոյզը մօտ դումար խաղացով Գէփօից աշքները չը-հեռացնելով, աթուրմա էին սկսել... Նրանք թամարին յայտնեցին, «նոր Փարաւոնի»—Կօլայի վարմունքի մասին.. Առանց երկար մտածելու, Թամարը «ընդհանուր դահլիճի» առաջը եկաւ ու ապա, մի տաս քայլ յետ գնալով, նորից դէպի դուռը վազեց և ուսով խորտակեց այն։

Պատշգանք դուրս գալով, նա Շաքրօի աշակերտին վերև կանչեց և վերնատան բանալիքն ուզեց... Քառորդ ժամից յետոյ նա այնտեղ էր տօնական զգեստու երը—դոշ ու գոտկով դէյրան և մանիշակագոյն, կլոս պիտօնակար քօշերը, հետը...

Երբ Սալօմէն ու Կօլան «կիթխաւի» մօտից վերադասն, նրանց յայտնեցին, թէ Թամարը փախել է... Բայց որոնելու ժամանակը չէր, որովհետեւ Փէվօն, դումարով ոգեսրւելով, սկսել էր հետամուտ լինել իր «խաղակցին», հետևելով նրան մինչեւ անտականոցի կտուրը, որտեղից նա ցած, փողոցը պիտի ընկնէր, եւ թէ արգանշիկ Կօլան նրա փեղից չբռնէր...

Նոյն գիշերը «Երջանկութեան—Հովտից» վերադառնալիս Թամարը Շաքրօին տւեց երեք բաջադլու... Առատ նւիրաբերութիւնը մանրավաճառի վրայ այն ազդեցութիւնն ունեցաւ, որ նա վճոեց Թամարին պահել իր համար, բայց ոչ խանութի վերնատանը, «ը խայտառակութիւն էր, այլ մի առանձին սենեակ վարձելով նրա համար...

Լսելով այս, Թամարը գրպանից հանեց երկու բաջադլու և—տան արդիւնքը, ու տւեց Շաքրօին, համբուրելով նրա բեղի ծայրը.

— Յանուն մեր սէրի...

Մինչև ուշ գիշեր Թամարի հետ վերնատանը երեկու չարեք զինին ցամաքցնելուց և թարթի գոշը մաքրազարդելուց յետոյ, Շաքրօն վերադառնում էր տուն, երգելով.

Սամօվարի կը ստը օսկի,

Սիրեկանս հկաւ խօսքի...

VI

Շաքրօի գնալուց յետոյ Թամարը վերնատանը մեռնակ միաց ու սկսեց քննելու պատրաստութիւն տհանել։ Անկողին չունենալով, նա առաջ քսշեց մախօրկայի մի հակ ու յարմարեցնելով այն գործածութիւնից դուրս եկած, քարուքանդմի գազգեահի առաջ, նստեց վրան—գլուխը ձեռքերում ու բազուկները յենած սապնի ճրագւից և ճանճի կեղափից սեացած գազգեահի վրայ։ Այս գրութեամբ նա քննել չէր կարող։ Հակառակի պէս նրա ձախ ոտքի սպին մայիսւայ այս գիշերին սկսել էր ցաւել. ու մի նեարդ ընդհատ-ընդհատ զարկերով խփում էր արդէն ապաքինւած վէքքի տակից, ասղի պէս ծակծկելով միսը և մինչև սիրտը կսկծեցնելով ողջ մարմինը։

Թամարը մտածում էր այդ ցաւի մասին, որ անաքանի տարի է գալարել էր տանջել և որի ծագումը մինչև անգամ մոռացել էր նա։ Շաբունակ մորմոքւելով ցաւի սաստկութիւնից, նա աշխատում էր մտքում վերաբարդել այսօրւայ ապրածը, ցաւը բացատրելու

հետամուտ... Որտեղից էր այս կոկիծը... Նա ոչ մի աեղից չէր ընկել, ոչ որ նրա ոտքին չէր խփեր. Ընդհակառակը ինքն էր, որ շամախեցի «լօքօին» մի լաւ ապտակ ուտեցրեց, երբ սա «Երջանկութեան-Հովտի» առաջ, Թամարին ձեռքերի վրայ կառը դնելուց յետոյ, ուզում էր ուժով նրա կողքն ընկնել...

Յանկարծ նա յիշեց իրենց գիւղի ճգնաւորին, որի ներքին հաւասարակշութիւնը այնքան շփոթում էր Թամարը աղջիկ ժամանակ և որը, չկամենալով ենթարկել «փորձանքին», բորբոքում էր «ներքին կը բակը», բարեր շպրտելով դէպի Թամարը... Թարերէց մինը դիպաւ Թամարի ոտքին...

Ու ճգնաւորն էր, որ «դիմանալով», աչքերը փակ, կնոջ մերկ մարմնին մատերը դիպցնելուց զդոյշ, յորդառատ արցունքների հեղեղում սաղմնաւորւող համբոյի ձեագծումները խեղդելով, «անկման» խորախաւար անդունդի բերանին ամուր հուպ եկած, «արիաբար» կապեց Թամարի վիրաւոր ոտքը իր սեփական շապկից պոկած մի լաթով...

Օհ, այս ճգնաւորը...

Նա յիշեց իր մօրը...

Այս մայրը, որ աղջկան տանից դուրս է անում, նրա երեսը կարմրացնելով ապտակների տարափով, մի չոր կտոր հացի համար, այս ճգնաւորը, որ, «ափը գըտած», «թանկագին ակներով բեռնած իր նաւը» չի ուզում նոր փոթողիկների վտանգին ենթարկել, այս ժամկոչ-տիրացուն և այս հաջին իրենց քարերով... բոլորը, բոլորը մերժում են նրան...

Դրսից շան ողբագին, սարսկցնող մի կլանչոց լսւեց... Թամարը վերնատան պատուհանից փողոցը նայեց, ու լուսնի արծաթի տակ նրա աչքին ներկայացաւ մի սարսափելի տեսարան, խոշոր մի դամփո,

գլուխը համարեա ջախջախւած, մահւան ճիրաններում, վրէժի ծարաւ, վրա էր ուզում պըճնել գիշերապահի վրայ, երբ սա իր մահակի արդէն արիւնոտւած զըլուխը երկրորդ անգամ սաստկութեամբ իջեցրեց շան գանգին... «Թոյլը», մի աւելի սարսկցնող կլանչոց արձակելով, գետին մեխւեց... Թամարի մարմնով մի սարսու անցաւ և չկարողանալով դիմանալ քստմնելի տեսարանին, սարսափանար հեռացաւ պատուհանից, ինքն ևս մի կլանչոց արձակիլով...

Յաջորդ րոպէին, պատրոյզի մի կծիկ իջեցնելով դարանից և ծծումբէ լուցկու փաթեթը վիրցրած, նա յետ գցեց յատակում փորած պահաւանի դուռը. այնտեղ պահւում էր «սոխի սերմ», ինչպէս այն ժամանակները մանրավաճառներն անւանում էին վառողը, իշխանութեան երկիւղից...

Բայց տունը կրակելու իր դժոխային միտքը. նա պիտի թողնէր, «հարսնիրին» խնճալով և քնազդմամբ ենթարկելով յաւիտենական այն ճշմարտութեանը, թէ, երբ քաղաքում տասն արդար կան հազարաւոր մեղաւորների դէմ, պիտի խնայել քաղաքը, մանաւանդ որ այս անգամ տանը վեց անմեղի դէմ մի անառակ միայն կար. Գէվօն, այս գժւանծը...

Հեկեկանքը սղմում էր նրա կոկորդը...

Վերջապէս մի փոքր հանգստացած, նա դարանի վրայից վերցրեց բրդէ գուլպաների մի կապոց և զըլուեց իր գլխի տակ բարձի տեղ. բայց էլի քունը չէր գալիս: Այն ժամանակ պարապութիւնից և գատարկութիւնից զգւած Թամարը հետաքրքրւեց, թէ ինչ է պատահում տանը.

Նա բարձրացաւ, եկաւ վարսաւիրի կտուրը, որտեղ Գէվօն սենեակի մուտքն էր:

Սենեակում փայտէ աշտանակի մէջ ամրացրած ճարպէ մոմը, մինչև վերջին ծայրը այրւած, կրակել էր աշտանակը, որ շուրջը հաւաքւած իւղի կաթոցքից մատակարարւելով, վառում էր, արձակելով երերուն ու աղօտ մի լոյս: Անկիւնում արգանջչիկ կօլան, որ

մասամբ էր այդտեղ, իրեւ «նոր Փարաւօն» և մասամբ իրեւ հրանդապահ, պաշտպանւելով փայտոջիներից, խամբայնում էր մի կեղտոտ թախտի վրայ, յոդնած... Վառարանի առաջ մինը կկզած ինչ որ շարժումներ էր աշում: Ուշադրութեաքը նայելով պատուհանի ապակու միջով, Թամարը նկատեց, որ կեղողը Գէվօն էր, որ աշխատում էր վառարանի յառակի քարը գետնահան անել: Թամարը վախեցաւ, վերագրելով այդ շորժողութիւնը Գէվօն գժութեանը. բայց սա, երեսի քրտինը ուրելով, ուսքերը գէմ զցած վառարանի տակին, „բեղը բ'րան ով մի քանի անդամ գէպի վեր հաճի անելուց յետոյ, ո ժկնութեամբ սեղահան արեց քարը, տակից հանելով թղթագրամներ...“

Դիմը յաջորդ րոպէին, պատուհանը բաց արեց ու սկսեց կատաղի թափով թղթագրամները վարսավիրի կտուրը շպրտել, հայնոյանքի շեշտեր հնչեցնելով...

— Աւլի. Բուլմզ, Օրթա-Ճալմ, Դիդուրէ, Սէյդարան, Կալօնկա, շէշ ու բէշ, ալչու, թօխան, քու հայւան, աղը ու զիրիլ...

Այն տարի անառականոցը դեռ չէր արել իր այցելութիւնները քաղաքի և շրջակայ գիւղերի մութ գւարճատեղիներին. ու փողը մացել էր...

Թամարը ապուշ կտրած մի կողմն էր քաշւել, Քիչ սպասելով և իրեն արգէն ապահով համարելով, նա վճռեց թղթագրամները հաւաքել և փախչել Շաքրօն ժօտ, Բօշաների թաղը:

Հազիւ նա Թուրքի կամուրջն էր եկել, երբ արդանշեկ Կօլան, նրա ետեից հասնելով, խանգարեց Շաքրօն երազի կատարումը...

Երկու ուժեղ ձեռք բռնեցին Թամարի ուսերը. ու նա գետին ընկաւ...

Արգանջիկ Կօլան էր այդ: Թամարի գրպանները դատարկելուց յետոյ, նա ուզեց գետը զցել նրան, բայց կինը, վերջին ճիգերը հաւաքած, բռնեց «Ժառանգի կոկորդից ու գետին գլորելով, չոքեց նրա կրծքին... Գիշերապահներից մինը բարձր ձայնով սկսեց հնչեցնել իր «լուսացաւը», ընկերներին արթնացնելու համար:

Թամարը թողեց Կօլային և շարունակեց իր խելազար վագրով գէպի Բօշաների թաղը, «Գիտենալով» Շաքրօն առւնը, որովհետեւ մի քանի անդամ, Լազրեսկայա փողոցով այդիներից վերագանալիս, Շաքրօն Թամարի խնդրանոք նրան ցոյց էր տւել «իր» տունը, յետեի նեղ գողոցներից մինում:

— Գէմը, գէմը, կանչում էին նրա ետեից գործի կնացող որմնադիրները, Հաւլաբարի զառիվայրն իջնելիս յստ նայելով:

Բայց նա վազում էր ու վազում, արդէն կաղալով: Վերջապէս Թամարը մի նեղ փողոց եկաւ, Խօջիվանքի ժօտ, երբ արդէն ժամը հինգն էր, ու կանգնեց մի խարխուլ տախտակամածի առաջ, որ բակի պատնէշ էր:

Ժամանակից և արեից հնացած ու ծուած դրսն ձեղքի միջով նա տեսաւ, որ գուռը կողած է ներսից... Թամարը ձեռքը ներս կոխեց, գուռը բանալու համար. մի վիթխարի շուն մանչալով ծառս եղաւ, դըրան վրայ ընկնելով և իր ծանր մարմնով շնորհելով խարխուլ պատնէշը: Կինը սարսափած յետ գնաց, արխնած ձեռքը հազիւ ապատելով ձեղքից:

Շունը կծել էր նրա ձեռքը...

Գիշերւայ շորով մի անձանօթ մարդ, բակի դուռը բանալով, նրա առաջն եկաւ, Մյու Շաքրօն չէր:

Այն ժամանակ խարւածը սարսափած յետ-յետ քաշելով շարունակեց իր վազքը գէպի Խօջիվանք. և որովհետեւ շունը շարունակում էր հալածել, նա վարպի վրայով իրեն հանգստարան զցեց, միշտ կաղալով:

Վերջապէս նա պիտի նստէր գերեզմանաքարերից մինի կողքին, ստեղբում, հատ սոնապանը հանելով ու վիրաւորւած ձեռքը փաթաթելով:

Նա քնեց...

Ժամը երկուսն էր, երբ Թամարը վեր կացաւ. շոքից նեղւած, նրա բերանը ծարաւից ցամաքել էր. Զուր չկար. ու ծարաւը յագեցնելու համար նա ժամկոչին չղիմեց, միտք բերելով ճգնաւորի քարերը...

Մի բարեսիրտ մարդ նրան ասաց, թէ գերեզման
նատան ծայրում, քարի մի խոր փորւածքի մէջ, միշտ
անձրեի ջուր է լինում...

Ջուրը սակայն կամ ծտերն էին խմել կամ ցաւ
մաքել էր...

Թամարը ստիպւած էր հանգստարանն անցնել,
Նրա առաջը մի փոս էր, մի հնաւուրց աղ-
բանոց, աղքատ թաղի աղբանոցը, որի մէջտեղը աղ-
բի կոյտի միջով մի ծակ էր շինւած կապոյտ հազ ու-
նեցող երեխաներին, բժշկելու համար, միջովն անց-
կացնելու նպատակով:

Մի-երկու փտած վարունգ ու հինգ-վեց կեռաս
գտաւ այնտեղ թամարը... Ու „Եղեմի-Հովկերի“ թամա-
դան իր ծարաւն ու քաղցը յագեցրեց նրանցով...

Միշտ շրբից խոյս տալով, նա մտաւ „հազածակը“
ու քնեց այնտեղ...

Յաւիտեան...

Միւս առաւօտ նրան գտաւ մուրացկանի մէկը,
որ աղբանոցն էր եկել իր չուստը կարկատելու համար
կաշւի մի կտոր գտնելու:

Բայց աղքատ թաղի աղբանոցում կաշւի կտոր չի
լինում...

Երբ երկար որոնումից յետոյ մուրացկանը ձեռ-
նունայն հեռանում էր, նա „հազածակի“ տակ մի կիս-
տեսաւ ընկած.

Զեռքն ու ոտքը կծկւած,

Մատն ու երեսը սեւ,

Բողոքի շնչարը շրթունքներին սառած...

Վ Ե Բ Տ :

1910 թ. մայիս

Թիֆլիս.



Ց. 7

ՀՀ Ազգային գրադարան



NL0367123

58438

